



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a traditional marbled paper pattern, often called a 'stone' or 'shell' pattern, featuring irregular, rounded shapes in shades of dark green, black, and brown. The spine of the book is visible on the left side, bound in a dark, textured material. In the bottom-left corner, there is a small, rectangular, cream-colored paper label with a thin black border. The label is divided into two horizontal sections by a thin line. The top section contains the handwritten word 'Lully' in a cursive script. The bottom section contains the handwritten number '1037' in a simple, blocky font.

Lully

1037

~~98~~ N 169

~~149~~  
101

14

2013

891-22  
4-52

1037

*AGJ*  
*N 16 Dyr*

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

*N 311 m*

**ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵՒՔ**

*Հիշատակագրական*  
*Բարձրագույն*

ԳԵՐԹՈՒԱԾՔ  
ՄԱՀ ՍՈԿՐԱՏԱՅ  
ՃԱՌՔ  
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ  
ՅԱՒԵԼՈՒԱԾ

1010  
141021



1639

Կ. ՊՕԼԻՍ  
ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՅԵՏԵՍԵԱՆ

1877

28 NOV 2011

ԱՌ

ՄԱՅՐՆ ԻՄ

ԱՆՆԱ Յ՝ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՈՐ

ՔԱՌԱՍՆԵՐԿԱՄԵԱՅ ԷԱՆՑ ԹԱՇԻԱՐՀԷ

Ի 27 ՅՈՒՆԻՍԻ 1872

201ԵՄ

Ի ՅԻՇԱՏԱԿ

Ռ. Յ. Պ.

*Միջանկյալ քարտիկ*

*Քարտիկ հարկային*



1037-2013  
Հ. Յ. 1002.



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մերթ ընդ մերթ ազգային թերթերու միջոցաւ հրատարակած գրուածներս ընթերցող հասարակութեան կողմէն ներողամիտ և հաշտ ընդունելութիւն մի դուած լինելով, համարձակեցայ ընտրութիւն մի ընել ի նոցանէ և ամփոփել մի գրքուկի մէջ, ի նա կցելով մի փոքրիկ հաւաքածոյ անտիպ քերթուածոց և Մահ Սոկրատայն որ արդէն մասամբ ծանօթ է բանասէր ընթերցողաց :

Ճառերս, բաց ի Դպրոց և Հայրենասիրութեան վերնագրով ճառերէն որոց առաջինն Մասի և երկրորդն Գործասէր ընկերութեան փոքրէն մէջ տարուած են, հրատարակուած են Մանգլ-Վի մէջ : Միւս այլ և այլ արձակ գրուածներն, զոր կը պարունակէ գրքուկս, երեւցած են Մասի, Մանգլ-Վի և դարձեալ Գործ. ընկերութեան Արարոյայ միջոցաւ, որոյ խմբագրութեան գործակից եղէ Ժամանակ մի : Քերթուածներէս մի քանին միայն հրատարակուած են :

Հարկ է ինձ ասել թէ քերթուածոցս, ճառիցս և այլ արձակ գրուածոցս մէջ առ հարկի մի քանի փոփոխութիւններ և յապաւումներ եղած են որք զգալի են սոյն գրուածներն իւրեանց առաջին տպագրութեանց հետ բաշխատողաց :

Իսկ Ղամարթինի Սոկրատայ Մահուն գրաբար թարգմանութիւնս, ինչպէս ասացի, արդէն ծանօթ է մասամբ, զի մասն սու մասն հրատարակել սկսած է ի զայն, 1871 ին, Գործ. ընկերութեան Արարոյայ մէջ, երբ ընկերութեան քայքայումն ընդհատեց նորս հրատարա-

կուսման, ինչպէս յօդս ցնդեց շատ մի յոյսեր զոր Ազգն  
 ածեւ սկսած էր նորա վերայ: Թէպէտ և անցեալ տա-  
 րի վեհեակոյ Ամանքէն ի լոյս ելած Ղամարթինի փերթ-  
 զոն յորտեմբեանց առաջին հատորն կը պարունակէր  
 յինքեան Սոյրոսայ Մահուն թարգմանութիւնն եւս, սա-  
 կայն պատճառ մի չհամարեցայ զայս գրքուկիս մէջ իմ  
 թարգմանութիւնն զանց առնելոյ, նախ զի իմն հինգ  
 ամօք յառաջ արդէն լոյս տեսած է կիսով, և երկրորդ  
 դի մի հետաքրքրական բաղդատութեան եղր կ'ընծայէր  
 բանասիրաց և մի հերքուցմն այն կարծեաց որ գրաբարն  
 մի մենաշնորհ կը համարի վեհեակոյ Ամանուց և մի ծառ-  
 որ միայն Ս. Ղազարու հոգոյն վերայ կարէ բուսանիլ և  
 աճել, ինչպէս երբեմն, ըստ վիպուկեան Պլուտարքեայ,  
 կը կարծէին Յոյնք թէ միայն Եւրոտասայ ափանց վերայ  
 կը ծնանի քաջութիւնն: Կը համարձակիմ ասել թէ  
 բաղդատութիւնէն չվախնամ:

Սոյն հասարակոյս մէջ մտից իրաւունքն զլոցայ յա-  
 ռաջ քան զ1870 գրուած ո՛ր և է գրութեան, արձակ  
 կամ ոտանաւոր, տպեալ կամ անտիպ, իրրեւ կարի  
 խակ փորձեր, տղայական, զուրկ յանհատականութե-  
 նէ: Քանզի 1867 ին, դեռ վեչտասանամեայ, այն ինչ  
 կը թողուի թասգիւղի Ներսիսեան վարժարանն, նուի-  
 րական օրօրոց իմ բարոյական կենաց, յերթալ յԱդ-  
 րիանուպոլիս առաջին դասն փորձն ընել հայ դասա-  
 տուութեան ապաշնորհ աստարիզին մէջ:

Արձակ գրութեանցս մէջ լեզուի մասին ինչ ինչ փո-  
 փոխութիւններ ըրած եմ, ինչ ինչ մերձեցումներ դէպ  
 ի գրաւոր դասական լեզուն: Այս կէտն և ընդհանրա-  
 պէս գրքուկիս մէջ գրաբարի տրուած կարեւորու-  
 թիւնն, գիտեմ, դիտողութեանց տեղի պիտի տան ալ-  
 գային բանասիրաց մի դասի կողմն, որ խեթիւ կը հայի  
 հայ գրաւոր լեզուին, և որ պիտի արհամարհէ զիս իր-  
 րեւ մի յետադէմ ոգի՝ մեռած անցելոյ մի սիրահար,  
 որպէս կ'անուանէ զայնս զոր քրթաբէտ կը կոչէ:

Բայց լեզուն ոչ սեւաւ կ'ընէ զմարդ ո՛չ սպիտակ, ո՛չ

յետադէմ ո՛չ յառաջդիմական. աշխարհաբարով կարէ  
 ռը հայհոյել, գրաբարով կարէ օրհնել, և փոխադար-  
 ձարար. լեզուն մի ձեւ է, իմաստն է հոգի: Եւ յետոյ,  
 եթէ այս գրական պայքարին մէջ քիչ մի քիչ կիրք դնեմք  
 և զիրեար հասկանալ ջանալք, պիտի տեսնեմք որ շատ  
 կէտերով մեր կարծիքներն զիրեար կը շօշափեն. աշ-  
 խարհարարեանք գրաբարեան են, և գրաբարեանք՝  
 աշխարհաբարեան, եթէ չէ կարելի խուսափել այս  
 անուանց որոշումէն: Ո՞ր աշխարհաբարեան կարաց իւր  
 լեզուէն ի բաց քերել գրաբարէն եկամուտ ամէն բառ  
 և ձեւ, և ո՞ր գրաբարեան առաջարկեց Ե. դարու լե-  
 զուն իստիլ և գրել մեր առօրեայ յարաբերութեանց  
 մէջ: Ի՞նչ կ'ուզեմք. — բարեկարգել արդի լեզուն և  
 մի գրական բարբառոյ միութիւնն, կանոնաւորութիւնն  
 և ճոխութիւնն տալ նմա: Կը տեսնեմք որ այս կէտին  
 վերայ համաձայն եմք. — ի՞նչպէս. — ահա յայժմ կը  
 տարբերին կարծիքներն. նպատակին մէջ նոյն, միջոց-  
 ներու մէջ կը հեռանալք յիրերաց. բայց յայժմ եւս ո՛չ  
 այնքան որքան կարծել կու տայ մեզ կուռոյն ջերմու-  
 թիւնն: Թէ արդի աշխարհաբարն, բաղձացեալ միու-  
 թիւնն, կանոնաւորութիւնն ու ճոխութիւնն ստանալոյ  
 համար, գրաբարին օժանդակութեան կը կարօտի, ո՛չ  
 ռը կ'ուրանայ զայս, գոնէ ո՛չ բազուլք. խնդիրն այս  
 օժանդակութեան շափոյն վերայ է: Բայց տեսնուեցան  
 ջերմ աշխարհաբարեաններ որք գրաբարէն ընդարձակ  
 և յանդուզն փոխառութիւններ ընել չքաշուեցան և  
 լիարուռն քաղեցին հայկական լեզուի այս գանձարանէն:

Երբ ուսմական լեզու մի գրական փիճակի կ'անցնի,  
 հարկ է զի դիմէ ի գրաւորն, ինչպէս կը դիտէր իմ հոյա-  
 կապ դասատուն՝ Քարաքաչեան, գաղափարի և բացա-  
 տրութեան անթիւ պէտքեր ընլոյ համար: Աշխարհաբարն,  
 ինքնին, գրեթէ յանդէտս և մի օրինաց ինքնաբեր հե-  
 տեւողութեամբ, այս ընթացքն ըրած է քսան տարիէ ի  
 վեր, և այսօր կը պժգալք գործածել բառեր և ասաց-  
 ուածներ որ երբեմն ազնիւ և անորժալուր կը թուէին

ականջաց, և երբեմն յանդուզն թուող գրաբարի ձեւեր այսօր բնական կ'երեւին և աննչմարելի : Աշխարհաբարն կ'աճի, և ո՞վ ասաց թէ ժամանակն եկած է նորա ընթացից առջեւ մի թուօք կանգնելոյ :

Արի անիրաւ եմք գրաբարի դէմ, այն լեզուին առանց որոյ մեր այս աւուր գրական նոր լեզուն իւր դուլութիւնն չկարէր ունենալ, և յորմէ և դեռ իւր զարգարանքն, մանաւանդ թէ դեռ հոգին ու շունչն կ'առնու » կը գրէ Հայր Արսէն Այտընեան : Առանց գրաբարի, որ միակ դասական հայերէնն է և միակ հեղինակութիւն մեր մէջ, լեզուն մի քառս կը դառնայ, անիշխանութիւնն օրէնք կը լինի, և, դարձեալ Հ. Այտընեանի հետ խօսելով, « իւրաքանչիւր ըստ մտի կատարելագործութիւն մէկմէկ նոր խանգարում կ'աւելցնէ » :

Հ. Այտընեանի գիրքն\* աշխարհաբարեաններուն Աւետարանն է, նոցա մի հարուստ դիմարանն . ահա սորա՛ համար անտի կը քաղեմ նաեւ հետեւեալ վճիռն զոր, վերնոց նման, աշխարհաբարեանք չեն ուզած տեսնել, և որ այնքան աւելի արժէք ունի որքան աշխարհիկ լեզուի քերականութեան հեղինակի մի գրիչն է զայն արձանագրող . « Աթէ կ'ուզես աշխարհաբար աղէկ գրել, գրաբար պէտք է գիտնաս . եթէ կ'ուզես աշխարհաբար քաջ և հիմնովին գրել, գրաբար պէտք ես քաջ և հիմնովին գիտնալ . մանաւանդ թէ նոյն խիկ աշխարհաբարը հիմնովին հասկնալու համար հարկ է գրաբար գիտնալ . թո՛ղ տաղաչափութեան մասն ալ որուն կազմութիւնն ըստ իմիք գրաբար կրնայ ըսուիլ : »

Ահա ինչո՛ւ համար կարեւորութիւն կու տամք գրաբարին, կ'ուսանիմք զայն և կ'ուսուցանեմք եռանդեամբ . զի մինչդեռ դաւառական բարբառներն այլ և այլ ազդեցութեանց տակ օտարացած և այլանդակուած են, գրաբարն հայ լեզուին ողջոյն, հարազատութեան և հարստութեան աւանդապահն եղած է, և ինքն է որ

\* Բնական Քերականութիւն արգի հայերէն լեզուի, Վիեննա :

կը կանոնաւորէ, կը զտէ, կ'ազնուացնէ, կը լրացնէ մեր աշխարհիկ բարբառներն և կու տայ նոցա իւրեանց ուղղութիւնն դէպ ի միութիւն և կատարելութիւն : Մի պատիր բաղդատութիւն կը յեղյեղուի յաճախ . արդի աշխարհաբարն, կ'ասեն, այնպէս կը համեմատի գրաբարին հետ, որպէս նոր — լատին լեզուք լատիներէնի հետ : Այս բաղդատութիւնն որքան զառաջինն շլացուցիչ երեւի, անտեղութիւնն ինքնին ակներեւ է ամէն ուղղադատ մտքի : Լատիներէնն և նոր — լատին լեզուք տարբեր ազգաց լեզուներ են, բայց գրաբարն և աշխարհաբարն մի՛ և եթ ազգի բարբառք . գրաբարն այն աստիճան օտար չէ՛ արդի Հայոյն, որքան Լատիներէնն Գաղիացւոյն կամ Սպանիացւոյն : Ամէն լեզուաց հին և նոր վիճակներուն մէջ այս բաղդատութիւնն դնել չէ կարելի, ինչպէս Յունարէնի համար, որ « իւր արդի ձեւոյն մէջ, կ'ասէ Ա. Ռ. Ռանկապէ, նուազ կը հեռանայ Քսենոփոնի լեզուէն քան Քսենոփոնին՝ Հոմերականէն\* » : Մեր աշխարհաբարն ամէն օր գրաբարով կը մխի և ի նմանէ ուղղա՞յ՞ կ'ընդունի կեանք և ջերմութիւն :

Չկամիմ աւելի երկարել աստ սոյն խնդրոյն վերայ . յարմարագոյն տեղւոյ մէջ թերեւս մի օր աւելի երկար խօսիմք . բայց չկարեմ արգելուլ զիս ասելէ առ ազգային գրագէտս թէ լաւ է զգոյշ կալ մոլեռանդութենէ . ո՛չ յիմիք օգտակար է մոլեռանդութիւնն, զի նորա ջահն կ'այրէ, շուսաւորէ, և զի նա կը կործանէ յաճախ որ ինչ շինել կը ձգնէր : Grammatici certant . Կրօնականք և համայնք . հարկ է զի մի յաւիտենական ճշմարտութիւն լինի այս, մինչդեռ այնքան դիւրին է զիրեար հասկանալ :

Գրքուկիս հեղինակն գիտէ թէ քանի՛ փոքր ինչ կ'արժեն զայն կազմող գրուածք և, առաւել քան զամէն այլ ոք, իւր թերութիւնքն կը ձանչէ : Գրական ասպա-

\* Տես Տիեզեր. Բառագիրք գրագիտութեանց, Վաթքու Եւանթիկն լեզու .



րիզին մէջ իւր առաջին փորձերն ընող գրիչ մի առաւել  
 ինչ կը յուսայ հասարակութենէն քան կ'ընծայէ : Առա-  
 ջին երկ մի քայլ մի է նախկին , տկար և դայթ ի դայթ ,  
 որ ո՛չ այնքան զարմանաց կ'սպասէ որքան խրախուսա-  
 նաց : Իւր մեծագոյն արժանիքն կը լինէր մի խոստումն  
 նկատուիլ ապագային համար , և , խոնարհ ու երկչոտ ,  
 իւր մեծագոյն յաղթանակն՝ մի համակրական և քաջա-  
 լերիչ ընդունելութիւն : Այս է Աստուծոյ փերեաց հեղինա-  
 կին փառասիրութիւնն :

1877 Մայիս 12 Գաթը գիւղ Ռ. Յ. Պ.

ՔԵՐԹՈՒԱԾՔ

# ՔԵՐԹՈՒԱԾՔ



## Ա.

### ԱՌ. ԼՈՒՍԻՆ



Լ՛ուսին, դու ասող խորհրդալոյս  
Նիմիս՝յդ երկնից ամօթլեած,  
Մեղամաղձիկ ճակատող կոյս  
Ամպեայ շղարշու սքօղած,

Սիրող ստուերց՝ ժամուց լըռիկ,  
Ոսկի մաղերդ ցիր և ցան,  
Երկնից դաշտաց մէջ երբ մենիկ  
Մոլորաքայլ կու դաս ման,

Եւ քո աչաց մի հեղիկ բոց  
Կ'իյնայ յանկարծ ի խաւար  
Ուր զիմ յուշոց և երազոց  
Դիտեմ արխուր զհեռանկար,

Առ քեզ ի վեր զարտասուեագին  
Հանեմ զաչկունս իմ խոհուն,  
Եւ արամանոյ՛չ յերես քոյին  
Պիշ՝ հարցանեմ, ո՞վ ես դուն :

Արդեօք իրա՞ն Անահիտան ես ,  
Համեստութեան դիցուհի ,  
Որ գողանալ լոյսէն կ'ուզես  
Չքնաղ հրապոյրքդ տարփելի :

Եթերց դժխոյ մ' ես դու այրի ,  
Որ՝ ի գիշեր սեւասքօղ՝  
Յերկնից ի ծագ ինչ ամայի  
Խնդրես չիրիմ մի ի դող :

Կամ արեւու դո՞ւստրն ես բամբիշ  
Հրագէս աստղի մ' սիրահար ,  
Եւ ա՛յնր ի խոյզ նազիս շրջիս  
Սրտատրոսի ի թափառ :

Կամ մի ոգի՞ ես դու գըթած  
Յայդ կերպարան լուսանիւթ ,  
Որ յայց կ'ելնես լքեալ չիրմաց  
Եւ հիւզելին ցած ու մութ ,

Մի ցօղ կաթել ի սեաւ անդր հող  
Չոր մահացուաց աչք մոռնան ,  
Եւ սպրդել մի քաղցրիկ շող  
Հիբին յանժպիտն օթեվան :

Թէ խանդից ջահ ելոյց ըզքեզ  
Աստուծոյ մատն անդ յեթեր ,  
Չի քերթողին ըզհուր վառես ,  
Հանես զոգին իւր ի վեր :

Կամ թէ կացոյց քեզ մըտերի՞մ  
Սիրող ոգեաց մենասէր ,  
Չի քեզ յաւանդ տան ըզսրտին  
Իւրեանց երդմունս և զիղձեր :

Թէ յեզր երկնից մի մշտավառ  
Յուսոյ փարոս , զի մըթոյն  
Ի դաշտս յորժամ ծըփայ ալխարհ ,  
Չըկորուսէ զդէմս ուղւոյն :

Կամ մանաւանդ արդեօք էին  
Մի տարփատենչ խո՞հն ես բոց ,  
Որ աստղէ յաստղ իւրոյ ձեռին  
Գընաս գգուել ծնունդքն հո՞ծ :

Թէ մի աչքն ես անհուն սիրոյն  
Որ զանհունիւ կը գրգայ ,  
Հսկես անքուն , 'ւ ի քո ծոցոյն  
Յոյս՝ լոյս յերկիր յայս տեղայ :

Ո՛հ , ո՛ և ոք , զի՛նչ և իցես ,  
Լուսնա՛կ , աստղի՛կ սիրադէմ ,  
Դու Արարչին մի մեծ գործն ես ,  
Խորհրդաւոր և վըսեմ :

Խցկիս խորէն , սրտիս խորէն  
Կ'օրհնեմ ըզքեզ , ո՛վ լուսնակ .  
Առ քեզ ի վեր ձօն կը հանեմ  
Հոգւոյս արցունքն՝ հառաչանք :

Թէ դու չէիր , քանի՛ տըխուր  
Լինէր ալխարհ , ո՛ւր գիշեր  
Չիւր հրապոյրս , զիւր խորհուրդս ո՛ւր  
Պուրակն , երա՛զ գտնէր Ա՛ր :

Խոհից լապտեր՝ միտք թափառկոտ ,  
Անյուսութիւն՝ զիւր բեւեռ ,  
Յօղ սիրտի՛չ՝ աչքն արցունքոտ ,  
Մանուկն Աստուած ո՛ւր գտնէր :

Եւ զուրկ չողէ՞ թէ մնայր շիրիմ,  
 Մեռելոց ո՞ր արեւակ .  
 Զի տիւ ցուրտ է ոգեաց նոցին ,  
 Քե՛զ կը սիրեն , ո՛վ լուսնակ :

Յանհունութեան ի դաշտս անբաւ՝  
 Խորին խորհուրդ մ՝ Արարչին  
 Ըշգեզ երկրի ընկեր տուաւ .  
 Փայլէ՛ , լըցո՛ զբաշխ քոյին :

1876

Բ

Ո՛հ , Թէ կարէի

Ո՛հ , թէ կարէի ,  
 Ես ոսկեթեւ այգուն ճաճանջ լինէի  
 Որ նախ յերկնից դիմէ յողջոյն  
 Աչբիդ որ այն ինչ թօթուեց քուն :

Ո՛հ , թէ կարէի ,  
 Առաւօտեան փափկիկ զեփեռուն լինէի ,  
 Որ երբ պարտէզ իջնես ընդ այգ  
 Կու դայ գգուել ըզհերսդ արձակ :

Ո՛հ , թէ կարէի ,  
 Յողագուարճ ծաղկին բաժակ լինէի  
 Որ ժմտիդ տակ փթթի ի բոյր  
 Ի առնու չրթանցդ առջի համբոյր :

Ո՛հ , թէ կարէի ,  
 Ես մըտերիմ հովտին գանգիւն լինէի ,  
 Որ կոյս հոգւոյդ գաղտ երգերն հուր  
 Ուսեալ հծծէ հեշտ կամ տխուր :

Ո՛հ , թէ կարէի ,  
 Լըճին բիւրեղ ջինջ հայելին լինէի  
 Յոր՝ սխրացի՛կ՝ յառիս երկար  
 Յակճիւ գեղոյդ ի սուրբ նըկար :

Ո՛հ , թէ կարէի ,  
 Հրաթել քընար և կամ դաշնակ լինէի  
 Որ՝ թրթըռո՛ւն քո մատանց տակ՝  
 Հանէր սրտիդ սիրած նուագ :

Ո՛հ , թէ կարէի ,  
 Ես սիրահեշտ անոյշ մի խոհ լինէի  
 Յոր զմայլեալ միտք քոյին՝ յայն  
 Աընանէին յամէն վայրկեան :

Ո՛հ , թէ կարէի ,  
 Մելամաղճիկ լուսնին պատկեր լինէի  
 Յոր խոհալից աչքդ յերկուն  
 Յառին մինչեւ փակին ի քուն :

Ո՛հ , թէ կարէի ,  
 Ոսկեփետուր ես այն երազ լինէի  
 Որ թեւածեալ շուրջ սընարիդ  
 Ըզկուսական զմայլէ նիրհդ . . . :

1875

Գ

Յ Ո Յ Մ

ԵՐԳ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՅ

Հայոց սարերն այլ շատ պատեց խաւար ,  
Սեւ շղթայից մէջ հեծեց Հայրենիք ,  
Ի ծեր Մասիսի ճակատ վեհափառ  
Մութ դարեր ամպրոպ դիզեցին հերիճ .

Մըռայլ հորիզոնն ահա՛ լրջանայ ,  
Շողայ լոյս իբրու այգ աւետաւոր .  
Հրեշտակ մի յուսոյ ժպտի անդ ահա՛ ,  
Մանկութիւնն է հայ , լուսոյ ծընունդ նոր .

Գըրօզ մ' ունի նա՛ Յառաջդիմութիւնն ,  
Փրկութիւնն՝ գըրեց յիւր ճակատ Երկին .  
Ահա՛ սաւառնի հայկեան մանկութիւն ,  
Եւ խաւարակուռ շղթայք կը փչրին .

Մի՛ եւս այլ սուգ , մի՛ արցունք ,  
Ի վե՛ր գըլուխք տրտմակոր ,  
Ի մեզ դառնան թող աչկունք ,  
Եւ սիրտք առնուն յոյսեր նոր .

Հայ պատանին և կուսան  
Փառաց տաճարն Հայրենեաց  
Լուսով՝ սիրով սովրեցան  
Վերականգնել գերապանծ :

Դ

Հ Ն Չ Ե Ա Կ

Ո՛հ , ո՛չ , երկինք ամենեւին չեն անդութ .  
Թէ քստմնափուշ ուղի մ՛ է կեանք , բազմախութ  
Թէ ծով մ՛ աշխարհ , թէ աչքն արցունք ունի յար ,  
Սոցա վերեւ սակայն մի շող մընայ վառ :

Վարդ մի Աստուած այդ փըլոց մէջ է նետած ,  
Յայն ծով մըրըկոտ աստղ մի ճըգէ զիւր ճաճանչ ,  
Եւ մի ժըպիտ խառնի յարտօսք դառնագին ,  
Եւ այն կինն է , երկնից շընորհ թանկագին :

Կը ժպտի կին , և մահացուն առնու շունչ ,  
Զգայ յոգին ծըծել մի օդ երկնաշունչ .  
Կը ժպտի կին , և հոգք թռչին յարագ թեւ .

Իսկ թէ մի կայծ քո աչերուն քաղցրալոյս  
Տըխուր սրտի մ՛ ի խորն իյնայ , ազնի՛ւ կոյս ,  
Երկնածիծաղ ծագի կենաց անդ արեւ :

Ե

Ա Շ Ո Ի Ն

Քօղ ամպահիւս մուսլամած զերկնից ճակատ վարագուրեաց ,  
Տժգունեցան արփեհնւոյն դէմք , շիջան ժպտին իւր ճաճանչք ,  
Ելաց երկին , եհեղ յերկիր յորդահոսան արտասուուաց ուղիս ,  
Եւ համագոյք անդէն ի սուգ ի յանսահման ընկըուզան :

Այսպէս ամրան եղեւ հրաժեշտ , ա՛յսպէս աշուն  
 էտ մեզ զողջոյն .  
 Թառամեցաւ հովտաց ծիծաղ , ընդ տերևօք լռեաց թռչնիկ .  
 Փոթորկայոյդ հողմոց մռունչ ըղղեփիւռին հատ զերգոց թեւ ,  
 Եւ ալիք միմըռածայն առին զափունս կոծեւ ուժգին :

Այս ամենայն , բա՛բէ , զօրհաս մեզ բնութեան արկանէ գոյժ ,  
 Աշո՛ւն , դա՛ երեկոյ կենաց նորին և վերջալոյս .  
 Աւուրըս ինչ , 'ւ ահա դամբան և եթ անհուն լիցի աշխարհ ,  
 Եւ ծաղկեայ իւր պատմուճան՝ պատան մի մեծ համապարփակ :

Աշո՛ւն , ժըպիտ է դա վերջին յօրհասական  
 բնութեան շրթունս . . .  
 Եւ սակայն հեշտալիք լիցին վայրկեանքն հըրաժեշտի ,  
 Որպէս արիւոյն հուսկ ճաճանչք և՛ եւս չքնաղ փայլեն ի շող ,  
 Եւ կանթեղ շիջամերձ սփռէ զիւրեւ փայլ մեծալոյս :

Փարատեսցի՛ , հուսկ նուագ , այո՛ , երկնիցն քօղ թըլխաթոյր ,  
 Ըզհուսկ նուագ դէմք իւր խոժոռ լուծցին երկրին ի ժըպիտ ,  
 Եւ ուր վաղիւ ամենայն լիցի աւեր՝ լուռ ամայիք ,  
 Հնչեսցէ՛ դամ մի եւս կենդանութեան ձայնի բարբառ :

Ձի՞ քաղցր յայնժամ գլխտիննուագ յայցելանել բընութեան ,  
 Ընդ սօսւոյն հանգչել ստուերաւ չեւ հիւսիսի  
 Թափեալ զտերեւան ,  
 Ունկըն դընել զի՛նչ զեփիւռ ի սաղարթուցն հծծէ ի ծոց ,  
 Եւ բաժանման մերձ ի կէտ զիա՞րդ փարի ըզդալարեօք .

Լսել թէ զի՛նչ արդեօք առուակ հեզակարկաջ մրմնջէ ,  
 Մինչ ի համբոյր փութայ յետին ծաղկանց հովտին և խոտոց ,  
 Եւ յի՛նչ ողբերգ վարդին ի թուփ եղերերգէ ֆիլումէլ  
 Ըզտարփելոյն իւրոյ ըզմահ և զիւր ըզսէր վաղաթառամ .

Եւ , ընդ երկնաւ , ի գիշերի , բազմեալ ի ժայռ առ ծովափամբ ,  
 Ձանհունութիւնս դիտել զկրկին որ յար յիրեարս հային պիչ ,  
 Եւ զաստեղաց զոսկի նըշոյլս , չե՛ յամպրոպաց շիջեալ ի թեւ ,  
 Խաղալ զալեօք լուսածիծաղ իբրու ժպիտք կուսին ի շուրթնս :

Եւ յաչս տխուր յետին ողջոյն մի համօրէն տալ բնութեան ,  
 Իբր առ մտերիմ սրտակցորդ որ տարագնաց մերժի ի մէնջ ,  
 Եւ ընդ որում այնքանի՛ սահեալ է մեր վայրկեանս հեշտինս ,  
 Այնքանի՛ հեղեալ արտօսր , ժպտեալ և լուրջ անկեալ զսոհիւք :

Բա՛բէ , սմին հանգոյն ի բաց գնացցէ ի մէնջ մեր մանկութիւն ,  
 Խամրեսցի ծիծաղ 'ւ ի մեր շրթունս ի բուք ձըմերայնոյ ,  
 Թօթափեսցին տերւոց հանգոյն մատաղ ամաց  
 մերոց հեշտանք ,  
 Եւ ցայն վայր քօղածածուկ շիրիմ բացցի առ մեր ոտիւք :

Գայ ձըմեռն և անցանէ , և դարուն , հարսն հրաչագեղ ,  
 Մտցէ անդրէն յիւր առագաստ , փթթեսցին վարդք  
 ի ճեմս ոտին ,  
 Եւ բբացն ի ճառագայթս լուծցին լերանց սառամանիք ,  
 Եւ բնութիւն մահահամբոյր ի հարսանեաց փոխեսցի տուն :

Այլ գարուն կենաց ո՛չ ևս յետս ընդ կրունկ արացցէ դարձ .  
 Ձիւն և դալար փոխ առ փոխ ըզմահացուին ծածկեն տապան  
 Առանց նորին նըչանըս ինչ վերածնութեան ընծայելոյ .  
 Եւ թ՛ այս և եթ են քո կեանք , քանի՛ թշուառ  
 էտ դու , ո՛վ մարդ :

1870

Զ

ԿԱՏԱԿ

Ձէ՛, օրհորդ , չըլլայ փափուկ քո սրտիկ  
Իմ այս անմեղ կատակներէն խոցոտի ,  
Եւ քո հոգւոյն պայծառ զուարթն այն լրճիկ  
Վշտաց ի շունչ յուզեալ ի խռով ամպոտի :

Ինչպէս ամպիկ խաղայ լուսնին հետ յերկին ,  
Սեւուկ քօղեր նորա դէմքին ճըգելով ,  
Քօղեր՝ որոց տակէն չքնաղ դէմք լուսնին  
Բացուխըփիկ փայլէ այլ շատ հրապուրով .

Յետոյ կըլոր երեսնասեայ շրջանակ  
Կը բոլորէ շուրջ նորա լոյս պատկերին ,  
Որ կը դիւթէ այսպէս երկնից բովանդակ  
Չաստեղաց աչս և ծաղկներուն երկրային .

Ա՛յսպէս , զմայլած և ես ի գեղ քո հոգւոյն ,  
Նետեմ ընդ խաղատուերներ շուրջ պատկերիդ ,  
Տեսնելու թէ ի՛նչպէս անոնք յաւելուն  
Շնորհքն անմեղուկ աղաւնակերպ սրտեկիդ :

1872



Է

ՀԵՌԻ Ի ՔԷՆ

Ա

Հեռի ի քէն , ո՛ր դու հատորդ իմ սրտի ,  
Գիտե՞ս ինչպէս այն սեւ օրերն անցուցի .  
Ա՛յն վայրկենէն ուր պարտիզին անդ ի ծայր  
Վերջին անգամ տըխուր աչացս երեւցար ,  
Դեղձան մազերդ ուսոցդ վրայ թափթըփած  
Որ բակ գդիմօքդ , զերդ ամպք զլուսնով , էին առած ,  
Գլուխդ ի մի կողմ իբր վայրահակ մի շուշան ,  
Եւ ձակտիդ վրայ սփռուած քօղ թաղծութեան ,  
Ա՛յն վայրկենէն գիտե՞ս այս սիրտս քեւ նօթի  
Ի՛նչ ւղանք կրեց , ի՛նչ դառն արտուպ ես հեղի :

Բ

Ո՛հ , բաժանում . քանի՛ լեղի այս բաժակ  
Սրտից զոր սէր կապած է պինդ յօդ անքակ .  
Բարե՞ս մէն . ի՛նչ դառնութիւն , ո՛հ , յայս բառ  
Չոր երերուն հնչեն շրթունք սիրավառ ,  
Հարկն անողք մինչ կ'անջատէ ցուրտ ձեռքով  
Էակներ երկու որք կ'ապրին միայն միմեանց քով :  
Ա՛յն օր որ զվերջ բերեալ աւուրց վաստակոց  
Հանդերձէ խաղս , խինդ և անդորր հեշտ այլոց ,  
Եւ որ ի մէնջ զերջանկութիւն գայր խըլել ,  
Ա՛յսպէս զայս բառ մնջեցին և՛ մեր չրթներ :  
Ա՛յն օր վերջինն էր այն անոյշ օրերուն  
Ուր հուպ առ քեզ նստել գայի սիրտ թրթռուն ,  
Ուր ձեռն ի ձեռն , աչք յառեալ յաչս կաթոզին ,  
Հոգիքս սիրոյն ի քաղցր հեշտանս լիւղ գային .  
Ուր զմայլեալք ի ձայն քնարի Պուէտին  
Որ յերգս անմահ երգեաց ըզսէր Ելվուին ,

Նուազացն այն վսեմ ձայնակցէին մեր հառաչք  
 Իբրու նոցին արձագանգըբ զուգաւաչք,  
 Ուր այն ժրպիտք որովք զիրեար գգուէինք,  
 Եւ մեր ձեռաց այն սեղմումներ ջղաճիգ,  
 Եւ տրոփիւնք արագ ու բուռն սրտից մեր  
 Կը կրկնէին. « Ո՛հ, քանի՛ քաղցր է սիրել » . . . . :  
 Ո՛չ եւս էին բարեբաստիկ այն ժամեր .  
 Հեռի ի քէն աւուրցս ընթաց կը սահէր,  
 Ձերդ լերկ ժայռից մէջ հոսանուտ մի վտակ  
 Յոյր և ոչ մի թուփ զիւրն ստուեր ձգէ յալեակ .  
 Խաւար էր տիւս, մութ իբրու ցայգ անլուսին,  
 Եւ էի ես զերդ դիակ ում կեանք պակասին :  
 Ո՛չ զիրկ կայի, բա՛բէ, յաչաց քոց, ո՛ կոյս,  
 Յորոց միայն ծագի ինձ տիւս զուարթալոյս .  
 Ո՛չ զիրկ կայի շրթանցդ անոյշ բարբառէն,  
 Երգ մ՛ հեշտալուր սոխակներու դայլայլէն,  
 Որ միայն հոգւոյս մէջ հնչեցնէ գանգ կենաց,  
 Առանց որոյ դամբան մ՛ է նա մահազգեսաց .  
 Չէի՛ր այլ վասն իմ մին ի չքնաղ պատկերաց  
 Որք յերագի դիւթեն զմարդոյն հայեցուած,  
 Եւ զոր ընդ վայր խնդրեն իւր աչք ի զարթման,  
 Նըկար աղօտ անտի ի միտս մնացեալ միայն :  
 Ի բաց կայիր, բաց և յինէն խինդ և բաստ,  
 Ձի ո՛ւր՝ բայց քեզ հուպ կամ և եթ բարեբաստ,  
 Ի ածէի 'նդ քարչ զիմ ըղթախիծ յամէն վայր,  
 Խնդրեալ սիրտիանս զոր, ա՛հ, ոչինչ ինձ կու տայր :

Գ

Միայնութիւն, տառապելոց մըտերիմ,  
 Յոյր ի գիրկ սիրտ սիրէ հեղուլ զիւր լեզին,  
 Յաճախ յաչաց մահկանացուաց տուեալ խոյս  
 Ոյք են սովոր ծաղրել զհիքին արտասուս,  
 Լերանց ի ծագ, յեզրը ծովուց և ի ձոր  
 Ըզքե՛զ յաճախ խնդրէր հոգիս սգաւոր :

Քանի՛ցս հառաչք իմ հրրավառ խառնեցան  
 Յալեաց մրմունջ, զեփիւռին յերգ տխրական,  
 Քանի՛ արցունք ցամբեցոյց յայտս հողմոյն թեւ  
 Ջառաւօտու որպէս ըզցօղ ի տերեւ :  
 Եւ էր յաճախ զի ընդ երեկս բաղմեալ միակ,  
 Ծովուն հանդէպ, հին ծառերու շուքին տակ,  
 Տըխուր աչօք դիտէի ջուրց ըզծաւալ,  
 Պաստառ կապոյտ պարզուած անշարժ և անծալ,  
 Ուր հազիւ իմն մանր ինչ կնճիռք յայտ գային,  
 Կամ նկարէին ամպոց թրուիչք ընդ երկին,  
 Իբրեւ ստուեր մութ խորհրդոց ի ճակատ :  
 Յայնժամ իմ շուրջ տիրէ լուսթիւն անընդհատ,  
 Եւ ոչ այլ ինչ ալեաց վերայ ու ընդ երկնաւ  
 Կը լինի լու, բայց այն մրմունջք հոգեգրաւ  
 Որովք ալեակ զիւր սէր հծծէ ծովափանց  
 Եւ զիւրն զեփիւռ տերուց ի ծոց ու ի ծաղկանց :  
 Ըզհրրաժեշտ իւր առ բնութիւն արփին տայ,  
 Գունտ իւր ոսկի ո՛չ եւս ի ծագ լերին կայ,  
 Այլ իւր ճաճանչք, իբր հըրեղէն գէս երկայն,  
 Ալեաց վերայ գեռ կը ծփին ի տատան .  
 Գողցես այլ շատ չեն համբոյրներն զոր առած  
 Է օրն ի բուն յամէն ալեաց ու ի ծաղկանց :  
 Թողու սակայն զերկիր, թէ և դժկամակ,  
 Հաստչին իւրոյ ձայնին հըլու հպատակ,  
 Եւ յետ չուոյ փեսային իւր՝ Բընութիւն  
 Թաղի ի սուգ, ծածկէ ըզնա մըթութիւն .  
 Այլ ելանէ անդուստ Ղուսին մըխիթար,  
 Եւ յերկնից դաշտ փթթին աստեղք, ծաղկունք վառ,  
 Եւ ի յերկրի, ու ի ծովու, և յեթեր  
 Ժըպիտ ի սուգ խառնի և շող ի ստուեր :

Դ

Բայց, ա՛հ, իմ սիրտ կայր խորասոյզ ի մըթան,  
 Եւ անդ ի խորն տիրէր լուսթիւն շիրմական .  
 Մինչ բնաւք զսիրոյն ընծայէին շուրջ հանդէս,



Մերոյ դաշնակ մ' էին գինեւ ձայնք պէսպէս ,  
 Մինչդեռ ալք , աստղեր , երկիր ու երկին ,  
 Չեփիւռ , տերեւք գիրկընդխառնած կաթողին  
 Ի հեշտութեան ծոց օրրէին երջանիկ ,  
 Անապատ մ' էր , ո՛հ , ամայի իմ սրտիկ :  
 Ի զուր ըզքեզ խնդրէի ինձ առ ընթեր ,  
 Քնքոյ մատներդ ի զուր իմ ձեռն որոնէր ,  
 Ի զուր աչերս ըզքո աչեր սիրափայլ ,  
 Եւ ըզքո սիրտ փնտռէր իմ սիրտ սիրահալ :  
 Յայնժամ անոյ յիս զարթնուին յիշատակք ,  
 Եւ յիշէի զերջանիկն այն ժամանակ  
 Յորում դու ինձ ժպտէիր և ես առ քեզ  
 Եւ մեր աչաց խառնէին կրկին ճաճանչք հեզ :  
 Եւ նկարէր յայնժամ պատկեր քո յաչս իմ  
 Իբր Աստղիան կամ մի ոգւոյ երկնածին .  
 Անմեղութեան և շքորհաց լուսաղարդ  
 Շողայր պըսակն ի կուսական քո ճակատ ,  
 Եւ , իբր երկնից 'ւ երկրի մէջտեղ նոր վարսամ ,  
 Չքնաղ տեսիլդ նսեմէր եղծէր զհամայն :  
 Խաւարէին խորհրդանշոյլ ջահք ցայգուն ,  
 Պուցեալ աչացս առջեւ կայիր միայն դուն .  
 Այն աչերէդ որք փոխարկեն դժոխքն յերկին  
 Անբիծ սիրոյ հեզիկ ճաճանչք կ'եւնէին ,  
 Եւ ժպտտ սիրուն խաղայր շրթանցդ մէջ փափկիկ ,  
 Ինչպէս վարդից ի թերթս աշխոյժ զեփիւռիկ :  
 Բայց ձրգէի բազուկքս առ քեզ ի նանիր .  
 Չի , ո՛հ , տեսիլ մ' էիր և եթ դու պատիր ,  
 Իբր կորսուած երջանկութեան մի պատկեր ,  
 Որ կը ժմտի , այլ չըկարէ սփոփել :  
 Հառաչք յայնժամ հըրափետուրք ի խորոց  
 Սրտիս թռէին խոր լըռութեան անդ ի ծոց ,  
 Եւ ուլք կրկին զնային յորդար յիմ աչաց  
 Յոր փայլիւլէր նըշոյլ պայծառ աստեղաց ,  
 'Ի անդնդասոյզ ի վիշտ և դլուխ դկրծով  
 Իբր անչարժ վէմ մընայի ձիգ ժամերով :

Չը գիտեմ զի՛նչ ինձ ամբառնալ ապա տայր  
 Չիմ յուսահատ ճակատ յերկնիցն ի կամար ,  
 Ուր գիշերոյ խաղաղաճեմ թագուհին  
 Առ ինք զնամէտ արտեւանունս ձրգէր զիմ ,  
 Եւ ի ներքուստ մըտերիմ ձայն մ' ինձ ասէր  
 Թէ նոյն պահուն և իմս ի նա կը հայէր ,  
 Եւ ընդ երկա՛ր յառէի զբիբս իմ ի յայն ,  
 Յուսով թէ հոն ժեր ակնարկներ միանան . . . :

Ե

Հեռի՛ ի քէն , ո՛ դու հատորդ իմ սրտի ,  
 Ահա՛ այսպէս այն սեւ օրերն անցնէի . . .  
 Ի բաց կայիր , բաց և յինէն խինդ և բաստ ,  
 Չի ո՛ւր , բայց քեզ հուպ կամ և եթ բարեբաստ ,  
 'Ի ածէի 'նդ քարչ զիմ ըզթախիծ յամէն վայր ,  
 Խնդրեալ սփոփանս զոր , ա՛հ , ոչինչ ինձ կու տայր :

1870

Ը

Տե՛ս ինձ , ո՛ կոյս , յորմէ հետէ քոյին սէր  
 Ռետին կենաց ծորեց հոգւոյս ի վէրքեր ,  
 Ինչպէս մարգրիտ փայլէ ծովուցն ի յատակ ,  
 Եւ յիմ սրտին կեայ յուշ քոյին անուշակ :

Բոպէ մի թէ սիրես դու զըք՝ շա՛տ է այն  
 Թշուառ մ' երկրէ հանել յերկնիցն օթեվան .  
 Ո՛հ , թէ յաւէտ հեղուս ի նա շող հոգւոյդ ,  
 Է՞ր նախանձի զուարթնոց բախտին լուսանիւթ :

Իլիսեալ կացցեն մեր սիրաք սիրոյն ի նարօտ ,  
 Որպէս կրկին ոլորք հերացդ մէկահոտ .  
 Հողիքս ի մի խառնեացեն յար դիւրեանց բոյր ,  
 Սէր , երգ , արտուք և երազներ ոսկեթոյր .  
 Ինձ թո՛ղ այս տողք վինին վըկայ , սրտիս ֆոյր . . . :

1874

Թ

ԱՐՏԱՍՈՒՔ Ի ՇԻՐԻՄ ՄՕՐ ԻՄՈՅ

Ո՛հ, և ա՛յս վիշտ պահեալ ինձ, Տէր, ի կրբել։  
Եւ ա՛յս հարուած անագորոյն ի սիրտ իմ։  
Մընայր, բա՛բէ, աչացս իմոց արտասուեալ  
Եւ պաշտելոյ մօր տխրալին ի շիրիմ։

Թշուառութիւն ըզխանձարուրս իմ քակեաց։  
Վաղ զհայրենին բարձ յինէն մահ ըզնեցուի։  
Այգն իմ կենաց հեղձաւ ի ծով արտասուաց,  
Եւ մանկութեան օտար եղեն ինձ հաճոյք։

Ընդ մօր այրոյ լացի ես դեռ ի տղայ տիս,  
Եւ չորարեկ զիմ հաց թացի յաչաց ցօղ։  
Մայր սղաւոր ընդ քստմնափուշ ընդ ուղիս  
Ուսնորդեաց նախկին քայլիցըս ի դող։

Բախտ ըզպարզեւս իւր զըլացաւ ինձ համբուն,  
Անդ ընդ ոտիւքս տեսի զհամայն վարդ թառամ,  
Ըզդալկատիպ գգուել ճակատն իմ տժգոյն  
Հեշտաշնչիկ զեփիւռք ինձ գալ զըլացան։

Այլ, ո՛հ, մընայր ինձ մայր սիրուն սրտագութ,  
Մընայր ինձ մօր սիրոյ ջերմին ճառագայթ,  
Եւ այն շա՛տ էր ի լոյս փոխել զամէն մութ,  
Շա՛տ ըզտըխուրն իմ գեղերփինել զանապատ։

Կնժ ի կերպ հրեշտակ սիրոյ մարմնազգեաց,  
Թեւքն հովանի էին մատաղ տիոցս անքոյթ։  
Յորդիս իւր կեայր, հոգք և երազք իւր մըտաց,  
Մշտանուէր զո՛հ ձենձերեալ ի մեր գութ։

Գորովալիցն յայն դիմէի, ո՛հ, ի ծոց  
Թափել զաչացն իմ արտասուս յորդարուղիս,  
Հեղուլ ըզդառն ըզմաղձ սրտիս վշտակոծ  
Եւ զիմ չուառ հանգուցանել անդ գըլուխ։

Եւ սիրակաթ չրթանցն մի լոկ բան անոյշ,  
Ջերդ բալասան, բուժէր սրտիս զամէն վէր,  
Եւ մի ժպիտ ականողեացն սիրալոյս  
Ջերդ շող այգուն զամպրոպ ճակտուս փարատէր։

Ի ծունգօ անդ իւր մինչ ըզճակատ իմ գգուէր,  
Դառինք կենացս ինձ մոռացօնք լինէին,  
Եւ գիրկն անոյշ ինձ ապաւէն մի թուէր  
Յոր փոթորիկք բախտին խուժել չիչխէին։

Նա սէր համբուն, սիրտ՝ գորովոյ յորդ աղբիւր,  
(Ո՛վ մայրենի վըսեմ գըթոյն անպատում,) Յորմէ որչափ բղխէր՝ աճէր նոյն սէր իւր,  
Սէր իւր կարո՛ղ գրկել զտիեզերըս ողջոյն։

Ջամբէր նա մեզ գըթոյն ըզկաթն անըսպառ։  
Տայր մեզ զիւր հաց, տայր մեզ զամէն, զկեանս իսկ իւր,  
Ընտրէր զեղին՝ մեզ ըզքաղցունս թողլով յար,  
Եւ ժպիտ որդւոց բիւր զըրկանացն էր արիտուր։

Իսկ անկողնոց մեր առ ընթեր մինչ ի ծունկ,  
Ջերդ պահասպան ոգի զուարթուն աղօթիկեր,  
Յերկինս բազուկք և ցօղալից իւր աչկուռք,  
Մեզ հովանի գերկնից ըզձօր աջ հայցէր։

Քանի՛ յորդոր ի բուրվաւէն հուր սրտին  
Եւանէին ջերմ աղօթից խունկք ի վէր,  
Գողցես զո՛հի էր բոց ի սլաց անդր յերկին  
Կարդալ շնորհաց էին ի մեզ հրաւէր։

15016  
10101

1037-2019



Երկնատենչիկ հողի անբիծ սրբաթեւ ,  
Ձիւրդդ ի սուրբ յափշտակէր յայն խոյանս օ  
Անտի անշուշտ առնոյր ըզյոյսն անդերեւ  
Իւ անխաղաղ նաւէր կենացն ընդ ծրփանս :

Յայն և ըզմեր ուղղէր ըզբիրս յաստղ յուսոյն ,  
Միակ օճան փոթորկամարտ մահացուին ,  
Աստղ որ փայլէ ի վեր քան զմեր հորիզոն  
Ի շող անշէջ ի մռայլ ամպոց երկրային :

Այլ, զերդ կաղնին՝ հրճուեալ հաւուցն յերդ ու ի ձայն  
Որք յոտաս անդ իւր զիւրեանց եղին ըզդադար ,  
Յական քթիթ յերկնից ի հուր դնի կործան ,  
Եւ բունաղիրի թռչնոց զայնու ողբաց պար :

Այսպէս , աւա՛ղ , (իմ սեաւ բախտին բիւր նըղովք) ,  
Հարուած մահու , հարուած ահեղ , դժոխքմբեր ,  
Էջ իբրու շանթ յանկարծաթափ անողք ,  
Շուրջ հայեցաք , և մայրիկ մեր ոչ եւս էր :

Եւ այն յիմոց բարձաւ գրկաց տարաժամ ,  
Եւ այն շիջաւ հուսկ ճառագայթ յիմ երկին ,  
Եւ այն անկաւ տըխուր հովտիս վարդ թառամ ,  
Եւ մորչ որթոյս բեկաւ խեչա՛կ այս յետին :

Աչք իմ տեսին , ըզնա աշկուճք իմ տեսին  
Ընդ ցուրտ ձեռամբ մահու անկեալ անշնչիկ ,  
Եւ ջերաջերմ ցօղոցս իմ ուղխք հոսեցին  
Ի մահատիպ ձակատն ու ի ձեռս սառուցիկ :

Տեսի ես , վա՛հ , զի իջուցին ի վիհ մութ  
Ըզնա որ զիս « որդեա՛կ » ձայնէր , և ես « մա՛յր » ,  
Եւ ծածկելով ծածկէր զայն սեաւ հողոյ կոյտ ,  
Պատէր զնովաւ գերեզմանին խոր խաւար :

Անդ ծածկէին աշկուճքն՝ լուսոյս իմ աղբիւր՝  
Որ զիմ հողեակ յիւրեանց ժըմիտ սընուցին .  
Անդ և շրթունքն այն անուշակ սիրաբոյր  
Ուստի զերդ մեզր համբուրից ուղխք ծորէին .

Անդ ծածկէին բազուկքն՝ օրրան սիրասուն ,  
Եւ ձեռն որ զիմ առաջնորդեաց մանկութիւն .  
Ա՛նդ , ո՛հ , և ծոցն՝ գորովանաց գանձ անհուն ,  
Ակն իմ կենաց , սիրոյ հընոց , սիրոյ բոյն :

Եւ կայի անդ , և հայէի անխլիրտ  
Ընդ հարուածով շանթիս վիմեայ իբր արձան ,  
Եւ նախանձոտ ընդ հողն որ զիմ խըլէր սիրտ .  
Ասէի « հի՛մ չկարեմ ծածկել յայդ դամբան » :

Ձի զի՛նչ առնել իցէ ինձ այլ աստ յերկրի ,  
Ուր չես դու , մա՛յր , ստուեր տնկոյս տօթակէզ ,  
Ուր արտասուաց պատէ զիս լոկ ծով աղի ,  
Եւ չես դու անդ զի շիթ մի քաղցր յայն կաթես :

Ճակատ մածեալ շիրմիդ ի վէմ սառնապաղ ,  
Մնացից ի լաց գերեզմանաց իբր ստուեր ,  
Մինչեւ մահու գթացեալ ի յիս՝ յիւր մանգաղ  
Հնձեալ և զիս՝ հանգուսցէ քեզ առ ընթեր :

Ժ

ԱՌ ՄՏԵՐԻՄՆ ԻՄ  
ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Ե՛ղբայր , լա՛ց զիս , լա՛ց զիս , եղբայր , որ անդստին  
ի տղայ տիոց

Իմոյ սրտին եղեր ընկեր և մտերիմ հոգեհատոր •  
Դո՛ւ ընդ որում աճեցայ ընդ մի և նոյն երկնաւ ուսման ,  
Տերեւախառն գերդ կրկին մատաղատունկ

Թուփք առ միմեամբք ,  
Դո՛ւ որ հաղորդ մանկականի եղեր խաղուցս իմոց անմեղ ,  
Դո՛ւ ոյր սիրտ կանուխ ի զօդ սիրոյ 'նդ իմուսն շաղկապեալ ,  
Խորհրդոց և գաղտնեաց հոգւոյս քաղցրիկ աւանդապահ ,  
Չիւրսն ի յիմս խառնեաց յաւէտ արտօսր , ժմիտ և երազ ,  
Եւ յաղբերէն սիրաբուղիս եղբայրագութ գորովանացն  
Սիփոսանաց քաղցր վըտակս հոսեցոյց ցանք վշտացս ի ծով • —  
Լա՛ց զիս , լա՛ց , և սիրելոյդ ողբա՛ ըզսեաւ ճակատագիր ,  
Չի աղիտիցս յորդեաց լեղին անդր քան զեղերըս բաժակին ,  
Եւ զի բախտին չըմնացին նետք զոր ի յիմ չըմըխէր սիրտ ,  
Եւ զայս նուագ երկնիցն անյագ սրտմըտութիւն անողըք  
Յահեղադոյնն յիւր կայծականց շանթահարեաց

զիմ գըլուխ : —  
Լա՛ց զիս , ե՛ղբայր , զի մահուն անակնկալ հարուած անգութ  
Յական ըբթիթ բարձ խլեաց ( ո՛վ օր խաւար չարաղէտ ) ,  
Խլեաց յինէն զհատոր հոգւոյս , ըզսիրելին իմ խլեաց մայր •  
Մեռա՛ւ մայրն իմ . . . և ես չուառս , ո՛հ , մընացի և անմայր . . . :  
Անմայր . . . ո՛վ աղէտ դառնակսկիծ անսգորոյն  
Ըզսլաշտեւոյ մօր ատեսանել փակել զաչկուսն ի քուն յաւէրժ ,  
Ի զուր խնդրել զակնարկ նորին , կամել զձայնն լսել քաղցրիկ ,  
Եւ առաջի իւր տեսանել ըզնա անչունչ մահացեալ ,  
Գիտել ըզծօցն գորովայոյդ կացեալ անտրոփ և սառուցիկ  
Չոր ոչ բաւեն ջեռուցանել հուր արտասուք հէք որդեկացն

Եւ ընդ վա՛յր խնդրել գգուանս ի կարկամեալ  
յանխլիրտ բաղկացն ,  
Մինչ , բա՛բէ , խուն ինչ յառաջ աչխոյժ զուարթ և առոյգ  
Շուրջ ըզքեւ դառնայր , քայլէր , ժպտէր , խօսէր  
բերկրագին . . . :

Անմայր . . . ո՛վ վիհ անհուն զոր զքեւ բանայ կորուստ մօր ,  
Անդո՛ւնդ խորին զոր ի ընուլ չիք ինչ բաւակ ի տիեզերս ,  
Չիք ինչ կարող փոխանակել ըզմայրագութ աղեաց գորով •  
Կեա՛լ անմայր , դեռ պատանի , — այս կեանք մըթին  
քան զմութ շիրմի — •

Ի փշաւէտ շաւիղ կենաց չունել ըզմօր քայլ առաջնորդ  
Որ փոխիցէ վարդից ի հոյլ զասպարիզին փուշ և տատասկ •  
Ընդ հրատապ արեգակամբ նորաբողբջ լինել տունկ  
Եւ հովանի մատաղ գլխոյդ չունել զստուեր մայրական •  
Լինել ծաղիկ կենացն ի դաշտ և զիրկ յառուէն կալ սիրոյ մօր ,  
Որ հեշտ համբոյր յալիս գգուող տայցէ և զով ջուր կազդուրիչ •  
Լինել թռչուն նորաթեւ և մրրկայոյզն յօդոց պարոյր  
Չըգտանել ծառոյ կատար առ ապաւէն հողմոց ընդդէմ •  
Նորաթեք լինել նաւազ ընդ բազմածուփ կենաց ընդ ծով ,  
Եւ չունել սիւք հեշտաչունչ զառագաստիցդ ըզծոց գգուել  
Եւ ո՛չ յերկին շողիւն աստեղ ընդ խութ ընդ ժայռ  
քեզ ուղեցոյց •

Յաշխարհի աստ ուր ամենայն է թոյն , դժնիկ և լեղի ,  
Չունել ըզնա ոյր գորով քաղցր ըզլեղիս գիտէր գործել ,  
Թեթեւակիր՝ զամէն բեռն , և ոյր ժըպիտ սիրանըւոյլ  
Խրախոյս յորդոր էր ազդու յանդուլ ի կուի

բախտին ընդդէմ  
Եւ լաւութեանցն յասպարէզ ըզյաղթութեանն  
առնուլ սլտակ : —

Լա՛ց զիս , եղբայր , լա՛ց զիս զոր բախտ զովէ այսպէս  
յեղակարծ  
Յազնուագունէն ի թիւ մարց՝ որ զիս սընոց  
յիւր կաթն ու ի սէր ,  
Եւ որբ յիւրոց թողեալ գրկաց ել տարաղէմ  
Թռեաւ ի մէնջ , —

Լա՛ց գիս, եղբայր, լա՛ց զիմ մայր, որ գքեզ սիրէր իբրև զիս,  
 Ձի գու գորդին իւր սիրէի իբրև զեղբայր քո հարազատ . . . :  
 Մինչ ըզփոշի նժգեհուութեան թօթափելով, ո՛հ, երկրիդ,  
 Դարձ այսրէն արասցես ի սիրելեաց քոց գիրկ անոյշ,  
 Ո՛չ տեսցես ո՛չ զիմ մայր ի տան անդ ուր սովորն էր բազմել,  
 Ո՛չ դիմեսցէ նա գիրկս ըզքև արկեալ զճակատ քո համբուրել  
 Եւ քաղցրախօս շրթամբք սիրուն ո՛չ հարցցէ քեզ անձկալից  
 Ձի՛արդ օտար ընդ աստեղօք աւուրցդ ալիք սահեցան :  
 Հարցցես « Ո՛ւր է », և ես, աւա՛ղ, ի կող բըլբըրոյն  
 Առաջնորդեալ քայլիցդ՝ իլաց՝ ցուցից քեզ սեաւ հողոյ կոյտ,  
 Եւ անդ ի ծունր լացցուք ընդ քեզ ըզնա որ մեր եղև մայր . . . :

1872

### ԺԱ

#### Ի ՁՈՒՐ

Ա՛նց, ժամանակ, անցէ՛ք, ամիսք, ամբ արագ,  
 Ընդ ձեր անուով շոյտ զամէն ինչ մաշեցէք,  
 Ամենայնի տո՛ւք նոր տեսիլ և երանդ .  
 Ձիս փոփոխել չըկարէք :

Ի զո՛ւր, գարուն, կ'ե՛նես հովտաց այցելու,  
 Ի զո՛ւր ծաղկեայ տաս լեռներուն պատմութեան,  
 Եւ ծեր բնութիւնն մանկացընէ շունչըք քու .  
 Թանձր է սրտին իմ պատան :

Ո՛հ, քեզ նրման օր մի և ես ժպտեցայ,  
 Եւ հատուցի երջանկութեան ցընորքին,  
 Ժպիտն ընդհատ մեռաւ շրթանցս իմ վերայ,  
 Եւ ստուերք զիս պատեցին :

Ընդ վա՛յր իմ շուրջս յիմար աշխարհ կը խնդայ,  
 Եւ զո՛ւր Հաճոյք զուարթ ճակտով զիս կոչեն .  
 Ա՛լ չեմ ապրիւր երկրին համար, զիս ա՛հա՛  
 Սեւ ուրուականք կը ձայնեն :

Աչերուս մէջ ալ արցունք մի ունիմ լոկ,  
 Քաղցր ու տխուր յիշատակ մի յիմ սրտին,  
 Բերնիս վերայ լոկ անուս մի իբր աղօթք,  
 Եւ օտքիս տակ մի շիրիմ . . . :

1872

### ԺԲ

#### ԵԺԲ. ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ձա՛յն առէք նուագաց, քընարք Հայկազանց,  
 Ձա՛յն, կուսանք Հայոց, տուք յերգ պարաւոր .  
 Ձարթուցէ՛ք ի թինդ զարձագանգ լերանց,  
 Եւ թո՛ղ ձայնք ամէն ոգեն ըզմեծն օր,

Օր որ ի գիշեր  
 Հայոց բազմաստուեր  
 Ծագեց զուարթ լոյս,  
 Փրկութեան քաղցր յոյս,  
 Չայդ կենաց Հայուն  
 Սահմանադրութիւն :

Քառասուն դարուց հսկայ ազգըն այն,  
 Խաւարին յերկաթս, յաղետիցն ի ժայռ,  
 Տանջէր վիրաւոր յոգիս ապաստան,  
 Մինչ երկնից գըթոյն թիւ Զուարթունն էաւ,  
 Զուարթուն որ թեթեւ  
 Ճախրէր գայր սրաթեւ,  
 Ճակատն Յոյս փայլէր  
 Աչքէն կաթէր Սէր,  
 Բերէր լոյս Հայուն  
 Սահմանադրութիւն :

Մատին ի շօշափ երկնառաք Հիւրին  
Ելաւ կանգնեցաւ հսկայն ողբելար ,  
Փշրեցան շղթայք , դողաց ժայռ մթին  
Եւ հալէր զերդ ձեան դէզ արեւահար .

Կեանքի ու փառաց

Առջեւն ուղին բաց

Տեսնէր Հայն , շարժէր ,

Ազատ զոտն ունէր ,

Թեւ տայր քայլերուն

Սահմանադրութիւն :

Երգեցէ՛ք , Մուսայք , զայն օր փառաւոր  
Ուր վեր առնոյր Հայն ճակատն ի գետնէն ,  
Ուր Ազատութիւն ծընէր ազգ մի նոր ,  
Փիւնիկ նորաթեւ վերածին մոխրէն .

Չօրն ուր փրկութեան

Օրէնք մեզ եդան ,

Ուր ժողովրդին

Խրաւանց՝ ձայնին

Տուաւ յաղթութիւն

Սահմանադրութիւն :

Մեզ օրէնքս ըլլայ յաւէտ նուիրական ,  
Մեր դրօշն այն , արեամբ օծե՛մք ի հարկին ,  
Ըզհետ իւր անվրէպ դիմեմք յապագայն ,  
Հայութեանն ըզբախտ կըրեն ծալք նորին .

Դա՛ մեծաց ազանց

Դըրօշ վեհապանծ ,

Սարսուռ խաւարի ,

Հըրաշից գործի .

Փրկաւէտն անուն

Սահմանադրութիւն :

Վե՛ր առէք զաչկունսդ , տեսէ՛ք , ո՛ր Հայեր ,  
Չի՞նչ այդ ի հեռուն չըբեղ հորիզոն  
Յոր նոր իմն արեւ փայլի անստուեր  
Բեկորից վերայ որ կանգնին հոս հոն .

Փառացն է արփին

Հայ — Ապագային ,

Չոր մեզ աւետէ

Եւ երկնել երկնէ

Արշալոյս Հայուն

Սահմանադրութիւն :

1872

ԺԳ

ՅԵՐԵԿՈՅԻ ՄԻՈՒՄ ՄԻՆՉ Ի ՉՆԻՆ ԿԱՅԻ ԵՐԿՆԻԾ  
( Թարգմանեալ է վ . Հիւլօյ . )

Երեկոյ մի ըսաւ նա ցիս ժմտագին .

« Բարեկամ՛մդ իմ , ընդէ՛ր աչկունքդ դիտեն յար  
Չօրն փախստեայ կամ թէ՛ զստուեր գիւերին ,  
Եւ կամ զոսկի աստղիկն յերկնից անդ ի ծայր .  
Չի՞նչ ի բարձունս գործեն քո աչք . չիցե՞ն իմ .  
Թո՛ղ արդ զերկինս , դա՛րձ դու հայեաց յիմ հոգին :

« Յերկինս անբաւ , ստուեր՛ ուր կաս դու յակճիւր ,  
Ուր ընթեռնուլ անեղր հայեացք քո գընան ,  
Չի՞նչ ուսցիս դու որ իմ ժպտին գայ ի կշիւր ,  
Չի՞նչ ուսցիս դու մեր համբուրից զուգական .  
Ո՛հ , զիմ սրտին զերծ դու ըզքօղ ամօթլեած .  
Թէ՛ զիտլի՛ր զի՛նչ բոյլ կըրէ աստեղաց :

« Քանի՛ արփիս . տե՛ս ինձ , յորժամ սիրեմք մեք ,  
Համայն ի մեզ տեսիլ մի է սխարալի .  
Քան զարուսեակ լուսաթրթիւր անդ ի մէզ  
Դո՛յզն իցէ սէր՝ արդ ելից մէջ երբ փայլի .  
Չէ՛ և չէ՛ ինչ կապոյտն անբաւ , հաւատա՛ .  
Ե՛ւս երկնային է այն երկինքն որ յիս կայ :

« Գեղեցիկ է տեսնել աստղի մ' առնուլ հուր .  
 Սքանչելեօք լի են տիեզերքս այս անհուն .  
 Քաղցրիկ է այգ , և քաղցր են վարդք գեղաթոյր .  
 Այլ քան զսիրոյն հեշտանս չիք ինչ քաղցրագոյն .  
 Բոց քան զամենն աղնիւ և շող ճշմարիտ  
 Ճաճանչն է այն որ ի սրտէ գնայ յայլ սիրտ :

« Ի հովասուն այրից ի խոր լաւ է սէր  
 Քան զանծանօթ արփիքն որոց տամք անուն .  
 Չերկինս ի բաց եղ և ըզկինն առ ընթեր  
 Աստուած , գիտակ թէ զի՛նչ ի դէպ է մարդոյն .  
 Ասէ որոց զննեն զկապոյտ եթերին ,  
 — Կեցջի՛ք ի սէր . այլն ստուեր է և եթ իմ — :

« Ո՛հ , սիրեսցուք . զայս և էից կամի էն .  
 Թո՛ղ զքո երկին ի ցուրտ ճաճանչ ոսկեփայլ .  
 Յաշկունս կրկին որ սիրավառ զքեզ պաշտեն՝  
 Գեղ առաւել գտցես և լոյս մեծափայլ .  
 Սիրել՝ տեսնել է , զգալ , խոկալ , իմանալ ,  
 Որչափ սիրտն է զգայուն , այնքան մեծ միտքն այլ :

« Ե՛կ , սիրելիս . մի ջըլլես՞ս դու յաւէտ  
 Դաշնակ վրսեմ ի յոյզս անդ մեր խանդավառ .  
 Առ ի նուագել ըզմեր տարիանս հեշտաւէտ  
 Բնութիւն ըզմեօք ի սիրաձայն փոխի՛ ջնար .  
 Ե՛կ , սիրեսցո՛ւք զիրեար ու ընդ մարդ առցուք ճեմ ,  
 Նախանձո՛տ եմ , մի՛ եւս յերկին , մի՛ , խնդրեմ :

Այսպէս մեղմիկ իմ սիրելին խօսեցաւ ,  
 Ճակատըն յեց ի դաստակ իւր սպիտակ ,  
 Ի կերպ չքնաղ , ի լուրջ աւաչ սրտագրաւ ,  
 Եւ աչք խոհուն զերդ հրեշտակի վայրահակ .  
 Գեղեցկադէմ , հանդարտ և յիս սիրաքիկ ,  
 Իմ սիրելին խօսեցաւ այսպէս մեղմիկ :

Սիրտք մեր ի տրոփ , և ի վնայլունս մեր հողիք .  
 Երեկորին ծաղկունք զբաժակսն բանային .  
 Ի՛նչ դուք , ո՛վ ծառք , մեր խօսքերըն ի՛նչ ըրիք :  
 Ըզմեր հառաչս ի՛նչ ըրիք դուք , ժայռք լըսին .  
 Ճակատագիր մարդոյն տըխուր է կարի ,  
 Զի իբր այլ մի թըռանի օր մ' այսպիսի :

Ո՛վ յիշատակ , գանձ ի մըթան անեցեալ .  
 Հին խորհրդոց ո՛վ հորիզն դու տըմոյն ,  
 Անցեալ իրաց քաղցրի՛կ նըռոյլ և անփայլ ,  
 Ճաճանչ աղօս հետախաղաղ անցելոյն ,  
 Զերդ ի սեմոց և արտաքուստ տաճարի ,  
 Յերազելով ի ձեզ մըտաց ակն հայի :

Աւուրք գառինք ըզհետ քաղցունց թէ եկին ,  
 Յերանութիւն ո՛չ եւս ի ձահ է խորհել .  
 Յորժամ յուսոյն և ո՛չ մընայ չիթ յետին ,  
 Ծովուցն ի խոր հարկ է զբաժակն արկանել .  
 Մոռացութի՛ւն , այս ակիք յոր բնաւք սուզին .  
 Այս ծով մըթին յոր խինդք ամէն կորնչին :

1875

ԺԴ

Ա Ռ Խ Է Ֆ Է Ն Տ Ի Ս Ա Ր Ա Ճ

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ի

Ձայն քընարիդ քաղցրահնչիւն և վրսեմ ,  
 Թափանց ի սիրտս , շարժեաց ըզթեւս իմ հողւոյն ,  
 Որպէս ի լուս յանտառ մըթին և նըսեմ  
 Թեւք զեփիւռին յուզեն մեղմ իմն սուսաւիւն :

Քանի՛ չքնաղ և գեղեցիկ այն պըսակ  
Զոր յիմ՝ ճակատ հիւսեն մատուներ քո ճարտար ,  
Պըսակ որ՝ պերճ քան զարիւնտ չըքոյ թագ՝  
Անմահութեան է գրաւական վեհափառ :

Զի՛ երջանիկ լինէի , ո՛հ , թէ այնմիկ  
Արժանաւոր՝ խոնարհ ճակատն իմ գտանէր ,  
Եւ ընդ բեռամբ վեհ մրտենեացդ այդոցիկ  
Ո՛չ վայրահակ առ ամօթոյն շառագնէր :

Ա՛նդ յարբեցմանդ չքնաղ վարդին ի բուրմանց  
Գգուես ըզփուշն որ զայն կըրէ յիւր ի ծոց .  
Յակճիռս լուսնոյ ընդ գեղաչուք փայլ դիմաց  
Ըջնա՛ դիտել կարծես յայլս անդ դողդոջ :

Ես գանգ աղօտ մի եմ և եթ սուրբ տաւղին  
Որ ընդ մատամբ Լամբնէի թրթրուաց ,  
ԶԱզատութիւն ոգել և զՍէր երկնային  
Եւ զԱպագայն մեծ ում մընան աչք ազանց :

Որ , յաչկուես հուր մարդարէից սրբազան ,  
Զերկնից ցասումն գոռաց ընդդէմ բռանց երկրին ,  
Եւ ոյր չըթուեր , ճմարտութեան վեհ թարգման ,  
Ազգաց զիւրեանց սուրբ զիրաւունսն ուսուցին ,

Նըմա՛ վայել գեղեցկահիւսդ է պըսակ ,  
Այնմ՝ ճակատու ուր զիւր ըզգահ եդ Հանճար ,  
Որ , լուսաշող ի ճառագայթ երկնառաք ,  
Յինքն զաշխարհի ձգեաց զաչկուես ի պատկառ :

Առ այն ապա ձօնեմ զուրբսըդ դափնեայ ,  
Արգադիր վեհ շիրմին որ զմեծ ծածկէ զայր .  
Մուրրակին իցե՛ն ինչ փառք զի փայլ տայ .  
Մո՛ւթ , թէ արեւ նըմա ըզլոյս իւր զլանայր :

Իսկ դու , հոգի՛դ մեծ , լե՛ր օրհնեալ յաւիտեան ,  
Հոգի՛դ բորբոք յազնիւ զգացմանց ի կրակ ,  
Յոր գեղեցիկն և որ վսեմն է համայն  
Հըպեալ հանէ սխրադաշնակ արձագանգ :

Որ դեղեւկոտ քայլից խրախոյս տալ գիտես ,  
Եւ , նոր Տիրտէ , վառեալ զաշխոյժ յերգ քնարիդ ,  
Յապագային ի սուրբ կըռիւ զմեզ կոչես ,  
Կեան՛ց դու յաւէրժ , անմահ փառաց արժանիդ :

1874

ԺԵ

Ա Ռ ԻՆՉ

Յուրտ մի քամի բըքաչուենչ կը մըռնչէր այսահար .  
Կըմախացեալ ծառոց թեւք գայարէին չարագան .  
Ճերմակ պատան ձիւնեղէն ծածկէր համակ զերկիր սառ ,  
Եւ մի անասող երկին սեաւ զերդ կափարիչ յարկէր վրան :

Գիշերոյն մէջ իբրու ջահ վառէր ճոխի մի պալատ .  
Զըմեռն ի զուր նորա շուրջ կը փոթորկէր մուլեգնած .  
Իբր յաշխարհ ինչ դիւթական՝ սըրահից մէջ թաւչապատ  
Լոյս սուռերներ շուրջ գային յաստեղատունս բիւր ճրագաց :

Հեծող օդոց մէջ զերդ ծաղր երաժշտացն ելնէր ձայն .  
Կը մըրըրկէր յորձանուտ ընդդիմապարն հըրային .  
Կինն յեց ի յայր՝ զոյգ մուրրակը՝ շուրջ զարեու հեշտութեան  
Հիւ առնուին , և ոսկի ժամուց սահէր մեղմ ալին :

Երանութեան տան դիմաց մի խըղիկ կայր խարխըլած .  
Հեծէր տընիկն ի խորոց երբ հողմն ըզնա կը ձաղկէր .  
Մութով պատած , և ցուրտ էր , մի գերեզման մահազգեաց ,  
Եւ բուքն ունայր ի նըմա եղբրական ողբերգներ :



Երեք մանկուհիք և մի կին մնային միմեանց փաթթուած :  
Յետին արտօսրն էր պաղած սառեալ աչացն անդ յեղեր .  
Մի հիտպեան խմբանդրի հոն Զմրան ձեռն էր կրուած ,  
Եւ ճոխին լոյսն իբրու ժպիտ դըժոխային յայն ծաղէր :

Եւ ասացի . « Առ ի՞նչ , Տէր , այնքան ծիծաղ ու այսքան սուգ .  
« Առ ի՞նչ բարիք այնքանի , առ ի՞նչ չարիք այսպիսի .  
« Արդ ա՛ր Աստուած , անիրաւ բաշխից , ո՛հ , զի՞նչ այս ծածուկ ,  
« Զի՞նչ օգուտ քեզ հակադիրք . զի՞նչ առեղծուածս  
այս խրթնի . . . »

1876



ԺԶ

Ա Կ Ն Ա Ր Կ Ք Ո Ե Ի Ժ Պ Ի Տ

Զուարթալոյս աստեղք ի խոր անդ գիշեր ,  
Ամպոց մէջէն երկնից դճխոյն արծաթհեր  
Քան դքոյդ աչեր լուսալիր  
Քաղցրանընջլ չեն փայլիր .

Եւ պայծառ այդ ոսկի ոտամբ թէ սիրուել  
Քայ հոյլ ի հոյլ վարդ և յասմիկ յարեւել ,  
Նընջլը նորին չե՛ն քաղցրիկ  
Քան ըզբըբացդ ակնարկիք .

Եւ թէ օրուան բոցալոյս աստղն հրավառ  
Վանեւ ըզմուայլ ելնէ յերկնից ի կամար ,  
Զրտայ այնքան կեանք էից ,  
Որքան ժսիտըդ կու տան ինձ :

Ո՛հ , քո աչեր , ա՛հ , քո ակնարկք , քո ժպիտ ,  
Իցէ՞ ինչ այլ ու՛մ տենչայցէ իմ այս սիրտ ,  
Եւ ի՞մ այլ եւս կարօտիմ ,  
Ո՛հ , թէ զասոնք ես ունիմ :

Զի՞ փոյթ ինձ թէ շողայ յերկին արեգակ ,  
Կամ թէ ամպոց վերայ ճեմ գայ սէգ լուսնակ ,  
Մի՞ քո աչեր ինձ համար  
Արեւ , լուսին չեն պայծառ :

Աղու աչացդ այն հայեցուած , ո՛վ իմ կոյս ,  
Ի մութ սրտիս հեղու օռատ կեանք և լոյս .  
Ո՛հ , թէ ինձ այն չըլինէր ,  
Անշուշտ իմ սիրտ մեռանէր :

Մինչ իմ դիմաց , գեղոյ՝ շնորհաց վեհ պատկեր ,  
Նստած , առ իս կը վերցնես քո աչեր ,  
Եւ զակնարկդ վսեմ կը յառես  
Շե՛շտ ընդ երկար յիմ աչերս .

Անդ ըզսիրոյդ խնդրեալ անյադ զարձագանդ ,  
Զհոգիդ համայն հեղուս ի յիմս յայն ակնարկ ,  
Եւ ի շողին այդ աստեղց  
Կը շլացնես զիս լուսայեղց .

Եւ մինչ յանկարծ քաղցր ի ժմիտ սիրաբոյր  
Կը բորբոքին աչերդ զեղեալ յանբիծ հուր ,  
Ո՛հ , ի վրսեմ պահուն յայն  
Զանձն և զաշխարհ ես մոռնամ .

Եւ զեթերին քան ըզկապոյտ գեղեցիկ  
Քո աչերէն կախեալ ի բիբ սիրացիկ ,  
Վերամբարձեալ յերկրէ թուիմ  
Եւ ի թափառ գալ յերկին .

Թուիմ ի յայն ակնարկ և եթ կեալ շնչել ,  
Եւ մարմնական պահ մի մոռցած իմ կապեր ,  
Աննիւթական էակաց պէս  
Թուչել ի վեր աշխարհէս :

Հայեաց'ց ի յիս , ո՛վ իմս հրեշտակ , հայեաց յիս ,  
 Ձի երջանիկ քո հայեցուած առնէ զիս ,  
 Եւ քո բըբաց քաղցր նշոյլ  
 Ճակտէս վանէ հոգոց հոյլ :

Ժպտեա՛ առ իս այդ աչերով երկնալոյս ,  
 Ձի ըզհոգւոյս վանեն ըզմէզ , անբի՛ծ կոյս ,  
 Եւ ի քո ժմիտ սեւ բախտին  
 Ամէն վէրքեր կը բուծին :

Հայեաց'ց ի յիս , զի քո նայուած սիրակաթ  
 Եողն է արփւոյն՝ ծաղկին վայրհակ ի ճակատ .  
 Կըթօշնի , ո՛հ , իմ սրտիկ ,  
 Եթէ անտի մնայ զիրկ :

1870

ԺԷ

ՎԱՐԴ ԵՒ ԱՂԶԻԿ

Անուշահոտ վարդ մ' ես դու ,  
 Չքնաղ կուսան գեղադէմ ,  
 Ըսէ՛ ինձի թէ ինչո՛ւ  
 Չ'ուզես որ քեզ հոտոտեն :

Վարդն առ զեփիւռ թափառիկ  
 Բանայ զիւր ծոց հեշտարոյր  
 Որ թեւերովն իւր փափկիկ  
 Գգուէ զայտերն կարմրաթոյր :

Լայ այգ վերայ իւր սրտին ,  
 Արցունքն ինան յիւր ի ծոց ,  
 Եւ թիթեռնիկ երփներփին  
 Լանջքըն առնու հանգստոց :

Քաղցրաբուրիկ թերթերէն  
 Կախի մեղուն շուրթ յանյագ  
 Եւ մեղրալից բաժակէն  
 Ըմպէ անոյշ օշարակ :

Գիշերն ի բուն սոխակին  
 Երգը վարդին օրրէ քուն ,  
 Եւ ծաղկներաց թագուհին  
 Չօն տայ առ նա զիւր բուրում :

Դո՛ւ միայն , դո՛ւ , վա՛րդ անփուշ ,  
 Ագահ քոյին շնորհաց ,  
 Թողուս անցնի բոյրդ անոյշ ,  
 Դեռ շուրթ մի դայն շըծըծած :

1872

ԺԸ

ԱՄԱՆՈՐ

Ա

Սահեալ գընաց և այս ամ սուզել ի վիհ անցելոյն  
 Եւ յաւիտեանցն անդ ի ծոց խառնել դարուցն ի յաճիւն  
 Որք ըզճընունդ արփւոյն տեսին ,  
 Որպէս գետ ինչ սրընթաց ընդ սար ընդ դաշտ անցեալ շոյտ  
 Ըղկոհակսըն խռովայոյզ գընայ ի ծով խառնել փոյթ  
 Ուր են ալիք իւր նախածին :

Բա՛րէ , ո՛ կոյս , զի՛ երագ ժամանակին գլին անիւք ,  
 Եւ քանի՛օն շոյտ ըզմեօք՝ սլացեալ թռչին ամաց թիւք  
 Իբրու թեթեւ ամպը ի յեթեր .

Հազիւ զտարւոյն ողջունեալ այգ , և երեկ հասեալ գայ ,  
Եւ ամն , հանգոյն ափ մի ջրոյ որ ընդ մատուռս հոսեալ գնայ ,  
Յական քըթիթ ո՛չ այլ եւս էր :

Զի՞նչ ոչ յայլիս անդ իւրում ձրգեալ տանի ուղիս ամաց ,  
Զի՞ զինչ յաստիս մարթիցի ըզդէմ ունել հոսանաց .

Ո՞ր այն իցէ թումք անկործան

Կանգնեալ յեզերս անդ նորուն և բռնութեանն զիմադրաւ  
Զոր հիմն ի վեր տապալել ի մի կոհակ չիցէ բաւ

Եւ ընդ ալեօքն թաղել անծան :

Զիք ինչ կայուն անյողդողդ , վաղանցիկ է ամենայն .  
Փամանակին սուր յօտոց հատեալ հնձէ ըզհամայն ,  
Հնձէ նա , ո՛հ , յանխոնջ ի թեւ

Զամաց՝ դարուց ըզվաստակս , ըզփառս , ըզբախտ միահաղոյն ,  
Եւ զամենայն ցիր և ցան անէութեան մատնէ հողմոյն  
Իրրեւ անարգ փոշի թեթեւ :

Իսկ զի՞նչ յաստիս իցէ մարդ . — տունկ վաղթարչամ առօրեայ  
Բուսեալ ի դաշտ կենցաղոյ , ընդ ում վայրիկ մի խաղայ  
Կենաց զեփիւռ , արփենւոյն շող ,

Եւ որ պահիկ մի յետոյ դեղնեալ անկեալ ազազուն ,  
Յիւր առաջոյ վարէ զնա ցրտասարսուռ շունչ մահուն  
Ի խորածոր հովիտն աննշող :

Մեռանի՛ մարդ , և զի՛ հուպ ի յօրօրսն կայ դամբան .  
Այլ կենդ անեաւ իսկ քանի՛ օն մահունս յամէն կրէ վայրկեան .  
Քանի՛ քանի՛ յուշք ի սրտին

Մահեալ աւուրց , բերկրանաց , քանի՛ տենչանք , ակնկալիք ,  
Կենաց՝ սրտին իւր մասունք , մեռանին ցանգ և ի չիք  
Դառնան 'դ աւուրսն իւր որ անցին . . . :

Բ

Այո՛ , իմ կոյս , ժամանակին շունչ ծախիչ  
Խամբէ զհամայն իրրեւ խորչակ մահարոյր .  
Եւ զոր թողումք յետկոյս անցեալն չէ այլ ինչ  
Այլ ամայիք անհուն , տապան մի տըխուր :

Գիտեմ , աւա՛ղ , յետս ընդ կրուկ չիք դառնալ  
Անդ ի լըպիրծ ի զառիվայր կենցաղոյն ,  
Եւ թէ զընամք կոխեալ 'նդ ոտիւք յանցնիւր քայլ  
Բեկորս կենաց իրրու տերեւս ազազուն :

Գիտեմ , հասակ ոսկեղենիկ մանկութեան  
Եղծցի զերդ այգ խաղաղաւէտ և զուարթ ,  
Եւ ի սլանալն յինէն ի բաց մէն մի ամ  
Ի սեաւ կնճիւղ զիցէ զիւր հետս յիմ՝ ճակատ :

Գեղածիծաղ չեւ եզերացն՝ յոյց մեկնի՛  
Տուեալ զյետին իւր հրրաժեշտ իմ նաւակ  
Գիտէ , զգայ թէ յովկէանն անդ քանի՛  
Մընան ինքեան միրիկիք , անդունդք և խարակք .

Ոյք , ո՞ գիտէ , զի՞նչ բախտ նըմին հանդերձեն .  
Քանի՞ ծուէնս պատառեսցի առազաստ ,  
Հո՛ւպ ի ծովեզր ըզնա անդունդք կլանիցեն ,  
Թէ խաղ յերկա՛ր լիցի ալեաց խեռ անաստ ,

Եւ ի հաճոյս մատնեալ հողմոց կատաղեաց ,  
Ի կոհակաց գլեսցի կոհակս մըրրկափար ,  
Մինչեւ անկեալ յափն ինչ օտար անճանաչ  
Բախեալ ընդ ժայռս բեկցի ջախջախ անդ իսպառ :

Մեկնեալ յափանց թողից , այո՛ , գիտեմ քաջ  
Մաղկանց ըզբոյր , զհաւուց գեղգեղ , ստուեր զով  
Որ հեշտալի գեզերս դործեն և զուարճ ,  
Է ինչ , սակայն , որ ոչ լքցէ զիս ի ծով :

Լիցի ինձ միշտ աստղ մի զգլխովս գեղարիայլ ,  
Յոր յար անթարթ յառեսցին բիրքս անձկավառ ,  
Էւ որ յաւէտ հեղցէ ըզդոն յիմ մըռայլ  
Լուսաւորել զահեղ վըհից խորս խաւար :

Այս աստղ, հրեշտակդ իմ երկնագեղ, քո է սէր ,  
Քո սէր որ զիմ ծիծաղախիտ գործէ զայդ ,  
Քո սէր քան զոր ինձ չիք ինչ քաղցր ի տիեզեր ,  
Քո սէր՝ բեւեռն յոր դարձցի ցանգ սրտիս սլաք :

Ո՛չ յանցանելն մարթասցին ամբ յիւրեանց թեւ  
Շիջուցանել ըզջահ սիրոյդ յիս , զուա՛րթուն ,  
Թէ և յիմ ծառ չըմնայցէ մի տերեւ ,  
Ի մերկն անդ ձիւղ կացցէ սիրոյդ քոյ թռչուն :

Մոռացութիւն, զո՛ւր մեր քայլից հետամուտ ,  
Չնջէ ըզհետս զոր թողուն տք մեր յուղւոյ .  
Չոր ի յանցս իմ քաղեմ չքնաղ վարդք սիրոյդ  
Յուշոյն ի շունչ բուրեացեն ցանգ ի բողբոջ :

Գ

Ո՛չ այնքանի անձկայ տարփմամբ ցողալից  
Ծաղկին բաժակ զուարթ նշուլիցն արփածին ,  
Որպէս ըզքեզ տենչայ սրտիկս անձկալից ,  
Որպէս ցանկան շողից աչացըդ բիրք իմ :

Ո՛չ , ո՛չ այնպէս ծարաւատենջ եղջերու  
Խնդրէ անձկաւ ըզզով աղբիւր ի յանտառ ,  
Ալեաց ծրփանք՝ զպին արծաթի , ջինջ առու՝  
Ըզդալարիս , ըզծոց ծաղկանց՝ սիւք թափառ :

Ըզթուփ վարդին՝ սիրահառայ սոխակիկ ,  
Թռչնիկն զիւր բոյն փոթորկայոյդ ի յայեր ,  
Որչափ ըզսիրտդ իմ սիրտ խնդրէ , ո՛ կուսիկ ,  
Որչափ հոգեակն իմ փափաքէ ըզքս սէր :

Արփին իմ, կոյս , քո լուսասփիւռ է հայեաց ,  
Եւ գիշերոյն իմոյ աստեղք բւացդ ջահք ,  
Չայն քո՝ դաշնակն իմ միակ , շունչդ՝ իմ սիւք կենաց ,  
Եւ սէր քոյն մեղրածորանն իմ բաժակ :

Գ

Ո՛հ, դու յիշե՛ս, էր օր մի, մին յերջանիկն յայնց աւուրց ,  
Յորըս յաճախ միայնակք, մինչ լուռութիւն տիրէր շուրջ ,  
Բազմեալք միմեանց առ ընթեր ,  
Կախեալք զմիմեանց նայուածոց , հեշտիւ խառնեալք  
Գիրկ ընդ գիրկ ,  
Ի բիւր դգուանս կաթոգին և սիրազեղ համբոյրս ձիգ  
Թողւաք ըզթամսըն սահել :

Եւ ուր յանկարծ խղեալ զթեւ վրսեմական այն լուռութեան  
Ուր ի լեզու հրեշտակաց խօսակցէին աչք մեր միայն ,  
Լուծանէաք ըզըթունս  
Արոյ ի բիւր բանս անոյշ , յանժոյժ գեղմունս սրտից մեր  
Որ մոռանալ մեզ տային զաշխարհ , զհամայն տիեզեր  
Յանձառելի զմայմունս :

Ի միում յաւուրցն յայնցանէ , մինչ ըզգլուխդ նագելի  
Հանգուցեալ անդ յիմ բազուկ և հեշտանօք դգուէի ,  
Ի քո պատկեր հիացական ,  
Ի վեր յանկարծ ամբարձեր ըզքս գլխիկ ոսկեհեր  
Եւ զլանջօքդ զիմ սեղմեալ ձեռն , ի լուրջ բարբառ ասացեր ,  
« Ո՛հ , սիրեցից ըզքեզ միայն : »

Ո՛հ, թէ ձայնիդ այդմ հողւոյդ հաւատարիմ դու յաւէտ ,  
Կամիս լինել իմ հրեշտակ ի կենցաղոյս արահետ ,  
Սփռել նդ ոտիւքս հոյլ վարդից ,

Ո՛հ, թէ հաճիս յիս յառել յաւէժ գահնարկըդ գեղեցիկ,  
Յիս ըզնըշուդ և ըզաղ հեղուկ գերդ աստղ ի ծաղիկ,  
Այլն ամենայն զի՞ փոյթ ինձ :

Ձի՞ փոյթ ինձ թէ ձեպընթաց ալիք ամաց թաւալին,  
Եւ թէ գեղոյ՝ հասակի դիւրաթառամ վարդք խամրին .  
Դո՛ւ ինձ անանց մանկութիւն,  
Թէ ունիցիմ ես ըզքեզ, ծերացայց ո՛չ ես բնաւ,  
Եւ հոգեակն իմ ի քո սէր ծըծեսցէ զհիւթն անղըրաւ,  
Եւ ո՛չ անցցէ իւր գարուն :

Ձի՞ փոյթ ինձ թէ դառն են կեանք յթէ յամէն քայլ սայրասուր  
Փռչք զոտս խոցեն կարեվէր, և թէ հառաչք բոցահուր  
՚ի արտսուք զվայրկեանս մեր թուեն .  
Քեւ զհամայնիւ քամահեմ, և թէ ողբամ ի քո ծոց,  
Արասուք են ցօղն երկնածոր, և ո՞ր իցէ յիս այն խոց  
Ձոր ձեռք քո ոչ բուժիցեն :

Կո՛յս դու, ընդ քեզ առաթուր կոխեմ զամէն յանահ սիրտ .  
Քեւ թէ զալեօք արչաւեմ, ալիք ծաղիկն ի ժմիտ,  
՚ի անդունդք զոտս իմ գան գգուել,  
Եւ թէ մրրիկ յառնիցէ որոտընդոտ, շանթարձակ,  
Ծիծաղիմ ես անվրդով, զի դու բաւես, ո՛ հրեշտակ,  
Չամբուսս ի սիւզ փոխարկել :

Թէ ժմտիցիս դու, սէ՛րդ իմ, թէ և իցեմ ի մտայլ,  
Ճաճանչք լուսոյ յիմ ճակատ հիւսեն պըսակ գեղափայլ,  
Եւ ցնդին դէզք ամպրոպայ .  
Եւ թէ չրթանցդ լարք ոսկիք հանցեն դաշնակս ի խօսել,  
Թէ և լուին գերդ դամբան՝ զարթնու յողւոջս անդ յերեր  
Աւիւն յուսոյ և կենաց :

Իսկ թէ զինեւ գիրիս ամել գայցես փափկիկի քո բաղիօք,  
Ձի՛նչ ոչ ի ծոցդ մոռանամ, զո՞ր դառնութիւն, և զո՞ր հոգ .  
Ո՞ր գահ քան զգիրիկ հեշտալի .

Եւ ո՞ր իցէ, ո՛հ, այն թագ քան զմի համբոյր ինձ անոյլ .  
Ձի քանի՛ փուշք ընդ չողիւք զողեալ թագին շքալոյս .  
Համբո՛յրդ նեկտար քաղցրալի :

Այսպէս յօղեալ ձեռն ի ձեռն գնասցուք կենաց ընդ ուղին,  
Ծիծաղելով ընդ պէսպէս յեղմունս ամաց և բախտին,  
Եւ ընդ ոտիւքս բաց յորժամ  
Գըտից ըզդուռն յաւիտեանց, ծիծաղ ի շուրթն անդըր մտից,  
Եւ գրաւական ըզհամբոյրդ առեալ ոգեակս յուսալից  
Ալասցի հոգւոց ի կայան :

Անդ ուր զուարթունք ոսկեթեւք, զգեցեալ զանանց  
մանկութիւն,  
Յաննիւթական իմն ի սէր անմաշելի 'նդ դարս անհուն,  
Պաշտեն զմիմեանս յարածամ,  
Սնդ մընացից քեզ անժոյժ, զի ի գարնան անդ յաւէժ,  
Դու շուշանիկ, ես զեփիւռ, գգուեսցուք յար մեք ըզմեզ,  
Եւ սիրեսցուք յաւիտեան . . . :

1871

ԺԹ

ՀՆՉԵԱԿ

Քանզի քո սէրն էր գիշերոյս միակ աստղիկ,  
Քանզի քո քով լոկ կ'գդայի թէ կ'ապրիմ,  
Քանզի աչերդ էին միակ իմ երկիւնք  
Յօր լոկ յառել կը սիրէին աչերն իմ .

Քանզի քենէ հեռի ի՛նչ եմ չգիտէի ,  
Կեանքն ինձ համար համառօտուէր լոկ յայն ժամ  
Զոր , երջանիկ , բազկացորդ մջ անցնէի ,  
Եւ թուէր ինձ թէ զուարթնոյ մի գիրկ ջընանամ :

Քանզի շունչդդ զոր իմ շրթունք ծըծէին  
Միակ սընունդն էր իմ հոգւոյն ու կենաց ,  
Քանզի իմ օրն ինձ կը ծագէր քո յաչաց ,

Եւ քանզի , ո՛հ , եղո՛ւկ չուառ իմ բախտին ,  
Այս ամենայն խոյս ետ յինէն զերդ ստուեր ,  
Ստուեր մ' եմ ես որ մըթոյն մէջ կայ յերեր . . . :

1872

Ի

Լ Ի Ճ Ն

( Թարգմանեալ է Լատերէնէն )

Այսպէս յափունս ի նորանորս մղեալք յաւէրժ հողմավար ,  
Զգեալ տարեալք անդարձական անդր ի գիշեր մշտամուայլ ,  
Ո՛չ երբէք ո՛չ լիցի մեզ մարթ օր մի և եթ դարուցն յովկէան  
Արկանեւ ըզմեր խարխիս :

Ո՛վ լիճ , հազիւ այն ինչ ի յանգ զասպարէզ իւր եհան ամ ,  
Եւ առ սիրուն ալեօք քոյին՝ զոր տեսանեւ անդրէն պարտէր ,  
Հայեաց , մէն միայնակ դամ ես ի նիստ աստ ըզլիմասս  
Ուր դու ըզնա տեսեր բազմեալ :

Մունչէիր դու այսպէս ընդ խորափիտ քարաժայռիւքս ,  
Այսպէս բախեալ խորտակէիր ընդ պատառուն  
նոցին ընդ կողս ,  
Այսպէս զալեաց քոց ըզփրփուր առեալ սրսկէր հողմոյն շունչ  
Ըզպաշտեի նորին ոտիւք :

Յիշցե՞ս դու զերեկոյն զայն ուր մեր նաւակ ծըփէր լըռին ,  
Եւ ի բացեայ ոչ ընդ ալիս և ընդ երկնաւ լինէր ինչ լու  
Այլ շառաչիւն թեւճակաց որ բախէին դաշնակաձայն  
Ըզկոհակսրդ գեղածփիկ :

Յեղակարծումն բարբառք ձայնինորահնչիւնք՝ անծանը երկրի  
Ըզսրբացեալ ափանց անդէն զարձագանգըս զարթուցին .  
Կարկեցան ջուրը , կացին ի լուր , և սիրելին ինձ աւաչ  
Խօսել կալաւ զայս օրինակ .

« Ո՛վ ժամանակ , ա՛ւ ըզկայ , և դո՛ւք , ո՛ ժամը ,  
ժամը գեղապարը ,

« Դադարեցէ՛ք յընթացիցդ ,

« Տո՛ւք մեզ թոյլ վայելել յարագալաց ի հեշտանս  
« Գեղեցկագոյն մերոց աւուրց .

« Ե՛ն , ե՛ն շատ մահկանացուք որ ի թիկունս ըզձեզ կարդան ,  
« Սահեցարուք վասըն նոցին .

« Առեա՛լ բարձէք զոյգ ընդ աւուրսն ըզսրտամաշ  
նոցին ըզհոգս ,  
« Առ երանիկս մի՛ գայք հուպ :

« Այլ ի դուր , բա՛րէ , խնդրեմ զի գէթ վայրիկ մի կացցէ ժամ ,  
« Խոյս յինէն տայ ժամանակ .

« Ասեմ ցայդուն . լե՛ր յամրընթաց . և Արչալոյս վաղաժաման  
« Վանել ըզմուայլ դայ գիշերոյ :

« Արեւ ապա սիրեսցուք . հա՛պ՝ ի վայել օ՛ն փութասցուք  
« Փախտէից ժամուց արագ .

« Զիք մարդոյ նաւահանգիստ , անեզր՝ անափն է ժամանակ ,  
« Սահի նա , և անցանեմք : »

Յաչաղիս՛տ դու ժամանակ , մա՞րթ ինչ իցէ զի այն վայրկեանը  
Արբեցութեան՝ յոր սէր առատ զերջանիւթիւն հեղու զմեօք ,  
Ի բաց ի մէնջ սլացին յարագաթուիչ ի գարչապար  
Զարաղէտ աւուրց հանդէտ :

Ո՛չ ըզնոցին ըզհետս գոնեայ լիցի մեզ հնար հաստասել,  
 Զի՛նչ . սահեա՛լք առ յաւիտեան . զի՛նչ . ի կորո՛ւստ  
 մատնեալք յանդիւտ .  
 Որ ըզնոսին ետ՝ Ժամանակ, և որ շորթեալ կապտէ ի մէնջ  
 Ո՛չ եւս այլ հատուցէ մեզ :

Յաւէրթութի՛ւն, անէութի՛ւն, անցեա՛լ, անդո՛ւնդք  
 նսեմաստուերք,  
 Յի՛նչ վարէք դուք զաւուրսն զոր կլանէք յանյագ որկոր .  
 Զա՛յն տուք, աղէ՛, դարձուսջի՛ք ի մեզ ըզվեմ մզայն զմայլանս  
 Զոր կորզեա՛լ բառնայք ի մէնջ :

Ո՛վ լիճ, ժա՛յոք անբարբառք, անտա՛ռ մրթին և անձաւք,  
 Ոյց անխայ՛է Ժամանակ կամ թէ կարէ վերկենցաղել,  
 Ի ձե՛զ, ի քե՛զ, չքնա՛ղ բնութիւն, մնասցէ գէթ անկորուստ  
 Գիշերոյն այնր յիշատակ :

Կացցէ՛ անանց ի քո անդորր, ի մրկայոյզ քոյին վրդով,  
 Լի՛ճ գեղեցիկ, և ի պատկեր գեղածիծաղ քոց բլրոց,  
 Եւ յեղեւինս թխատերեւս, և ի խարակս վայրենատիպս  
 Որ գքո՛ ալեօք առկախին :

Լիցի՛ նա անդ ի զեփիւռ մեղմասարսուռ և փախստեայ,  
 Ի գոչլւն քոց եղերաց կրկնեալ յափանցդ ի գանդիւն,  
 Յարձաթածամն ի յաստեղ որ ի նշոյլսն նուաղալոյս  
 Զերեսսդ ի գոյն ներկէ սպիտակ :

Եւ թո՛ղ հողմն տխրահեծ, դառնահառաչ նուրբ եղէգն,  
 Խնկաւէտ քոյին այերց սնուչահոտ բուրմուռք թեթեւ,  
 Եւ ամենայն որ ինչ լսի, և տեսանի, և չնչի,  
 Ասասցէ թէ՛ Սիրեցին :

ԻԱ

ԱՌ ԱՄԵՆ . Տ . ՆԵՐՍԷՍ Ս . ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
 ՊԱՏՐԻԱՐԿ Ս . ՊՕԼՍՈՅ  
 Ի ՀԱՆԴԻՍԻ  
 ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՇԱՀՆՍՁԱՐ . ՎԱՐԺԱՐԱՆԻ  
 ԵՐԳ

Մովսէ՛տդ երկնառաք Արամեան ազգին,  
 Որ, խաչ յաջդ 'ւ ի ձախ ցուպ քաջի հովուին,  
 Շաւիղ լուսահետ փրկութեանն յերկիր  
 Հորդես հէք հօտիդ՝ ընդ դերբուկս ցանցիր,  
 Որ թեւս լուսասփիւռս ի բարձանց գահուդ,  
 Զերդ յուսոյ աստղիկ Մասեացն ի ծագ մութ,  
 Պարզես ըզլուին աճեամբք հին փառաց  
 Յոր թուի սողոսկել կայծակ մի կենաց,  
 Շահնազարայ գաւաղուք  
 Զանուռ օրհնեն վեհապանծ,  
 Շահնազարայ գաւաղուք  
 Քեզ ձօն ըզսիրտս տան զիւրեանց  
 Ուր Հայրենեաց և Ազգի  
 Հուր բոցավառ բորբոքի :

Մինչ դու, յերկնամուխ գինեալ ի սուրբ զէն,  
 Հայկեան Մակարէ, խաւարին ընդդէմ  
 Մըզես ըզմեծ մարտ փրկութեան ազգին,  
 Վառեալք յողուոյդ խանդ և լուսոյ ի սուին,  
 Մրցմանն ի հանդէս վեհ հետոցդ ըզկնի  
 Աւսցուք և մեք, նահատակք արի .  
 Դափնիք ձակատուդ մեզ խրախոյս յորդոր,  
 Առաջնորդ ի փառս աջ քո երկնազօր .  
 Շահնազարայ գաւաղուք  
 Զանուռ օրհնեն վեհապանծ,  
 Շահնազարայ գաւաղուք  
 Քեզ ձօն ըզսիրտս տան զիւրեանց .  
 Յայնս ըզհողուոյդ հե՛ղ գաւիւն  
 Եւ լինիցին աննըկուն :

ԻՐ

ԵՐԳ ՀԱՅ ՈՒՄԱՆՈՂԱՑ

Ի ՀԱՆԴԻՍԻ ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ

Մրցանակացն եհաս արդ ժամ .  
 Եղբա՛րք և քորք , օ՛ն համերամ  
 Երթամք առնուլ զայն պսակներ  
 Որովք ծնողաց մեր վեհ ձեռներ  
 Պճնել ըզմեր ճակատս փութան  
 Զոր թրջեցին քրտուներ այնքան :

Տեսէ՛ք , զի՛արդ քաղցրիկ ժպիտ  
 Շողայ նոցին յաչըս և խինդ .  
 Ամաք թախծութեան ցրուեալ իսպառ ,  
 Նոր իմն ի կեանս և յաշխոյժ վառ ,  
 Ծափս հարկանեն զուարթագին  
 Եւ ի յաչացն արտասուք կաթին :

Պատերազմին ծանր է վաստակ ,  
 Սակայն քանի՛ քաղցր յաղթանակ .  
 Այս գեղահիւս պսակացն իտես  
 Եւ ի փառացս յայս վեհ հանդէս  
 Ո՛վ չմոռնար զասպարիզին  
 Փուշերն որք զոտս մեր խոցեցին :

Յասպարիզին այնր ի մուտ  
 Տարեալ ըզքայլս մեր դողդոջուտ ,  
 Հրէշ ահարկու , ահեղ վիրագ  
 Մեզ մատնանիչ ըրին մեր հարք .  
 Ըսին՝ Այդ է մեր տան ոսոխ ,  
 Խաւար կոջի , անկցի՛ ի հող :

Այն վայրկենէն , եղբարք և քորք ,  
 Մեք անվեհեր լուսոյ զինուորք ,  
 Մատաղ ձեռամբ մեր աղեղներ  
 Լարեցինք մեք , թռեան նետեր ,  
 Եւ թէ վիրագն ինկած չէ դեռ ,  
 Սակայն հաստոյր են իւր վէրքեր :

Ո՛չ , հարք և մարք մեր սիրասուն ,  
 Ո՛չ հանգիստ սուրք մեր պիտ՝ առնուն ,  
 Մեր կռուոյն չի՛ք վախճան բնաւ ,  
 Մի՛ հարուածոց մեր լիցի զբաւ ,  
 Մինչեւ որ ժանտ մեր թշնամին ,  
 Մինչեւ խաւարն իյնայ գետին :

Ահա՛ յայս պերճ պսակեալ դավնիս  
 Որ խրախոյս նոր հեղուն յոգիս ,  
 Նոր լուսածոյլ զրահիւք վառուած  
 Եւ իմաստից սուին ի յաջ ,  
 Փառացն ի դաշտ անդրէն փութամք  
 Ըզմեծ կրօնէն հանել ի յանդ :

Օրն յաղթութեան՝ հա կրմերձի ,  
 Փոքր մի ևս խաւարն մեռնի .  
 Զայն տուք հիքի Հայաստանին ,  
 Վառ առնու սեաւ քօղն իւր ճակտին .  
 Ծագի արեւ , լուսանորոգ  
 Կանգնին Հայուն փառաց բեկորք :



ԻԳ

Հ Ն Ձ Ե Ա Կ

Ինչպէս մի վարդ ի ծաղկեփունջ մի վառի ,  
Ինչպէս յաստեղց ի հոյլ լուսին կը նաղի ,  
Այսպէս և դու մտերմուհեաց քոց ի պար  
Շողաս , ո՛ր կոյս , զերդ աղամանդ յականց շար :

Ո՛չ յոք զիւր շնորհս ա՛յնպէս առատ հեղ երկին ,  
Ո՛չ զոք այնպէս պճնեաց յիւր ձիրս երկնային .  
Ո՛չ ոք ունի գեղ իբր ըզբոյդ սրտադբաւ ,  
Աչացդ հանգոյն պայծառ աչեր ո՛չ ոք բնաւ :

Երբ կը քայլես , կարծեմ՝ եղէք մ՛ ես փափկիկ ,  
Երբ կը նայիս , կարծեմ՝ շողան գոյգ աստղիկ ,  
Երբ կը ժմտիս , կարծեմ՝ ծիծաղ ել արփի .

Երբ կը խօսիս երկնազդեցիկ մի կիւս թուիս ,  
Երբ նուագես , զուարթուն մի զգամ առ իս ,  
Եւ , ո՛հ , ինչպէս քեզ չըսիրեւ ոք մարթի :

1874

ԻԳ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Կուսան չքնաղ , փափուկ վարսիցդ մի ոլոր  
Եւ մի պատկեր կերպարանացդ երկնաշնորհ  
Ինձ նուիրես յիշատակ .

Կ՛ուզես դո՞քա իմ սրտին մէջ կենդանի  
Պահեն յաւէտ ըզքո տեսիլ գեղանի  
Եւ գյուշ քոյին սիրունակ :

Երկինք երկիր ինչ որ ունին գեղեցիկ  
Ինձ յար ըզքոյդ կը պատկերեն , ո՛ր կուսիկ ,  
Գեղ և շնորհ բազմազան .

Իւ ի բնութեան որչափ հնչեն ձայնք անոյշ ,  
Նոքա բոլոր հծծեն յուսկն իմ և ի յուշ  
Ըզքո անուն սիրաձայն :

Յերկին պայծառ՝ զամբիծ ճակատ քո վճիտ ,  
Յայդ շողազարդ՝ զաչքիդ նայուած լուսախիտ ,  
Ի վարդն ըզդէմուդ շիկնած ,

Ըզնազելի փափկիկ հաստիդ ի շուշան  
Տեսնեմ , և դքո կարծեմ լըսել քաղցրիկ ձայն  
Ի դայլայիկ սոխակաց :

Ըզքեզ մոռնա՛լ . . ո՛հ , ո՛չ , ցորչափ սիրտ մ՛ ունիմ .  
Սակայն առ իս ունել յաւէտ քո անձին  
Մի նշխարը պաշտելի

Ի աչացս առջեւ ըզտիպ գեղոյդ զոր բնութիւն  
Նըկարելու լաւ՝ բաւական չունի գոյն ,  
Այս ինձ շնորհ մ՛ է երկինի :

1874

ԻԵ

Ա Ռ Ծ Ի Ծ Ա Ռ Ն Ն Ո Ւ Ղ Ե Ի Ո Ր

Երթա՛ս բարեաւ , ո՛վ օդաչու ծիծեռնակ ,  
Թափուր սրտիս դու մըտերիմըդ յետին ,  
Երթա՛ս բարեաւ , քեզ ամայի իմ հոգեակ  
Յարկ հիւրասէր մաղթէ և հեշտ մի երկին :

Թառամեցան դաշտաց ծաղկունք , և անկան  
Մառոց սաղարթք , լըռեց զեփիւռ ի մայրիս ,  
Յուրտ քամիներ սեւ գոյժ բերին ձըմեռուան ,  
Եւ նո՛ր գարնան դու ի խնդիր կը թռչիս :

Ո՛հ , ծիծեռնակ , քանի՛ հոգիք իրր ըզբեզ ,  
Հոգիք յոյց իմս առնոյր զիւր կեանքն և ըզսէր ,  
Թողին զիմ՝ յարկ և տարադէմ թռան այսպէս  
Գընալ խնդրել նոր իմն արեւ , նո՛ր աստղեր :

Ո՛հ , քեզ նըման քանի՛ հոգիք պահ մ՛ եկին  
Զուարթ դործել յիւրեանց դայլայլ զիմ խցիկ ,  
Յետոյ դացին , և լըռութիւն արտմագին  
Տիրեց անգրէն , և սուգ էառ իմ սրտիկ :

Գէթ դու , թռչնիկ , ինձ մընայիր . ո՛հ , մոռցա՞ր  
Ինչպէս քեզ հետ կը բաժնէի զիմ ըզհաց .  
Մոռցա՞ր ինչպէս կը սիրէինք մեք զիրար ,  
Եւ զերգդ աշխոյժ կը խառնէիր յիմ հառաչ :

Մոցս ապաւէն ցուրտ հողմոյն դէմ քեզ տայի ,  
Կերգէիր դու , ձայնիկդ ըզխուց իմ լընոյր ,  
Եւ կարծէի թէ չեմ միակ , և թուէի  
Թերեւս մոռնալ տըխուր ձըմեռն մահաբոյր :

Բայց , ո՛չ , գընա՛ , գընա՛ յինէն , ծիծեռնակ ,  
Մի թշուառի ծոց ուր ամէն յոյսք մեռան ,  
Ուր ա՛յնքան յուշք թաղուին իբրու ցուրտ դիակ ,  
Գուցէ և քեզ ըլլայ մի սեաւ գերեզման :

Քեզ կ'սպասեն զուարթ գարուն , հեշտ օրեր ,  
Գընա՛ . թշուառն թո՛ղ յիւր ձըմեռն ու ի սուգ .  
Տժգոյն արեւ , մշտտ երկին , մերկ սարեր  
Ի ճահ սրտին են զոր պատէ վշտաց բուք :

ԻԶ

ԶԵՓ Ի Ի Ռ Վ

Մերթ , յորժամ այգ , լուսոյ աղջիկ ,  
Նորազարթոյց դուրս գայ մահճէն ,  
Վարդ ոտներով՝ ոսկերըրիկ  
Բլրոց ի ծագ նազելաճեմ ,

Զերդ կուսական նորա բարձէն  
Թուած անընց հոյլ փափկաթեւ ,  
Պար յօրինել իւր առջեւէն  
Յաւետաւոր ի քայլ թեթեւ .

Մերթ ծառոց գիրկն երթալ օրրել ,  
Իբր մօրն ի ծոց մանկիկ զուարթուն ,  
Եւ սաղարթուց բիւր լեզուներ  
Շարժել ի մեղմ յերգ թրթռուն .

Է զի , որպէս կուսին ճակատ  
Գգուէ մի խոհ սիրազրգիւ .  
Շոյել առուին ըզկուրծն արծաթ  
Որ մայրեաց մէջ հեւայ ի նիրհ .

Է զի , այերց Երոսք կայտառ ,  
Մաղկէ ծաղիկ թռչել տարփող ,  
Զամօթագեղ վարդին հրավառ  
Այան համբուրել , ծծել ըզցօղ ,

Ըզփափկամէջ գրկել շուշան ,  
Գիշերազուարճ յասմկին ի ծոց  
Թալանալ հեշտ , և երբ վայրկեան  
Փոխի՛ փոխել գգուանք և բոց .

Աստ ծաղկանց ի բիւր համբոյր  
Խնկեալ համակ՝ անուշահոտ  
Բախել ըզթեւ և համասփիւռ  
Խայտալ ցանել բուրմուռնս ընդ օդ .

Մերթ և աղջկան ընդ հերս արձակ  
Խաղալ քծնիլ , առ մեղրաղօծ  
Շրթամբն քերել և բիւր կատակ  
Առնել 'նդ շղարշ՝ քօղ խորհրդոց ,

Եւ քնքաձայն յունկըն նորին  
Հծծեւ մնչել տարփատենչիկ ,  
Եւ տալ ցընոր թէ սիրողին  
Չայնն է որ սէր ոգէ մեղմիկ .

Եւ կամ իրրեւ ոգի սփոփիչ ,  
Գալ փայտայել ի շունչ ձեր զով  
Ըզհուր ճակատն և ցողալից  
Աչերն սրբել զբթոտ ձեռքով .

Կամ թէ նոճեաց մէջ սեւաստուեր  
Պահ մ' առնուլ կանգ և տապանաց  
Վերայ արխուր երգ մ' յօրինել  
Իբրու հրեշտակ սըգոյ ի լաց .


Կայտուել , պարել , երգել , սիրել ,  
Չեփիւռք , գարնան մանկուք զուարթ ,  
Ահա՛ ձեր կեանք . չընախանձել  
Ընդ ձեր նրսեհ իցէ՞ ինչ մարթ :

Չեզ ասպարէզ այերց դաշտեր ,  
Յազատ ի թեւ ուր ձեզ տանին  
Տենչք ձեր՝ թռչիք , ձեր բոյծն է սէր ,  
Եւ ծաղկանց ծոցը ձեզ շիրիմ :

Ո՛հ , ի ժամս անդ ուր սիրտ ըզլանջ  
Կ'ուղէ պատուել և իղձք կըրակ  
Հերձեալ զմիջոց դընալ զիւրեանց  
Գըանել ըզբոյն ի սլաց արագ ,

Չեփիւռք , օդոց ազատ մանկուք ,  
Չիա՛րդ ձեր թեւքն ունել ցանկամ ,  
Թռչել մի հուր համբոյր՝ արցունք  
Գընել սիրոցս անդ ի խորան . . . :

1876



### ԻԷ

### Ե Ր Ա Չ

Սենեկին մէջ մինակ էինք . գիշեր էր .  
Հեշտ լուսթիւն մի մեր շուրջը կը պատէր .  
Վառ էր ճրագն , այլ ինձ թուէր թէ ոչ այն ,  
Այլ իւր աչաց շողն էր որ լոյս տայր խցկան :

Իրարու դէմ նստած էինք . զերդ կրկին  
Ճաճանչք յիրեար մեր ակնարկներ սուզէին ,  
Քնքոյչ ձեռներն իմ ձեռքիս մէջ սեղմէի ,  
Եւ ժպտէր ինձ յանոյշ ժըպիտ հրեշտակի :

Եւ չգիտէի թէ ո՛ւր եմ ես . — երկրի՞ վրայ  
Թէ երկնային դրախտից մէջ , և վկայ  
Երկինք , ոչ եւս թուէի ինձ մահացու  
Ո՞մն լինել վըսեմական յայն ժամու :

Մուցած էի զամէն ինչ որ շուրջ անդ կայր .  
Հո՛ղմ՝ մըռընչէր կամ թէ որո՞տ կը գոռայր .  
Ձի՞ փոյթ էր ինձ , իմ արեղբայրն էր խըցիկն այն ,  
Ձի՞նք տեսնէի լոկ , և լէի ձայն իւր միայն :

Մերթ լուռ կայինք , և սիւշ ու հեշտ ի նայեաց  
Կ'ընթեռնուինք մեր սիրտքն աչաց մէջ միմեանց ,  
Լամարթինի մերթ կամ Պայրնի մուսային  
Ունկն տայինք սիրանուագ քընարին :

Ի լուր վըսեմ այն դաշնակոց իւրն հոգեակ ,  
Ձերդ լիճ ի սիւք կայտառ , յուզէր և , զերդ այդ  
Յողատամուկ , կապոյտ աչացն երկնագեղ  
Կը փայլըէր ի շիթ կրկին սրտագեղ :

Մերթ խօսէինք , ձայն իւր , մրմո'ւնջ աղաւնույ ,  
Իբր երգ մ' անոյշ գընայր ի խորս իմ հոգւոյ .  
Մեր շրթներէն , իբր յաղբերէ յորդ ալեակ ,  
Դուրս կը ծորէր սէր մեր սրտից և տարփանք .

Եւ կ'ըսէր ինձ թէ ի'նչպէս միշտ իմ պատկեր  
Իւր կուսական երազոց մէջ թեւածէր ,  
Եւ թէ ի'նչպէս գիշեր մ' ստուերս երջանիկ  
Իւր վարդ շրթնէն խըլած էր մի համբուրիկ :

Եւ , նախանձոտ իմ ստուերին , ծըռէի ,  
Իրականայր երազն , և շուրթս , զերդ վարդի  
Թերթէն մեղուն , կախուէր յայտիցն , ո'հ , յայնժամ ,  
Եւ հեշտութեան դար մ' ըմպէի յայն վայրկեան . . . :

Ո'հ , ո'ւր այն ժամ դոչեմ և ես Նվիտին  
Որպէս Արտոյն գոչէր տըխուր յափ Լըճին .  
Ո'ւր , ո'վ երկինք , գընան այս ժամք , և վշտա՞ց  
Եւ եթ աւուրք չունին թեւեր ի սըլաց . . . :

1874

# ԻԸ

## ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆՆ

( Թ-բբճանեւ է Լ-մարթինեայ )

Դո՛ւ զոր յօրհասական նորին շրթունս ժողովեցի ,  
Ընդ յետնոյ իւրում շնչոյն և ընդ յետնոյ հրաժեշտին ,  
Խորհրդանշանդ երկիցս սուրբ , ոգեվարի ձեռին տուրք ,  
Աստուծոյն իմոյ պատկեր ,

Քանի՛ արտօսը հեղաւ գըոյին ըզպաշտելի սուրբ ոտիւք  
Ի նուիրական յայնքմ ժամէ ուր ի ծոցոյ մարտիրոսի  
Յիմ ի ձեռս ի դողողունս անցեր տամուկ տակաւին  
Ի յետինն յիւր հառաչանս :

Ի բոց յետին նըռուէին ջահք սրբալոյսք տխրափայլք ,  
Մրմնջէր քահանայն ըզքաղցրանուագ երգըս մահու ,  
Նըման երգոցըն ողբաձայն զոր մրմնջէ մատաղամայր  
Առ մանկիկըն հեզանինջ :

Բարեպաշտ իւրոյ յուսոյն հետք ի ճակատն կային անջինջք ,  
Եւ ի գիծըս պայծառակերպ երկնագեղըն երեսաց  
Վիշտ փախստեայ տըպաւորեալ էր զիւր շընորհ  
վայելչութեան ,

Եւ մահ՛ զիւրն ըզմեծութիւն :

Հողմ՛ որ փայտայէր ըզհերարձակ իւր ըզզլխիկ՛  
Մերթ յերեւան ածէր ինձ և մերթ յինէն զղէմն ծածկէր ,  
Իբր ըզկճեայ մահարձանաւ թըխատերեւ նոճւոյն ստուեր  
Տատանի՛ ծուփ ի ծուփ :

Ի մահաշուք ի մահճէն կախէր ի վայր մին ի ռազկացն ,  
Իսկ միւսն՝ զիւրով սրտիւրն ամիտիեալ մեղկօրէն՝  
Թուէր խնդրել տակաւին և ըզշրթամբըն պնդել  
Ըզփրկչին իւրոյ պատկեր :

Ի համարոյր նորին չրթունքն անջատելին կիսարացիկ ,  
 Այլ խուսափեալ էր իւրն հոգեակ յաստուածեղէն  
 անդ համբուրի  
 Ի բրեւ անոյ խուսկ թեթեւ զոր բոց անդրէն լափէ վիզու  
 Մինչչեւ կիզեալ հրավառ :

Արդ սառուցիկ ըզրթամբն ամենայն ինչ ննջէր խաղաղ,  
 Ի նիրհեալ յանտրոփ ծոցին լռէր շունչն անեւելէջ ,  
 'Ի արտեւանունքն ծանրացեալք զականդեօքն  
 անհայեցուած  
 Անկանէին կիսով ի վայր :

Եւ ես յոտին , ըմբռնեալ յահ և ի դող զաղտնասարսուռ,  
 Ի պաշտելին յայն մնացորդ չիշխէի , ո՛հ , գընալ հուպ ,  
 Ի բրու այն թէ ի մահուն յանրարբառըն մեծութիւն  
 Սրբագործեալ էր նա արդէն :

Չիշխէի . . . այլ իմացաւ ըզլռութիւն իմ քահանայն ,  
 Եւ ի մատանցըն սառուցելոց ըզխաշելոյն առեալ պատկեր ,  
 « Ահա՛ւասիկ յիշատակ , 'ւ ահաւասիկ է քեզ յոյս .  
 Արդեա՛կդ իմ , տա՛ր դու զնոսին : »

Այո՛ առ իս մրնասցես դու , ժառանգութի՛ւնըդ մահայուչ ,  
 Յօրէ անտի եօթնիցըս ծառն՝ զոր զանանուն նորին չիրմաւ  
 Տնկեցի՛ փոխեալ զտերեւսն ի նոր սաղարթըս պճնեցաւ ,  
 Ո՛չ դու յինէն գնացեր ի բաց :

Մօտ առ սրտիւս , ուր , աւա՛ղ եղծեալ ջնջի ամենայն ,  
 Կացեալ՝ ըզնա ժամանակին ի մոռացմանց պահէիր զերծ ,  
 Եւ աչկունք իմ չիթ առ չիթ գըրոյմեցին զիւրեանց ըզհետս  
 Ի փըզսիրըն կակղացեալ :

Երկնասըլաց հոգւոյն յեալն դու մտերիմդ աստուածեղէն ,  
 Ե՛կ , ըզբրախս իմով հանգիր , խօսեա՛ց դեռ եւս և ասա՛ցիս  
 Չոր ինչ նայն ասէր ցըքեզ՝ մինչ նուաղածայն իւր բարբառ  
 Առ քեզ և եթ հասանէր այլ :

Յերկրայական անդ ի ժամու ուր յինքն հողի մեր ամբիտիեալ՝  
 Ծածկի 'նդ քօղոյն որ թանձրացեալ իջեալ մածնու  
 ըզմեր աչօք ,  
 Եւ սառուցիկն ի զգայնոց քաղեալ խուսի քայլ առ քայլ  
 Հրաժեշտից յեանոց խուլ :

Մինչ ընդ կեանս և ընդ մահ երերածուփ ի վարանս ,  
 Ի բրու միտք ինչ ծանրութեամբն ի բաց ի բնոյն  
 իւրմէ մեկնեալ ,  
 Կախեալ կայ 'ւ ի մէն մի շունչ դողայ հոգի մեր ի տատան  
 Ըզգիշերով գերեզմանին :

Մինչ երգոց և հեկեկմանց խառնածայնըն դաշնակութիւն  
 Ո՛չ եւս արդէն զարթուցանէ ըզմանրանինջն ըզմեր ողի ,  
 Ի շրթունս ոգեվարին մածեալ յետին ի պահուն  
 Ի բրու մտերիմ ոք յեաին :

Առ ի դանձուկ անցիցըն լուսաւորել զտրհաւիրս ,  
 Առ Ատուած հանել ի վեր ըզվայրանկեալն իւր հայեցուած ,  
 Ո՛վ միթիթարդ աստուածեղէն՝ զոյր համբուրեմք  
 ըզպատկեր ,  
 Ասա՛ , զի՞ դու հծծես նըմին :

Գիտես , գիտես դու մեռանել , և աստուածեանքն արտասուք  
 Յահաւոր ի գիշերին՝ ուր դու ընդ վայր կացեր յաղօթս՝  
 Գետահետեալ առագեցին ըզրբազան ձիթեւնոյն ոտս  
 Յերեկոյն մինչ յառաւօտ :

Ի խաչէն՝ ուր ակն քո չսփեաց ըզմեծ խորհրդոյն խորս ,  
 Տեսեր ըզմայր քո յարտասուս և զհամագոյս մտեալ ի սուգ .  
 Մեզ հանդոյն և դու յերկրի ըզկարեւորսզ թողեր  
 Եւ ըզմարմին քո ի դագաղս :

Յանուն մահուն քոյ այգորիկ չընորհեացի ինձ տըկարիս  
 Անդ ըզբոյով սրտիւդ հանել ըզցաւազին զայս հառաչանս .  
 Յորժամ հասեալ զայցի իմ ժամ՝ դու ըզբոյինդ յիշեմքիր .  
 Գո՛ւ որ գիտեսըզ մեռանել :

Խնդրեցից ըզտեղին ուր անհագագ նորին բերան  
Աւանդեաց ըզքո ոտիւք ըզհրաժեշտին անդարձ ողջոյն .  
Եւ եկեսցէ հոգի նորին աստանդելոյ իմոյ հոգւոյն  
Կարապետել յէին ի գիրկ :

Ո՛հ , իցի՛ւ , իցի՛ւ յայնժամ առ մահաշուք իմով մահճօք ,  
Տիրազգած՝ այլ անխըռով , արտասուելից որսէս հրեշտակ ,  
Սգազգեցիկ ինչ կերպարան յիմոց չրթանց ժողովէր  
Ըզսուրբըս զայս ժառանգութիւն :

Քայլիցն յետնոց լե՛ր զօրաւիգ , քաղցրացո՛ դու  
զիւր ժամն յետին ,  
Եւ , սիրոյ և յուսոյ գըրաւակա՛նդ սրբագործեալ ,  
Յորմէ գընայն տարադէմ առ որ մընայն աստէն յերկրի  
Ա՛նց դու այսպէս փոխ առ փոխ :

Մինչեւ յօրն ուր մեռելոց թափ ընդ մըթինն անցեալ կամար՝  
Չայն յերկինս որոտընդոստ կոչեալ զնոսին միահաղոյն  
Աւհասարակ զարթուսցէ զորըս ննջենն ընդ հովանեաւ  
Յաւէրժական սրբոյ խաչին :

1875

**ԻԹ**

ԱՌ ՀԱՅՐԵ ԻՍ

ՉՕՆ

Թարգմանութեան Լամբէի

Յոսկեքանդակ և մեծաշուք ի դամբան  
Այլք զիւրեանց հօր պճնեն զյետինն օթեվան ,  
Իսկ ես որոյ արտասուք և շող լուսնեկին  
Գիտեն և եթ թէ ո՛ւր ածիւնք քո հանգչին ,

Չայս , ո՛ իմ հայր , զայս քեզ կանգնեմ ես արձան ,  
Ոչ առաւել ինչ քեզ ձօնել ըաւական .

Սակայն թուի ինձ թէ քրտան դոյզն այս չիթ  
Չոր ըզչիրմաւդ հեղու ճակատ օրգեկիդ ,  
Քաղցր է ոսկերցդ և նոցին շուք պերճագոյն  
Քան զպարոսեան կուճ զոր կանգնէ ճոխութիւն :

1871



**Լ**

ՅԻՇԵՍ ՉԻՍ , ԿՈՅՍ

Յիշե՞ս զիս , կոյս , յորժամ արեւ լուսաժրպիտ  
Ծագէ յերկին , և կենսախայտ զարթնու բնութիւն ,  
Յիշե՞ս զի սէրդ այսպէս և յիմ մահացեալ սիրա  
Շնչէր նոր կեանք և բորբոքէր անդ նոր աւիւն :

Յիշե՞ս զիս , կոյս , երբ ցրտահար տեսնես ծաղիկ  
Որ զգլխիկն առնու ի վեր ի շող այգուն ,  
Յիշե՞ս զի երբ տեսնէի զքեզ՝ և իմ սրտիկ  
Չուարթացեալ կայտուէր բաղխէր խանդիւ թրթռուն :

Յիշե՞ս զիս , կոյս , երբ տեսնես թէ աստղ աչերով  
Երկին ի ծով նայի , և նա վէտ վէտ ի լոյս  
Այդ նայուածքին տակ կը յուզի , քո սրտաթով  
Ի քաղցր հայեաց զմայլուն հոգւոյս յիշե՞ս ըզյոյզ :

Յիշե՞ս զիս , կոյս , երբ մարմանդին մէջ զեփիւռիկ  
Խաղայ տարմամբ փայփայելով ըզդալարիս ,  
Յիշե՞ս , զիա՛րդ մատուչքս հեշտիւ ըզխոսպոսիք  
Մետաքս հերացդ կը շոյէին , զայտիդ թաւիչ :

Յիշե՞ս զիս , կոյս , երբ երկնից մէջ աստեղց կրկին  
Ճառագայթներն շողջող յիրեար տեսնես խառնուած .  
Մեր ակնարկներն յիշե՞ս և ժմիտքն այն սիրածին  
Որ ընդ երկա՛ր ա՛յնպէս յիրեար մնային թաղուած :

Յիշե՞ս զիս , կոյս , երբ կը լսես թ' արծաթ ալեակ  
Եզերց վերայ հծծէ հեւայ հեզամնջիկ ,  
Յիշե՞ս զմրմունջն այն սիրաձայն յոր իմ հոգեակ  
Յաճախ ըզքոյդ օրրէր մեզմով տարփատենայի :

Յիշե՞ս զիս , կոյս , երբ ծիրանի կրկին ամպեր  
Տեսնես ի թիւ ընդ եթերին կամար կապոյտ ,  
Մեր զոյգ հոգեաց յիշե՞ս դանոյշ զայն երազներ  
Յորոց ի թեւս յանհունութիւն թռէին ի ստոյտ :

Յիշե՞ս զիս , կոյս , երբ արեւմուտք շառագունին  
Յարիւոյն հուսկ շող որ դժկամակ թողու զեթեր ,  
Ըզներ հրաժեշտս յիշե՞ս յայնժամ և ըզյետին  
Մեր համրոյրներ որոց սեւ մութ կը յաջորդէր :

Յիշե՞ս զիս , կոյս , երբ մի լըճակ տեսնես խաղաղ  
Որոյ նիրհուն ալքն օրրեն գիշերն ի բուն  
Լուսնոյն ըզգէմս , յիշե՞ս զի քո պատկեր ծիծաղ  
Ա՛յսպէս հոգւոյս ժմտէր ի խորն մինչ իսկ ի քուն :

Յիշեա՛ զիս , կոյս , երբ յանտառի մի աղբերակ  
Մշտանոսան տեսնես , խոխոջն՝ անվերջ դաշնակ ,  
Յիշեա՛ զի յիմ սրտին նոյնպէս սէր քո , Հրեշտակ ,  
Բղխէ յաւէրժ և երգէ անդ մշտանուագ . . . :

1875

ԼՍ.

ՏԵՍԻԼ

Մանուկ էի , սիրտըս՝ կրկն դեռարտց ,  
Ճակտիս վերայ խաղսյր սյգուն ճառագայթ .  
Ոտիցըս տակ ինձ կը ժպտէր հոյլ ծաղկանց ,  
Գլխոյս վերեւ որար բռնէին թիթուռնք զուարթ :

Ո՛հա՛ յանկարծ հերձաւ երկին , լուսեղն  
Հրեշտակիկ մի թռաւ էջ առ իս ժմտաղին .  
Մի բառ հծծեց նա դիւթական , և անդէն  
Սնհունութիւն ծաւալանայր յիմ սրտին :

Թեւը ինձ բուսան , և օդաչու զիւր ըզհետ  
Սլացայ ընդ ամպս , երկնից դըրախտը մեզ բացան .  
Մաղկունք ասաղե՛ր էին , աղբերք՝ մեղրաւէտ ,  
Եւ խնկարոյր այերք՝ դաշնա՛կ հեշտաձայն :

Յաստղածաղկանց նըմա փունջեր տայի նուէր ,  
Շա ճաճանչից պսակս ի ճակատ իմ յեռոյր .  
Զերդ բոյր կրկին յիրեար հոգի մեր խաւնուէր ,  
Եւ Սէր ի մեզ զարրեցութիւնս իւր հեղոյր :

Այլ , ո՛հ , զարթեայ . . . դնէի ի ժայռ անդալար .  
Զէր լուսածալիտ ոգին առ իս , չգոյր ծաղիկ .  
Թիթուռնք — ոսկի յոյսեր — թըռած դիր և աար ,  
Եւ ճակատուս մարած էին շողք հեզիկ :

Որպէս նախկին ամու ըն՝ յեղեմ սկնապիչ ,  
Եւ ես ի ծաղ երկնից ուր ինձ երեւցաւ . . .  
Աստղի՛կդ այզոյս , խաւար աչացս դեռ ունի՞ս  
Մի ճառագայթ , թէ ինձ մընայ մո՛ւթ անրաւ :

1876

ԼԲ

ՊԱՆԴՈՒԽՆ

Երբ զաչս ի լոյս բացի յաշխարհ ,  
Տեսի խոժուռ երկինք մ' օտար .  
Մօրու երկիր մ' իմ շրթներաց  
Մատոյց նիհար ծիծն իւր ցամբած .  
Պանդո՛ւխտ եմ ծընած :

Մաղրածու գանգ ձայնիս նախկին  
Սեւ անարեւ սարք հնչեցին .  
Երգ , խաղ , ժպիտ նժղեհոսթեան  
Հողոյն վերայ ինձ դառնացան .  
Վա՛յ պանդուխտ մանկան :

Ո՛րբ ի ծընէ գրկէդ անոյշ  
Մորմոքեցաք մեք ի քո յուշ ,  
Ո՛վ Հայրենիք , և արշալոյս  
Մեր մթնեցաւ սգոյ ի մէուշ :  
Վա՛յ պանդուխտ Հայոյս :

Երբ Հայ կտրիճն ըզկոյս սիրեց ,  
Զի՛արդ իւր սիրտն աստղերդ ուզեց  
Վկայ կոչել . այլ ամպախիտ  
Օտար երկին տեսար անժպիտ ,  
Պանդո՛ւխտ պատանիդ :

Գեղեցկութեան իսկ գրկին մէջ  
Հայն ըզճակատն յանկարծ կնճուեց ,  
Յիշատակըդ ընդ այն կ'անցնէր  
Իբր ընդ արեւ ամպ սեւաստուեր ,  
Եւ պանդուխտ տրտմէր :

Օտարութեան երկրի գարուն  
Մի հենդնական ժպիտ է Հայուն .  
Զի ձմեռ պատէ քեզ անհամբոյր ,  
Լոկ ողբ մ' ունի սրտակըտուր .  
Պանդո՛ւխտը տըխուր :

Ի գողդ իբրու յիւրեանց ի բոյն  
Թըռան երազք մեր սրտերուն .  
Թէ տեսնէ մէկմ' քո լոյս երկին ,  
Մըծէ ըզշունչ քո եթերին ,  
Տա՛յ պանդուխտն հողին :

Օտարին փառք չերգեց մեր քնար ,  
Լոկ հին փառքերդ ոգէր մեր լար .  
Քանի՛ցս ստուերք վե՛հ դիւցազանց  
Թուեցան կանգնել վե՛ր ի շիրմաց  
Պանդիտին աչաց :

Քո հին և նոր վէրքերդ խիտ  
Արիւնեցան , ո՛հ , ի մեր սիրտ .  
Մեր հողոյն մէջ սիւտ կը մըխայ  
Աւերցդ հրդեհ , և քո վերայ  
Պանդուխտն յար կու լայ :

Երբ խըժին լախտ իջնայ վերադ ,  
Սեւ շուրթ պղծէ կուսիդ ճակատ ,  
Կամ երբ եղբօր մ' արիւն խըմէ ,  
Կամ ձեռն յանդուզն ի խաչ մըխէ ,  
Պանդուխտը մանչէ :

Մանչէ յողւոց , և . . . անդր յերկին  
Տանի զաչեր կողկողազին .  
Անպատէն ետըն Յորդանան  
Դտաւ Իսրայէլ , և Հայութեան  
Վշտաց չիք վախճան :



Երբ գայ իմ ժամ ուր արտասուաց  
Թողում զհովիտս այս մահազգած,  
Որբ ի լուսոյդ աչք իմ փակին,  
Սեւ հողոց զիրկ' հանգիտս յետին -  
Պանդո՛ւխտ մեռանիմ . . . :

1876



ՄԱՀ ՍՈԿՐԱՏԱՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԼԱՄԱՐԹԻՆԵԱՅ

1871

# Մ Ա Հ Ս Ո Կ Ր Ա Տ Ա Յ

Ճշմարտութիւն՝ Աստուած ինքն է :

Ծագեալ արեւ յամպածրարն ի Հիւմետեայ դագափունս՝  
Ըզթէսեան տաճարին լուսաւորէր ըզբարձր կատար ,  
Եւ , բոցանշոյլ յիւր իշողս զՊարթեւնոնի վառեալ զորմունս ,  
Իբր հրաժեշտի ինչ գաղտ ողջոյն , սպրդեալ ի բանտըն սահէր :  
Յակն անկանէր անդ ի ծովս նաւ մի ի խելս ոսկեդրուագ  
Որ սրբազան երգոց ի ձայն ի Պիրէա դէմ եղեալ գայր .  
Եւ էր այն նաւն՝ ոյր դարձն անդրէն մահագուչակ  
աղիտարեր

Առ մահապարտս յետնոյ աւուրն իւրեանց լինէր ազգարար .  
Այլ օրէ՛նք չըտային թոյլ ըզնոցին բառնալ ըզկեանս՝  
Չեւ արեւու ի Յոնիայ ըզճառագայթս իւր ամիոփեալ ,  
Առ ահի զի մի՛ գուցէ աչք աննշոյլք անհայեցուածք  
Պղծիցեն զնորին ճաճանչս առ կենդանիս միայն սեւջականս ,  
Կամ զի չուառըն գլխապարտ զարտեւանունսըն կափուցեալ  
Չունիցի՛ աշխարել ըզկեանս և զլոյս միանգամայն :  
Սոյն գունակ վըտարանդի ոք նախահարցն ի դաշտէն  
Մեկնի զընայ չեւ ևս այգուն ծայրըս տուեալ յերկնից ի ծագ :

Մոիրոնիգեան զաւակին ակնկալու մնացեալ զարթման ,  
Մտերիմբ ոմանք թախծադէմք դեզերէին արտաքոյ ,  
Եւ կին նորին զորդեակըն իւր տարեալ ի գիրկսըն մայրենիս ,  
Մանկի՛կ տխեղծ ոյր մատունք զուարթ խաղային

ընդ փականս ,  
Բողբելով անկարեկիր բանտապահացն ընդ յամել ,  
Չանողք պըղընձաձոյլ բախէր դրանդիսն ի ճակատ :  
Խուժանն՝ անուշաղիւր աղաղակի իւրոց վըշտաց՝  
Հարցանէր ի յանցանելն զողբոց նորին ըզվասնէր .  
Եւ իսկ և իսկ յառաջ անեալ գկառեալ ոտիցըն զընթացս ,  
Ընդ անդատակոն երկայնաձիգս աստ անդ սփռեալ

խուժա առ խուժա ,  
Ժողովէր ըզսին զըրոյցս անդ ի խըռան ցան և ցիր :  
Չանկելոց բագնաց , ըզդից անգոսնեւրց լինէին բանք ,  
Եւ զնորաղանդ ինչ կըրօնից ապականիչ մանկութեան ,  
Եւ զանանուն ինչ Աստուծոյ օտարուոյ ի յԵլլադա :  
Շամբուչ ուրն ասէին լինել , ճիւաղ մի նողկալի ,  
Նոր այլ ուրն Ովրեստէս՝ զոր զիցըն էր կուրացուցեալ ,  
Յոր հուսկ ուրեմն հասեալ ճայթէր արդարութիւն

անազանեալ ,  
Եւ զոր երկիր առ երկին պարտէր ձօնել ի յողջակէզ :  
Սոկրատ . և դու ինքն էիր իսկ որ ի կապանս

արկեալ յայնժամ՝  
Մեռանէիր՝ ճշմարտութեան 'ւ արդարութեան ի վերայ :

Ուր ուրեմն մեծաղօղանջ ծխնիք բանտին հողովեցան .  
Յամբաբայլ , աչք ի խոնարհ , մըտին ի ներքըս կարեւորք .  
Այլ Սոկրատայ ակն արկեալ ի վէտ ի վէտ ծըփանս ալեաց ,  
Եւ մատնանիչ ցուցեալ նոցին զառագաստըն հողմուռոյց ,  
« Հայեցարո՛ւք ի ծաղկապսակ խելն ի ծովուն երերածուփ .  
Սա նաւն է սրբազան , սա երջանիկըն թէ՛որիս .

Ողջոյն տացուք նըմա , ասէ . առագաստս այս ինքն իսկ է մահ :  
Չոյք ընդ նըմին և իմ հոգեակ ի հանգրուանն մոցէ յանըոյթ .  
Եւ սակայն առէ՛ք խօսել , և թող յետին եւս այս օր

Հանգունատիս անցցէ այլոց ի քաղցրանոյ խօսս և ի բանս .  
Մի՛ յանօգուտըս տալ հողմոց զխրախճանացըն մընացուածս .  
Եւ ցսպառուած արկցուք ի վար ըզնուիրական

դիցըն պարգեւս .  
Բարերաստիկ նաւն ժամանեալ յուղւոյն իւրոյ ի վախճան՝  
Ո՛չ ի տեսիլ ծովափանց յիւր ընթացիցն առնու ըզկայ ,  
Այլ ծաղկապսակ գեղապաճոյճ , առագաստիցն  
գողեալ ի հողմ ,  
Ի ձայն նուագաց գայ մըտանէ անդր ի դադար որ կոչէ զնա :

« Ասեն պուէտք զի քաղցրաձայն կարապ նախ քան  
գլետինն իւր ժամ  
Դանակաւոր ի գեղգեղ ջայլէ ողբոյ զիւր ըզմահ .  
Մի՛ ինչ հաւատս ընծայէք այնմ . հեշտամրմունջ  
հաւն այն , ո՛ւ արք ,  
Ի բնազդումն ինչ վսեմագոյն նա յաստուածոց օժտեցաւ :  
Հուպ ի մեկնել գեղածիծաղն ի յԵւրոտեայ եզերաց ,  
Հոգին , կիսով իմն փախտեայ չքնաղագեղ ի մարմնոյս ,  
« Բայլ առ քայլ յառաջ անդր գնացեալ յաշխարհ ինչ սխրալի ,  
Չանմահութեան վըճիտ լուսոյն դիտէ զծագումն

պայծառափայլ ,  
Եւ քաղցահեշտն ի զմայլման յոր սուզէ զինքն այս տեսիլ ,  
Ի փչելն զողին աստ յերկրի ըզցնծութիւն իւր հուշակէ :  
Որ առ շիրմաւ ունկըն դընել գայքըդ բանից խոց յետնոց ,  
Կարապ մի եմ և ես . մեռանիմ արդ , երգել կարեմ : »

Յայս բան բանտին ընդ կամարօք հրոս հեծութիւնք  
ետուն պայթեալ .  
Յանձկագոյն ծիր բակ ըզնովաւ առեալ ջերմոցըն խմբեցան .  
« Չի մեռանել հարկ է քեզ , ո՛ր բարեկամ վաղ յոյժ բարձեալ ,  
Խօսեա՛ց մեզ անմահութեան 'ւ ակնկալեաց բանս սփոփիչս :  
— Այդ և իմ իղձ է , ասէ . այլ ըզկանայս հանցուք ի բաց .

Հեղձամեղձուկ նոցին հառաչք գուցէ զոգիս մեր մեղկիցեն .  
Պարտ և պատշաճ է , ըզչիրմին քամահեղով զարհաւրօք ,  
Յանվեհեր յանահ ի քայլ մտանել ի նոր իմն յաշխարհ :

« Յայտ իսկ է ձեզ , ո՛ր բարեկամք , ի սկզբնարոյս  
տիոցս յաճախ ,  
Ոգի իմն անծանօթ զիմաստուութիւն շնչեաց ի յիս ,  
Եւ զհանդերձեալ աշխարհին ի վեր զօրէնս հանէր ինձ ,  
Է՞ր սա Աստուած ոմն ի ձայնի աներեւոյթ քօղածածուկ ,  
Ուրո՞ւ մի կղկաթ զինէն ի կաթոգի ինչ ի սէր գաղտ ,  
Ապագայիցն արձագանգ կամ թէ Մուսայն Պուէտին ,  
Չըզիտեմ ինչ . այլ որ մեղմով ինձ մրմնջէր՝ նոյն այն ոգի ,  
Յորմէհետէ երազաքայլ հուս անդր յիմ կէտ ընթանամ ,  
Ի մեծ եւս ձայն խօսի ընդ իս և փարաւազըս ինձ տայ .  
Չաստուածեղէն նորին բարբառ քաջ եւս և շյտ ճանաչեմ ,  
Թէ՛ պէտ այնու զի սիրտ ինչ ղերծ յամբոսմանէ ըզգայնոց  
Ե՛ւ ըս լըռիկ բարբառոյ նորա ձայնին զընիցէ ուշ ,  
Թէ՛ պէտ զի , հանգոյն հաւուեն , ոգին աներեւոյթ  
Յաճախիցէ ընդ երեկս ըզհեշտալուր երգոցն դաշնակս ,  
Կամ թէ արկեալ ի մուացօնս զօրն՝ ում հասեալ կայ երեկ ,  
Հօգեակն իմ՝ զսպագայիցըն զեզերօք կացեալ ի կախ՝  
Չայլոյ իրիք աշխարհի քաջ եւս ըզձայնսըն լըսիցէ ,  
Որպէս զալեօք նաւուղիղըն թափառական ընդ երեկս ,  
Ըստ մատչելն իւր ի ծովեզր անդնդահերձ թիափարեալ ,  
Չաղմուկ ափանցըն և ըզչիտթ որոշակի ե՛ւս իմանայ :  
Անասս այս մըտերիմ ո՛չ բընաւ զիս թողու լքեալ .  
Անլըռելի յար անդադար աւաչ նորին յունկն իմ հնչէ ,  
Եւ որ սյսօր խօսի յիմում ձայնի՛ նորին է լոկ բարբառ .  
Լուարո՞ւք սպա , ո՛ր սիրեցեալք . չե՛մ ես այլ եւս .  
նա ինքն իսկ է . . . . »

Ճակատ սոյցձառ և անխըռով , աչք շողողուն յուսոյն ի փայլ ,  
Քարեկամացն իւրոց Մոկրատ նըշանացի արար բազմել .

Յայս նըշան անբարբառ հընազանդեալ երազ ավոյթ ,  
Անդ առ եզերքք նստան մահճին լուռ անչունջք  
և պատկառոք .  
Սիւնմիաս զականողեօքն ըզվերարկուին ձըզէր ըզծայրս .  
Յակն ինչ մտախոհ և յանթարթափ Կրիտոն գերկինս  
հարցաքննէր .  
Խոնարհէր յերկէր ի վայր Կերիս ճակատ ինչ թախձանկար .  
Անաքսագոր՝ ի սարգոնեան գինեալ ի ծաղըր՝ թուէր ,  
Նախանձաւոր ընդ իմաստնոյն բարբրաստիկն ընդ նըսեհ ,  
Մաղրել ըզբախտ և ձայնատուր լինել մահուեն յասպարէզ :  
Եւ պաշտօնեայն Մետասանից յեց ի դուռըն պըղընձակուռ ,  
Բազուկք զիրծով , երերակոծ ընդ գուլթ գորով  
և ընդ վարանս ,  
Մրմնջէր յոգւոյն խորոց « Չի՞նչ շահնըմա իլաւութեանցն » :  
Այլ Փեղոնի ողբալով ըզսիրելին քան զիմաստունն ,  
Իմահաշուք մահիճն հուս եւս , վարդապետին առ անտուրք ,  
Նստեալ հանգոյն որդեկի՛ կայր գլխահակ ըզծնկօքն ,  
Ի պաշտեւոյն իւրոյ ի դէմս զարտասուաթոր  
զաչսն ամբառնայր ,  
Ընդ արտասուան իւր շառագնէր , և արտասուէ՛ր տակաւին :

Բայց երկրաւոր վշտաց մորմոք ոչ ինչ բընաւ զիմաստնոյն  
ժըւէր զղիմացն այլայլել զ իծս կամ զերեսացն ըզգոյն չըջել .  
Վերամբարձիկն իւր հայեցուած թուէր ընթեռնուլ  
քաջ ի բացեայ .  
Երթուէք նորին , յոր հանգչէր ժպիտն անոյշ շնորհագեղ ,  
Կազմք և պատրաստք ի բարբառեւ՝ անջատէին կիսաբացիկ .  
Աներեւոյթ իւր մըտերմին ունկըն նորա կայր մըտաղիւր ,  
Հերք իւր՝ ծրփեալք ի շունչ մեզմիկ աշնանային զեփիւռ ին՝  
Պըսակ իմն ըզգլխովն յօրինէին ամգուենատիպ ,  
Եւ պահ ընդ պահ գեղածփիկք յառաւօտին ի սիւք հեզիկ ,  
Յանէին ի ճակատ նորին ցորմունս արծաթափայլս :  
Այլ ըզվեմ իւրոց խօկմանց ճառագայթումն էր տեսանել

Ընդ այս ճակատ պաղպաղուն՝ ուր նըկարեալ կայր  
 իւր հոգեակ  
 Որպէս կանթեղ՝ ընդ թափանցիկ կուճ սպիտակ  
 և կամ պըղինձ ,  
 Ի սեղանոյն ի վերայ արկեալ զնըռոյլ իւր առկայծեալ ,  
 Մա՛տն անձին լեալ տակաւին ի շողիւն իւր ի սքողեալ ,  
 Լուսափայլ իւր ցովմամբ վառէ զայնքս և գեղերփնէ :  
 Որպէս ընդ ծով ակն հետամուտ լինի նաւուն տարադէմ՝  
 Ակնապիշք ակնկառոյցք ի վեհաշուքն յայն ճակատ ,  
 Չականողեաց նորին կախեալք , ի տուրեւառ շնչոյ զգոյշք ,  
 Մըտերիմք իւր մըտադիրք կային լրուիկ գոգ անշունչք -  
 Չյետին նուագ աչք իւրեանց նըկատէին զայն պատկեր .  
 Տանելոց էին ընդ միշտ զայնքը ձայնի ըզբարբառ :  
 Իբր յԵւոզեան շունչ թափառ կոտ հերձեալ կոհակ փեռեկի ,  
 Ակնկալու նորա բանին մընայր հոգի իւրեանց անժոյժ :  
 Հուսկ ուրեմն յերկնից ի վայր խոնարհեցան աչքն ի նոսա ,  
 Եւ ժամելով , որպէս երբեմն , սկիզբն էառ զայս օրինակ .

« Զինչ , լա՛յք դուք , ո՛ մըտերիմք , լա՛յք դուք այդպէս  
 մինչ իմ հոգեակ ,  
 Հանգուեատիպ խնկոյն սրբոյ զոր քրմուհւոյն վառեն ձեռք ,  
 Առ յաւէտ յիւրոյ մարմնոյն զերծեալ յանարգն ի բեռանէ ,  
 Հանդերձի սլանալ առ դիս , և , զմայլախառն ի հրճուանս ,  
 Չանշամանդաղ ողջունեալ տիւն զոր նշմարեաց  
 թերեւս աստէն ,  
 Ճշմարտութեան լինել ի խոյզ , տեսանել զայն և ճանաչել :  
 Առ ի՞նչ կեայցեմք ասպա՝ եթէ չիցէ ի մեռանել .  
 Հի՛մ առ ի սէր արդարութեան ինձ քաղցրացաւ վշտակրել .  
 Ըզմէ՞ ասպա անդ ի մահուն՝ զոր կեանս սովոր եմք յորջորջել ,  
 Ընդ երկրաքարչ ախորժակացն ընդդէմ եկեալ ի վըսեր ,  
 Թէպէտ նըկուն , ընդ զգայնոցըն ջի՛րդ ի կուր  
 մարտեաւ հոգիս :  
 Զի՞նչ , բարեկամք , թէ չըդոյր մահ , լաւութիւնքըն լինէին .  
 Սա՛ ճակատուն է մրցանակ , սա՛ երկնաւորն է բրարիոն՝

Զոր անդ ի յելս ասպարիզին ընծայէ մեզ դատաւոր սուրբ ,  
 Արամազդայ բարբառոյն կոչ յիւր անդր ի գիրկ  
 մեզ հրաւիրակ :  
 Օրհնեսցո՛ւք զայն , մըտերիմք . այսօր յականջս  
 իմ լսի այս ձայն .  
 Մարթ էր ինձ յաւուրցն իմոց ազահելով ի դոյզն մնացորդ՝  
 Երկիցս ինձ տալ կրկնել զաստուածեղէն վճռոյն պատգամ :  
 Քա՛ւ յինէն քա՛ւ թէ տենչայցեմ զընթացս նոցուն յերկարել :  
 Կոչէն զիս դիք , և ես փութկոտ դիմեմ հըլու իբր ստրուկ :  
 Իսկ դուք , թէ զիս սիրիցէք , իբր ի չըքեղ տօնս հանդիսից ,  
 Յիւզս անուշից քաղցրարուրեան ըզձեր գըլուխս  
 օժէք համայնքդ ,  
 Երախտագէտ սրտից ինչան զորմոց բանտին կախեցէք նուէր ,  
 Եւ , դեռափթիթ զօրէն հարսին՝ զոր փոյթեռանդն  
 ինչ ամբոխ ,  
 Հոյլ հոյլ ծաղկունս սփռեալ երփներփն զառագաստին  
 ըզսեմովք ,  
 Յետ լողանացն առեալ տանի ի սրսկապանն ճոխապաճոյճ ,  
 Նոյն գունակ , ճակատ պճնեալ գեղեցկահիւս սլակաց յոլորս ,  
 Առեալ ածէ՛ք զիս ըզձեռացս ի գիրկ մահուն երանաւէտ . . . :

« Զինչ մեռանելն իցէ ասպա . խըզել ըզգօղ զայն քարուակ ,  
 Զերկրին ընդ հոգւոյ ըզընական զայն ըզհիմէն ,  
 Եւ ի շիրմի անդ յանձնէ թափել բեռն ինչ զազրալից :  
 Զէ՛ մեռանելըն մեռանել , մըտերի՛մք իմ , այլ փոփոխել՝  
 Յորչափ կեայցէ՝ մարդ ի շիթայս կապեալ մարմնոյն  
 ծառայական ,  
 Մեղկաքա՛յլ թոյլընթաց ընդ քարչ ածի առ ստոյգ բարին ,  
 Եւ յանարգ նորին կարեաց յընթացըս իւր ոտնակառեալ ,  
 Կորուսանէ կամ գայթ ի գայթ գընայ ըզհետ ճշմարտութեան :  
 Այլ որ հասեալ հուպ անդր ի կէտ յոր ըղձակերտըն լինի ,  
 Չանգիչեր տունջենին զայդուն ցովմունս դիտէ աչօքն ,  
 Իբր երեկի մի ճառագայթ յերկինս անդըր վերջատնեալ ,  
 Վըտարանդի ի դից ծոցոյ , ի գոգ նոցին անդրէն սլանայ ,

Եւ արբեցեալ լիաշուրթն արբամար քաղցրաճաշակ  
Նեկտարին՝  
Յօրէ անտի մահուանն իւրոյ սկիզբն առնու նա ի կեալ : »

« Այլ մեռանելն է կըրել , և չարիք իմըն են կըրել .  
— Ձիա՞րդ թուիցի ձեզ , սիրեցեալք : Եւ թէ վայրկեան  
օրհասարեր՝  
ի յարին սրբագործեալ իբրեւ մեծ իմըն պատարագ՝  
Վասըն մարմնոյս ճենճերեւոյ իցեն լկանք իսկ կարճատեւ ,  
Ո՛չ ապաքէն չարեաց ինչ բարիք համայնք են արգասիք :  
ի ձմերայնոյ ամառն առնու զիւր ծնունդ , և տիւ ի գիշերոյ .  
Նորին ինքեան Աստուծոյ է գործ շղթայս յաւէրժական .  
Յաւագին ըզմեզ երկունք ծնեալ հանին ի լոյս կենաց ,  
Եւ այս օրհաս երջանկաբեր՝ վատասրտից ահագին՝  
Երկունք իմն են և ծընունդ յանմահութիւն յաւիտենից :

« Ո՞ դք սակայն ըզմահու զննել զանդունդ իցէ ատակ .  
Դիք վըսեմ նորին շրթանց եղին ըզմատն իւրեանց պահպան .  
Յաւօ՞ք ինչ թէ հեշտանօք ի ձեռս նորա կազմս յունել զայն  
Անկանի հոգի մարդոյ վարանածուփ՝ զայն ո՞ զիտէ :  
Որ կեամբս տակաւին՝ շղթիտեմ ինչ , այլ ինձ թուի  
Թէ խորհուրդ ինչ քօղածածուկ կայ լըռութեանս  
այսր ի յատակ ,  
Թէ բարութիւն անաշառ ամենագութ դիցն անմահից  
Մինչ ի մահուն իսկ ի խոր հեշտութիւն իմն ունի ծածկեալ ,  
Յաստուածեղէն որպէս ի գէնան ըզսիրտս խոցեալ կարեվէր  
Բազում այն է զի յարտասուս թագուցանէ  
քաղցունս ինչ Սէր : »

Ընդ ձառս ընդ այս ժամեցաւ մեղմիկ կերիս անհաւանըն .  
— Գիտացից զայն հուպ ընդ հուպ , ասէ Սոկրատ և յաւելու .

« Այո՛ , մարդոյն նախընծայ ողջոյն առ լոյսն եթերական ,  
Այն ինչ բըրացն ի համբոյր դիմէ ձաճանչ սսկենչոյլ ,

Քաղցրարարառ ձայն սիրելոյն խառն յաղէբախըս  
բընարին ,  
Հստ անուշից կնդրըկաբոյր ի բաժակէն փախստեայ ,  
Համբուրին ճաշակ անոյ՛ մինչ տարփաւորն ի գիշերի  
Թափառկոտ իւրով շրթամբ ըզսիրուհւոյն խնդրէ շրթունս .  
Նըւազ քաղցունք են ըզգայնոց քան ըզնախկին  
խնդից հրճուանս  
Ա՛ռըն առաքինւոյ ի ձեռն մահու արձակելոյ :  
Եւ աճիւն իւր ցրտին մինչ ամիտիեալ պահի աստէն ,  
Ինքն ի թուիչ արշաւասոյր ի սընանըն անդ մոռանայ  
Ընծայել իսկ առ երկիր յաւիտենից ինչ հըրաժեշտ :  
Հետախաղաց այս աշխարհ ծածկի էին առաջի :

« — Այլ զի՛նչ . առ վերըստին ծընունդ բա՛ւ ինչ իցէ մահ :  
— Ո՛չ . հարկ իսկ է զի թափեալ զերծցի հոգի մեր ի զգայնոց ,  
Նըկըրտիցի մահկանացու ամորժակացն լինել յաղթիւու ,  
Եւ՛ ի մի բան՝ զի մեր այս կեանք լիցին մահ ինչ երկարատեւ :  
Կեանք հանդէս են մրցանաց , և յաղթանակ նորին՝ մահ ,  
Եւ վասըն մեր երկիր բագին է քաւութեան սրբարար՝  
Յորում մարդ , ըզսեմովք ի զգայնոցըն մերկացեալ ,  
Չհանդերձ իւր պիղծ զերծեալ յանձնէն պարտի ի հուր  
անդր արկանել ,  
Չեւ ըզկենացն ողջակէզ սուրբ ի հաշտարար ի բազնի  
Աւ էն անարատ պատարագեալ բոլորանուէր :

« Ի նըսեմ ծոցոյ շիրմին գնասցեն յերկինս՝ ուր չիք այլ մահ՝  
Ի դիւցազանց և յաստուածոց խառնել յերաստ գերբըջանիկի  
Ոյք վաղանցուկ ի կենցաղումս գեր ի վերոյ լեալ ըզգայնոցն՝  
Ընդ լըծով արկին ոգւոյն զընդերկրաբարչ  
նիւթն արհամարհ ,  
Ոչ զօրինօք անցեալ երբէք վրիպեալ անկան զարտուղի ,  
Ներքնոյ դատաւորին ձայնի վճռոցըն դիւրանսացք՝  
Գնացին յաւէտ զանմուրար զանստերիւր շաւիղսն անգայթ ,

Յազօթս դից հարին պաշտօն՝ յորոց բղխէ ուղղութիւն ,  
Խոշտանգեալ վասն իրաւանց , յար ճշմարտին եղեն սիրողք ,  
Եւ զերկնիցն զաւակաց զպատուութիւն շահեալ կալան :

« Այլ ոչք վակօրոյք զաստեացս եղեն՝ սիրողք մարմնոյ  
երկրապիւշք ,  
Չզգայութեանց և զողւոյ անկեալ հենին սերտ ըզթեզան ,  
Ի պղծաշուրթն համբոյրս մարմնոյ զպարագործեալ  
զողին կոյս ,

Հանգոյն Ղեդայ մատնելոյ յամօթալի յոյզս կըրից ,  
Այսպիսիք , եթէ Աստուած ոմն ի փրկել փութայցէ ոչ ,  
Յետ ի կենաց իսկ վճարելոյ ի կելոյն ոչ դադարեն ,  
Պարաւանդեալք ուժգնապիրկք ի մեղապարտ ի կապանս  
Յինքեանց իսկ հընարեալս՝ կան մնան ուրուքս թերակատարք :  
Արաքնէին յար և նրման զանսուրբ թելոցն կախելոյն ,  
Ոգի իւրեանց՝ ընդ մարմնոյն համակցորդ և անանջատ՝  
Յանարգն ի գարչ ի կապանաց զերծնուլ ընդ վայր  
գործէ գուն .

Սէր՝ զոր սիրեաց նա զայնոսիկ՝ ի զգայութիւնսն  
կայ անմեռ ,

Գօսացեալ ոսին բազիօք զայնու դեռ եւս փարին ուժգին ,  
Յուշ ածեն նրմա անդուլ ըզգուգութիւնն ընդ որ նողկտայ ,  
Եւ , իբր օդ ինչ հեղձամղձուկ որ ըզճահճօք նիրհէ անչարթ ,  
Բեռն նոցին զազիր ըզնա հեռի ի դից ունի յաւէրթ :

Դառնակտուտ այս ուրուք աստանդականք ի մէդ մըռայլ  
Արձակեն ողորմ հառաչս զոյգ ընդ բուոյն գիշերահեծ .  
Շրջայածք զմահարձանօք , ըզդամբանօք , ըզսափորովք ,  
Ըզտաղտուկ զիւրեանց մարմնոյն ձըգեալ ընդ քարչ  
ահեղ պատառս ,

Ընդ կեանս իւրեանց ամօթահարք , լուսոյ երկնից  
անհանդոյրօք ,

Ի պահուն՝ յորում փակեալ անմեղութեան է զիւր բիրս ,  
Ի խաւարչուտըն յանձաւաց ոստչին ի դուրս անշուշտ ,  
Չոր օրինակ արք ժանտագործք ածեն ըզցայչն ըզբռամբ .  
Ըզմրկանամբ ջուրց կոհակաց զայգ աթամուց բերեն ըզդէմս ,

Դալիահար մէտէորայց ի տիպ սուրան ընդ լերինս ,  
Անդոհական անըրջովք ըզմիտըս մեր դան պաշարել ,  
Ի սրբանուէր մայրեաց ի խորս ճիչըս բառնան սոսկաձայն ,  
Կամ առ եզերքք շիրմի միոյ նըստեալք ի դէմս ծանրաթախիծ՝  
Ըզվայրանկեալ ճակատ իւրեանց արիւնթաթաւ

ծածկեալ մատամբք ,  
Նախանձարեկք ընդ զոհս իւրեանց , ընդ եղեռանցն  
ոճիրս կոծին .

Այլ ոգիք բարեբարոյք ո՛չ եւս դարձեալ գան այսրէն : »

Լուռ եղեւ , և զլուութեանն կեցիս և եթ եհատ ըզթել .  
« Օ՛ն և օ՛ն դիք թէ ըզՅուսով կամիցիմ գալ արհամարհ ,  
Չաստուածութեամբն՝ որ , Աիրոյ հանգոյն , զաչօքն  
ածեալ նարօս ,

Առ տիւն ստոյգ և անաղօտ առաջնորդեալ տանի ըզմեզ՝  
Բայց քանզի յափանց աստի սլացեալ թռչիս նրման նըմին ,  
Բա՛րէ , և ըզյետին նըւագ ընդ մեզ կաս խօսակից ,  
Չի ուսայց , ո՛վ վարդապետդ իմ , ո՛չ զի ըզքեզ խոցիցեմ ,  
Ներեա՛ ինձ պատասխանի տուեալ առնել քեզ հարցուածս : »  
Սոկրատ առ այս քաղցրութեամբ մեղմիկ ըզդէմսն հակեաց ,  
Եւ կերիս զայս օրինակ զիմաստունն հարցարանէր .

« Ասես հողւոյ կեալ անմահ անդըր քան զսեամ  
գերեզմանին .

Բայց թէ հողի վասըն մեր ջահին փայլումն է և եթ ,  
Մինչ զզգայնոցն ըզնիւթ մաշեալ ըսպառէ բոցըն ծախիչ ,  
Եւ մինչ ջահըն շիջանի , զի՛նչ լոյսն յայնժամ լինիցի :  
Չոյք ընդ ջահին փայլումն և լոյս միահաղոյն դառնան ի չիք ,  
Եւ ի մի նոյն գիշեր մըթին սուզի բընաւն համանդամայն :  
Կամ թէ նոյն խտիր ի միջի կայ ընդ հողի՛ և ընդ զգայունս  
Որ ինչ ընդ քնարն և ընդ նուագ գեղադաշնակ  
զոր թելքն հանեն ,

Մինչ ցեցակեր մեցամէս մաշեալ փայտին կայ որդնահար ,  
Մինչ լարին խորտակեալ ընդ մեր մատամբ տայ ճիչ յետին ,  
Եւ ջիւք ջախջախք օրհասական բանդուան ցիր ցան

ընդ գետին՝

Կոխան ոտից լինին մատաղ Բաքոսական քրմուհւոյն ,  
Ջինչ յայնժամ լինիցի երկնադաշնակ նուագացըն ձայն :  
Մեռանիցի՞ ինչ ընդ բանդուան , և հոգի զոյգ

ընդ մարմնոյ . . . . »

Յայս բա՛ն իմաստունք , առ ի քընին այսըց գաղտնեաց ,  
Ճակատք վայրհակը մըտախոհք և երկրապիչ աչք անքըթիթք ,  
Պատասխանուոյ խնդրէին բանս և գըտանեւ մարթէին ոչ :  
Այր ընդ ընկեր խօսակից հրծծէին յունկն միմեանց մեղմով ,  
« Մինչ քնարն ոչ եւս է ի միջի , ո՛ւր դաշնակին

մարթ իցէ գոլ . . . . . »

Եւ Սոկրատ ըսպասեալ թուէր իւրում մընալ ոգւոյն :

Ըզմի՛ ձեռացն ի ծընօտի եղեալ , և միւսն ընդ ճակատ  
Փեղոնի և փղոսկըրեայն ընդ պարանոց դեգերայած՝  
Փայփայէր ի յանցանեւն դեղձան վարսիցն ըզխոպոսս .

Ապա , մատամբն անջատեալ ըզմին յերկայն գանգուրիցն  
Որ օձաձեւ վէտ ի վէտ իջանէին մինչ ի գետին ,  
Ի ծունգըս իւր գեղաժփիկ թոյլ կոհակացն տայր ճօձել ,  
Կամ ի մատունսն ըզնոցին խարտեալ ոլորսըն գալարէր ,  
Եւ խաղացեալ խօսէր որպէս զաստուածեղէն ոք ալեւոր  
Որ խրախճանին ի զուարթ բաժակս խառնէ ըզլուրջն  
Իմաստութիւն :

« Չէ՛ և չէ՛ հոգի , ո՛ւրք , լոյսն այն տարտամ աղօտափայլ  
Յոր ըզգայնոց ջահ՛ յաստիս առնէ ըզմեզ լուսաւոր .  
Շա ա՛կն է անմահ որ ըզնըւաղ այսըր լուսոյ  
Ջծնունդ , զաճումն , ըզնուաղումն , զանդրէն ծագումն  
անսանէ ,

Եւ ոչ իւրք վատացեալ ինքեան՝ քան զինքն արտաքոյ  
Ըզկենաց ըզգոյջ ջահ՛իս ըզխաւարումնըն շիջալոյս  
Մահկանացու ական հանգոյն որ , պակասեալ ի լուսոյն ,  
Ըզհայեցուածն պահէ դեռ եւս անդ յաղջամուղջս խաւարի :

« Չէ՛ և չէ՛ առ ըզգայունս հոգի՛ որ ինչ առ սյս քընար  
Է նուագ դաշնակաւոր՝ զոր յայնմանէ ձեռք մեր հանեն .  
Մատն է այն աստուածեղէն՝ որ գիտէ միայն  
տալ թրթրումն ,

Ունկնըն՝ որ ըզնորին լըսէ գերգեւ կամ հեծծծել ,  
Ականջալու՛ւրըն մըտադիր , աներեւոյթ անտես ոգին  
Որ քնընէ , կըցէ յօդէ և յօրինէ ըզխառն նուագս ,  
Եւ յայլաճայն և յանդաշնակ հնչմանց անցնիւր ըզգայութեան  
Հըրաչաճայն հիւսէ գեղգեղս յունկն աստուածոց  
Ի հեշտութիւն :

Ի զո՛ւր բեկեալ մեռանի քնար և դաշնակքն ցնդին յօդս .  
Ջանչըունջ ըզբեկորօքն լըսէ դեռ եւս ունկըն այն :  
Հաճ և հաւա՛ն իցես , կեբիս . — Այո՛ , վըկայ  
Ինձ քո հրաժեշտ ,  
Անմահ է Սոկրատէս : — Օ՛ն արդ ըզդից առցուք ճառել : »

Եւ արեւու էր ժամանեալ արդէն լերանցն յարտեան ,  
Եւ ի ճաճանչ ինչ առ դաշտօք՝ ւ առ մըկանամբք

քերեալ ջուրց ,  
Հրաժե՛շտ պերճ և չըքեղ ընծայելով առ ալխարհ ,  
Թուէր յէին ծոց լուսայորդ գընալ առնուլ  
Կեանս նորաստեղծ :

Ի Տայգետեսոյ ի կատարաց իջանէին հօտք ի բառաչ ,  
Ըզկոյլիւք Հիւմետեայ նիրհէր ստուերն արդէն ի քուն ,  
Յովկէան ոսկեկոհակ թուէր կիթերոն գալ ի լիւղ ,  
Ջկնորսըն վաղայարոյց դեռ եւս զալեօք եկեալ թափառ՝  
Հուպ ի ծովեզր հանդարտընթաց սաղապաճեմ հեզասահ՝  
Ամփոփէր ըզթուլակի զառագաստըն երգ ի բերան .



Մյլ սրընգին ի յանտառս և որ ի ծով երգըք նուագաց  
Ժամանէին մինչ առ մեզ հառաչանացն օդոց ի նիւս ,  
Եւ խառնել գային ի մեր կականագին յողորմ հեծմունս ;  
Որպէս ճաճանչ երեկորի լուծեալ ցնդի ի մըռայլ :

« Օ՛ն , ճեպեացուք , ո՛ր բարեկամք , ահա՛ հասեալ  
ժամ լողանաց .

Սորո՛ւկըք , ջուր յանօթն արկէք պղընձի ի լըւացումն .  
Պատարագ սո՛ւրբ անարատ կամիմ դիցըն հանել նուէր : »  
Ասէր , մըխեալ զձեռն ի սափոր , իբր ի սեղան  
անդ զոհագործն ,  
Առնոյր ըզջուրն փրկագործ և ի ճակատն երիցս սրսկէր .  
Երիցս ալիք և ընդ լանջս իւր վըտակահոս վիժէին .  
Ապա , ի քօղ ծիրանածուէն ջնջեալ ըզցօղ կայլականց ,  
Յիւղ անուշից զհերսն օծանէր , 'ւ անդէն խօսել  
առնոյր զայս ձեւ .

« Մոռացօ՛նս առնեմք զԱստուած՝ պաշտօն հետոցն  
առ հարկանել :

Օ՛ն և օ՛ն զիս արասցեն դիք թէ հայհոյիչ լիցիմ Շնորհաց ,  
Հէքէի՛ մատուակի կենաց երկնիցն ընդ յարկօք ,  
Ո՛չ կասարճից Երոսի , ո՛չ Իրիսի պերճ կամարին ,  
Ո՛չ մանաւանդ չըքեղ գօտւոյն կոհակածին Աստղըկան՝  
Որ ի հանգոյց սիրայօղ ըզհամագոյս կաշկանդէ պիրկ ,  
Ո՛չ մշտնջեան Կոռնոսի , ո՛չ իսկ մեծին Արամազդայ ,  
Եւ ո՛չ դիցըն համայնից երկնից , երկրի և օդոց :  
Էքս համօրէն՝ Ողիւմպեան բարձանց բընակք կամ Եղիւսեայ՝  
Պատկե՛ր են Աստուծոյ աստուածացեալ առ ի մէնջ ,  
Նըջանագիրք նորին անուան ի համագոյս դըրոյմեղ ,  
Ստուե՛ր զոր ինքն Աստուած ըզմեր մըտօք արկանէ քօղ :  
Յայս տիտղոս աստուած եղէն բանն իմ պաշտօն այնց հարկանէ  
Որպէս ի յայգ քըքմահանդերձ արեգական տամք ողջոյն :  
Եւ ո՛՛ գիտէ , դիքս այս համայնք ի մարդկանէ հընարեալք ,  
Այս դժօրք և այս երկին երգեալք ի քնար ի կտընդոց ,  
Զիցեն թերեւս հանճարոյ և եթ անուրջք սինք խօլականք ,

Այլ լուսաչող աշտիճանք անծայր անվերջ այնր սանդղան՝  
Որ զէից համասփիւռ ընդ տիեզերս ծայրածաւալ  
Անջատեալ և զօդէ զազգի ազգի աստեղս համայն :  
Յիրաւի իսկ թերեւս ի միջոցի անհունութեան ,  
Յամենայնի՛ որ շարժի՛ է հոգի ինչ կենդանութեան .  
Թերեւս շողող այս աստեղք ըզմեր զլսովք ցիր և ցանք  
Արեգակունք են կենդանիք և ոգեկի՛ր գունտք բոցեղէնք .  
Թերեւս Ովկէան որ զափունս իւր բախէ կոծէ ըզսոսկացեալ՝  
Զոյգ ընդ ալեացն ահագնագոյ գլխէ ոգի ինչ զայրօգին ,  
Թերեւս օդս այս խնկաբոյր յերկին ինչ սուրբ թեթեւասլաց  
Իցէ ոգի ծըփանուտ յերկնակապոյտ ի թեւս թեթեւս .  
Թերեւս ակն ինչ իցէ տիւ ճաճանչասփիւռ և լուսալիր ,  
Գիշեր՝ էակ չքնաղագեղ՝ բբացն արկեալ քօղ սեւաթոյր .  
Եւ , ի հակիրճ բան , ի յերկինս , և ի յերկրի՛ 'ւ ամենուրեք  
Բընաւն իցէ մտաւոր , համայն շնչէ և է աստուած :

« Այլ , հաւա՛տս ընծայեցէք նըւաղամերձ իմում ձայնի ,  
Անդըր քան զբնաւ զայս աստուածս յոր հասանել  
մարթին մեր աչք ,  
է ինչ մըթին՝ խորհրդաւոր ընդ բընութեամբ՝

Երկնից ի խոր՝  
Զոր պատմէ հարկ և հռչակեալ քարոզէ բան երկնածիր ,  
Եւ զոր հաւատք՝ ակն հոգւոյ՝ կարեն միայն տեսանել .  
Յաւէրժակից ընդ աւուրս 'ւ ընդ յաւիտեանս ժամանակաց ,  
Մե՛ծ որպէս զանհունութիւն և ինքնակաց պէս միութեան ,  
Անհընարին՝ առ յորջորջել , անզննելի՛ ի զգայնոց ,  
Անիմաց և անհաս , ա՛յս իւր անուն է առաջին .  
Ի տեղիս , ի ժամանակս , յերէկ , վաղիւ և այսօր ,  
Ի ջրուք ի վայր , ելցուք ի վեր , առ նա հասեալ

ժամանեմք ցանգ .  
Զոր տեսանէք՝ ամենակար կարողութիւն իւրէ՛ համայն ,  
Եւ զոր խորհիւրքս միանգամ՝ վըսեմականն իւր էութիւն .  
Կա՛ր զօրութեան , ճշմարտութիւն , սէ՛ր , ստեղծիչ  
բնաւից բարեաց ,

Նա Աստուածն է ձեր աստուածոց . մի' և միայն .

նա ի'մ Աստուած . . . »

« — Այլ չարիք , ասէ կերիս , յուսմէ՞ ապա եկին ի գոյ :  
— Յոճոյ . պատիժ արժանի մեղապարտից մահկանացուաց՝  
Աստ յանկեալ ի յերկրիս չարիք և մահ ի նմին աւուր  
Միանգամայն եկին ի լոյս . Աստուած զնոսին ճանաչէ ո՛չ :  
Թէ՛ պէտ զի աղիտաբեր հրապոյր , տարփանք ինչ մեղսածին  
Ըզնիւթն երբեմն առ հոգի իցէ ձգեալ և յանկուցեալ ,  
Կամ մանաւանդ զի յուժգնապիրկ յամուր հանգոյցս

կապանաց

Կաշկանդեալ կենաց յաստիս զոգի մարդոյ ընդ ըզգայունս ,  
Կղկաթ յիրեարս ըզնոսին գործիցէ սէր ինչ զազրագործ ,  
Մե՛ծ իմըն խորհրդով սոքա՝ նդ իրեարս են գիրկընդխառն :  
Պժգալիս այս զուգութիւն չարիքն իսկ են , և օրհաս՝  
Դեզ դարմանոյ և պատուհաս՝ քակեալ ճրգամբ խըզու ըզնա :  
Այլ ի յետին անդ պահու՛ որ զուգութեանս ածէ վախճան ,  
Ի վերայ անարգ տարերոց ըզճոխութիւնն առեալ անդրէն՝  
Ճախրասլաց թռչի հոգի՝ յանմահութեան ի ճաճանչս՝  
Յաշխարհ անդըր երանութեան , ստուգութեանն

ի բնագաւառ : »

« Գիտիցե՞ս , ո՞ր այն իցէ ուղի անտես այդր աշխարհի ,  
Ասէ կերիս , կամ թէ քեզ յակն ինչ արդեօք անկանիցի՞ :

— Բարեկամք իմ , մերձեալ կամ յայն , և առ ի գիւտ  
այնորիկ . . .

— Զի՛նչ պէտք իցեն , հարց փեղոն . — Սուրբն լինել  
և մեռանել .

« Ուրե՛ք ի միջոցի յոր մերձենալ չէ մարդոյ հնար ,  
Թերեւս յերկինս , թերեւս ի վայրս աստ իսկ ուր մեքըս  
բընակեմք

Է այլ աշխարհ , դաշտ Եղիւսեան , եթերային օթեվան ,  
Ընդ որ ո՛չ քաղցրահոսան գընան մեղեր վրտակք երկայն ,  
Յորում ոգիք բարեաց մարդկան՝ յԱստուած և եթ

ծարաւեալք՝

Չեն արբեցեալ ի նեկտար յաւէժարուղիս հեշտանալակ ,  
Այլ ուր ուրուք սրբամաքուրք , ոգիք անմահք գերերջանիկք  
Ըզճենճերեալ զիւրեանց մարմնոց գընան ըզվարձսըն առնուլ :  
Ո՛չ Տեմպէ հովանախիտ , ո՛չ Մենաղեան ծիծաղ Լերինք՝  
Խնկարոյր ցեալք հոտովք յառաւօտու հեշտին ի շունչ ,  
Ո՛չ Հեմոսեան զուարթ ծործորք , ո՛չ ճոխ բըլուրք

բազմաբեղունք՝

ՅԵւրոտեայ քաղցրակարկաջ ալեաց խոխով բազմագուարճք ,  
Ո՛չ , ի հուսկ բան , երկիրըն այն ի պըլետեայց սիրեցեալ  
Որ մոռնալ ուղեւորաց տայ զծնընդեան զիւրեանց ըզվայր ,  
Գալ ի կըլիւ ինչ կարեն երանաւէտ օթեվանին

Ուր յԱստուածոյ յանմահ աչաց ծագէ հոգւոց տիւ լուսայորդ ,  
Ուր ո՛չ բընաւ աստուածալոյս տիւն այն ի ցայգ շիջանի ,  
Ուր կեանք և սէր օղն են ի ծուծ երանելեաց այնց հոգւոց ,  
Յորում մարմինք անմահականք կամ ցանգ ծընեալք վերստին  
Ի պէտս այլոց հեշտութեանց զգայութիւնս տան նոցա այլս :  
— Ե՛հէ՛ , զի՛նչ , մարմինք յերկինս . մահ ընդ կենաց

բընակակի՞ց :

— Այո՛ , մարմինք այլակերպիկք փառազարդեալք ի հոգւոյ :  
Հոգի , առ յօրինել զաստուածեղէն զայս ըզանդերձս ,  
Ըզտարերաց քաղէ զծաղիկ ընդ տիեզերս ընդ ողջոյն .  
Ամենայն որ ինչ իցէ կենաց՝ նիւթոյ՝ սրբագոյն ,  
Քաղցրաշող լուսոյ ճաճանչք թափանցիկըք նրբատարերք ,  
Երփն երփն վառ երանգաց բազմագունեան

ցումունք պայծառք ,

Անոյ բուրմունք զոր ի ծոցոյ ծաղկանց կորզէ երեկոյ ,  
Գաշնակաւոր ձայնք հեշտալուրք՝ զոր տարփատենչըն

Չե՛վիւռիկ

Ի գիշերոյ անդ ի գիրկ տխրահառաչ հանէ յալեաց ,  
Բոց հրոյն սլացեալ ի վեր ոսկեցնցուղ կապուտակ ,  
Բիւրեղ վտակաց մանուածաւալ ընդ ջինջ երկնաւ հոսելոյ ,

Միրանին յոր արշալոյս սիրէ ըզքօղսըն ներկանել ,  
Եւ հեղանինը ճառագայթք դողդոջալոյս բուլից աստեղց ,  
Բընաւքըն ի մի միաւորեալք ի յօրինուած գեղեցկայօղ ,  
Յիրեարս ընդ իւր խառնին մատամբք և ըզմարմին

իւր կազմեն :

Եւ հոգին , որ՝ ի յերկրի երբեմն ստրուկ ի կապանս՝  
Ընդ վզեալ խեռ ըզգայնոցն ընդդէմ ի զուր գայր ի վէգ ,  
Յաղթակա՛ն այսօր ըզձից նոցուն՝ և անդօր տենչանաց ,  
Յաշխարհին ըզգայնոց վերայ տիրէ միահեծան ,  
Յանվերջ հեշտից ի ճաշակ՝ յաճախէ զայնս յար անդադար ,  
Եւ խաղթ՛յ ընդ միջոցին , ժամանակաց և ընդ կենաց :

« Մերթ առ սլանալ անդր ուր տենչինչ լինին ըմա հրաւիրակ՝  
Սիրէ խնկել անուշաբոյր ըզգեփիւռին փափկիկ ըզթեւս ,  
Եւ յերկն ինչ ծիածանի գունազարդել ի սպըրդելն .  
Եւ յերկնից ի դըժօխս , յարեւմտից յայգուն ի յելս՝  
Որպէս մեղու թափառայած՝ դիմէ սուրայ յընդհանուրս  
Աւ ի գիւտ և ի համբոյր ձեռակերտիցն աստուածայնոց :  
Մերթ մրրկոտն լըծէ նըժոյգ յարշալուսոյն կառս լուսանիւթ ,  
Եւ ընդ հովիտս գեղածաւալս թափառկոտըն

սփռեալս հրովք

Ի խնդիր ելեալ մեծաց ոգւոց երբեմն իւր սիրելեաց՝  
Յարփեաց յարփիս , մոլորակաց ի մոլորակըս վերձեմեալ ,  
Ուրտապտոյտ յանհունութեան մանուածապատ ի պարոյրս ,  
Թռիչս առեալ լինի անհետ ընդ սիրելոյ իւրում հոգւոյն ,  
Եւ յԱստուծոյ անդ ի գիրկ զանձն իւր անդրէն գըտանէ ցանգ :

« Հոգին , առ ի պահել զերկնակեցիկն իւր բընութիւն ,  
Ո՛չ ի մարմնոց առնու յանօթ զանապական զիւր ըզբընունդ ,  
Ո՛չ նեկտար քաղցրաճաշակ մատուակեալն ի Հերէէ ,  
Ո՛չ ծաղկանց բոյր անուշակ զոր թեւ հողմոյ

բարձեալ բերէ ,

Ո՛չ ըմպելեացըն պատարագք հեղեալք նորին ի պատիւ ,  
Բուծանել ո՛չ կարեն զհոգի . կեայ նա սիրով , խորհրդով ,  
Ըղձիւք յազեցելովք և ըզգացմամբք սրբութեան ,  
Էութեանն անմահի սընունդ և բոյժ անմահական :  
Աստուածեղէն պողովքս յերկին անեցելովք առատայորդ  
Յերկայնեալ պահէ ըզկեանսն և մշտագոյ կեայ յաւիտեան ,  
Եւ ի յաւէրժ սիրոյն ի ձեռն մարթ է նըմա բաղմապատիկ  
Չէութիւն իւր դործել և ինքըն եւս հաստեալ կազմել :

« Զի , մարմնոց հանգոյն , և միտք արգասաւոր  
են և խորհուրդք .

Ի բնակաւէտ գործել զաշխարհինչ բովանդակ բաւ է մի իղձ .  
Եւ որսլէս յարձագանգաց առ արձագանգըս

կրկնեալ մի վանգ  
Յաճախէ բաղմապատիկ և ընթանայ յանհունութեան ,  
Կամ վաղանցուկ որսլէս կայծակ վառէ անմահ բոց ի բազին ,  
Այսպէս է՛քրս սրբասունք առ իրեարըս ձգեալք ի զօղ ,  
Յարարագործ սէր ստեղծիչ կղկաթ յիրեարս և կաթոգի ,  
Յանձիր յանկէտ յանբաւութեան , խնդրո՛ն զմիտեանս ,  
խառնին յիրեարս

Գիրկըս ածեալ յաւէրժ փարմամբ , և արգաւանդ  
առնին ի սէր .

Եւ զաստեղացն ամայեաց բընակաւէտ գործեալ գաւառս՝  
Սերունդ իւրեանց , զարմ և զաւակ ածեալ ձգի  
յերկինս անվերջ :

Ո՛ երկնաւորըն տարփանաց , ո՛ սուրբ հրճուանք ,  
սէ՛ր ամօթլեած ,  
Համբո՛յրք յորըս անդարձ խառնի հոգի ի հոգի ,

Յորըս տենչ մշտաբորբոք և անարատ գեղ անբիծ  
Չուգախառնեալ միահամուռ արծակեն ճիչ հեշտանաց :  
Թէ իշխէ՛ . . . » Այլ հնչեաց ընդ կամարաւ աղմուկ ձայնի .  
Ընդմիջեալ ի խօսիցն ունկն իմաստունըն դնէ անխառով ,  
Եւ յարեւու մոիցն ի կոյս ամենեցուն մեր դառնան աչք .  
Տարածամէ՛ր , բս՛բէ , օրն և կարճատէր մօտ առ երեկս :

.....  
 Զայս յետոյս դարձուցեալ պաշտօնէին մետասանից  
 Պըղընձի ի բաժակ նրմա ըզդեղն մատուցանէր .  
 Սոկրատ ըզթոյնն ընկալաւ ջինջ ի ճակատ , որպէս էրն միշտ ,  
 Եւ ամբարձեալ զայն ի ձեռին , նուիրական իրրու պարգեւ ,  
 Ոչ վայրիկ մի զսկսեալ բանիցն ըզթեւ ընդհատելով ,  
 Յամբոկ զմբտացն ած ըզխորհուրդ չե՛ւ ըզմահուն  
 քամեալ բաժակ :

Ի բոլորչի կողից վերայ լայնաբերան անօթոյն  
 Որ ի ծոցոյ իւրմէ ըզմահ և եթ սովոր էր հեղուլ ,  
 Արուեստագէտ ճարտարին ձուլեալ բոցոյ էր ի շունչ  
 Չխսիքէին դիրացն ըզվէսլ , որ նըշանակ կայ հոգւոյ .  
 Եւ , նըշանակ քաղցրագոյն անմահութեան յաւիտենից ,  
 Թիթեոն թեթեւաթուիչ փըղոսկըրեայ քանդակագործ ,  
 Զանյագ գիւր ըզկնճիթն յօրհասարեր մխեալ յալիս՝  
 Հողաթեւօքնն զանօթոյն նա յօրինէր ըզճարմանդ .  
 Աւ կուպիդոն ի ծընողացն ընծայեալըն Բըսիքէ՝  
 Զեւ այգուն ծայրըս տուեալ՝ թողեալ պերճ իմըն օթեվան ,  
 Ի մահաչուք ի հանդէս շուրջ պար առեալ և գընայր  
 Թորձել իրր ըզմահ զաստուածեղէն զայս ըզհիմէն .  
 Ապա , մենիկ արտասուաթոր , նստեալ ճակատ ըզծնկովք ,  
 Փեսային մընայր իւրում յանապատի ուրեք տըխուր .  
 Այլ ընդ վիշտսըն աղեկիղեալ օղապարիկ Զեփիւռին ,  
 Իբրու տենչ իմն աստուածեղէն շնչեալ ի մեզ ի յերկնուստ ,  
 Ի հառաչ ինչ ըզնորին զականողեաց ջնջեալ զարտօսր ,  
 Յերկինս ըզնա բարձեալ տանէր ի գիրկս անդ իւր հեզանինջ :  
 Վայրահակ կախեալ զուսուղն էր լուսաշող իւր ճակատ՝  
 Զերկայնածուփ վարսիցն ըզհոյլ յԵւոզոսի  
 յանձնեալ համբոյրս ,  
 Եւ Զեփիւռ՝ ընդ հրաշագեղ ճնչեալ բեռամբըն սիրունակ՝  
 Նըմա բազկօքն յօրինէր սիրատարսիկի փափուկ որբան ,  
 Յիւր ի շունչ բոցատոչոր գերկայն յունիւքն շնչէր մեղմիկ ,  
 ' Ի ընդ կուպիդոն նախանձարեկ ' նըմա յանկամս  
 զայն աւանդէր :

Աստ , տարիատենչըն կուպիդոն՝ ընկողմանեալ  
 վարդից ի դէզ ,  
 Հեշտիւք ի գիրկս իւր պնդէր ըզԲրտիքէն դողդոջագին՝  
 Որ , յա՛հ և ի յերկիւզ իմն ըմբըռնեալ գաղտնասարտուռ ,  
 Ըզհամբոյրսն ընդուռնէր ջերմս՝ փոխարինել անհամարձակ .  
 Զի փեսայն երկնաւոր՝ ըզխանդակաթն պատրեալ գիւր սէր՝  
 Ի նուիրական ի յանկողնոյն խուսափէր ցանգ  
 նախ քան զայգ :

Խուռն ի բացեայ , տենչ իւր սրտին զարթուցեալ զայն  
 ի ծածուկ ,  
 Ի բաց կիսով իմըն պարզեալ ըզցայգական  
 քօղոյն ծածկոյթ ,  
 Կանթեղ ի միում կալեալ ձեռին և ի միւսուսըն դաշոյն ,  
 Բսիքէ , աւա՛ղ , ընդ ակնարկի միոյ ըզսէրն վըտանգելով ,  
 Դողդոջագին զի մի՛ գուցէ փեսայն ի քուն լըւիցէ ,  
 Յոտն ի մատին զանկողնովըն հակէր մեղմով սիրտ ի թնդոջ ,  
 Ճանաչէր նա ըզկուպիդոն , յանկարծագոչ բառնայր ճիչ ,  
 Եւ յերերուն ի ձեռին դողդոջ զամսարըն տատանէր :

Այլ վայրահակ ի կանթեղէն չիթ մի ծորեալ ջերմ իւղոյն՝  
 Ի նիրհեալ տարիաւորին ի մերկն ի լանջ անկանէր .  
 կուպիդոն անհանդոյրժ ընդօստ ի քնոյն զարթնոյր կիսով ,  
 Մերթ ի դաշոյնն հայէր և մերթ դառնայր զիւղոյն  
 դիտէր ըզչիթ , . . .  
 Եւ զայրագին յերկնից կամար խոյս տայր անդէն  
 արագատլաց ,  
 Նշանակ խորհրդաւոր և սպառնական խօ՛ւ տենչանաց  
 Որք զաստուածսըն պղծեն՝ զի տեսցեն զայնս յեւս ի մօտոյ :  
 Զայս նուազ աստանդական թափաւելով կուսին յերկրի ,  
 Ո՛չ եւս զաղէտսըն ողբայր , այլ ընդ սիրողն ծաղկաթիթիթ .  
 Բայց հուսկ ուրեմն կուպիդոնի ի յարտասուացն  
 եկեալ ի գուլթ ,  
 Վրիպանաց ներէր նորին , և երանիկըն Բըսիքէ

Յերկնաւոր ի փեսայէն անդր յՈղիւմպեան տարեալ կատար,  
 Ի դիւցական արեալ շրթանցն անմահալիս կենսածորանս,  
 Պատկառոտ նազելաքայլ ճեմէր յերկնից ի սըրահս,  
 Եւ տեսանէր զի Աստղիկ ժմտէր առ իւր գեղ շնորհաց,  
 Զայս օրինակ աստուածացեալ հոգւոյն գործովք առաքինեօք  
 Փառակից ընդ դից՝ յիշխել դարձ յԵղիւսեան առնէ ի դաշտս:

Այլ Սոկրատայ ամբարձեալ ըզմահալից բաժակն ի ձեռս,  
 « Զօնեսցո՛ւք զառաջինըն առ տեսարս հանուրց

մահկանացուաց  
 Զերջանկաբեր նախախայրիս անմահութեան

յաւէրժ կենաց : »  
 Ասացեալ զայս, և ի գետին դուն ինչ հակեալ ըզբաժակն,  
 Իբր առ խնայել նեկտար ազնիւ, կրկին լոկ շիթս

հեղ դից ի նուէր •  
 Եւ յիւր ի շուրթըն ծարաւուտ զըմպանակըն տարեալ հուպ,  
 Դէմք անյոյզ անայլայլակ, քամեաց տակաւ ցը յատակ,  
 Որպէս ոք կոչնական չեւ զխրախճանին թողեալ սեղան՝  
 Ըզգինեւոյ մընացուած հեղեալ յոսկի իւր ստոման,  
 Յախորժ ճաշակ՝ հակէ զգուշեաւ և շիթ առ շիթ ըզհոյզն ըմպէ:  
 Ապա մեղմով ընկողմանեալ մահահամբոյր ի մահճին,  
 Իսկ և իսկ սկիզբն անդրէն առնէր բանիցն ընդհատելոց •

« Յուսացո՛ւք ի դիս, հաւատս հոգւոյ մերում ընծայեսցուք •  
 Սիրոյն՝ որ ի մեր սիրտս՝ ճարակ բոցոյն տացուք և բոյժ,  
 Ահ՛ր՝ միակցորդ հանդոյց և զօդ ընդ մահացուս

և՛ ընդ անմահս •  
 Սրբասլի՛ղճք են սեղանոց նոցին երկիւղ և մորմոք :  
 Փրկութեան մերոյ այն ինչ հնչեսցէ ժամ երկնահրաւէր,  
 Ո՛ր բարեկամք, յուսոյ ի թռիչ ճախր առ նոսին  
 առեալ սլասցուք •

Անդէ՛պ տխուր հրաժեշտ մահու, անճա՛հ արտօսը,  
 կոծ և ջայլ •

Մաղկապըսակ պճնեն յաստիս զգուարտին յողջակէզ •  
 Հողի՛ մեր գեղապըսակ ի սէր ի խինդ հրճուալից  
 Դէմ ընդ առաջ գիցէ նոցին՝ Իբր ի հիմէն իւր ձեպընթաց :  
 Այսորի՛կ են ծաղկեայ պըսակք, անուշարոյր բովիճայք,  
 Զայնք և աւաչք, արուեստականք, գեղադաշնակ  
 գեղցեղք նուագաց,  
 Յոր հոգւոյն հրաւիրելոյ յայս ի վերին ի խորախճանս  
 Զուարթացեալ պարտ է զմայլել չեւ ի դիցըն  
 դիմեալ գիրկ

« Ի վե՛ր ասպ ըզկորակոր տժգոյն ճակատորդ տարէ՛ք •  
 Մի՛ ինչ այլ եւս հարցանէք ինձ եթէ իցէ՞ պարտ թաղել զիս •  
 Թէ յո՛ր իւղ անուշից օծանել պարտ է զիմ մարմին,  
 Եւ թէ յո՛ր վայր, յո՛ր սափոր հարկէ զաճիւն իմ ամիտիւել •  
 Զի՛ փոյթ է ձեզ, զի՛ փոյթ և ինձ եթէ խոտան այս հանդերձ  
 Բոցոյ կամ թէ զեռնոց լինիցի բուտ և ճարակ,  
 Եթէ ցրտին դոյզն ինչ փոչի երբեմն ընդ իս միախառն  
 Սրբեալ տարցի յալիս ծովու կամ թէ ի վայր առականաց :  
 Մարմինս այս, զանգուած անարդ այնսերից տարերաց,  
 Օտա՛ր յինէն լիցի բնաւին որպէս կոհակ մի ծովուց,  
 Սաղարթ մայրեաց հողմավար, կաւ ի մարդոյ  
 զանգեալ ի կերպ,  
 Հուր խարուկին ցնդեալ ի յօդս և կամ ուղեացդ  
 աւազ շարժուն : »

« Այլ ի չու առնել իմում ասպախտաւոր թողում երկրիս  
 Զազնուագոյն ինչ բեկոր որոյ եղեւըն Սոկրատէս,  
 Պղատոնի զիմ ոգի, բոլորեցունցդ զիմ լաւութիւնս,  
 Արդարադատ դից զիմ հողի, և ըզկեանս իմ առ Մելիտոս,  
 Որպէս առ շուն լափիլիզող անդ առ սեմովքըն մշտահաջ  
 Արկանեն և զիւր պատառ խորախճանացն անդ ի յելս . . . »

Որպէս ընդ ծովս ի նաւազին խառնին յերգոցն յանոյ մրմուռն  
Հառաչանք տխրահեծք վէտ վէտ ալեաց և թեւճակաց,  
Այսգունակ, մինչ նայն խօսէր, եղերական դառըն բողբ  
Չայնակից բարբառոյն լինէր բանտին ըզսեմովք .

Եղբակ, Միւրտօ էր նա իւրոյ քաղցր ամուսնոյն ի խնդիր,  
Զոր առեալ բերէր առ մեզ հըրաժեշտից ժամ յետին .  
Մորորաքայլ և գայթ ի գայթ գայր նա ոտամբ դողդոջուն,  
Եւ, կախեալ զընդերկրաքարչ պատմուճանին իւրոյ ծալից,  
Մանկունք կրկին մատաղօրեայք աստի անտի

գնացեալ բոկոտն

Հետեւէին երերագին արագ արագ նորին քայլից .

Յերկայնաճիգ վարսիցն ի հոյլ զականողեացն ջնջէր զարտօսր,  
Այլ խորատիպ հետք արտասուաց եղծեալ զգիմացն  
էին ըզգեզ,

Եւ մահ զդալուկ իւր սիրէր ի տժգունեալ յերեսս նորին .  
Թուէր իմն այնպէս զի՝ դըրըրեւ ըզՍոկրատայ հոգի մեծ  
Վիշտն ապիկար՝ պատկառ յառնէն կացեալ և զկինն  
էր խաթարեալ .

Խանդաղատեալ ի տես նորին և ըմբռնեալ յահ և ի դող,  
Կաթոգին պատկառանօք ողբայր ընդ նա դառնակոծ .

Այսպէս ի տօնս աստուածոյն ի Վիթերեայ ողբացելոյ  
Քրմուհին Բաքոսեան զՍ. Դոնիսայ մարմնովս ի լաց,  
Վշտակից Սատղկան աստուածեղէն եղեալ սգոյն,

Յարտասուացն ի կայլակս ջեռուցանէ ըզկուճ ցրտին,  
Անբարբառ շրթամբն համբոյր դրոշմէ անդ պատկառօտ,  
Եւ պաշտել ըզգեղանի թուի ըզգիան զոր աշխարէ .

Սոկրատայ ի հայրենի զորդեակսն ի գիրկ իւր ընկալեալ՝  
Համբուրեաց զայտնորին նամէտ և խօսեցաւ մեղմով ընդ նմա .  
Ընդ վայրանկեալ արտեւանամբքն արտօսր մի հուակ

տեսաք ի գիւ .

Յուժաթափ ապա բազուկ առ դիւս զորդեակսն  
իւր նուիրեալ,

« Սատ նոցին եղէ ես հայր, և հայր իւրեանց էք դուք յերկինս .  
Մեռանիմ ես . այլ դուք կեայք . մանուկ տիոցն արկէք խնամ .  
Առ տեսչութիւն ձեր վերին կտակեմ գայնս ,

՝՝՝՝ զիք գթածք . . . »

Այլ մահարեր թունին յերակըս խաղացեալ իւր արդէն,  
Ըզպարեալ արեանն կոհակ ոտնակապէր յիւր հոսանս .  
Իրբեւ վտակ ինչ ցամաքեալ, ըզՉեմութեան և ըզկենաց  
Քայլ առ քայլ ի սիրտն ի վեր զընթանալն էր տեսանել .

Եւ անզօր և գունաթափ անդամբքն պիւրկք և բրտացեալք  
Ըզպարոսեան կճին յինքեանս ըզկերպարանն բերէին .

Ընդ վայր Փիղոն խոնարհեալ զօտիւք նորին զորովք տարէրն,  
Ի շունչն հրատապ ըզնոցին ջեռուցանել ճգնէր սառոց ,

Ճակատ նորա, ձեռքըն և ոտք ընդ մեր մատամբք պողէին .  
Ո՛չ եւս այլ ինչ մնայր մեզ՝ բայց հոգի իւր և եթ և ձայնն .

Հանգունատիպ աստուածայնոյ վիմին յորմէ եւ կալաթէ,  
Մինչ հոգի՝ իմն անմահ ի յՈղիւմպեան թռուցեալ բարձանց  
Եւ իջեալ ի կուճն անխօս ի ձայն ուրուք տարփաւորի՝

Տրոփ սրտին տայ և բարախիւն ի զգացուճն ինչ ի նախկին,  
Եւ ի լոյս ի նորածագ զարտեւանունս իւր բացեալ ,

Ո՛չ եւս է մարմար, և չեւ եւրս կին բովանդակ ,

էր այն արդեօք դալկատիպ մահահամբոյրքն վեհութիւն ,  
Թէ ճառագայթ սկզբնաչող անմահութեանն յաւէրք կենաց .

Այլ ճակատ իւր ճաճանչափայլ ի գեղ շնորհաց վսեմատիպ  
Փողփողէր լուսապայծառ իրրայդ ի ծագս անդ Ռիդիւմեայ,  
Եւ մեր աչք, հրաժեշտին իւրում դէտակն կալեալ պիւ ,

Յահէն ի բաց դառնային՝ թուեցեալ զաստուած որ՝ տեսանել :  
Ի վեր յերկինս ուղերձեալ բիթք , լուռ անչունջ

մերթնկայր ի խոկս .

Ապա ըզսուրբ և պերճախօս խաղացուցեալ բանիցն հոսանս,  
Որպէս զայր որ արբեցեալ ի քաղցրահամ հոյզ խաղողոյ ,

Չանսպառ ճառիցն ըզթեւ հատանելով ստէպ ստէպ,  
Կամ իրր Որփէ թափառայած նսեմաստուեր անդ ի կայանս ,

Յընդհատ ի խօսս ընդ ուրուաց կայր նա այսպէս խօսակից .

« Կբեցարո՛ւք գետնամած , ասէր , նոճիք Ակադեմեայ .  
Կբեցարո՛ւք և կո՛ծ առէք . ո՛չ եւս ըզնա տեսջիք այլ .

Փրփրադէղ ալեաց կոհակ ըղձիրէայ կոծեալ զափուռնս  
 Արկցէ՛ ձայն լալահառաչ և հեծեսցէ դառնամուռնչ .  
 Կոչցցի՛ն ըզնա աստուածք . մի՛թէ անգէտինչ այսմ իցէք . . . .  
 Այլ մտերիմք իւր սգազգածք յո՛ր վայր ըզբայլըն տանին :  
 Տինա՛ Պղտոռն , ահա՛ կերիս , ահա՛ որդիք իւր և կին .  
 Ահաւասիկ զաւակ հոգւոյն՝ դա՛ տարփելին իւր Փիւռն :  
 Յաղօտ նըչոյլս Փեքոսի ահա գընան թաքթաքուր  
 Արտասուել ըզգագաղաւ որ գողացեալ յաչաց ծածկի ,  
 Եւ , կբեալք ըզսափորով իմով , թուին իմն ակն ունել  
 Ջի՛ ձայնըն՝ զոր սիրէին՝ յաճեանցն անդրէն ելանիցէ :  
 Այո՛ , ընդ ձեզ , մրտերիմք իմ , խօսեցայց , որպէս երբեմն ,  
 Մինչ վայրահակ ըզմահճօքս՝ անյագ ըզձայն իմ շնչէիք :  
 Այլ զի՛ աւուրքնայն քաջիբաց , և հեռացեալ սուղ ինչ միայն՝  
 Ջի՛ մեծ ընդ իս և ընդ նոսա արկաւ խտրոց , ո՛վ վեհ դիք :  
 Որ ի բացեայ յոյժ հետոց իմոց լինիլդ ի խնդիր ,  
 Զաչս ի վեր ամբարձեալ հայեցարո՛ւք . . . լսե՛ն զիս ոչ :  
 Առ ի՛նչ այս սուգ , հի՛մ արտասուաց կրկնավտակք  
 ի վէժ յաչացդ .  
 Խնայեսջիր գէթ , ո՛վ Միւրտօ , դեղձան վարսիցդ ի հիւսակս ,  
 Զնջեալ զարտօսք՝ առ իս աղէ՛ դարձո՛ զաչկուռնորդ  
 տրտմագին :  
 Մի՛ւրտօ , Պղա՛տոն , կե՛րիս , ո՛հ , բարեկամք . . .  
 Թէ՛ գիտէիք . . . .  
 « Լո՛ւռ լերուքն , պատգամախօսք , կարկեցարո՛ւք ,  
 ձայնք Սրահին .  
 Փախերո՛ւք , իմաստութեանն հընոյ նըչոյլք դուք սընտիրք .  
 Ամպք երանգեալք խարեւապտիր պայծառութեան  
 իրիք ի փայլ  
 Զմարտութեան առաջի ցնդեցարո՛ւք հետախաղաղ :  
 Հուպ ի ծնանել կայ ի ձեռն անձառելի ինչ հիմենեայ .  
 Կացէք խուն ինչ . . . մի , երկու , երեք . . . չորք դարք  
 եւս տակաւին ,  
 Եւ ճառագայթքն աստուածեղէնք յանապատաց  
 անտի ծագեալք

Յանմահ լուսոյ ի հեղեղ ըզտիեզերս լցցեն զողջոյն :  
 Եւ դուք , ստուերք Աստուծոյ որ սքողէք ի մէնջ զիւր դէմս ,  
 Պատիր ցընորքդ անէակք փոխան նորին պաշտեցեալք ,  
 Դի՛ք մարմնեղէնք արենակիրք , դի՛ք կենդանիք ,  
 դի՛ք մահացուք ,  
 Ա՛խտք աստուածացեալք ի զագրալից ի սլիղճ բագինս ,  
 Հերմէ՛ս ոսկեթեւեան , և կիթերեանդ դիցուհի ,  
 Ոյց պաշտօն անպատուհաս հարկանեն գողն և շնացող ,  
 Դուք բընաւքդ , մեծք և փոքուքդ , Արամագրայ զարմին ճետ ,  
 Որ բնակաւէտ գործեալ պղծէք զալիս , զերկիր և զայերս ,  
 Փոքր մի եւս , և ահա՛ վեհապանծդ այդ ամբոխակոյտ ,  
 Թաւալազրոր ընդ ստոյն ի կործանեալն յՈղիւմպեայ ,  
 Տեղի՛ տացէ միայնոյ , սրբոյ , տիեզերականըն Աստուծոյ ,  
 Միա՛կն Աստուած զոր պաշտեմ և ոյր չիք բնաւ  
 յերկրի սեղան . . . .

. . . . .  
 « Քանի՛ ծածուկըք քօղազերծք , կազմած անհուն  
 գեղայարմար :  
 . . . . .  
 « Այլ ո՞ ոք էիր ապա , խորհրդականըդ դու ոգի ,  
 Դու որ ցանգ քօղածածուկ յինէն զերեսսրդ պահեալ ,  
 Առաջնորդեալ ձայնիւ քոյով՝ մինչ յերկնից դրուես  
 հասուցեր զիս .  
 Դու որ ինձ ուղեկից լեալ իբրեւ թուչուն հաւատարիմ ,  
 Յախորժ ի սիւք փափուկ թեւոցդ դեռ փայլախեա  
 զիմ ըզձակատ ,  
 Վեհավայր օթեվանիս մի՞ Ապողոնն իցես դու ,  
 Կամ Հերմէս շնորհագեղ յղեալ՝ առ իս ի Միրոյ .  
 Ունիցի՛ս ինչ ի ձեռին զաղեղն , ըզզվին , կամ զհերմէսեան  
 դաւաղան ,  
 Կամ թէ՛ խորհո՞ւրդ ինչ իցես լով , պատասխանի՛  
 սուր ինձ , աղէ՛ :

Ո՛հ, ե՛կ, ո՛րք և իցես դու, դիք կամ ողի, կամ մահացու,  
 Ձեւ ընկալեալ զյաւէրժական հրաժեշտին իմոյ զողջոյն,  
 Թո՛յլ տուր ինձ ճանաչել ո՞ այն իցէ մտերիմն այն  
 Որ քան զձեռնդս իսկ յառաջ խանդակաթըն եղեւ զինէն.  
 Ներեսցի՛ ինձ՝ ի ժամանել յուղւոյն իմոյ ի վախճան՝  
 Առաջնորդիս ունել շքնորհ և ըզձեռք նորին լալ:  
 Զե՛րծ յերեսացդ ընդ որով դեռ վարագուրիսդ՝

զայդ քօղ պայծառ .  
 Հո՛ւպ եկ առ իս . . . : Այլ զինչ ցտեսիս . ո՛վ Բանդ զոր  
 ետըն պաշտեմ,  
 Յաւէտակից դու ճառագայթ՝, դո՛ւ ինքն իցես  
 զոր տեսանեմս .

Սքօղեա՛ց, սքօղեա՛ց, թէ ոչ մեռայց միւսանգամ . . . :  
 . . . . .  
 . . . . .

« Երանի՛ որոց ի լոյս ի սուրբ երկրին եկեսցեն  
 Ու՛մ համբոյր պատկառանք տայ Երիւթրեան ալեաց կոհակ :  
 Նոցա՛ լիցի տեսանել նախ ըզլուսաստիւր զաստղ բանին  
 Ծագեա՛լ նշուլապանծ ի հորիզոն իւրեանց ի ջինջ :  
 Դէտակն յեկից կալեալ ի մարզ՝ անդ ըզբիրքս ձեր յաւեցէք,  
 Անտի՛ դայցէ ճշմարտութիւն ուստի տունջեան  
 դայ առ մեզ լոյս :  
 Այլ ո՞ արդեօք բերցէ զայն . . . : Դո՛ւ, դո՛ւ, ո՛վ Բանդ  
 յըղացեալ,

Դո՛ւ զոր աչք իմ նըմարեցին ժամանակացն ի միջոյ,  
 Դո՛ւ ոյր շողիւն մեծապայծառ յապագայից այսր ցողացեալ  
 Աստ ի կտտար կենաց զինեւ յառաջագոյն սիրուէ լոյս :  
 Քաս դու, և զսիւք շնչես կենաց, և մեռանիս մահ արժանի,  
 Զի ամենայն նշմարտութեան մահ է տրիտուր փոխարինի :  
 Այլ նուաղաձայն բարբառդ յետին լու յաշխարհի աստ եղեալ  
 Ո՛չ գէթ, հանգոյն իմուժս, անարձագանգ կորիցէ :  
 Զայնն յերկնուստ անտի եկեալ ոչ դարձ անդրէն առնիցէ .  
 Քեզ ունինդիր թմբեալ տիեզերք՝ յառնէ յոտին  
 և ընկենու քայլս,

ի յայտ եկեալ մեկնի երկրի ճակատագրին առեղծուած :  
 . . . . .

Զի՛նչ . ի միտս իմ անկա՛ւ վըսեմ խորհուրդս . ըզնանչմարեցի՛ .  
 Ո՛վ թիւ խորհրդաւոր . երրորդութիւն խորախորհուրդ .  
 Երեքանկիւն յօրինեալ ի յերրակի միութենէ .  
 Ձեւք, օրինակք, երփնից երանգք, հնչումը ձայնից  
 և թիւք իսկ,

Պատրուա՛կըք Աստուծոյ, համայն նորին էր նշանակ :  
 Այլ ահա հուսկ ուրեմն զերծեալ վասն իմ անկանին քօղք .  
 Ունկըն դիք . . . : » Խօսէր նա, ոչ եւս ըզձայն իւր լըսէաք :

Այլ հագագ իւր հեղձամղձուկնուաղեալ ի լանջն ոգեսպառ,  
 Ապիկար յօղել բարբառ՝ խորհրդոց մտացըն յայտարար,  
 Ըզկիսաբաց ըզլրթամբն, աւա՛ղ, անդօր դայր մեռանել .  
 Ապա անդէն թուէր թրթռալ և ընթանալ վերակենդան,  
 Որպէս կարապ բախէ զթեւս ի հայրենի իջեալ յափուժս .  
 Յուկեթեւ անրջոյ ի գիրկս ի քուն թուէր լինել :  
 Խոնարհեալ աներկիւղըն կերիս զմերով բարեկամաւ,  
 Կոչելով յաչըս նորին ըզփախստեայ ոգին ի շու,  
 Ի հարց ըզնա և ի փորձ արկանէր մինչ մահուն յեզերս .  
 « Ննջիցե՛ս դու . ասէր ցընա . նի՛րհ ինչ արդեօք իցէ մահ : »  
 Յինքն ամիւրփեալ ըզզօրութիւնն ասէ . « Զարթումն  
 ի քընոյ : »

— « Մահաստուեր մըուայլք զաչօրըդ պատիցեն՝  
 թանձրամած : »  
 — Ո՛չ . տեսանեմ զի՛ ստուերաց ծոցոյ ծագէ տիւ անաղտ :  
 — Հարկանիցի՛ն ինչ յականջող հեծութեան ձայնք  
 և կառաչք : — Ո՛չ .  
 Զուսկի արփեաց լըսեմ ըզձայն որ զանուն ինչ մրմնջեն :  
 — Եւ զգաս զի՛նչ : — Զոր ինչ թիթեռնըն նորաթեւ՝  
 մինչ յերկիր  
 Թողեալ զգօս ինչ պատեան և զաչսն ի շող բացեալ այգուն,  
 Յառաւօտուն ի շունչ մեղմիկ յերկնից ի դաշտսըն թեւած է :



— Զպատրկի՛ր արդեօք ըզմեզ, պատասխանի՛ տուր .  
 Հոգի . . . . .  
 — Անշո՛ւշտ լերուք յայս փպիտ, անանց է նա և անմահ . . . . .  
 — Ի՛մ իմիք մնաս առ ելանել թերակատար յաշխարհէս :  
 — Նաւին հանգոյն՝ շնչոյ իմիք մընամ և եթ ի մեկնել :  
 — Եւ ո՞ւստ գայցէ շունչըդ յետին : — Յերկնից անտի :  
 — Բան մի եւրս :  
 — Ո՛չ . յանդորրու թո՛ղ զիմ ոգեակ, զի թռչցի սըրաթեւ : »

Ասաց, և զհուօկ յետին նուագ զարտեւանունսն կափոյց,  
 Եւ առ վայր մի կաց մնաց անշունչ և անշունջ անբարբառ :  
 Պատիր ճաճանչ ինչ կենաց դեգերելով մերթ ընդ դէման  
 Նուաղալոյս շող ծիրանի ընդ դալկատիպ սիուէր ճակատն :  
 Այսպէս ի վերջ կոյս աշնան՝ զուարթագեղ յերեկոյի,  
 Մինչ արեգակն յեզերց երկնից մեկնեալ ի բացմիայ՝ արդէն,  
 Խուսափէ ի ստուերաց անագանեալ ինչ ճառագայթ  
 Եւ յանցանելն յոսկի զամպոյ իրիք ըզծսպորն ներկանէ :  
 Հուսկ ուրեմն ե՛ւրս ազատ թուի առնուլ և տալ շունչ,  
 Եւ, ժըպիտ իւր անուշակ զերեսօքն քաղցրածաւալ,  
 « Ազատարար դից, ասէ, զենցե՛ն զո՛հըս պատարագաց :  
 Ողջացուցին զիս : — Առ իմէ՛, ասէ կերիս . — Ի կենաց . . . . . »  
 Ապա թեթեւ իմն հեծութիւն ընդ չրթուենսն սահեալ թուեալ  
 Հե՛շտ իբր ըզթըռիչ ոսկեթեւիկ հիւբեան մեղուի :  
 Է՛ր այն . . . գիտեմ ես ոչ . այլ լի ի սուրբ ինչ խանթէփար՝  
 Զգայաբ ի ներքս ի մեզ իբր այլ իմն հոգի նորոգ :

Իբրու շուշան ըզմկանամբ ջուրց գլխիկոր թեւճակահար,  
 Գլուխ իւր զլանջօքն թեթեւիկ իմն խոնարհէր վայրահակ .  
 Արտեւանունքն երկայն զնիրհեալ աչօքն անկեալ կիսափակ  
 Թըւէին, որպէս երբեմն, ընդ խոնարհեալ ստուերօքն  
 Ըզուռթիւն ժողովել կամ ըզսրտին սքօղել խորհուրդ :  
 Ի հուսկ յետինն ի թուիչ բանն յանկարծուստ ոտնակառեալ  
 Թափառէր տակաւին, բա՛բէ, զըրթամբն կիսաբաց,

Եւ ի դէման մահահամբոյր դրո՛մեալ կայր փպիտ մշտածիծաղ :  
 Զեւն իւր զերկինս ձիգ մատամբն ցուցանէր տակաւին :  
 Եւ նորածագ արշալուսոյն քաղցրահայեաց մինչ ակնարկ  
 Տակաւ ի բաց փարատեալ յերկնից զստուերսն մըսայլ :  
 Իբրու փարոս գիշերալոյց ի բացական ինչ կատար,  
 Եկն ըզճակատ իւր մահատիպ ոսկեզօծել յայգուն ստուերս,  
 Թուէր իմն զի Աստղիկ յաստուածեղէն համակեալ սուգ  
 Գայր ողբալ տակաւին ընդ սիրողն իւր կենազըբաւ,  
 Թէ փբէ տրտմագին յաղօտափայլ յիւր ճառագայթ  
 ԶԵնդ իւմիոնայն տարփատենչիկ գգուէր ըզծոց ի գիշերի,  
 Կամ թէ յերկնից ի բարձանց ի յերկրաւոր ափանցս ի զնին  
 Դառնայր գայր իմաստնոյն երանաւէտ հոգի զուարթուն,  
 Եւ ի հեռուստ յայց ելեալ մարմնոյն զոր այն ինչ մերկացաւ,  
 Զերկնաշնորհ իւրոյ գեղոյն ի նա ըզցուսն արձակէր,  
 Որպէս աստղիկ ինչ հեշտորոք յերկին անամպ ի պայծառ  
 Զամօթլեածն ըզպատկեր օիրէ յալիս դիտել ի ծուփ . . . . .  
 . . . . .  
 Զլինէր լու շուրջանակի ողբոց բողբօ, ոչ հեծութիւն . . . . .  
 Ահա՛ այսպէս նա մեռաւ, թէ այս ինչ էր մեռանել :





# Ճ Ա Ռ Ք

Ա.

ԴՊՐՈՑ

(Խօսեցեալ է հանրիսի որարեդարնի Ա. Ներսիսեան Վարժ. Խասնի-ղի)

1870 Հոկտեմբեր 11

Եղբարք իմ ,

Չայնն , որ կը բարձրանայ ձեր մէջ , անծանօթ չէ՛  
ո՛չ այս յարկաց և ո՛չ ձեզ . այս որմերն նուիրական՝ նո-  
րա առաջին թոթովմունքն են լսած , և շատերն ի ձէնջ  
նորա նախկին ազազակաց հետ և զիւրեանցն են խառ-  
նած : Այս տան մի գաւակն և ձեր մի եղբայրն է ուրեմն  
որ պիտի խօսի . անկարելի է որ այս շրթներէն ելնէ  
բառ մի , որ այս սրտէն բղխէ խօսք մի , որ այս տան  
չահուն և ձեր զգացմանց չլինի համաձայն : Լսեցէ՛ք ինձ  
ապա վայրիկ մի :

Այս երգերն որ այս յարկերն կը գոռացնեն , այս  
դափնիքն որ այս որմունքն ու գուներն կը զարդարեն ,  
այն նորորինակ աշխոյժը որ ձեր դէմքերն կը վառէ , այն  
նշույլքն երջանկութեան որք ձեր աչերէն կը ճառագայ-  
թեն , հաւատալ ինձ կու տան թէ յաղթանակ մի կը

տօնէք : Ի դուր սակայն աչերս իմ շուրջս կը յաճեմ, ի  
 դուր կ'որոնեմ աստ յաղթութեան մ' առհաւատչեայ-  
 ներն . չկան ո՛չ յաղթական կառքեր , ո՛չ այն կառաց  
 լծուած գերի թագաւորներ , ո՛չ ստրուկ ժողովուրդ մի  
 որ , շղթայներով բեռնաւորեալ , կորակոր և դողդոջուն ,  
 ընդ քարէ ածի մեր յաղթական քայլից ետեւէն . ո՛ւր  
 են ձեր թրերն արեամբ կարմրած . ո՛ւր թողիք ձեր նի-  
 զակներն որոց ծայրերն անցուած թշնամի կառափուռք  
 պարտէին արդ տարուբերել օդոց մէջ ահաւոր և քստմնե-  
 լի : Ինչո՞ւ չեմ լսեր ձեր աչգերուն՝ ձեր աստարաց վերայ  
 չկահիւնն . ինչո՞ւ վիրաւորաց հեծմունքն , այրիացեալ  
 հարսանց ողբերն , անզաւակեալ ծնողաց կոծերն և որ-  
 բացեալ մանկանց ողորմ ճիչերն չզան խառնուիլ ձեր  
 բերկրածայն գոչիւններուն հետ և յաղթութեանց սովոր-  
 ական ներդաշնակութիւնն յօրինել . մանաւանդ թէ  
 ինչո՞ւ չտեսնեմ զձեզ ի ծուներ խոնարհած դռող մահ-  
 կանացուի մի ոտից առջեւ , և ինչո՞ւ կեցցեներու գոռիւն-  
 ներու հետ նաեւ այդ մի անուան հազարաւոր բերան-  
 ներէ յաստեղս ի վեր թռանիլն չլսեմ : Ո՛ւր է ձեր Աղեք-  
 սանդըն , ո՛ւր է ձեր Ահուարն , ո՛ւր է ձեր Պոնարարդն ,  
 ո՛ւր է ձեր Այլեօմն : Չի՞ք , չի՞ք և ո՛չ մին յայսցանէ : Այ  
 խաբիմ ուրեմն . յաղթանակ մի չէ այս զոր կը տօնեմք ,  
 այլ թերեւս խաղ մի տղայական , թերեւս կեղծիք մի  
 որով մեք , Հայկայ , Արամայ և Տիգրանայ զաւակունք ,  
 զուրկ այժմ մեր վեհապանծ նախնեաց յաղթական հան-  
 դէսներէն , մեր սրտի մորմոքն ու տենչանքն կը ցածու-  
 ցանեմք : Երազ մ' է այս ուրեմն , երազ մի որով իրա-  
 կանութեան դառնութիւնքն կ'ուզեմք ամօրքել : Խեցի՛ք ,  
 ոտնակոխ ըրէ՛ք ապա այդ դափնիքն որք մեր գձնու-  
 թեան վերայ կը խնդան . դադրեցուցէ՛ք այդ եռանդուն  
 նուագներն որ չեն ուրեմն այլ ինչ բայց եթէ փառա-  
 ւոր անցելոյ մի արձագանդն անփառունակ ներկայի մի  
 մէջ , իբրեւ խնջոյից մեծածայն նուագներն որք ձոխին  
 պալատէն կ'ելնեն և աղքատին հիւզին մէջ կը լսին . մա-  
 րեցէ՛ք ձեր աչաց մէջ ուրախութեան այդ խաբուսիկ ճա-

ճանչներն , և անցուցէք վերստին ձեր դէմքերուն սգոյ  
 սեւ քօղն . զի անուրջ մի միշտ անուրջ է , որքան գե-  
 ղեցիկ լինի այն ու մխիթարիչ . զի յաղթութեանց փա-  
 ռաւոր ժամն անցաւ հայոյն համար . զի դարձո՛ւ աչերդ ,  
 ո՛ հայ , դարձո՛ւ յարեւելս . տե՛ս , աւերք և մոխիրք ցոյց  
 տան քեզ միայն երկիրն յորում Հայկ , Արամ և Տիգ-  
 րան ապրեցան . . . : Բայց ինչո՞ւ անշարժ կացել էք .  
 ձեր այդ դիրքը վե՛հ է քան զգինուորինն որ իւր յաղ-  
 թութեան զգացումն ունի . ձեր ճակատուց վերայ , զոր  
 վեհութեամբ կը բարձրացնէք , յաղթութենէ աւելի բան  
 մի կը կարդամ , կը լսեմ որ կ'ըսէք ինձ . « Այո՛ , յաղթե-  
 ցինք » : — Բայց ո՞վ է պարտեալն . — Խաւարն , կը պա-  
 տասխանէք : Ո՛րք են ձեր զէնք . — Լո՛յս , իմացականու-  
 թիւն , կը ձայնէք : Ո՛յք են ձեր զերիններն . — Բռնու-  
 թիւն , ստրկութիւն , թշուառութիւն , կ'աղաղակէք :  
 Քաջ է , ո՛ լուսոյ զինուորներ , օրհնեալ լինին ձեր զէնք .  
 ես առաջինն եմ ձեր յաղթութեանց ծափահարելու .  
 ապրի՛ք դուք :

Ստուգի՛ւ ուրեմն , եղբարք իմ , կեղծիք մի չէ այս  
 հանդէսն . ցնորք մի չէ՛ այն , այլ իրական յաղթանակի  
 մի հանդէսն , յաղթանակի առ որով պարտութիւնք են  
 միայն սրով և հրով տարեալ յաղթութիւնք : Չերն յաղ-  
 թանակաց յաղթանակն է , զի նոքա կ'աւերեն , սա կը  
 շինէ . նոքա արտասուք կը հոսեցնեն , սա զայնս կը ցա-  
 մաքեցնէ . նոքա կը գերեն , սա կ'ազատէ . նոքա աղէտ  
 և մահ կը ցանեն , սա երջանկութիւն և փառք կը սիրէ :  
 Դուք այսօր այսր կու գայք դպրոցի մի հաստատութեան  
 սարեղարձն տօնել : « Գպրոցի՛ , մե՛ծ բան » կ'ըսէ այն  
 որոյ տեսութիւնն չանցանէ անդր քան զնիւթականն :  
 Այո՛ , մեծ բան , և ո՞ր բան մեծ քան զայս : Գպրոց ,  
 լուսոյ վառարան , քաղաքակրթութեան օրօրոց . քաղա-  
 քակրթութիւն , այսինքն մարդկութեան բարձրացումն  
 ի գազաթնակէտն իւր բարոյական մեծութեան և կա-  
 տարելութեան , այսինքն տգիտութեան մահն , նախա-  
 պաշարմանց ընջումն , անհաւասարութեանց անհե-

տունն , գրկանաց բարձունն , տկարին ու տառապելոյն դարաւոր հեծութեանց դադարունն , պատերազմի հրէշին անկունն , ազգաց և ազանց եղբայրական գիրկընդխառնունն , թշուառութեան կործանունն . ի մի բան , ազատութեան , հաւասարութեան , և եղբայրութեան թագաւորութիւնն : Ահա՛ այն ապագայն զոր դպրոցք կը պատրաստեն , այն դարն զոր այս յարկք կ'երկնեն . խոնարհեցուցէ՛ք ձեր գլուխներն պատկառանօք , երբ ներս կը մտնէք այս սրբազան դռներէն . ապագայի տաճարն է սա :

Թերեւս նոքա , որք չգիտեն հեռին գիտել , թերեւս ոմանք յառաջդիմութեան սկեպտիկեանք « իւթօրի՛ » մրմուռն . ո՛չ , Պա՛րոնայք , կ'ըսեմ՝ նոցա , ո՛չ , այդ ապագայն երեւակայութիւն մի չէ՛ . ստոյգ հեռապատկեր մի է , լուսոյ և երջանկութեան , զոր հաւատացեալ ոգիներ բերկրութեամբ կը նշմարեն ներկային միզոյն ու մշին մէջէն , և որ յուսացողներու սրտերն կը պնդէ և ձգունքն կը խրախուսէ : Գպրոցն , այո՛ , իւր մեծ դաւակն կ'երկնէ , և մէն մի օր նորա ծնունդն կը մերձեցընէ : Աշխարհ՝ այն ոսկեզինիկ դարուն կ'սպասէ լի յուսով և հաւատով . մութն որ տակաւ առ տակաւ իւր սեւ վերարկուն կը ժողովէ , և այն վիրագքն գիշերային՝ որ քիչ քիչ իւրեանց օրջերն գնան կծկիլ՝ այն մեծ օրուան ծագումնն կ'իմացնեն : Չտեսնէ՛ք , կ'ըսեմ՝ նոցա , այն մեծ միջոցն որ կայ մարդկութեան ընթացից սկզբնակէտին և այն կէտին մէջ ուր հասած է այսօր այս դարաւոր ճանապարհորդն . անհո՛ւն միջոց առաջին մարդէն մինչեւ 19-րդ դարու մարդն : Այս ուղեւորին քայլերն նախ ընդ երկար շատ յամր , տարտամ և տարժանելի եղած են . ընդէ՞ր . — զի զառաջինն մթոյ մէջ կը քայլէր : այլ կը քայլէր միշտ , զի կասեւն արդիւուած է իւրեան . քիչ քիչ արահետն սկսած է լուսաւորիլ և իւր քայլերն հաստատուն ու արագ լինել . ի՞նչպէս . — զի լապտեր մի առաւ նա իւր ձեռնն իւր քայլից առաջնորդ . ո՞րն էր այդ լապտերն . — ուսո՛ւմն , գիտութիւնն ,

դպրո՞ց . . . : Այո՛ , շնորհիւ այս լապտերին , կը քայլէ մարդկութիւնն , կը քայլէ յառաջ , և իւրաքանչիւր քայլ զիւր յաջորդն կ'երագէ . կ'ընթանայ դէպ յիւր նպատակն յաւիտենական , դէպ յարեգական կատարելութեան , որոյ ճառագայթք իւր վերայ կը ցոլան քանի որ ինքն կը մօտի . կ'ընթանայ նա , և իւր քայլից առջեւ տակաւ առ տակաւ բնութիւնն իւր գաղտնիքներն կը թափէ . անիրաւութիւնն կը խոնարհի և շարիք թալթալ կը խաղան օրհասական : Գպրոցէն , լուսոյ և ճամբարութեան զինարանէն , բան և իմացականութիւն իւրեանց դէնքն առած դուրս կու գան՝ նիւթոյն վերայ իւրեանց յաղթանակն կը կանդնեն , կը քանդեն ինչ որ չէ՛ գեղեցիկ , ինչ որ չէ՛ բարի , ինչ որ չէ՛ ճամբարիտ , և այսպէս , խղելով զայն կապերն անարգ որք զաշխարհ՝ դձմութեանց տղմին մէջ կը պարաւանդեն , կու տան նմա այն վտեմ մղումն որ զայն բարձրացնելով կը մօտեցնէ իւր գերագոյն Արարչին , ճամբարութեան և սիրոյ յաւիտենական աղբիւրին , որ զմարդ ստեղծեց զի երջանիկ լինի այն : Բոլոր այն հանճարներն որք , մե՛ծ իրապէս , մարդկութեան հրեղէն սիւներն եղած են այն անապատին մէջ զոր կտրել պարտած է նա և դեռ կը պարտի , հասնելոյ համար յերկիրն սուրբ , յերկիրն Աւետեաց , յայն մեծ ապագայն , բոլոր այն հանճարներն , կ'ըսեմ , Մովսէսէն մինչեւ Հիւզօ , որք՝ այս մեծ ապագային մեծ առաքեալներն՝ յաջորդաբար զաշխարհ յեղափոխած և պատրաստած են զայն ընդունելոյ , այս յարկաց տակ իւրեանց նախկին սնունդն առած և այս ջահէն վառած են զիւրեանց պատրոյզն անշիջանելի : Փակէ՛ այս դռներն , մարէ՛ այս ջահն . ո՛վ աղետից , մեռա՛ւ մարդկութիւնն . խաւարն կը վերադառնայ իւր բովանդակ անարկութեամբն և իւր համայն ահուելի ճիւղներովն . . . :

Բայց միթէ՛ չմեղանչե՛մ այս խօսքերն ձեր առջեւ արտասանելով , ո՛վ լուսոյ զինուորներ , աւելորդ չե՞ն այս խօսքերն ձեր համար որ քան զտկարս կարող էք և՛ խօսքով և՛ գործով ձեր դրօշն պաշտպանել , ո՛ յառաջդի-

մութեան դրօշակիրք : Դուք քան զամէն այլ ոք լաւ գիտէք թէ քանի՛ բարձր է դպրոցի նշանակութիւնն , թէ ո՞րչափ մեծ և վե՛տ նորա կոչումն , և թէ զի՛ հզօր է նորա ներգործութիւնն մարդկային սեռի ճակատագրին վերայ : Դուք հաւատ ունիք ապագային վերայ . վասն զի , եթէ չունէիք այդ հաւատն , ինչո՞ւ այսօր հոս պիտի գիտէիք և ինչո՞ւ պիտի տօնէիք այս հանդէսն — ապագայի նախատօն : Դուք , Խասգիւղցիք , դուք գիտէք թէ դպրոց մի հիմնել փառաւոր է քան աշխարհակալաց համայն յաղթութիւնքն , և մեծ քան աշխարհի մեծամեծաց բոլոր մեծագործութիւնքն . դուք գիտէք թէ կրթութեան յարկերն ազգաց փառաց տաճարներն են քան զամէնն հոյակապ և պերճ . ուստի հպարտ էք ձերովն և ի սա կը պանծայք :

Սքանչանալ միայն կրնամ այն եռանդուն համակրութեան վերայ որով յաւէտ շրջապատած էք ձեր վարժարանն , այն յարատեւ անձնանուիրութեան վերայ որոյ առարկայ ըրած էք զայն անդլակի . ի մի բան , այն խնամօտ սիրոյն որով գուրգուրացած էք ցարդ և կը գուրգուրայք այս նուիրական յարկիս վերայ : Երեսուն և հինգ և աւելի տարիներէ հետէ այս ջահը , զոր չէք պակսած երբէք տածելէ , կը վառի Խասգիւղի մէջ և իւր պայծառութիւնն կը սփռէ : Երեսուն և հինգ և աւելի տարիներէ հետէ Խասգիւղի մանկտին կու գայ լոյս առնուլ աստի , կեանք խնդրել բարոյական կենաց այս աղբիւրէն , պատանին՝ քաղաքացի և հայր , կոյսն՝ ամուսին և մայր , և երկօքին եւս մարդկային մեծ գերդաստանին արժանի անդամք լինել ուսանիլ : Գրեթէ անկարելի իմն է որ աչերս այս ակմբին մէջ իմ շուրջս դարձնեմ և պատահիմ այնպիսոյ մի որ իւր բարոյական էութիւնն այս տան չպարտի : Դուք , աշխոյժ երիտասարդք , որոց տաղանդն , լոյսերն և ազատական գաղափարք ըզ Խասգիւղ պանծացուցած և զձեզ ազգային վերաշինունութեան և մարդկային քաղաքակրթութեան գործաւորներն են ըրած , դուք կը մոռնայք որ ձեր բարոյա-

կան կենաց կաթնն ձեզ ջամբող մայրն այս է եղած : Ի՞նչ կ'ըսեմ . չէ՛ , չմոռնայք , մանաւանդ թէ այնու կը փառաւորիք . չէ՛ , չմոռնայք . մանաւանդ թէ կը գրգռուիք երբ զձեզ իբր օտար կամին նկատել . մանաւանդ թէ այս մօրն ի նպատտ , որոյ ծօցին մէջ ձեր եղբարքն և քորք կը սնանին , երբ ձեր բնիոնն միայն կը պահանջեն , դուք ձեր գաղափարն այլ նմա կամիք նուիրել և մասն մի հանել նմա յայնմանէ զոր նա ձեզ տուաւ . — ձեր լոյսէն : Դուք ձեռն ի ձեռն կամիք յօգել և , ինչպէս այնքան լաւ կ'ըսէր պերճախօս բերան մի ի ձէնջ , ձեր անձերովն պատնէչ մի կանգնել նորա շուրջն՝ պաշտպանելոյ համար զայն ամեն վնասակար յարձակմանց և մահաչունչ քամիներու դէմ : Ապրի՛ք :

Այո՛ , պարտ մի է այս , եղբարք իմ , սրբազան պարտ մի երախտադիտութեան՝ նիւթական և բարոյական օժանդակութեան կրկին ձեռներ կարկառել առ այս յարկն լուսոյ և ջանալ տալ նմա բովանդակ կարելի մեծութիւնն ու շքեղութիւնն : Ուրախ եմ որ ձեր հետ սոյն պարտուց վերայ խօսելոյ առիթն ունիմ : Լնո՛ւմք ապա զայս պարտն . կցե՛մք մեր ճգունքն մեր հարց ճգանց հետ , նուազ է միշտ որ ինչ կ'ընէ մարդ դպրոցի համար . ջանա՛մք աւելին ընել երբ կարող եմք : Բոլոր քիրտներէն՝ զոր մարդկային ճակատն կը հոսէ՝ ամենէն սուրբն և ամենէն արգասաբերն այն է որ վարժարանի հողին վերայ կը վիժէ , զինա ի շահ ընդհանուր աշխարհի : Նա յօգուտ բովանդակ մարդկութեան կը հոսէ . այս քրտանց իւրաքանչիւր կաթլին մէջ խաւարն և թշուառութիւն կը մեռնին մասն առ մասն : Լոյսն՝ զոր կու տամք պատանեկութեան՝ մեր վերայ կ'անդրադառնայ և զմեօք կը ճառագայթէ : Ո՞րն է անվութութեանց ամենէն մահաբերն . գիտէ՛ք , այն որ դպրոցի նկատմամբ է . դաստիարակութեան խնդրոյն մէջ , որ համայն ազգաց համար մահու և կենաց խնդիր է , մի ժամու կորուստն անդարմանելի կորուստ մի է , և մի տարին՝ որ կը սահի անօգուտ , բա՛րէ , ի՞նչ փայլուն ապագայից զիականերով բեռնաւորեալ կը գլորի յոշնու-

թիւն և ի՛նչ ասպագայ անիծից կոյտեր կը դիզու մեր գլխոյն վերայ : Ո՛չ, չդլամք, ո՛ր Ներսիսեան Սանուհք, մանաւանդ թէ տամք ինչ որ ունիմք, ինչ որ կարող եմք տալ որ կարենայ նպաստել այս տան հաստատութեանն ու փառաւորութեան : Ընե՛մք զայս, եղբարք, և ընե՛մք շուտով : Ներսիսեան եղբայրու՛նէն անունն, որ դամ մի թուաւ շրթներէ, թո՛ղ վայրասպար օղին մէջ հնչուած մի բառ չլինի . միանա՛մք այս մեծ և վսեմ անուան տակ . Ներսիսեան եղբայրութի՛ւն . — և, իբր մի նուիրական հովանւոյ տակ, մոռնա՛մք և եղբայրական համրոյրի մի մէջ խեղդե՛մք կրից և ատելութեան ժանտ օղին, եթէ դժբախտաբար դեռ կը շարունակէ ջլատել մեր սիրելի թաղն . ժողովի՛մք Ներսիսեան վարժարանի դրօշակին շուրջն և բարձրացնեմք զայն միահամուռ . թո՛ղ նորա ետեւէն ընթանայ թաղն ողջոյն, և թո՛ղ թաղեր համայն նորա և մեր ետեւէն դիմեն յառաջադիմութեան և քաղաքակրթութեան յարահետն լուսաշաւիղ . . . :

Բ

### Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Ի Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

( Խօսեցեալ է լաբանի Ա. Բ. Գ. է Բարեկա՛նց ընկերու՛թեան )

Սամաթիա 1872 Փետրուար 24

Տեա՛րք և Տիկնայք,

Այս բեմն յոր զիս հրաւիրելոյ բարձր պատիւն կ'ընէք ինձ, այս յարկն զոր պերճաբան ձայներ ա՛յնքան անգամ թնդացուցած են, և որ հիմայ իւր կամարաց ներքեւ համախմբած է Հայութեան ամենէն եռանդուն սրտերն և ամենէն լուսաւոր մտքերն, այն յանդուգն նիւթն որ դողցես այժմէն շրթանցս տկարութիւնն կը ծաղրէ, այն խորհրդաւոր լուծութիւնն որ այս պահուս զիս կը շարժապատէ, ամեն ինչ կը դողացնէ զիս : Սակայն, մի՛ կարծէք, Տեա՛րք իմ և Տիկնայք, թէ կոյր վստահութիւն մի է որ զիս այսր կը հանէ, և, եթէ ձեր առջեւ խօսելոյ փառքն զիս չհրապուրէր, և եթէ չունենայի իմ առջեւ սրտից այնպիսի թելեր զոր տկարագոյն շունչ մի կարող է անդէն եռանդնաւարժ թրթռացնել, բաւական է զի ինչ որ վսեմն է ու գեղեցիկ՝ զայն մրմնջէ այդ շնչիկն, այո՛, հաւատացէք, չե՛լնէի երբէք այսր և չհամարձակէի ձեր ներողամիտ ունկնդրութիւնն խնդրել :

Հայրենիք . . . ի՛նչ նուիրական անուն, բառ մի որ յինքեան կը բովանդակէ բոլոր ինչ որ մարդկային սիրտն

ունի սիրելագոյն ու սրբազան՝ երկնից տակ . բառ մի որ , քան վամէնն անոյշ ու սիրելի , ընդ միշտ մի մոգական ազգեցութիւն ունեցած է մարդկեղէն էակին հոգւոյն ու ճակատագրին վերայ , և , բա՛ռ հրաշագործ , ազգերու պատմութեանց էջերն սքանչելեօք լցած է :

Հայրենիք . . . այս այն վայրն է նուիրական զոր տիեզերաց Արարիչն նշանակած է իւրաքանչիւր ազգի իբրեւ իւր ընտանեկան օթեվանն և իւր բաժինն հողագնտոյս վերայ յորում ամէն էակ իւր տեղն ունի : Այս այն սրբազան որորանն է յորում քակուած են իւրաքանչիւր ազգի խանձարուրք , այն տունն յորում իւրաքանչիւր ժողովուրդ անած , սոճած և ապրած է իւր նախահարց շիրմաց քով և իւր մատաղ սերնդէն չընապատեալ՝ որ յետոյ քան զինքն կը սնանի , կ'աճի և կ'ապրի այն երանաւէտ վայրաց մէջ ուր իւր հարք կենաց օգն ծծեցին և զորս թողին իւրեան ի ժառանգութիւն :

Ամէն ազգ , ամէն ժողովուրդ արեգական տակ ունի իւր սեփական հայրենիքն : Նա որ արծուոյն օթեվան տուած է երկնաբերձ քարաժայռից մրրկակրճ կատարն , ճնճղկան՝ սաղարթախիտ ծառոց թեւերն , առիւծուն՝ իւր մենաւոր անտառներն յորս իւր մուռնչներն ամպագոռ որոտմանց հետ կը մրցին , մրջնոյն՝ իւր գետնափոր սրահներն , և ձկանց մէջ բաժնած է ծովուց անձայր ու անյատակ անդուռներն , նա մարդկային ազանց իւրաքանչիւրին ալ իւր բաժինն տուած է երկրագնտիս հողէն , ջրէն և օդէն , և այն հողոյ , ջրոյ և օդոյ բաժինն որ անձնիւր ժողովրդեան յատկացած է երկինքէն՝ նորա հայրենիքն է այն :

Ինչ կայ առաւել քաղցր , առաւել պաշտելի ազգի մի համար քան իւր հայրենիքն . ո՞չ ապաքէն այնու միայն նա ազգ մի է . ի՞նչ է ծառ մի երբ իւր արմատն իւր հողն չունի , իւր հողն որ կու տայ իւրեան իւր հիւթն , իւր սնունդն , իւր կեանքն . խլէ՛ ծառն երկրէն որ զնա բուսոյց , կը ցամաքի այն , կը թափթփին իւր աղազուն տեբեւներն զոր հողմն կը սփռէ յերեսս երկրի , տխուր բե-

կորք նորա որ երբեմն ախորժ հովանի մի կը սփռէր անդ ուր իւր բնիկ հողոյն հիւթն և բնիկ երկնից արեւն կը վայելէր : Այսպէս է նաեւ ազգերու համար . անդ միայն կ'ապրին ուր սկիզբն են առած : Անդ ամէն ինչ իւրեանց մտաց և սրտին հետ կը խօսի . անդ ամէնէն աննշան առարկայք մարդոյն համար խորհրդաւոր լեզու մի ունին . հայրենի երկրին քարն , խոտին շիւղն , առուակին մի ալեակն հազար ու բիւր անոյշ բաներ կ'ըսեն և իւր գոյութեանն անհրաժեշտ տարերքն կը կազմեն : Անդ է զի մարդ , մի առ մի թուելով ամպածրար լեռներն , մթին ու նսեմաստուեր անտառներն , լայնածաւալ հովիտներն , խորածոր ծործորներն , խայտահոս առուակներն , քաղցր հպարտութեամբ մի իւր լանջքն ուռած , կ'ըսէ . Ի՛մ են այս լերինք , ի՛մ են այս անտառք , ի՛մ այս հովիտք , ի՛մ այս ծործորք , ի՛մ այս առուակք . և յետոյ , անուշակ խոհանաց մէջ ընկղմած , ականջ կը դնէ այն անվերջ ու սիրելի խօսից զորս յիշատակօք լի այդ առարկայներն կ'ըսեն իւրեան : Այս լերանց վերայ , կ'ըսեն , այն որոյ անունն կը կրես՝ իւր ժողովրդեան անկախութեան դրօշն կանգնեց . այս անտառք իւրեանց խորհրդաւոր ստուերաց տակ կը ծածկեն նախահարցք սրբազան ոսկերքն . այս հովիտք համակ ներկուած են քո հարց արեամբ զոր իւրեանց երկրին ի սէր թափեցին . այս ծործորոց մէջ քո պապերն ծծեցին զայն օդ զոր դու կը ծծես . այս առուակք իւրեանց մրմունջն խառնած են նոցա երգոց և ողբոց հետ , երբ քեզ նման այս եզերաց վերայ կու գային իւրեանց սրտին գաղտնիքն ու հառաչներն յանձնել այս ալեաց . . . : Հայրենիքն , չէ՛ , լու երկիր մի չէ այն . խորան մի է նա սրբազան՝ մարդկային սրտին համար , խորան մի ուր ամէն կողմ իւր նախնեաց ոտից հետքերն ու մատանց նշաններն կը տեսնէ և որոյ կամարք տակաւին նոցա ձայներովն կը թնդան իւր ականջին : Արտաքս քան զայն ամէն ինչ օտար է մարդոյն համար . ամէն ինչ իւր քաղցրութիւնն կը կորուսանէ , ամէն ինչ իւր հրապոյրներէն կը մերկանայ : Նա որոյ համար բեւեռին սա-



ուամանիքն տուած է բնութիւնն ի հայրենիս՝ նոցա մէջ միայն հրապոյր կը գտնէ . Իտալիոյ անամպ ու ջինջ երկինքն և Հելվետիոյ ծաղկաւէտ մարգագետինք դառն աքսոր մի են իւրեան , և Սահարայի բոցակէզ անապատաց թափառական բնակչին նուազ քաղցր է գարնանաշունչ զեփուռն քան սիմունն հրատոչոր : Այո՛ , իրաւամբ ըսաւ , հայրենասէր ողի մի , « քան զօտար երկրի վարդն անոյշ է հայրենի երկրին փուշ : »

Բայց լուկ հողն , ջուրն և օդն չեն որ հայրենիքն կը կազմեն : Բոլոր ինչ որ ազգի մի յատուկ է , բոլոր ինչ որ իւր սեփականութիւնն է և զայն միւս ազգերէն կ'որոշէ , բոլոր ինչ որ իւր նախնեաց սրբազան աւանդն և ժառանգութիւնն է նուիրական , այն ամենայն հայրենիքն կը կազմէ : Ամէն ինչ որ հայրենի է՝ հայրենեաց մի տարրն է , հայրենիք է այն : Հայրենի լեզուն , հայրենի կրօնքն , հայրենի գրականութիւնն , հայրենի պատմութիւնն , հայրենեաց մասերն են կամ նորա բարոյական կիսամասնն , հոգի՛ն հայրենեաց մարմնոյն զոր կը շնչաւորեն , և ոչինչ նուազ քան զնիւթական հայրենիքն իրաւունք ունին մարդոց սիրոյն և գորովանաց վերայ : Աթէ նիւթական հայրենիքն այն տաճարն է որ իւր գրկին մէջ կը համախմբէ մի նախահօր սերունդներ , մի և նոյն ազգի զաւակներ , ազգային լեզուն , կրօնքն , գրականութիւնն , պատմութիւնն այն սուրբ և անբռնաբարեղի կապերն են որք յիւրեար կը կցորդեն համարիւն եղբայրներ և ազգերու անցելոյն , ներկային և ապագային մէջտեղ միութեան անջինջ գծերն են : Նիւթական հայրենիք և բարոյական հայրենիք միմեամբք ամբողջ են . մին միւսոյն կը վկայէ . ինչ որ մին կ'ըսէ՝ միւսն զայն կը հաստատէ , և մին ա՛յնքան պաշտելի է որքան միւսն , կամ , այսպէս ըսեմ , կարելի չէ զմին սիրել առանց զմիւսն սիրելոյ :

Հայրենեաց այս սէրն բնութիւնն տնկած է մարդկային սրտին մէջ . բնազդումն մի է այն և բնազդմանց ամենէն գեղեցիկն և ամենէն վսեմն : Նախախնամութիւնն իւրաքանչիւր ազգի աստեղց տակ զիւր տեղն սահմանե-

լէ յետոյ , այս զգացումն մարդկային հոգւոյն մէջ դնելով , գոգցես նուիրական պատուար մի քաջած է այդ տեղւոյն շուրջն՝ ազատ կացուցանելոյ համար զայն բռնաբարութեան ճանկերէն : Եւ սուուգիւ ո՞ր պատուար առաւել ամուր և անկործան քան այն հայրենավստ սրտերն որք հայրենի հողն ու սեփական երկիրն կը պաշտպանեն օտարին յարձակման դէմ : Կը կործանին ամբալառոյց պարիսպներն , կ'իյնան ապառաժ բերդերն թընդանօթաց աւերիչ հարուածներու տակ , բայց չիյնա՛ն , չկործանի՛ն հայրենասէր սրտերու պարիսպներն , միշտ իւրեանց ետեւ պահելով զայն զոր կը կոչեն քաղցր հայրենիք :

Հայրենասիրութեան այս վսեմ զգացումն ոչ միայն հայրենեաց պահապան ողին լինելոյ սահմանուած է յերկնից , այլ և ազգերն ազնուացնելոյ , ժողովուրդներն առաքինի և երջանիկ դործելոյ և հայրենիքն զարգացնելոյ հզօրագոյն շարժիչ մի է , մարդկային սեռի հոգւոյն մէջ հաստատեալ ի Նիւմէն որ ամեն ինչ բարի ըրած է և որ բնազդմամբք զիւր կամքն գրած է մարդկային սրտին մէջ , զիւր կամքն որ մարդկութեան երջանկութիւնն է : Հայրենասիրութիւնն յանձնանուիրութիւն կը դրդէ զմարդ , յայն առաքինութիւն որ կը վսեմացնէ զմարդ և Աստուծոյ կը մօտեցնէ զնա , յանձնանուիրութիւն իւր հայրենեաց , իւր հայրենակցաց , իւր երկրին և եղբարց օգտին , մինչեւ զամէն ինչ մոռնալ , զամէն ինչ զոհել ի սէր իւր հայրենեաց և իւր ազգակցաց որ իւրեան հետ մի հայրենեաց զաւակներ են և հաւասարապէս սիրելի իւր սրբտին : Հայրենասիրութիւնն ժողովրդոց առաքինութիւնն է . ո՞րքան բուռն է այս զգացումն ժողովրդեան մի սրբտին մէջ , ա՛յնքան մեծ է նա . ո՞րքան բախտն հալածէ զայդ ժողովուրդն , ո՞րքան թշուառութիւնն շանթակոծէ զնա , չմեռանի այն . միշտ կենդանի է , ցորչափ հայրենեաց սիրոյ կայծակն չէ՛ մարած նորա հոգւոյն՝ մէջ :

Ե՛հ , ի՞նչ հրաշքներ կը գործէ այս զգացումն , երբ ժողովրդոց սրտին մէջ իւր բովանդակ սաստկութեամբն բոցավառի , երբ կամին ի փորձ արկանել զայն , երբ Հայ-

րենասիրութեան շունչն, մի երկրի մի ծագէն ցմիւան  
 փոթորկայոյ ընթանալով, ողջոյն ազգի մի սրտից թե-  
 լերն միահաղոյն յուղէ և մրրկէ : Է՛ն, այն ատեն, Տեառք  
 և Տիկնայք, այն ատեն, այն ժողովուրդն այլ եւս հա-  
 սարակ ժողովուրդ մի չէ . դիւցազանց ազգ մի է այն .  
 գերբնական արիութիւն մի զամէն ոգիներն կը վառէ,  
 ամէնէն դողդոջ բազուկն աննկուն կորովով կը զինի, ա-  
 մէնէն անարի սրտերն այն հիւանալի անվեհերութեամբն  
 կը ընուն որ վտանգն կը ծաղրէ և ի մահ կը դիմադրուէ,  
 Ժպիտ ի շրթունս, քան զկեանս քաղցր և զեղեցիկ հա-  
 մարելով հայրենեաց վերայ մեռանելն :

Պատմութիւնն քանի՛ օրինակներ կ'ընծայէ հայրե-  
 նասիրութեան հրաշալեաց որք ցայսօր ազգերու զարմաց-  
 ման մշտնջենաւոր առարկայն եղած են : Մարաթոն,  
 Թերմոփիլ, Կարքեղոն, Սարակոս, Բոլոնիա և այլք,  
 թատր եղած են հայրենասիրութեան ոգւոյն՝ հայրենի  
 հողն անիրաւ բռնաբարչին դէմ պաշտպանելոյ համար  
 գործած դիւցազնային և գերբնական ճիւղն . այն վայ-  
 րաց մէջ դեռ կը քնանան այն դիւցազունք որք, հայրե-  
 նի պարսպաց առջեւ ոտն առ ոտն բազմապատիկ թշնա-  
 միներու դէմ մարտնչելէ յետոյ, անկան իւրեանց ան-  
 շունչ դիակա՛նց վերայէն միայն ճամբայ տալով նոցա :

Բայց ինչո՞ւ հեռիներն երթամք պատմութեան հար-  
 ցընել թէ ի՛նչեր կը գործէ ժողովուրդ մի երբ հայրենա-  
 սիրութեան սրբազան կրակովն բռնկի : Դեռ հեռի չէ  
 այն թուականն որ 1870 ի վերջին մասովն և 71 ի սկիզ-  
 բովն կը կազմի և զոր նշանաւոր ըրին վայրագ պատե-  
 րազմ մի իւր ամէն արհաւրօքն, և հայրենասէր ժողովըր-  
 դեան մի դիւցազնական դիմադրութիւնն : Ամէնքդ այլ,  
 Տեառք իմ և Տիկնայք, ամէնքդ այլ տեսաք թէ Գաղիոյ  
 այն հիւանալի ժողովուրդն, թշնամեաց բուռն և աւերիչ  
 հեղեղներէն պաշարուած, իւր զիւղերն ու քաղաքներն  
 թշնամուոյն տեղատարափ կրակին ու ուժաց ներքեւ այ-  
 րեացաւեր, իւր ողջոյն բանակն ի գերութիւն վարեալ,  
 անդէն և անօգնական, ի՞նչ ըրաւ այս ծայրայեղ վիճա-

կին մէջ յորում ամէն մարդկային հնարք սպառած էին .  
 — Հայրենասէր եղաւ : Նոցա որք կ'ըսէին, « Այլ բան  
 մի չմնաց քեզ, անձնասու՛ւր լեր », ըսաւ . « Բան մի չմնաց  
 ինձ, այո՛, ո՛չ բանակ, ո՛չ զէնք, ո՛չ պաշար, բայց  
 հայրենասիրութիւնս ինձ մնաց . » և զայն հանեց իւր  
 թշնամուոյն թնդանօթաց և հոժ բանակաց առջեւ, և  
 զգաց թշնամին թէ սոսկալի էր այս հակառակորդն, և  
 թէ յուսահատ հայրենասիրութենէ առաւել ահեղ բան  
 չկայ : Անդէն, իբր մոգական գաւազանի մի ազդեցու-  
 թեամբն, բանակներ ելան կանգնեցան, ամէն բան  
 ի գէն փոխարկեցաւ և յարձակոյին ոտից տակ ամենու-  
 րեք անդունդներ պատառեցան բերանաբաց և սպառ-  
 նական :

Այն վայրկեան — Սեպ. 5 — յորում Գաղիոյ զգետ-  
 նումն ստոյգ և անվրիպելի կարծեցաւ, տակաւին հինգ  
 ամիս ընդդիմացաւ Գաղիա, ի մեծ հիացումն տիեզերաց  
 և ի զայրոյթ թշնամուոյն . հինգ ամիս տակաւին իւր արի  
 զաւակաց արիւնն հայրենի հողն թրջեց . Շաթօտէօն,  
 Սէն — Քանդէն, Թուր, Պիչ, Պէլֆօր, Սթրապուրկ,  
 Քոււմի, Բարիզ իւրեանց պարսպաց տակ ընդ երկար  
 բռնեցին պաշարմանց հեղեղներն որք նոցա ստորտն  
 կը ծեծէին զայրադին . ընդդիմացան սոքա, արհամար-  
 հելով սովն ու ուժաց կարկուտն, և ա՛յն ատեն տեղի  
 տուին երբ իւրեանց բարոյական յաղթութեան վերայ  
 ա՛յլ տարակոյս չմնաց : Գաղիա իւր մարտիրոս զաւակաց  
 արեամբ իւր սպտիւն փրկեց . և ազգք և սղինք, որք  
 ափ ի բերան այս տարօրինակ մրցումն կը նկատէին,  
 տիեզերաց չորս ծայրերէն հայրենասիրութեան այս վի-  
 րալից դիւցազնն ծափահարեցին :

Սակայն նոր տեսարան մի բացուեցաւ ուր զաղիա-  
 կան ազգին հայրենասիրութիւնն ուրիշ մրցման մի մէջ  
 աշխարհի հիացման նոր ու առաւել սխրալի-տեսիլ մի  
 սկսաւ ընծայել : Ի՞նչ է դա տեսիլն . կին մի կայ հոն  
 աւերակաց դիպի մի վերայ նստած . սպատառտուն են  
 կոտորեալներն, տան՝ ուր . Իւր մարմինն . բայց

վեհ և հպարտ է իւր հայեացքն , և վսեմ ճակտին վերայ  
 ասող մի կը ճառագայթէ լուսամտորդիող : Ի՞նչ են այդ  
 երկու մանուկներն որք արտասուեալոր կը սխալին իւր-  
 եան , ինչո՞ւ աղիողորմ կ'աղաղակեն : Դո՞ժուադէմ մար-  
 դիկ , անագորոյն ուրախութիւն մի իւրեանց աչաց մէջ ,  
 չըջապատած են դնոսա , և մինչ ուննը , դաշոյն բարձ-  
 րացուցած , մահ կ'սպառնան վիրաւոր կնոջ , այլք՝ այդ  
 երկու մանուկներն նորա գրկէն կը յափշտակեն . բայց  
 անկարելի է , մայրն և զաւակունք ուժգնասիրիկ միմեանց  
 փաթթուած են . անուշադիր նոցա արտասուաց , կը  
 քաշեն , կը քաշեն սողայքն . բայց սրտերն իրերաց փա-  
 կած են . կարելի չէ՛ խել , առանց զայնս պատաստե-  
 ւոյ . չէ՛ փոյթ , կը քաշեն անողորմաբար , կը հերձնուն  
 սրտերն . արիւն կը վազէ . մանկանց սրտից կտորն մօր  
 կրծից վերայ և մօր սրտին պատառն զաւակաց լանջաց  
 վերայ կը մնայ . կը տանին դնոսա , բայց մանկունք իւր-  
 եանց արտասուելից աչերն միշտ իւրեանց ետեւ կը  
 դարձնեն և « մայր , մայր » կ'աղաղակեն այնպիսի ձայ-  
 նիւ որ ժայռերն իսկ ի դուրս կ'ածէ : — Աղջան և Լո-  
 րէնն են նոքա Գաղիայէն բրցուած \* : Բայց Աղջայիք և  
 Լորէնցիք , միշտ Գաղիացի , կորուսեալ հայրենիքն կ'ող-  
 բան , կը մերժեն զայրութիւ յաղթողին լուծն . միշտ  
 կռիւ մի կայ լուս և յուսահատ իւրեանց և նորա մէջ .  
 իւրեանց աչերն ու սրտերն , ատելութեամբ լի ամենայ-  
 նի դէմ որ իւրեանց գերութիւնն կը յիշեցնէ իւրեանց ,  
 միշտ դէպ ի Գաղիա ուղղեալ , զայն կը կոչեն իւրեանց  
 բոլոր ըզձիւք , նորա գիրկն կը դիմեն , թողլով իւրեանց  
 ծննդեան վայրն զոր պղծեց սան օտարին . . . . Զնոյն  
 կը կրկնեն իւրեանց ողբոց մէջ Գաղիոյ համար , ինչ որ  
 երբեմն խրայելի ժողովուրդն , գերութեան երկրին մէջ ,  
 Սիոնի յիշատակաւ Եփրատայ ալիքն իւր արտասուօք  
 ուռուցանելով , կ'ըսէր . « Եթէ մոռացայ՞ց դքեզ , Եփրո-  
 սաղէմ , մոռացի՞ զիս աջ ի՛մ : » . . . .

\* Ներկայ այլաբանութիւնն մեզ ներշնչեց 1872 ի Արմանա տը  
 Էփրատի սիրտի մէջ ազեալ մի պատկեր :

Նոյն իսկ այս սրբազան հանդէսն զոր կը կատարեմք ,  
 այս մեծ օրն զոր կը տօնեմք , հայրենասիրութեան նա-  
 հատակաց նուիրական յիշատակ մի չյիշեցնէ՞ մեզ և  
 չներկայէ՞ մեր մտաց մին ի հրաշալեացն զոր այս վսեմ  
 գգացումն կը գործէ : Աթառն և վեց հազար քաջեր ,  
 իւրեանց հայրենիքն տեսնելով ի վտանգի , զայն փրկելոյ  
 կամ նոցա աւերակաց տակ թաղուելոյ համար , գէնք  
 կ'առնուն միահաղոյն , կը դիմեն քաջալանջ թշնամոյն  
 չորեքպատիկ բանակին առջեւ , և , հայրենեաց սիրովն  
 բոցավառ , կը մարտնչին բռնակալ յարձակողին դէմ որ ա-  
 ւեր ու քանդ բերած է յիւրեանց երկիր , որ կործանել  
 կ'սպառնայ իւրեանց հայրենի սեղաններն որոց առջեւ  
 ազատօրէն գիւրեանց Աստուած կը պաշտեն , լուծ դնել  
 իւրեանց հայրենեաց և խել սպառսպառ իւրեանց աղա-  
 տութիւնն , կը մարտնչին նոցա դէմ որք կորզել կու գան  
 ի նոցանէ որ ինչ քան զկեանս սիրելի է իւրեանց , և  
 հազար երեսուն և վեց քաջեր , յետ արիարար պատե-  
 րազմելոյ և թշնամի արեան հեղեղաց մէջ իւրեանց հայ-  
 րենավրէժ սուսերց ծարաւն յագեցնելոյ , կ'իյնան դիւ-  
 ցազնական մահուամբ , կ'իյնան ազատք , հայրենի հողն  
 գրկելով և իւրեանց յետին հառաչն Հայաստանի նուր-  
 րելով , Հայաստանի զոր այնքան սիրեցին :

Հայաստան . . . ո՛հ , կարելի՞ է , Հայեր , չյիշել  
 զայն , երբ զհայրենեաց են բանք , և երբ իւր դիւցա-  
 զուն մարտիրոսաց յիշատակն կը տօնեմք : Ո՞ր Հայոյ միտք  
 յայս վայրկենիս թեւ առած չթուչի չերթայ այն սրբա-  
 զան վայրաց մէջ զորս իւր հարք իւրեանց արեամբ օծած  
 են : Հայն այլ ունեցած է զիւր հայրենիքն . ի՞նչ կ'ըսեմ ,  
 այո՛ , դեռ ունի , և այն Հայաստանն է : Կա՞յ ճշմարիտ  
 հայ սիրտ մի որ չթրթռայ յայս անուն , կա՞յ ճշմարիտ  
 հայ միտք մի որոյ մէջ այս անունն բիւր տխուր բայց  
 սիրելի յիշատակներ միանգամայն չզարթուցանէ : Կար  
 ժամանակ յորում Հայն այլ ազատ կ'ապրէր ազատ հայ-  
 րենեաց մէջ , յորում Հայաստան , « ազանց հիւսիսայնոց  
 վեհագոյն » , կը պանծայր աշխարհաց պարին մէջ ինչպէ՞ս

լուսին աստեղց ի բոյլս , յորում իւր թագին փայլն  
 զայլոցն կը նսեմէր , յորում իւր դահն գերամբարձ կը  
 բարձրանայր աշխարհի գահերուն վերայ , յորում իւր  
 անուեն սրատկառանք կ'աղղէր ազգաց և ազանց , և ահ  
 ու սարսափ կը ձգէր թշնամի սրտերու մէջ , և յորում  
 իւր որդիք , իւր գրկաց մէջ երջանիկ , հայրենի աղաս  
 օղն կը շնչէին . . . :

Բարէ , զի՛արդ մարեցաւ ա՛յդքան փառք , զի՛արդ  
 նսեմացաւ ա՛յդքան փայլ , և զի՛արդ յա՛յդ պիտի բարձ-  
 րութենէ յա՛յսպիտի անդունդ գլորեցաւ Հայաստան :  
 Ի՛նչ սրտածմիկ տեսիլ կ'ընծայէ նա այսօր . ի՛նչ տարօ-  
 րինակ հակապատկեր . նա որ արփի մի էր լուսաշող՝  
 խաւար է այսօր . նա որ թագուհի մի էր պերճառք՝  
 գերի մի է այսօր : Տեսէ՛ք Հայաստանը . աւերակաց  
 կոյտ մի է նա . իւր շէնքերն ու քաղաքներն քանդեալ ,  
 իւր հոյակապ տաճարաց սրբազան գմբէթքն հողոյ հա-  
 ւասար , և իւր կործանեալ պալատքն՝ որք և կալաղ  
 գազանաց . այս լոխն բեկորից դէզերուն վերայ աստ  
 անդ մականի և թագի փշուրներ կան ցանուած . մահա-  
 համբոյր լուսթիւն մի կը սլատէ այս աւերակներն , որոց  
 մէջ Արածանի , Երասխ , Կուր , Տղմուտ կը պտտին լա-  
 լահառաշ ալեօք , և մոլորաքայլ կը թափառի Ողին Հա-  
 յաստանեայց , տխուր և սգազգեաց և յաչացն ի ցօզ  
 զաւերակունն թանալով : Թշնամոյն հուրն իւր քաղաք-  
 ներն ու գահն լափեց , սուրն իւր զաւակաց կեանքն  
 կերաւ , և որք այս ազիտից վերայ ապրեցան՝ նժգեհու-  
 թեան հողմն մեծաւ մասամբ ցրուեց զնոսա տիեզերաց  
 չորս կողմն իրբեւ զփոխի . . . : Թշուա՛ն Հայրենիք . . . :

Սակայն , ո՛րքան և թշուառ լինի , և թէ՛պէտ հեռի  
 իւր գրկէն և տարագիր , նա միշտ մեր հայրենիքն է ,  
 մեր մտաց և սրտին նուիրական սրբավայրն է . նա որո-  
 րանն է մեր նախահարց , նորա աւերակաց և բեկորից  
 իւրաքանչիւր կտորին վերայ մեր անցեալ փառքերն են  
 դրոշմուած . նոսա սու ու հոսն մեր քաճաղուն նախնեա

նորա օղն նոցա շունչն կը բուրէ : ա՛նդ են այն շիրիմք  
 սրբազանք յորս նոցա պաշտելի աճիւնք կը հանգչին .  
 ա՛նդ են մեր եղբարք որք , երջանկադոյնք քան զմեզ ,  
 հայրենեաց ծոցէն չկորցեցան : Ա՛հ , քանի՛օն փառ է այն  
 որ կը մոռանայ զիւր թշուառ հայրենիքն . ո՛չ ապաքէն  
 նորա հողն , նորա ջուրն , նորա օղն սնուցին զնոսա  
 որոց արիւնն կ'ընթանայ իւր երակաց մէջ . եթէ՛ կարող  
 է , թո՛ղ քամէ արիւնն իւր երակներէն , և ա՛պա հայ-  
 րենիքն արհամարհէ . . . ի բա՛ց ապերախտն :

Եւ սակայն քանի՛նէր այսօր ապաշնորհ են առ իւր-  
 եանց հայրենիս . քանի՛ հայեր , անարժանք անուանն  
 զոր կը կրեն , յուչ անգամ չածեն զՀայաստան . ան-  
 տարբեր են այնմ ամենայնի որ հայրենական է , և որ  
 ինչ օտարն է՝ կը գերողասեն նմա :

Ղա՛յ այն ժողովուրդեան որոյ սրտին մէջ հայրենեաց  
 սէրն այլ եւս տեղ չունի . ստուգապէ՛ս , ընդ հուպ  
 ինքն այլ ոչնչութեան մէջ միայն զիւր տեղն պիտի ու-  
 նենայ : Նա որ խած է իւր սրտէն հայրենասիրութեան  
 բնազդումն , հրէ՛ջ մի է այնպիսին . հեռի՛ ի նմանէ :

Հայրենասիրութիւնն ազգերու կենաց շունչն , նոցա  
 կեանքն է . նորա հետ կը մեռնին նաեւ ազգերն : Ար  
 մեռնի , հա՛յեր , հայութիւնն , թէ՛ չսիրէք զՀայաստան :

Ի՛հ , մեր մէջէն բազմաց համար ո՛չ ապաքէն երե-  
 ւակայական մի բառ է այն միայն , աշխարհագրական  
 անուն մի որ խոյս տուած է ժամանակին այն փոթորիկ-  
 ներէն յորս հայութեան փառքն նաւարեկեցաւ . դիա՛կ  
 մի , անշունչ և անկանդնելի տւերակաց մահահամբոյր  
 հայրենիք մի : Ա՛հ , եղբարք , ո՛չ . հայրենիք մի այն ա-  
 տեն միայն դիակ է , երբ դիակնացեալ կան իւր զա-  
 ւակաց սրտերն :

Հայաստան քառասուն դարուց վեհ և սրտկառելի  
 հայրենիքն է : Ժամանակն , նախանձոս ձեռամբ նորա  
 փառքն ջնջած ատեն , չէ կարոցած նորա անունն եւս  
 իւր վերայէն սրբել . դրուած է այն իւր քարերուն ,  
 իւր սարսպաց բեկորներուն վերայ անջնջելի տառերով ,

և, թէ և անխառնակ, բայց իւր մառադարդ անցե-  
լոյն վկայներով ծածկեալ է համակ: Քաղաքի մի է նա  
գահընկէց, թագազիրի, վիրաւոր, գգեանեալ: Բայց  
ճակտին վերայ կը կրէ իւր մեծութեան կնիքն և իւր  
նուաղեալ աչաց մէջ իւր ազնուականութեան ճաճանչն:  
Նա՛ միշտ Հայկայ, Արամայ, Արտաշիսի, Տրդատայ,  
Վարդանայ հայրենիքն է . . . :

Ո՛հ, ինչ պիտի ըսէին մեր նախնիք, եթէ յանկարծ  
իւրեանց գերեզմաններէն ելնելով, տեսնէին զմեզ ու-  
ծացեալ այսպէս մեր հայրենիքէն և մոռցած զայն զոր  
անհուն սիրով սիրեցին և զոր իւրեանց սերնդոց թողոյ  
համար զիւրեանց արիւնն նուիրեցին յօժարակամ: Ի՛նչ  
պիտի ըսէին երբ տեսնէին թէ, անզգայ իւր թշուա-  
ռութեան, լքած թողա՛ծ եմք զնա իւր ցաւոց մէջ, թէ  
զայն որ կը յուսային թէ մեր ամենուն նուիրական վայրն,  
սրբազան ուխտատեղին պիտի լինէր, արհամարհոտ մո-  
ռացութեան մէջ եմք թաղած, թէ Բահաղու բազնաց  
համար լքած եմք ամայի նախահարց սեղաններն, թէ  
այլ եւս հայրենեաց անունն մեր սրտին չգարնէ, թէ  
մեք այլ եւս Հայաստանի օտարախորթ զաւակներն եմք  
եղած: Ո՛հ, որպիսի անիծիւք պիտի անիծանէին զմեզ .  
բայց միթէ այս անէ՞ծքն մեր գլխոց վերայ թափելոյ  
համար հա՞րկ է նոցա դուրս ելնել իւրեանց գերեզման-  
ներէն: Հայրենի շիրմաց խորէն իուր և ցաւագին մը-  
ռունչ մի կ'եղնէ . չլէ՞ք, ի՛նչ կ'ըսէ . — « Անէ՛ծք զաւ-  
կին որ կը մոռնայ զիւր մայրն . անէ՛ծք Հայոյն որ կը  
մոռնայ զՀայաստան . . . »

Բայց կը շափազանցե՞մ արդեօք . ո՛չ, ո՛չ, այնպէս  
չէ: Ճշմարտութիւն մի չէ, թէ սկիտ ցաւալի, թէ հայ-  
րենասիրութեան պակասութիւնն կարի յոյժ ընդհան-  
րացած է Հայոց մէջ, և նոքա որք կը սիրեն զհայրենիս՝  
կրնա՞ն ըսել թէ բաւական կը սիրեն զնա: Ի՛հ, կ'ամաչեմ  
ըսել, հայեր կան որոց առջեւ չպիտի համարձակէի բնաւ  
այս խօսքերն ըսել և հայրենեաց յիշատակներն արթըն-  
ցընել: պիտի խնդային իմ վերայ և ըսէին «կ'երագէ՛ դա:»

Մակայն անշուշտ իմ խօսքերն երազատեսի մի բան-  
դագուշանքն չեն . դուք կը հասկանայք զնոսա, ազնիւ  
Սամաթիացիք:

Հայրենասէ՛ր լինիմք, Հա՛յեր: Այս աղաղակն է զոր  
բարձրացնել եկած եմ այսր ձեր մէջ: Հայրենասիրու-  
թիւնն, ըսի, ժողովրդոց առաքինութիւնն է, և յաւելի՛  
ազգերու կեանքն է: Եւ այնպէս է . թէ չունիմք զայդ  
առաքինութիւն, թէ չունիմք զայդ շունչն կենսաւէտ,  
Հայութիւնն այլ եւս ապագայ չունի . այժմէն կ'սկսի  
ի գերեզման իջնել այն ազգն որ, ըս'րէ, քառասուն  
դարերու զիմակալեց . քառասուն դարերու հողոց ու  
մրրկաց յաղթող այս վեհ և հինաւուրց կազմին, Հայու-  
թիւնն, պիտի ցամաքի առ ի չգոյն հիւթոյ . . . : Հայ-  
րենասիրութիւն . ահա՛ այն բանն որում ամէնէն աւելի  
և ամէնէն յառաջ պէտք ունիմք կորզելոյ համար մեր  
ապագայն կորստեան անդնդին երախէն: Հայրենասի-  
րութիւն . զայս կը հրամայէ բնութիւնն, զայս կ'ուսու-  
ցանեն մեզ անցեալ և արդի ազգաց օրինակներն և  
նոյն իսկ մե՛ր պատմութիւնն: Սիրել և կաթողի սիրով  
սիրել զՀայաստան, մեր քաղցր Հայրենիքն, մեր փա-  
ռաց նուիրական տաճարն, սիրել նոցա աւերակներն՝  
մեր նախահարց յիշատակներուն այդ թանգարաններն,  
սիրել ինչ որ նորայն է, ինչ որ Հայաստանինն է: Սի-  
րել մեր հայրենակից եղբարքն, յո՛ւ և ցրուած լինի ըզ-  
նոսա մրրիկ բախտին, սիրել մեր ազգային լեզուն՝ մեր  
նախնեաց այդ աւանդն սրբազան, սիրել մեր հարց  
կրօնն, սիրել մեր գրականութիւնն՝ Հայոյն մտաւորա-  
կան փառաց այդ նշխարն, սիրել մեր պատմութիւնն՝  
այն անընթաց վկայն որ դարուց ի դարս պիտի հռչակէ  
Հայութեան մեծաշուք անցեալն: Թո՛ղ քահանայն հայ-  
րենիքն քարոզէ, թո՛ղ բանաստեղծն իւր քնարին վերայ  
հայրենիքն երգէ, թո՛ղ կոյսն և պատանին հայրենեաց  
սիրոյ սեղանոյն վերայ ուխտեն զիրեար սիրել, թո՛ղ  
մայրն իւր մատաղ զաւակին շրթանց Աստուծոյ անուան  
հետ Հայաստանի անունն թոթովել ուսուցանէ, և նորա

վախուկ հոգւոյն մէջ Աստուծոյ սիրոյն հետ հայրենեաց սէրն գրողմէ : Թո՛ղ հայրենեաց սիրոյ առջեւ լռեն ամէն ոխ և կիրք , Թո՛ղ ամէն հայ աչք առ հայրենիս դառնայ արցունք մի ունենալով յար նորա վիրաց վերայ կաթելոյ , ամէն հայ ձեռներ միահամուռ պատրաստ լինին կարկառելոյ անգր ուր հայրենիք կը կոչէ , լոյս տանելոյ նորա խաւարին մէջ , յոյս նորա ցաւոց , և նեցուկ նորա տկարութեան : Ա՛յն ատեն պիտի կերպարանափոխի Հայութիւնն և պիտի տեսնուի հայրենասիրութեան մի նոր հրաշքն :

Հայրենասիրութեան ստեղծագործ շունչն միայն կարէ կեանք տալ հայութեան գօսացեալ ծառոյն , կանգնել վերակենդան հայրենի աւերակներն , հալեցընել Մասի սառերն , փարատել հայրենեաց երկինքն պատող սեւաթոյր ամպոց քօղն և վերստին բերել ի Հայաստան վերածնութեան ու կենաց պայծա՛ռ դարունն . . . . :



Գ

Կ Ի Ն

( Ըստեցեալ է Լեւոն Բաբայանի Երեմիայի է նպաստ Ագոստոս 1874 )

Թատրոն Օսման/յէ 1874 Յունվար 19

Ազնիւ հանդիսականք ,

Այս երեկոյթն սովորական երեկոյթ մի չէ՛ : Պարզապէս թատերական խաղի մի ներկայացման հանդիսատես լինելոյ փափաքն չէ՛ որ բերաւ խմբեց զձեզ այս տեսարանին առջեւ , այլ ուրիշ վսեմ նպատակ մի , իրական սեռի կրթութեան յատկացեալ հաստատութեան մի նպաստելոյ իղձն : Խորհրդաւոր է ուրեմն սոյն երեկոյթն , վասն զի մեծ և բարձր նշանակութիւն մի ունի , վասն զի , կամայ ակամայ , մտքերու մէջ կը զարթուցանէ մին ու մեծագոյնն այն խնդիրներէն որք ազդերու ճակատագրին և մարդկային քաղաքակրթութեան գաղտնիքն յինքեանս կը բովանդակեն , և վասն զի , երջանիկ եմ զի կարեմ ըսել , հայ ընկերութեան այս մահու և կենաց խնդրոյն ընծայած կարեւորութիւնն կ'ապացուցանէ : Այս խնդիրն , անշուշտ , կնոջ մարդկային ընկերութեան մէջ կատարած պաշտօնին կարեւորութեան խնդիրն է : Ներեցէ՛ք ինձ ուրեմն որ , օգուտ քաղելով այս սրբազան երեկոյթին ընծայած գեղեցիկ առթէն , ներկայացնեմ ձեզ իմ մի քանի մտածութիւն-

ներս այս բարձր և կենսական խնդրոյն վերայ որ բոլոր քաղաքակրթեալ աշխարհին ունի է գրաւած և քան զոր աւելի մեծ և ճակատագրային խնդիր չէ՛ յուզուած երկնից տակ :

Աինն , Տեա՛րք , խորհրդաւոր էակ մի է . ամենքս , նորա ներկայութեան , կ'զգամք այն անդիմադրելի ազդեցութիւնն զոր գերագոյն էակ մի իւրմէ ստորին էակի մի՛ վերայ կ'ազդեցնէ : Աստուած , ի ստեղծանելն զնա , ինչպէս որ առաւել քան յայրն , իւր աստուածային պերճութեան և գեղեցկութեան ճաճանչն սիրած է կնոջ վերայ . նոյնպէս և զոգցես իւր նախախնամական պաշտօնին մի մասն ընծայած է նմա և զրկած է յաշխարհ՝ մարդոյն կենաց և երջանկութեան գաղտնիքն նորա ճակտին վերայ գրելով և Նախախնամութիւնն , որ տիեզերաց մէջ ամէն էակի իւր պաշտօնն յատկացուցած է , սկսեալ այն բոցանիւթ աշխարհներէն որ անհունութեան անդունդներն կ'ոգեւորեն ու կը լուսաւորեն , մինչեւ աննշմարելի ճճին որ իւր տիեզերքն ու կեանքն ունի ջրոյ կաթիլի մի մէջ , նախախնամութիւնն , զմարդկութիւնն ստեղծելոյ և սահմանելոյ ատեն զայն այն կատարելութեան նպատակին , այն ճշմարտութեան , մեծութեան և երանութեան խոհարարն յոր կը ձգտին դարձ անդիմադրելի մղումս մի ազդեալ , մարդկային սեռի կրկին տարերց իւրեանց յատուկ պաշտօնն ու դերն որոշելով , կնոջ ամէնէն ազնիւ ու բարձր պաշտօնն տրուած է , այն է իշխել մարդոյն մտաց և կամաց վերայ՝ մղելոյ համար զնա զէպ յայն նպատակն վսեմ , ազնուացընելոյ և երջանիկ գործելոյ , մինչ սահմանած է զմարդն խորհելոյ և գործելոյ կնոջ ներշնչութեան և ազդման ներքեւ և լինելոյ որ ինչ կ'ուզէ և կարէ նա ընել զինքն : Ահա՛ այս է կնոջ պաշտօնն , նախախնամական , աստուածային : Բայց ի՞նչ է այդ ակար էակին զօրութիւնն որ այդքան հզօր ազդեցութիւն մի կարենայ գործել մարդկային սեռի միւս կիսուն կենաց և ճակատագրին վերայ , որ քան զինքն շատ առաւել հզօր է Փիղիքա-

ոյէս , որ աւելի հաստատուն ու տոկուն խնայական կարողութեամբ օժտեալ կը թուի , և որ , իւր վեհ կերպարանաց և իշխանական դիմաց նայելով , աւելի իշխելոյ քան իշխուելոյ , հրամայելոյ քան հնազանդելոյ , վարելոյ քան վարուելոյ համար ստեղծեալ կ'երեւի :

Այո՛ , այդպէս կ'երեւի , և մարդն իսկ այդպէս կարծած է , և կինն իսկ իւր ուժոյն կատարեալ գիտակցութիւնն չունի . բայց , հակառակ այսմ ամենայնի , կինն միշտ տիրած է , կինն միշտ ներշնչած է զմարդն , նորա միտքն ու կամքն յօրինած և առաջնորդած է նմա դարերու մէջէն : Ինչ որ իւրեան այդ զօրութիւնն տրուած է , ինչ որ զայն մարդկութեան թագուհին ըրած և զաշխարհ նորա ոտից ներքեւ դրած է , այս է զի սիրուելու և մայր լինելու համար ստեղծուած է նա : Բնուութիւնն , կնոջ ճակտին վերայ դնելով գեղեցկութեան պսակն և նորա ծոցէն կախելով մանուկն , աշխարհի տիրուհին ըրած է զնա . իւր ոտից առջեւ ունի ներկայն , և գրկին մէջ՝ զապագայն . ճաճանչ մի իւր հայեցուածոց մէջ և հեղուկ մի՛ իւր ստեանց , ահա՛ իւր ոյժն ու զէնք , որոց , սակայն , յաղթող զօրութիւն մի դեռ ծնած չէ բնութեան մէջ :

Գեղեցկութիւնն երկնից մի ճառագայթն է յերկիր ինկած՝ զայն շքեղացնելոյ և կեանքն քաղցրացնելոյ համար , երկրի գերկինս յիշեցնելոյ և ընդ մին և ընդ միւսն լուսեղէն սանդուղն մի լինելոյ համար : Գեղեցկին զգացումն բնազդումն մի է ի մարդն . յայնմ է մարդկային բնութեան բովանդակ մեծութիւնն ու ազնուականութիւնն , և այս իսկ է իւր երկինային ծագման դրօշմն : Մարդն գեղեցութեան զգայուն ստեղծեալ լինելով և կինն՝ գեղեցիկ , սա ա՛յնքան գեր ի վերոյ է քան զնա և տիրո՛ղ նորա վերայ որքան արեւն գեր ի վերոյ է քան զմութրակն : Մարդն , նորա հրատարկէն դիւթեալ , կը ձգուի յար առ կինն՝ երկնային դեղոյն այս ամէնէն կենդանի և անբժագոյն պատկերն , ինչպէս երկաթն կը ձգուի մագնիսէն , ինչպէս աչքն կը թռի առ ճառա-

գայթն, ինչպէս այլք կը դիմեն յեղըն ծաղկաւէտ :

Գեղեցկութիւնն ո՛ւր որ ճառագայթէ, կը շլացնէ, զարմանք և սէր կը ծնցնէ իւր շուրջն, և չկայ մարդկային հոգի մի որ առ այն իւր խոռնկն չնուիրէ : Թէ և ամէնէն խոհարհ և անշուք ճակտի մի վերայ շողայ այդ աստղն, թագակիր գլուխներն իսկ իւր առջեւ կը խոնարհին, և Արամազդ, իւր բոլոր փառօքն ու պայծառութեամբ, չկարէ անդրդուելի մնալ Աստղկան շնորհաց և հրապուրից առջեւ : Ահ՛ր, ահա՛ այն հուրն որ կնոջ մի ակնարկէն կը բռնկի, և յաճախ, ճարակ ընելով իւրեան ամէն զգացում, կը վառի մշտարորբոք մարդոյն սրտին մէջ մինչեւ որ մոխիր դարձնէ զայն : Ասան զի սէրն, տեարք, մարդկային սեռին մէջ ժամանակաւոր և զգայական պէտք մի չէ ինչպէս անասնոց մէջ, որպէս զի երբ այդ պէտքն լցուի, այլ եւս նորա զգացումն դադրի : Մարդկային էակին վերայ գեղեցկութիւնն՝ հոգւոյն արտաքին փայլն է . չկարէ լինել զի հրէջ հոգւոյ մի պահարանն լինի հրեշտակային մարմին մի, թողո՛ւմք բացառութիւնքն և դաստիարակութեան զեղծմունքն : Արտաքին գեղեցկութիւնն այնքան կից է ներքին գեղոյն զի շատ անգամ ամէնէն չքնաղագեղ դէմքն դձուձ և անարգ զգացման մի ներքեւ կը տգեղի և կ'այլանդակի, մինչդեռ, ընդհակառակն, բնութենէն անօժիտ գէւթ մի վսեմ և աղնուական զգացմանց ճառագայթմամբն կը քաղցրանայ, կը գեղերփնի և կը յափշտակէ . այնքան անբաժին է արտաքին իրական գեղեցկութիւնն ներքին շնորհներէն : Արդ սէրն, այս սրբազան անուան արժանի սէրն, մարդկային սեռին մէջ, հոգւոյ ձգտումնն ու սլացքն է առ այն իտէական գեղեցկութիւնն որոյ իրականութիւնն է անշուշտ Գերագոյն էակն, որոյ բնագոյնն կը կրեմք ի մեզ որպէս կը կրեմք յաւիտենական ճշմարտութեանց բնածին գաղափարն, և որոյ ազդելի բացատրութիւնն կը գտնեմք անշունչ և շնչաւոր էութեան գեղեցկութեանց մէջ և կնոջ վերայ՝ նորա պայծառագոյն ցոլն :

Իւր քաղցրութիւնն, իւր անմեղութիւնն, իւր զգայնութիւնն, իւր մասամբ իւրք մանկային միամտութիւնն ու մտահոգութիւնն, իւր ճաշակաց նրբութիւնն ու աղըււութիւնն, իւր ամէն անձնանուիրութեան պատրաստ հոգին, և գութն որոյ մշտարուխ ազդիւրն է կնոջ սիրտն, այս ամէնն կը կազմեն այն ներքին գեղեցկութիւնն որ, կնոջ գէւթին վերայ իւր փայլն արձակելով, զմեզ կը դիւթէ և կը յանկուցանէ, այսինքն ամէն ինչ որ կայ սրբագոյն, գեղեցկագոյն և քաղցրագոյն երկնից տակ : Ահրն ուրեմն ո՛չ թէ մարմնոյ պէտք մի է ի մեզ, քանզի չկամիմ դայս անուեն տալ նորա վաղանցիկ ու լոկ անասնական պիտոյիցն ու ախորժակաց (թէպէտ և նոքա եւս ոչ ինչ նուազ կ'ապացուցանեն կնոջ գերագունութիւնն), այլ հոգւոյն մշտատեւ պէտքն, նորա ճարակն և երջանկութիւնն . և, երբ կենաց մէջ կու գայ այն վայրկեանն ուր կը վարթնու հոգին և իւր սնունդն կը խնդրէ, և երբ կը գտնէ գայն կնոջ մի վերայ, երբ աղջկան մի աչերէն ելած մի կայծ իւր սրտին մէջ գեղեցկին այդ նուիրական հուրն վառէ, այլ այն վայրկեանէն երիտասարդն այն աղջկանն է, նորա ստուերն, նորա գերին : Ելացեալ՝ այն գեղոյ և շնորհաց ճաճանչմանէն որ իւր սիրոյ առարկային բոլոր էութենէն կ'արձակի, այլ իրբեւ սովորական էակ մի շնկատէ գայն, այլ գերագոյն էակ մի, հրեշտակ մի, աստուածուհի մի, որոյ սիրոյն արժանի լինելոյ համար պատրաստ է ամէն ինչ զոհելոյ, զամէն ինչ նորա ոտից առջեւ դնելոյ, զիւր փառքն, զիւր հանճարն, զիւր կեանքն, և զամէն ինչ առնելոյ զի հաճոյ լինի նմա և ներուի իւրեան զմայրել յաւէտ ի նա և արբենալ նորա շնորհաց յարատեւ նրկատողութեամբն . սիրեալ առարկային թերութիւնքն իսկ կ'անհետին սիրողին աչաց առջեւ, այնքան ամէն կատարելութեանց կատարեալ պատկերն կը սիրէ տեսնել ի նմա, և այլ անկարելի է իւրեան բաժնուիլ ի նմանէ, քանզի զնա սիրելով կը սիրէ գեղեցիկն, բարին ու ճշմարիտն, այսինքն մարդկային հոգւոյ սլացքին բե-



ւեան կազմող սրբազան երրորդութիւնն : Այլ եթէ  
 Բեդրարք մի է , Վօթի ստուերն կը լինի և նորա լուա-  
 ցարարին աշխատութեան մասնակից լինելոյն մէջ մի  
 անբացատրելի երջանկութիւն կը գտնէ . եթէ Անտոնիոս  
 մի , կղէպատարայի գրկաց մէջ պիւր փառքն և զՀոովմ  
 կը մտնայ . եթէ Հերակղևս մի , ի բաց կ'ընկենու իւր  
 հրէշից սատակիչ մահակն և ի ի ձեռին ծուռը կը դնէ  
 Ունիալեայ ոտից առջեւ , իսկ եթէ Արամազդ մի , թող-  
 ւով զիւր շանթքն և զՈղիւմպոս , ի կարապ կը կերպարա-  
 նախորտի զԼեւոս հրապուրելոյ համար . . . : Ահա՛ գեղոյ  
 զօրութիւնն , ահա՛ սիրոյ իշխանութիւնն . և արդ ո՞վ  
 կարէ ըսել թէ կինն , իւր գեղեցկութեամբն , հրապու-  
 րելոյ , ամէն զօրութիւն իւր առջեւ խոնարհեցնելոյ ,  
 հրամայելոյ և իշխելոյ համար ստեղծուած չէ : Իբրեւ  
 սիրուհի , կինն մարդկային հոգւոյն թագուհին է :

Իսկ իբրեւ մայր քանի՛օն մեծ և արարչական զեր  
 մի կը կատարէ աշխարհի մէջ . այո՛ , մայր լինել արարիչ  
 մի լինել ըսել է . Աստուած կնոջ հետ իւր փառքն  
 բաժնել է : Բովանդակ ապագայն մարց ձեռին մէջ է .  
 մարդկութիւնն նոցա գրկաց մէջ կը կերպաւորի և կը  
 կազմի . ինչ որ կամին՝ կարեն առնել զմարդկութիւնն .  
 հոգին , տակաւին գրեթէ անկազմ , մարց ափին մէջ է ,  
 ինչպէս խմորն բրտին , որում կարեն իւրեանց ուզած  
 ձեւն ու կերպարանն տալ , կ'ընեն զայն մեծ կամ փոք-  
 րոցի , ազնուական կամ գձուծ , գեղեցիկ կամ տգեղ ,  
 աստուածային կամ դժոխական . ինչպէս իւրեանց մարմ-  
 նոյն կաթնն կ'ընծայեն մանկան մարմնոյն , նոյնպէս և  
 իւրեանց հոգւոյն կաթնն կը ջնսրեն նորա մատաղ հո-  
 գւոյն . հոգւոյ անհերկ արտն իւրեանց յանձնուած է  
 վարելոյ և սերմանելոյ համար . ինչ որ ցանեն՝ այն պի-  
 տի բուսնի . ինքեանք կը գրեն մարդոյն սրտին մէջ նո-  
 րա ամէնէն հաստատուն զգացումներն , ճաշակներն ու  
 դաւանութիւնքն , և ինչ որ մայրական մատնն պիտի  
 զրէ այդ մատնին մէջ՝ ա՛յլ ոչ ոք պիտի կրնայ ջնջել  
 զայն իսպառ : Արջայպէս եթէ մարդն իւր նիւթական

էութիւնն հօր և մօր կը պարտի միանգամայն , բարոյա-  
 կան մարդն գրեթէ լոկ մօր ձեռակերտն է , նորա ձե-  
 ոին դրոշմն կը կրէ յինքեան : Կաղնին խողկաղնոյն մէջ  
 է , և ապագայ մարդկութիւնն որորանին մէջ , իսկ որո-  
 րանն կնոջ հովանոյն տակ : Ինչ մեծ և վսեմ պաշտօն ,  
 և ինչ հօր ազդեցութիւն մարդկութեան ապագային  
 և ճակատագրաց վերայ : Կը բնութիւնն չկարէր մատաղ  
 ու տկար մանկութեան առաւել անբոյթ ապաւէն մի  
 ընծայել քան կնոջ փափուկ գիրկն , և ո՛չ նորա դող-  
 դողուն քայլից լաւագոյն առաջնորդ քան մայր մի որոյ  
 սիրտն գորովանաց գանձ մի է իւր զաւակին համար ,  
 և որ ամէն վայրկեան պատրաստ է նուիրել զիւր կեանքն ,  
 որպէս զի նա երջանիկ լինի . կ'ուզէ երջանիկ ընել զիւր  
 որդին , և կ'ընէ ինչ որ կրնայ :

Կինն երբ մայր կը լինի , իւր ազդեցութիւն չդադրի  
 զինքն սիրող էակին վերայ որ հայր եղած է իւր զաւա-  
 կին . ընդհակառակն այդ մանուկն նոր կասկ մի կը լինի  
 որ զայրն կնոջ հետ առաւել սերտիւ կը կապէ , նոր  
 գրաւական մի իւրեանց սիրոյն և կենդանի յիշատակ մի  
 որ կը յիշեցնէ հօրն այն հեշտանաց՝ զմայլանաց և երա-  
 զոց ժամերն զոր իւր պաշտած կնոջ սիրոյն վայելից մէջ  
 անցուցած էր : Երբ ամուսնութիւնն հոգիներու միու-  
 թեան հետեւութիւնն է , ինչպէս որ բնութիւնն կը հրա-  
 մայէ՝ երջանիկ և առաքինի լինելոյ համար , սէրն միշտ  
 նոյնն է , նոյնքան վառ և նոյնչափ հեշտալից ինչպէս  
 առաջին օրն . կինն նոյնչափ կը հրատուրէ և կ'զմայլէ  
 զիւր ամուսինն . նա մանաւանդ մայրութիւնն նոր հրա-  
 պոյր մի կը յաւելու կնոջ շնորհաց վերայ , որ երբ մայր  
 կը լինի՝ իւր սրտին ամէնէն աղնիւ գանձերն կը բանայ ,  
 գորովոյ և անձնանուիրութեան հրեշտակ մի կը լինի .  
 այլ ստուգիւ երկրային արարած մի չէ՛՝ այն . երկնից  
 գթոյն ու նախախնամութեան մի ժպիտն է մարմնացեալ :  
 Իւր ծոցոյն մէջ մանուկ մի կրող կինն նուիրական բան  
 մի ունի յինքեան որ սրբազան յարգանք կը համակէ  
 զամէն ոք և ամէնէն լպիրշ հայեցուածներն կը խոնար-

հեցնէ կամ կը սորէ : Այնն , երբ մայր է , իրբեւ վարդ մի իւր բովանդակ փթթին մէջ , իւր վանութեան զէնթին հասած է . ա՛յլ ոչ միայն իրբեւ գեղեցկութիւն կը շլացնէ , այլ իրբեւ աւաքինութիւն կը յափշտակէ : Եւ այսպէս նա ընտանեկան յարկին , այն խորհրդաւոր տաճարին աստուածուհին է , որ կը սիրի և կը սիրէ , ա՛ստղ ճաճանշաւէտ որ միանգամայն կը լուսաւորէ զայրն և զմանուկն , երջանկութիւն սփռելով միոյն և միւսոյն վերայ , մի՛շտ առաջնորդելով , մի՛շտ իշխելով . . . :

Բնութիւնն , Տեառք , այս իշխանութեան թագն գընելով կնոջ ճակարին վերայ և մարդոց հոգիներուն վերայ այդ ազդեցութիւնն նուիրելով իւրեան , պաշտօն տրուած է նման մըլը զմարդկային սեռն ի կատարելութիւն . կինն քաղաքակրթիչ լինելոյ պաշտօնն ունի . ազնուագոյն զգացումներով և ճաշակներով օժտեալ բնութեանն և ինքն իսկ ազնուագոյն քան զայրն , զմարդկութիւնն ազնուացնել և բարուց վայրագութիւնն ամոքել եղած է իւր դերն՝ մարդոյն վերայ բանեցուցած իւր քաղցր և անխուսափելի իշխանութեամբն : Եւ իւր դերն կատարած է որչափ ներած են իւրեան օրէնք և նախապաշարմունք , և մարդկային քաղաքակրթութիւնն իւր գործն է : Այն վայրկենէն՝ ուր անտառներու մէջ գաղանթօրէն թափառող և պատառող մարդն կնոջ գեղեցկութիւնն նշմարեց , և նորա ճաշակն գուշակելով՝ ծագիկ մի փրցոյց իւր ոտից տակ փթթող ծաղիկներէն և ընծայեց նմա , ա՛յլ քաղաքակրթութիւնն սկսած էր . սէրն , մարդկային գործունէութեան այն ամէնէն հզոր շարժառիթն , եկած էր յաշխարհ և մարդոյն մտաց և հոգւոյն նոր մղում և թռիչ տուած : Մարդն , գեղեցկութեան աշակերտեալ և նորա հմայիքն զգօնացեալ , նորա ոտից առջեւ ուսած է թողուլ զիւր վայրենութիւն , յղկել զիւր ախորժակներ և աւելի ազնուական կեանքի մի ասպարկ զն մտնել , հաճոյ լինել ջանալով կնոջ : Աւստի մի մեծ ճշմարտութիւն կը տեսնեմ այն յունական

առասպելաց քօղոյն տակ որք զիմաստութիւնն և արուեստից ու գպրութեանց պաշտպան աստուածութիւնքն կանանց , և ո՛չ արանց կերպարանօք կը ներկայացնեն : Վասն զի , եթէ գեղեցկութիւնն չլինէր , ինչպէս կը զլտէ հեղինակ մի , « Ի՞նչ սէտք կը մնայր հնարելոյ և ստեղծելոյ . ի՞նչ պիտի ընէր ձեռագէտն իւր գործոյն առջեւ , նկարիչն իւր կտաւոյն , արձանագործն իւր մարմարիտնին : Ի՞նչ պիտի երգէին երածիչտն ու բանաստեղծն : Արո՞յ համար պիտի գործուէին այն նուրբ ու բարակաման բեհեզքն : Արո՞յ համար այն շքեղ կահերն , կահուղ օթոցներն . որո՞յ համար սա գոհարքն , այս մարգարիտքն ու աղամանդներն : Ի՞նչ հարկ այն անօգուտ շքոյ հետամտութիւնքն , և ի՞նչ հարկ մուծանելոյ կենաց մէջ այն ամէն բան որ ճաշակի փափկութիւնքն գոհացնելոյ կը ծառայեն . ի՞նչ օգուտ անուշուք , ծաղկունք , վենետիկեան հայելիք , զօ՞վ զարդարելոյ , զօ՞վ գեղեցկացնելոյ համար : » Եւ , կը յաւելում , ո՞ւմ հաճոյ լինելոյ համար : Եթէ ճշմարիտ է զի գեղեցկին զգացումն ս՛րքան ազգու ներգործէ ի մարդն , մարդն այն աստիճան կ՛ազնուանայ և քաղաքակրթութիւնն այնքան քայլ կ՛առնու . կինն , որ գեղեցկին ամէնէն կենդանի և վսեմ բացատրութիւնն է , բնութեան հրաշակերտն , գերագոյն քաղաքակրթիչն եղած է մարդկային սեռին՝ նորա հոգւոյն մէջ գեղեցկին ճաշակն զարթուցանելով և տածելով , և նորա շիացեալ երեւակայութեանն առջեւ ազնուագոյն հորիզոն մի բանալով , ուր մարդկային հանձարն հղաթեւելով՝ գեղոյ և ճշմարտութեան նորանոր գաղտնիքներ կորզած է անտի և աշխարհի ընծայած : Այո՛ , գեղեցկութիւնն երբ Արպասիա կը կոչի , Պերիկլէսի լեզուն պերճախօսութեան հրով կը բորբոքէ և Սոկրատայ՝ գեղեցկութեան և ճշմարտութեան նախատիպ միակ Աստուծոյ մի գաղափարն կը ներշնչէ . երբ Փրիւնէ կ՛անուանի , Պրաքսիտելի գրոցն կ՛ազնուացնէ և նորա ձեռին տակ հողի կու տայ մարմարիտնին . երբ Պէտղրիս , երկնից և դժոխոց գաղտնիքն Տանդէի յան-

դուզն հանձարոյն առջեւ կը պարզէ . երբ Ֆորնարինա , երկնային գեղեցկութեան նշոյններովն կ'ողողէ Ռաֆայէլի հոգին և նորա վրձնոյն աստուածային շունչ մի կ'ընծայէ . երբ կրացիէլլա կամ Յիւլի , լամարդինի Մուսային երկնային քնար մի կը նուիրէ և երկրի վերայ հրեշտակաց լեզուով խօսիլ և երգել կու տայ նմա . երբ Նինոն լանքլօ , դար մի կ'ազնուացնէ , և երբ Տիկին Ռէքամիէ , իւր շուրջն կը ժողովէ բոլոր հանձարներն և , իրրեւ արեւ մի իւր մոլորակաց մէջ , իւր շողունովն զամէնն կը լուսաւորէ և զամէնն կ'ողբեր . . . : Մինչ արք ատելութիւն և հեռ շնչած են և աւեր ու մահ սփռած իւրեանց շուրջն , կինն մարդասիրութեան ձայնն հնչեցուցած է ցանգ երկրի վերայ և մարդկային կատաղութեան բացած վէրքերն իւր արտասուօք լուացած . աշխարհի վերայ իւր ներկայութիւնն Նախախնամութեան գոյութեանն ամէնէն սայծառ ապացոյցն եղած է . իւր գթայից ծպխան՝ իրրեւ արփենի ճաճանչ՝ մարդկային սրտին անդթութեան ու վայրագութեան սառոյցն հալեցուցած և սիրոյ ու գթոյ աղբիւրներ բղխեցուցած է :

« Կնոջ ներկայութիւնն , կ'ըսէ Լորտ Պայրըն իւր յիշատակագրոց մէջ , միշտ խաղաղիչ բան մի ունի ինձ համար , թէպէտ և առանց սիրոյ . զիս ինձ հետ աւելի հաշտ և աւելի բարի կ'ղգամ՝ երբ կին մի լինի առ ընթեր , թէ և կրակի շինելոյ պաշտօնն ունեցող սպասուհին լինի : » Այնքան ճշմարիտ է զի կինն մարդկային բարքերն յղկելոյ , քաղցրացնելոյ և ազնուացնելոյ պաշտօնն ունի : Մեք իսկ , Տեարք , կնոջ այս ազնուարար տպաւորութիւնն չզգամք ամէն ժամ , երբ մեր ընկերութեան մէջ յանկարծ կին մի երեւի . խօսակցութիւնք որքան զգուշաւոր կը լինին , վարմունք քանի՜ խնամով , և ինչ ճիգ յանկարծ մեր ամենուն խօսից և շարժմանց մէջ ազնուութիւն մի դնելոյ : Եղբակ ազգաց որ զկինն դուրս վտարած են իւրեանց ակումբներէն . բարոյակաւնութեան կարեւորագոյն տարրն ոչնչացուցել են :

Եւ կինն միայն ընտանեկան յարկին տակ չէ որ զիւր ազդեցութիւնն ի գործ դրած է : Թէպէտ և իւր գործունէութեան ասպարէզ ընտանեկան անձուկ շրջանակն եղած է միշտ , թէպէտ քաղաքական ու քաղաքային կենաց սահմանէն դուրս վտարած եմք զայն , և թէպէտ ի հնումն շատ ազգերու մէջ և այժմ իսկ ինչ ինչ երկիրներու մէջ ընտանեկան յարկն իսկ անձկացած և բանտ մի եղած է նմա , սակայն և այնպէս նա մեծագոյն դեր մի ունեցած է ցանգ մեր քաղաքական և քաղաքային կենաց մէջ , և ընտանեաց ծոցէն իւր շունչն ընթացած է մեր օրէնսդրական ժողովոց , մեր պատերազմական բանակաց , մեր խաղաղական կամ յարձակողական որոյմանց , մեր ընտանեկան ակումբներուն և , վերջապէս , մեր հանրական կենաց մէջ : Մարդն , իրրեւ քաղաքացի , ընտանեկան յարկէն դուրս կը գործէ , բայց նորա մէջ կը ներշնչուի : Մայրն իւր գաղափարներովն մեր միտքն կը շինէ և իւր սրտին կոտորն կը դնէ մեր սրտին մէջ , և կինն՝ զոր կը սիրեմք՝ իւր համակրութիւնքն և զգացումներն կը հարկադրէ մեր վերայ , այնպէս զի փիլիսոփայն , օրէնսդիրն , ասենարանն , մարտիկն մեծաւ մասամբ կնոջ ձեռակերտն են և նորա հոգին կը կրեն իւրեանց հոգւոյն մէջ : Կինն ուրեմն , թէպէտ ընկերային տեսարանին վերայ գրեթէ աներեւոյթ , սակայն նորա ամէնէն մեծ դերակատարն է , և այն վայրկենին՝ ուր ամէնէն աւելի նուազ իւր ներգործութիւնն կը կասկածիմք , ամէնէն ազդոյ և անվրիպելի կերպիւր կը գործէ : Հելէնի մի գեղեցկութիւնն Տրովական մարտն կը գրգռէ , ազգերու և թագաւորաց բանակ մի պատերազմի դաշտն կը հաւաքէ , արեան գետեր կը վազցընէ , քաղաք մի աւերակաց կոյտ մի կը դարձնէ , և Հոմեր մի կը հանէ . Ղիւքրէսի մի դէմ եղած նախատինք մի թագաւորական դահ մի կը տապալէ և նորա բեկորից վերայ հռովմէական հասարակապետութեան հիմունքն կը դնէ . Պարիսազիսի մի մայրական սէրն երկու եղբարց մէջ արիւնային կռուոյ մի մրրիկն կը յարու-

ցանկ և տասն հազար յոյներու բանակ մի օտար լերանց վերայ, հայրենի աստղերէ հեռի, կը թափառեցնէ աստանդական և տառապեալ. հոյլ մի Սարինուհիք, արեանց դաշտին վերայ յանկարծական երեւմամբ, կը կասեցնեն սուրերն թերաքամ ձեռաց մէջ, և հարուածք մահատուք կը փոխին ի համարոյր եղբայրական. Ասպարհա Սամոսի, Մեգարայի և Պեղոսոնեսական մարտից բոցն կը բորբոքէ, և Տիկին Ռուլան, իւր ամուսնոյն դիմակին ներքեւ, զՔաղիա կը կառավարէ. . . . Ո՛հ, կնոջ մատն ամենուրեք է :

Ինչո՞ւ համար է սակայն, պիտի ըսուի, որ կինն միշտ իւր պաշտօնին բարձրութեան մէջ չէ գտնուած, թէ ինչ ինչ բարեաց դէմ լիաբուռն չարիք սերմանած է, թէ, փոխանակ զմարդկութիւնն կատարելագործելոյ, յաճախ նախապաշարմանց աղբիւր մի և յառաջացման խոչնդոտն մի եղած է, թէ շատ անգամ գայթակղութեան քար մի եղած և մոլութեան ու անբարոյականութեան ճարակ մատակարարած է, թէ շատ մի մտաւորական ու բարոյական այլանդակութիւնք իւր արտաքին շնորհներն կը հակակշռեն, թէ յաճախ սնամիտ, թեթեւ, անհաւատարիմ, փոխանակ երանութեան հրեշտակ մի լինելոյ, Պանդորա մի եղած է յաշխարհի, և, Եւա մեղանչական, զիւր գեղեցկութիւնն աղետալի օժիտ մի բերած է մարդոյն որ՝ նովաւ գթեալ՝ քան զգրախան լաւագոյն համարած է սակայն միշտ նորա սէրն :

Ահա՛ յայտ է ուշադրութեան արժանի կէտն, յայտ է մեծ խնդիրն : Ահա՛ մարդկան կուրութեան որ կատարելագործութեան և ազնուացման ա՛յսքան ազնիւ գործի մի թշուառութեան գործի՛ ըրել է :

Այո՛, եղբարք, մե՛ք եղած եմք պատճառ որ կինն, գեղեցկութիւնն, սէրն, ամուսնութիւնն, երկնից այս թանկագին պարգեւքն որք արուած են մարդոյն՝ որպէս զի երջանիկ, մեծ, առաքինի, ազնիւ և կատարեալ լինի, շատ անգամ աղբերք եղած են աղետից, և շատ օրէնսդրաց,

բաց ի Քրիստոնէութեան դերագոյն Հեղինակէն, կինն անիծեալ էակ մի և սէրն վտանգալից ու մահաբեր ախտ մի նկատելոյ տխուր գաղափարն ներշնչած են : Մեք գձձած եմք այդ երկնային էակն. հրեշտակն յաճախ հրէջ մի ըրել եմք, և հիմայ կը զարմանալք շատ անգամ թէ ի՛նչպէս հրեշտակային մարմիններու մէջ հրեշտակային ոգիներ կրնան օթեվանիլ : Ասան զի, եթէ կինն մեր վերայ կը ներգործէ, ինքն եւս մեր օրէնքներէն, մեր բարքերէն, մեր ճաշակներէն կ'ազդուի, և, դիւրակոր և դիւրազդեցիկ էակ, շուտով կը համակերպի իւր գտնուած կացութեան ( միլիէօ ), իւր դիւրաթեք փափկութեամբն և հաճոյ լինելոյ տենչովն որ կանային հոգւոյն հզօրագոյն զսպանակն է : Եւ ինչ որ կուտամք իւրեան՝ նոյնն կը դարձնէ մեզ. ընդդիմագործութիւն մի է այս բնական : Եթէ չճանչելով յայս երկնային գանձուն բովանդակ յարգն, գձձութեան տղմին մէջ թաղած է զնա մարդն, եթէ, կինն մի միայն զգայական հեշտութեան մեքենայ մի նկատելով, նորա հոգւոյ հրապոյրքն զանց ըրած և հոգեկան յատկութիւնքն անմշակ և անխնամ թողած է յաճախ. եթէ, կնոջ Ֆիզիքական տկարութեամբն զեղծանելով, առնական բռնութիւնն գերի է ըրած զնա և կանանոցներու և վանդակներու ետեւ բանտած ու քօղերու մէջ փաթթած. եթէ մարդն կինէն մի միայն մարմնոյ հաճոյք խնդրած և նորա հոգւոյն գանձերն ոտնակոխ է ըրած, եթէ շլմարտին, Գեղեցկին ու Բարւոյն արեգական լոյսէն զուրկ թողած է նորա հոգին. եթէ սէրն լկտութիւն հասկացել է և ամուսնութիւնն՝ առեւտուր մի, տիրոջ և գերւոյ միութիւն մի, և եթէ, կինն բարոյապէս տգեղելով և հաշմելով, մանուկն նորա գիրկն եմք տուել, է՛հ, անտարակոյս արդիւնքն տարբեր չկարէր լինել. մեք զեղծել եմք զայն և նա կը զեղծէ զմեզ, քանզի, ազատ կամ գերի, իւր իշխանութիւնն չդադարի. միշտ իւր պատկերին համեմատ կը յօրինէ զմեզ. եթէ այդ պատկեր տգեղ է կամ գձուձ, ո՛յր է մեզ, եթէ ոչ մեր .

մե՛ք շինեցինք մեր կուռքն , և հի՛մ կը գանգատիմք երբ  
Փիղիասայ Սթենասին չնմանի . մարմարինն նոյնն է .  
ո՞յր է մեզ , երբ մեր մատանց մէջ Փիղիասայ գրոցն  
կը պակասի :

Ահա՛ աստ կը ծագի կնոջ իրաւանց և դաստիարա-  
կութեան խնդիրն , խնդիր մե՛ծ , խնդիր կենսակա՛ն ,  
ճակատագրային : Աինն որպէս զի լինի ամենուրեք ինչ  
որ լինելոյ սահմանեալ է Նախաինամութենէն — լուսե-  
ղէն էակ մի՛ զմարդ լուսոյ և երանութեան աշխարհ մի  
առաջնորդելոյ համար — , որպէս զի իւր անվրիպելի ազ-  
դեցութիւնն մարդկութեան համար բարիք մի լինի  
միայն որպէս լինելոյ յատկացեալ է , որպէս զի գեղեց-  
կութիւնն , սէրն և մայրական գորովն զմարդիկ լուսա-  
գոյն և կատարելագոյն գործելոյ և զաշխարհ լուսոյ և  
երանութեան դրախտ մի յարդարելոյ ծառայեն՝ աստ-  
ուածային հրով մի բորբոքելով զմարդ և երկնային դրոշմ  
մի դնելով նորա ճակտի վերայ , որպէս զի ընտանիքն ,  
մարդկային ընկերութեան այս հիմն , ազնուանայ , և հե-  
տեւաբար բարձրանայ և վսեմանայ մարդկութիւն ,  
պէ՛տք է և անհրաժեշտ պէտք որ կնոջ իւր իրաւունք-  
ներն տամք և իւր հոգւոյն սնունդն չզլանամք իւրեան .  
պէ՛տք է որ , ճանչնալով կնոջ պաշտաման մեծութիւնն ,  
մատակարարեմք նմա այն միջոցներն որ կարող կ'առ-  
նեն զնա ըստ արժանւոյն զայն կատարելոյ :

Ի մի բան , երբ կինն բոլոր իւր կարողութեանց ա-  
զատ վայելումն չունի և քաղաքակրթեալ չէ , քաղաքա-  
կրթութիւնն միշտ ցնորք մի է : Եւ , վերջացնելոյ համար  
խօսքս քանզի չափազանց երկարեցի , երբ , Տեարք , հայ  
իգական սեռին ազատամիտ՝ լուսաւոր և բարձր կրթու-  
թիւն մի տալոյ յատկացեալ վարժարանի մի նպաստելոյ  
համար այսր դիմող հայ ընկերութիւն մի կը տեսնեմ  
իմ դիմացս , կ'ըսեմ . Քաղաքակրթութիւնն սկսած է  
չայոյն համար :

Դ

### Հ Ա Շ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

( Խօսեցեալ է Թատրոնէ Գաղտէն-դէ )

1874 Փետրուար 12

Տեարք և Տիկնայք ,

Հանդիսիս Տնօրէն Մասնաժողովն ինձ կը յանձնէ  
իւր շնորհակալու զգացմանց թարգմանն լինել առ ձեզ  
որ հաճեցայք ձեր ներկայութեամբ պատուել սոյն երե-  
կոյթն և խրախուսել զինքն իւր ազնիւ ձեռնարկու-  
թեան մէջ :

Թո՛յլ տուք ինձ յաւելուլ թէ՛ այն բուռն եռանդն  
որով միահաղոյն փութացիք պատասխանել իւր հրաւի-  
րին և քաջալերիչ ձեռն մի կարկառել այն փրկութեան  
յարկին զոր դուրս կ'անուանեմք , ձեր ուսումնասիրական  
փութոյն և յառաջդիմասէր ոգւոյն մի պայծառ և փա-  
ռաւոր ապացոյցն է : Այո՛ , գիտեմ , տեարք և տիկնայք ,  
ձեր այս գիշերոյ հոս ներկայութիւնն գործնական գրա-  
ւական մի է այն բարձր կարեւորութեան զոր կու տայք  
դաստիարակութեան խնդրոյն , և այն ամենազգի զոհո-  
ղութեանց զոր պատրաստ էք առնել ձեր մանկտւոյն  
կրթութեանն համար . քանզի գիտէք թէ՛ մարդկային  
էակն , իրրեւ ճշմարիտ և կատարեալ մարդ ապրելոյ  
համար , մարմնոյ հացին հետ հոգւոյ սննդեան այլ պէտք

ունի, թէ մտաւոր և հոգեկան կարողութեանց զարգացումն անհրաժեշտ պայման մի է մարդոյն երջանկութեան և բարոյական կենաց, թէ տգիտութիւնն անհատից և ժողովրդոց համար անթիւ և անհամար աղիտից աղբիւր մի է, և թէ ազգերն, երջանիկ և մեծ աստիճան համար, լուսոյ կը կարօտին, կրթութեան՝ գիտութեան լուսոյն որ այնպէս է բարոյական աշխարհին համար ինչ որ է արեգական լոյսն նիւթական աշխարհին համար :

Այսպէս կը խորհիք դուք, ազնիւ Գատըզիւղիք. և ինչպէս կարէք այլազգ խորհել, դուք որ հայ ընկերութեան ազնուագոյն և լուսաւորագոյն մի մասն կը կազմէք և որ այժման եռանդագին կը դիմէք ձայնին որ լուսոյ տաճարի մի նպաստելոյ կը կոչէ զձեզ :

Ներեցէ՛ք ինձ, սակայն, հարցանել ձեզ թէ ո՞ւր է այդ տաճարն. ինչ որ դպրոց կ'անուանէք դուք, ես չէնք մի կը տեսնեմ լոկ, քարերու կարկառ մի. և այդ չէնքն գրեթէ տարիէ մ'ի վեր բարձրացած կը կենայ հսկայաձեւ, դատարկ, ամայի ու լռին : Այդ կանթեղն՝ որ զմեզ լուսաւորելոյ պիտի ծառայէր, անլոյս ու անկայծ օդոյն մէջ կ'ախուած կայ անօգուտ. այդ դռներն՝ ուստի կեանքն դուրս պիտի գայր ժողովրդեան մէջ սիւսուել, գոց են, և մեր մանկունք դեռ նոցա ուղին չտովրեցան : Ի՞ր ուրեմն իւր հսկարտ զլուսն բարձրացուցած կեցել է անօգուտ տեղ մի գրաւելով միջոցին մէջ. միթէ մեր անտարբերութիւնն ծաղրելոյ համար : Մի՞ գուցէ հնոյն Եգիպտոսի ֆարաւոններուն նման ամբարտաւան քարակոյտ բուրգն մի կանգնել ուզած լինիմք՝ նոցա նման մեր կեանքն, յոյսերն ու փառքն նորա ներքեւ թաղելոյ համար :

Տխո՛ւր հակապատկեր մեր սոյն գիշեր ցոյց տուած ուսումնասիրական եռանդեան : Եթէ մեր մանկուտոյն մտաց և հոգւոյ կրթութեան մասին անտարբեր եմք, ի՞նչ կը նշանակէ ազա մեր հոս ներկայութիւնն. եթէ չեմք, ի՞նչ կը նշանակէ այդ ուսումնարան առանց ուսանողի, այդ կանթեղն առանց լուսոյ, այդ մարմինն

առանց հոգւոյ : Ա՛նչուչտ, մեծադործութիւն մի է դպրոց մի շինել, ազգերու փրկութեան մի Պրոպատիկէ կանգնել. բայց արդեօք լոկ նիւթական շէնքի մի ճարտարապետներն լինել բաւական փա՞ռք կը համարիմք մեզ, և կը կարծե՞մք թէ այդ վառարանն պիտի կարէ մի նոր կենաց ջերմութեամբն զմեզ ջեռուցանել՝ առանց նուիրական հուրն վառելոյ նորա մէջ :

Ահա՛ ինչ որ մեր ճակտին ամէնէն մեծ արատն եղած է աշխարհի առջեւ. օտարք, արհամարհոտ և ծաղրական ժպիտ մի իւր շրթանց վերայ, կ'անցնին այդ լուս և հսկայ շէնքին առջեւէն որ կեցած է իբրեւ համր՝ այլ անողք ամբաստան մի մեր անտարբերութեան. մեր մանկուտոյն մի մասն, նեղ և դպրոցի անյարմար ազաւոզը շէնքի մի մէջ, անպաշտպան ու անխնամ, իւր թանկագին մանկութիւնն կը թառամեցնէ. մի մասնն օտար վարժարանաց մէջ իւր կենաց ամէնէն սուղ տարիներն կը փճացնէ գրեթէ անօգուտ, և պատառ մի թերի կրթութեան զոհ կու տայ իւր ազգային ուղին և զգացումներն, և մի մասնն երկու ծայրից մէջտեղ կը վարանի տանց անկիւնն, մշտատեւ հոգ և սրտամաշո՛ւք իւր ծնողաց . . . :

Եւ մէք կը դանդաղիմք տակաւին. ոչ, ի՞նչ կ'ըսեմ, աւելի գէշ կ'ընեմք. — կը կուտիմք . . . : Այո՛, կը կուտիմք, երբ մեր մանկտին, անօթի՛ մոքով և հոգւով, բարոյական կենաց հացն կը խնդրէ ի մէնջ. երբ նա մօտ է ի մեռանել բարոյապէս, մեք մեր վէճերովն կ'զրաղիմք, առանց տեսնելոյ որ մեր կրից փոթորկին մէջ ազադայն կ'ընկզմի, առանց տեսնելոյ որ մեր վէճերուն մէջ մեր օտից տակ կը կոխտուեմք անտարբեր ազադային յուսոյ ծաղկունքն :

Այս հակասութիւնն ի՞նչ է, Տեա՛րք, բացատրեցէ՛ք, կ'աղաչե՛մ : Գիտեմ որ իրաց այս վիճակն ձեր ամենուն խղճին վերայ ծանրացած է, և ձեր ներկայութիւնն նորա դէմ բացարձակ բողոք մի է : Ի՛նչ, այլ անչուչտ ամենքդ այլ զգացած էք թէ յանո՛ւն պատուոյ, յանո՛ւն

ձեր մանկանց շահուն, յանուն ապագային, սկսեց է որ դադարի իրաց այս վիճակն որ, բա՛րէ, չափազա՛նց երկարեցաւ : Մեր վէճերն ո՛րքան իրաւացի այլ լինին, ո՛րքան սրբազան, դաստիարակութեան խնդրէն աւելի կենսական և նուիրական չկարեն լինել. երբ ապագային շահ կը խօսի, ամէն շահ կը լռէ և տեղի կու տայ : Եթէ առանց այդ շահուն մնասեղոյ կրնամք կտուիլ, քա՛ջ է . բայց երբ մեր հակառակութեանց անաջին զոհն այդ շահն է, շահերու ամէնէն նուիրականն, երբ մեր գլխ-տուութեանց շնորհիւ անտես կը լինի մանկան կրթութեան խնդիրն, և նիւթ ապէս շինուած վարժարանն բարոյապէս տակաւին անշէն կը մնայ, այն ատեն, ներեցէ՛ք համարձակութեանս, ամէն վէճ դատաւարանելի է, իրաւունքն իսկ անիրաւութիւն է : Գաստիարակութեան խնդրոյն մէջ ժամու մի կորուստն անդարմանելի կորուստ մի է, և դոյզն ինչ անտարբերութիւն ոճիր մի է աննե-րելի որ ապագայներ կ'ստանանէ . ո՛հ, ապագայի դահիճ լինել քանի՛ սոսկալի է . . . :

Զվիճիմք Տեառք, երբ միանալ հարկ է . մեր գլխ-բախտ ազգին միակ զօրութիւնն միութեան մէջ է, դարերու ցաւագին փորձեր համոզած լինել պարտին զմեզ թէ կուսակցութիւնք ժողովրդոց ժանտախտն են . մա-նաւանդ թէ, եթէ կը ներէք ինձ համարձակ յայտնել իմ կարծիքս, վիճելոյ մեծ և հիմնաւոր պատճառ մի չունիմք . երկուստեք դոյզն ինչ իրաւաստնութեան ոգի կարող է զամէն մրրիկ ցածուցանել և հաշտութեան ծիածանն պարզել մեր գլխոյն վերայ :

Թո՛ղ ուրեմն այս յարկն որ սոյն գիշեր նուիրական նպատակի մի համար զմեզ իւր հովանւոյն ներքեւ խորհ-բեց՝ հաշտութեան սրբաւայր մի լինի մեզ համար, և ի նպատ մեր վարժարանին տրուած սոյն երեկոյթն՝ սկզբնաւորութիւն մի մեր միտքան ջանից տալոյ համար նմա անյապաղ նաեւ իւր բարոյական գոյութիւնն ու մեծութիւնն . . . :

Ե

Ն Ե Ր Կ Ա Յ Ե Ի Ա Պ Ա Գ Ա Յ

( Խօսեցեալ է Գորբէյան հանդիսի Ախագ. և Փանս. Վարժ. )

Թարապիս 1874 Յունիս 9

Հայեր,

Այնպիսի ժամանակի մի մէջ, ուր Հայն աւերակաց զէջ մի ունի իբրեւ հայրենիք, . . . . .

. . . . .

. . . . .

. . . . .

ուր իւր փառայեղ անցելոյն բեկորից վերայ տխուր ներկայի մի մուսլն իբրեւ մթին քօղ մի կը սփռի, ուր տգիտութեան սեւ անգղն թշուառութեան պարեխին կապուած այդ Պրոմէթէոսի սիրտն կը կրծէ, ուր մի կողմէն կրօնի խտիրք այդ արդէն իսկ տկարացեալ հսկային անգամներն կը յօշոտեն, միւս կողմէն անյազ քաղաքակա-նութիւն մի իւր ազգայնութեան զէմ մահաշունչ որկոր մի կը բանայ, . . . . .

. . . . .

և մինչ ի ներքուստ շահն, կոյր կիրքն և ոգին եսական, զազի՛ր տղրուկներ, ոչինչ նուազ նորա արիւնն կը քա-մեն, այսպիսի ժամանակի մի մէջ, ո՛հ, քանի՛ մխիթա-րիչ է այս հանդէսն :

Այս սւսանող մանկութիւնն խաւարամած ներկային հորիզոնին վերայ սփռուած արշալոյս մի է յուսանալու . և սլահ մի մեր աչերն , տեսուր ներկայն թողլով , այս լուսածիծաղ ճակատուց ետեւ սքողեալ սուրբային տեսախներուն մէջ կը յափշտակուին , հիացման և երջանկութեան արասուքներու մէջ ժմտագին :

Ե՛ղբարք , կենաց անհրաժեշտ տարրն է լոյսն : Բէ նիւթական աշխարհն լուսաւորող ջահն շիջանկր , անդէն համայն կեանք կը մահանայր , և տիեզերք , լրին և ամայի , յոչնութիւն կը դառնայր անդրին :

Դոյնն է նաեւ բարոյական աշխարհի համար . իմացականութեան արեւուն ճառագայթից տակ կ'աւրին ժողովուրդք : Խաւարն սպանանէ :

Գպրոցն լուսոյ աղբիւրն է . արգանդն է նա բարոյական կենաց . մարդկութիւնն թէ չծնի սյգ երկրորդ ծննդեամբ , թէ զամ մի եւս այդ արգանդէն դուրս չգայ , վիժած մի է անկերպարան , սլանդակ ու խաւարին :

Մէն մի վարժոց նուիրական տաճար մի է որ յինքեան կը բովանդակէ սուրբային խորհուրդն . այդ սրբազան սլատերուն մէջ ժողովրդեան մի ճակատագիրքն կը կազմակերպին :

Մարդկութիւնն , մոլորութեանց ու թշուառութեանց խաւարով կազմեալ անցելոյ մի մէջ , ի ծունր անասնական գորութեան կուռքին առջեւ , սյգ երու արեամբն ծիրանազեաց բունակալն կը խնկարկէր , և զնա ճշ կը կոչէր :

Մոլորութեանց ու թշուառութեանց սյգ խաւարն տակաւ տեղի տալ սկսաւ բանականութեան լուսոյն առջեւ : Մարդկութիւնն իւր կուռքերն կը խորտակէր , և տեսնուեցաւ որ նոցա փոշիներուն վերայ մի քանի սլորդ մարդոց արձանն կը կանգնէր . ծիրանի ջունկին , բայց աստուածային կայծ մի իւրեանց սչերէն կը ցոյտէր , և իւրեանց ճակատքն լուսապսակ կը շողային , նման այն լերանց զազաթներուն որոց վերայէն յերկիր

իւր առաջին նայուածքն կ'արձակէ աստղն լուսաբեր : Հոմեր էր այն , Պղատոն , Մեսարովս , կութթենպերկ . . . ամենուն ձեռին մէջ գիրք մի , կամ իւրեանց շուրջն մանկութիւնն մի որ՝ անյագ՝ գիմաստութիւն կը փնտռէ իւրեանց վեհ շրթանց վերայ :

Ա՛նա՛ լուսոյ դարուն մեծ մարդիկն : Նիւթն այլ եւս յաղթուած է Գաղափարէն . նոր ժամանակաց աշխարհակալն՝ Գաղափարն է :

Մի ճշմարտութիւնն մի դար կը յեղաշրջէ . մի քանի սկզբունք , զոր ՅՅ ի սկզբունք կը կոչեն , անհուն քայլ մի առնուլ կու տան մարդկութեան :

Ճշմարտան , Գեղեցիկն ու Բարին . . . երրորդութիւնն սրբազան որոյ առջեւ ծունր պիտի կրկնէ յաւիտեան մարդկութիւնն . կեանքն անկարելի է իւրեան առանց այս եռակի ճառագայթին . . . :

Գպրոցէն , ուր նորա միտքն ու հոգին սոյն եռակի ճառագայթովն կ'ողողին , երբ դուրս գայ այս սերունդն մատաղ , երբ այս աւուր ապագայն վաղուի ներկայն լինի , այն ատեն անշուշտ Հայութեան բախտն պիտի կերպարանափոխի :

Քանզի նոքա պիտի ճանչեն Ճշմարտոն , երբ մեք մուտրութեանց կ'երկրպագեմք և նախապաշարմանց բաւզին մէջ կ'աստանդիմք մոլորաքայլ :

Քանզի նոքա պիտի պաշտեն Գեղեցիկն , մինչ մեք ծաղր կ'առնեմք զայն . զԲելիար քան զՌափայէլ գեղեցիկ կը գտնեմք , և Հանճարոյն վերայ կը թքնեմք . Հայտըն՝ Հույտըն է մեզ համար \* . մինչ անմահ շիրմներու վերայ մեր ագիտութեան սողունն լորձուեք կը սփռէ , նոքա իւրեանց արտասուք պիտի սրբեն այդ ռճիրն իւրեանց նախնեաց :

Քանզի նոքա պիտի հասկանան Բարին , մինչ առաքինութիւնն մի առեղծուած է մեզ համար , արդարութիւնն՝ սին բառ մի , խիղճն՝ մեռած որդն մի , ազգա-

\* Ազգային զաւեշտական թերթ մի այսկերպ ծաղրել յանդգնած էր անմահ երգահանին անունն :



սիրութիւն՝ զիմակ մի : պիտի հասկանան Բարին , և Սատուած ճշմարիտ երկրպագուներ պիտի ունենայ , և Հայրենիք՝ ճշմարիտ զաւակներ :

Տեսէ՛ք յառաջդիմութեան կռուոյն սա Սմազուններն , լուսաւորութեան տաճարին սա Աւետաւններն . սեւտէ՛ք ապագային սա արի զինուորներն :

Այս հանդէսն սրբազան է . ո՛վ որ նորա դէմ կը հայհոյէ , յառաջդիմութեան դէմ կը հայհոյէ . կարկի՛ բերանն հայհոյիչ : Յաղթանակի հանդէս մի է սա , մեծ քան զայն յաղթանակներ որոց դափնիք արեամբ և արտասուօք են ուռցեալ . յաւարին դէմ լուսոյ յաղթանակի նախատօնն է , ո՛հ , քանի՛ սրտաշարժ և քանի՛ կարեւոր այն սրտերուն որք ներկային մթութեան մէջ յուսոյ նշոյլ մի կը խնդրեն . ահա՛ նշոյլն :

Խուն ինչ յառաջ փղծկեցայ , մի քանի արտասուք ինկան աչերէս , երբ ճամբուն վերայ մի ուրիշ ազգի մատաղ սերունդն \* զմերն կ'ողջունէր և կը ծափահարէր . ինչ խորհրդաւոր հանդիպումն . ազգերու եղբայրութեան ինչ գեղեցիկ նախազրաւական մի էր այն . ո՛չ , անկարելի է որ այս հանդէսէն բաժնուողն իւր հոգւոյն մէջ հաւատ մի չտանի ապագային վերայ :

Կ'ըսէի հիմայ թէ . ո՛յք են ճշմարիտ մեծ մարդիկն . — նոքա՛ որք , յառաջդիմութեան լուսափողոյիող դրօշն բարձր ու ամուր բռնած , ժողովրդոց ասջեւէն ի լոյս կը սլանան համարձակ :

Ո՛չ , ինչ ծուխ , ինչ թուք , ինչ մուր , ինչ ժահ այլ ժայթքէ իւր վերայ Ներկայն , կոյր ու նախանձոտ , Ապագայն ոսկի պսակ մի ունի պատրաստ փանոսեանի՛ այս յաղթանակի զիւցազին :

\* Յոյն գաղտնական մանկանց մի հոյլ որ ընդ առաջ կ'ենէր հայ ուսանողաց Թափորոյն :

Փ Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

( Խօսեցեալ է հանդիպելի գաղտնիքացի . Աղբ. շարժ. Իճարէէ )

1874 Յուլիս 21

Սրբազան Հայր , Տեսաբ և Տիկնայք ,

Թո՛ղ տուք զի մի վերջին խօսք այլ ես ուղղեմ ձեզ :

Մի քանի շարաթ յառաջ դպրոցական մի ուրիշ հանդիսի մէջ խօսելով կ'ըսէի , « Խաւարին դէմ լուսոյ յաղթանակի նախատօն մի է այս , քանի՛ սրտաշարժ և քանի՛ կարեւոր այն սրտերուն որք ներկային մթութեան մէջ յուսոյ նշոյլ մի կը խնդրեն » և զերկսեռ մանկութիւնն մատնանիչ ընելով՝ կը յաւերուի , « Ահա՛ նշոյլն » :

Նոյնն կ'ընեմ և աստ . դուք ամենքդ , որ Հայ անունն կը կրէք ձեր վերայ , որ անտարբեր չէք Հայութեան բախտին ու ճակատագրաց , որ նորա դառն ու տխուր ներկայն վշտալից աչօք կը դիտէք , և որոց ուշն կը գրաւէ նորա ապագային մեծ խնդիրն , նայեցէ՛ք սա մատաղ դասուց , սա նորալոյս աստղիկներու կրկին համաստեղութեանց , և յուսացէ՛ք :

Ներկայն տխուր է , մթին . բայց տեսէ՛ք , ո՞ր մուայլամած ճակատու կնճիօք չպարզին սա յուսանշոյլ ճակատուց առջեւ . նոր հորիզոն մի են լուսաափիւռ որ նոր երկինք մի կ'աւետէ :

Երջանիկ եմ, իբրեւ դասատու, զի միշտ աչացս առջեւ ունիմ այս տեսարանն, այնքան սխրալի. շատ մի դառնութիւններու մէջ, վարժապետի պաշտօնն այն անհամեմատ երջանկութիւնն ու սխրացումնն ունի զոր կազմուելոյ վերայ եղող ասպարհայի մի տեսիլն կ'ընծայէ. բան մի կ'զգայ դաստիարակն նման, եթէ յանդգնութիւն չէ բազդատել, նման այն հեշտութեան զոր զգաց բնութեան Հեղինակն՝ երբ ոչնչութեան արգանդին մէջ տիեզերաց սաղմին կազմակերպումնն տեսաւ :

Եւ երբ այս յուսածիծաղ այգունն նկատողութեան մէջ կը յափշտակուիմք, կը մոռնամք թէ մեր շուրջն խաւար կը պատէ տակաւին, և թէ երկնից հանդիպակաց ծայրն սեւ է դեռ :

Եւ ստուգիւ խաւարն կը պատէ մեր շուրջն :

Ազգ մի եմք մեք. այո՛, վկայ մեր պատմութիւնն. Արամ, Արտաշէս, Տիգրան, Տրդատ Հայ էին. բայց դոքա լոկ յիշատակներ են այսօր անցելոյն անդնդին մէջ սուգած. դոցա հայրենիքն ծուէն ծուէն պատառուած է, և իւրեանց սերունդն ընդ ոլորտս տիեզերաց ցիր և ցան, իբրու չորացեալ ծառի մի տերեւներ զոր հողմն կը վարէ յուսէտ յուկամ :

Հայն այլ եւս ազգ չէ. եկեղեցի մի է. Հայն գործատանէութիւն պահպանեց. այսօր քրիստոնէութիւն այլ զՀայութիւն կը պահէ, բայց եկեղեցւոյն պատերէն ներս :

Կազուտ կողոսյուտ խուսափած այն նաւարեկումնն յոր իւր բոլոր մեծութիւնքն ընկլուզան, կ'երթայ աշխարհի վերայ անաշխարհիկ, օտար իւր խի օթեվանին մէջ, աղքատ, և գրեթէ զիւր կեանքն մուրալով :

Աղքատ և մոքով. զի նիւթական աղքատութիւնն կը ծնի և աղքատութիւն բարոյական. մինչ մարմինն ոգեսպառ « հա՛ց » կ'աղաղակէ, միտքն ա՛յլ չխորհի. և, բա՛բէ, իւր քրտամբն բուսուցած հացն այլ միշտ իւրն չէ :

Իւր շուրջն գտնուած ազգաց բարոյական և նիւթական բաղմալից սեղանէն ինկած փչուերքն իւր խնջոյքն են :

Իւր բոլոր ոյժն իւր սրտին մէջ մնացած է. թէ ապագայ մի ունենայ, ինքն միայն պիտի շինէ զայն, և զայս շինելոյ համար՝ մի միակ զօրութիւն ունի, — իւր առաքինութիւնն, իւր հայրենասիրութիւնն :

Բայց, բա՛բէ, ո՛րքան քիչ սրտերու մէջ կը վառի այդ նուիրական հուրն. ներուի ըսել, բացառութիւնքն ընդունելով :

Կղերն շահասէր է .

Հարուստն անձնասէր է .

Պաշտօնեայն փառասէր է .

Հասարակաց կարծեաց առաջնորդն, հրապարակագիրն, կաշառասէր է .

Իսկ ազգասէրն Գիողինեայ լապտերովն պէտք է փնտուել :

Մինչդեռ, ո՛հ, ապագասիրութիւնն մե՛զ պէտք է առաւել քան այլում ումեք յազգաց. մեր բոլոր ոյժն մեր արեան մէջ միայն մնացած է. թէ մեր մոխրոյն մէջ այդ յետին կայծն եւս մարի, այն ատեն ա՛յլ պէտք է հրաժարիլ ամէն յոյսէ, պէտք է հրաժարիլ իբրեւ ազգ ապրիլ ուզելէ :

Ազգասէր չե՛ն նոքա, քանզի լոյս չունին. անձուկ է իւրեանց տեսութեան շրջանակն, իւրեանց տիեզերքն իւրեանց անձն է. զինքեանս ընդհանուրին մէջ նկատուլոյ իմաստասիրութեան չեն բարձրացած. իւրեանց աչերն անցելոյն ու ապագային մէջտեղ այն աննշան կէտն միայն կը տեսնեն որ ներկայ կը կոչուի :

Լոյս չունին մոքի. չունին և սրտի. վե՛հ զգացումներ չեն դաստիարակած նոցա հողին. չեն ուսած զգալ անձնանուիրութեան վսեմութիւնն, պատուոյ զգացման գեղեցկութիւնն, բոլոր առաքինութեանց հեշտութիւնն :

Եւ սոքա են ազգին առաջնորդներն :

Աստ, ներեցէք ինձ դիտողութիւն մի ընել. կարեւոր է յոյժ :

Կղերն, ոչ միշտ անկեղծութեամբ, կը պնդէ և կը ջանայ համոզել թէ հրօնական զգացումն է լոկ այն շա-

դախն որ մեր ազգութեան պատուարն անքայքայ կարէ պահել, և հայ մնալոյ համար կ'ուզեն որ նոյն իսկ կրօնամու լինի ոք . այո՛, վարդապետ մի՞ լսած եմ որ Եկեղեցւոյ բեմէն ատելութիւն, յաւիտենական ատելութիւն կը քարոզէր ընդդէմ ամենայնի որ հայակրօն չէ . Ո՛վ միջին դար, դեռ չեն պակաս քեզ արժանի զաւակներ : Այդ վարդապետն նաեւ, առ զաչացու ատելութեանն, մի ուրիշ լուսամիտ վարդապետի գրած գրքին մէջ \*\* « Եւրոպական լուսաւորութիւն » խօսքն կը սրբագրէր « Իմա եւրոպական խաւար » գրելով :

Արօնքն կը պաշտեմ, ի մարդն ամէնէն վսեմագոյն զգացումն է կրօնական զգացումն . Աստուծոյ և մարդկութեան մէջտեղ միութեան մի գիծ է այն վսեմ . ամէն Հայոյ պարտք է միանգամայն յարգել ու սիրել Հայաստանեայց Եկեղեցին որ նուիրական պարտի լինել մեզ իրբեւ հայրենական . բայց կրօնամուտութիւնն չէ՛ որ առ հասարակ սիրելի կ'ընէ զՀայաստանեայց Եկեղեցին, այլ հայրենասիրութեան զգացումն : Այս տեսութեամբ Հայոց պատմութիւնն մի ապահովագոյն կրօնագիտութիւն է :

Ըսել կ'ուզեմ թէ այս միջոցն, որում ա՛յնպէս սերտիւ կը յարի հայ կղերն մեր ազգային մարմինն ամիով պահելոյ նախանձաւորութեամբ, յոյժ տկար է . այն երկու բան յառաջ կը բերէ . կրօնամոլներ և անտարբերներ . կրօնամոլներ որ զեւրոպական լուսաւորութիւնն խաւար կը կոչեն, քանզի հայակրօնական չէ . անտարբերներ որ՝ երբ կրօնի զգացումն չունին՝ առ ազգն ամէն կապէ զերծ կ'զգան զինքեանս :

Ազգի լուսամիտ սէրն, ազգայնութեան զգացումն, ահա՛ ինչ որ կը պակսի ընդհանուր կերպիւ, այն որ միակ լծակն է անկեալ Հայութեան :

Բոլոր այս աղքատութեանց, — աղքատութիւն նիւ-

\* Մամբէ վարդապետ, այժմ Եպիսկոպոս :  
 \*\* Պատմ. Հայաստ. Եկեղեցւոյ, Ի Գեր. Մեկթիսեչեկ Վ. Մուրատեանէ :

թական, աղքատութիւն մտաւորական, աղքատութիւն բարոյական, — միակ դարմանն Հայն իւր մտաց և սըրտին մէջ պարտի վնտուել :

Հայն չէ՛ կարող ապրիլ այլ եւս, մինչեւ որ լոյս և առաքինութիւն չունենայ :

Քաղաքակրթութենէն, որ կը նկրտի յառաջադէմ, չկոխտուելոյ համար դիմել հարկ է զուգընթաց . այրի, անտուն, թշուառ Հայութիւնն անբիծ պահելոյ համար իւր խշտեակն, նման աղքատ՝ այլ առաքինի այրի կնոջ, հոգւոյ զօրութեան, շա՛տ արիութեան պէտք ունի :

Այդ լոյսն և այդ առաքինութիւնն առողջ և իմաստուն դաստիարակութիւն մի միայն կարող է տալ : Մեր ամրութեան միակ պարիսպն դպրոցն է :

Այնու կարեւր մրցել քաղաքակրթեալ աշխարհին հետ, ներմուծել ի մեզ այն ոյժն զոր Գիտութիւնն կու տայ ազգերու, ստանալ այն թեւերն զոր Արուեստք կ'ընծայեն, լուսաւորութեան արեւուն տակ տեղ մի ընել մեզ, տեղ մի քաղաքակրթութեան սեղանին վերայ ուր եւրոպական ժողովուրդք բազմած կը յղիանան հացալից :

Այսու կարեւր մեր երակաց մէջ նոր ու առոյգ արիւն մի տալ հոսել, սրտեր շինել, հոգիներ կազմել, լի բարոյական զօրութեամբ, արի՛, անկքելի՛, վա՛ռ, առաքինութեանց բոլոր մեծութեամբն մեծցած, հոգիներ որ գիտնան սիրել զԱզգն անշահախնդիր, լուսաւոր, եռանդուն սիրով, որ գիտնան մեռնիլ Ազգին վերայ՝ երբ հարկ լինի :

Այնու կարեւր ժողովուրդ մի կազմել մտքով և սըրտով զօրեղ :

Եւ այն ատեն անշուշտ Մասեաց մուշլամած արտեւանն պիտի լրջանայ լուսաժպիտ :

Ահա՛ այս նոր սերունդն, որ դպրոցի՛ այս բարոյական մօր ստինքէն մտաց և սրտի կրկնակի կեանքն կը ծծէ, Մասեաց այն խաւարապատ կատարին վերայ ծագող աստղն է լուսաբեր :

Սորա քան զվեզ առաւել լոյս պիտի ունենան, և քան զվեզ առաւել առաքինութիւն :

Եթէ ի սոցանէ որ կղերական լինի, փոխան իշխանութեան գաւազանին քաղցր պիտի լինի իւրեան ազգային փրկութեան խաչն բառնալ ի յուս :

Եթէ հարուստ, աւելի պիտի սիրէ ազգային յառաջդիմութեան կառքին լծուիլ քան ի կառս յօրանալ :

Եթէ պաշտօնեայ, նախամեծար պիտի համարի ծառայել Ազգին քան հրամայել :

Եթէ հրապարակազիր, իւր գրիչն ազգային լուսաւորութեան մի ջան պիտի ընէ, և ո՛չ մի դործի շահու :

Երբ հայր կամ մայր, առաջին բառն հոյ անուեն պիտի լինի զոր իւրեանց զաւկին պիտի ուսուցանեն :

Եւ յայնժամ Հայրենիք նուազ տխուր պիտի լինի : Հայեր, սիրեցէք վարժարանն, թէ ասորիլ կ'ուզէք :

Է

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

ԱՌ

ՕՐԻՈՐԳ ԳՈՄՆԻ ԳԱՐԻԷԼԵԱՆ

ԱՇՍԿԵՐՏՈՒՀԻ ԱԳԱՊԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ

Ի ՀԱՆԴԻՍԻ ՀԱՐՍԱՆԵԱՑՆ

Բերա 1874 Սեպտեմբեր 1

Օրիորդ :

Ձեր կենաց ամէնէն հանդիսաւոր ու վսեմ վայրէկանն հասած է :

Սոյն սահուս երկու աշխարհներու սահմանագլխոյն վերայ կը գտնուիք :

Աղջիկ մի էիք, և կին մի պիտի լինիք :

Երկինքն՝ զոր ցայս վայր կը նկատէին ձեր տաշերն՝ կ'անկետի, և նոր հորիզոն մի կը պարզի ձեր առջիւ :

Այն որ կ'անկետի՝ մանկութեան խնդարի երկինքն է՝ անփոյթ և անհոգ մանկութեան ուր կեանքն մի խաղ է, ուր մարդկոյին էակին աչերն ժպտիլ և չրթներն երգել միայն գիտեն, ուր տղայ — մարդն, ծնողական քրն-

քոյշ ծնդաց վերայ, հեշտալից երազներ միայն երազել գիտէ :

Ո՛վ սիրելի տարիներ անդիտութեան և երազոց, ո՞րչափ աւելի սիրելի կը լինիք երբ ոսկեթեւ թիթեռնիկներու նման կը թռչիք հեռի կ'երթայք ի մէջ անդա՛րձ . . . :

Բայց հարկ է զի բնութեան օրէնքն կատարուի, ծաղիկն իւր գեղաթոյր թերթերն մերկանայ և պտուղ լինի . հարկ է զի ցնորքին յաջորդէ իրութիւն, երազին՝ զարթումն, խաղին ու երգին՝ գործ և վաստակ . հարկ է զի ամէն աստղ զիւր ծիր բոլորէ, ամէն մարդկային էակ իւր ասպարէզն ընթանայ ցվախճան, և օրիորդի կեանքին յաջորդէ հարսի կեանքն :

Ստուգիւ ամուսնութիւն մի մեծ խորհուրդ է :

Մարդկութեան պատմութիւնն հարսանիքով մի կ'սկսի . Ադամ և Եւա զիրեար կը տեսնեն, յիրեար կը մերձին անդիմադրելի մղմամբ մի վարեալ . յիրեար ակնապիշ՝ իւրեանց ձեռներն կը միանան . նոցա սրտից միութիւնն կ'օրհնէ Աստուած, բնութեան Օրինադիրն և մեծ Քահանայն, և առաջին ընտանիքն կը կազմի :

Այն խորհրդաւոր վայրկեանն կը նորոգի ամէն անգամ որ յերկրի երկու հոգիներ յիրեար կը կցորդեն զիւրեանց բախտն, և, երկնի ու երկրի առջեւ մինչեւ ցգերեզման զիրեար սիրել ուխտելով, կ'աջակցին ի կատարել այն պարտականութիւնն որ կեանք կը կոչի :

Նոյն Աստուածն, ներկայ և յայնժամ, այն զոյգ հոգեաց երդմունքն և ուխտերն կ'ընդունի, և իւր օրհնութիւնն նոցա գիրկընդխառնումն կը սրբագործէ և կը վաւերէ :

Կեանքն, այո՛, պարտականութեանց շար մի է . բընութեան Հեղինակն նոցա կատարումն զիւրին և միանգամայն քաղցր գործելոյ համար, ուղած է որ այրն օգնական ունենայ իւրեան զկինն, և կինն՝ զայրն : Ազրելոյ համար մին պէտք ունի միւսոյն . մին թերի է աւանց միւսոյն . կատարեալ են իրերօք :

Այդ միութենէն կը գոյանայ ընտանիքն, այսինքն այն հիմն որոյ վերայ կը հանգչի մարդկային ընկերութիւնն :

Սո՛ւրբ և նուիրական կապ . և ստուգիւ վե՛հ և վըսեմ վայրկեան՝ մարդկային կենաց մէջ՝ այն վայրկեանն ուր երկու սրտերու մէջ կը հաստատուի այն յաւիտենական դաշնադրութիւնն որ կ'անուանի «*առաւանքիւն*», ուր երկու կեանքեր ի մի կը ձուլին, երկու էութիւն յիրեար կը խառնին, և կը կազմեն այն վըսեմ բանն որ ըստանէ՛ք կը կոչի :

Օրիորդ, ահա՛ մի այսպիսի ժամ է այս ժամն :

Այս ժամէն, արդարեւ, նոր հորիզոն մի կը բացուի ձեր առջեւ . ամէն ինչ կը փոխուի ձեր շուրջն . կ'իյնայ այն դիւթական բօշն որոյ մէջէն ցայս վայր զաշխարհ կը դիտելիք . նոր կեանք մի կ'սկսի ձեզ համար . ի՞նչ կ'ըսեմ, բուն հիմայ կ'սկսիք ապրիլ, քանզի մինչեւ հիմայ ապրիլոյ մի նախապատրաստութիւն էին ձեր օրերն, կենաց յառաջարանն, կենաց թատրերգին նախերգն :

Դուք եւս կը կոչիք կատարել այն դերն, այն պաշտօնն որ Նախախնամութենէն կնոջ ընծայուած բաժինն է . այն է կեանք սփռել ձեր շուրջն, ընտանեկան յարկի մի պահապան ոգին լինել, ամուսնոյ մի քայլերուն ընկերացող հրեշտակն, մա՛յր, այսինքն նախախնամութիւն մի :

Յայս վայր այլք ձեզ համար կ'ապրէին . ժամ է արդ որ դո՛ւք այլոց համար ապրիլ սկսիք :

Նոր աշխարհ մի կը մտնէք, պարտուց և տառապանաց, բայց միանգամայն և անհուն սիրոյ և երանութեան, քանզի Բնութիւնն ուղած է որ գերագոյն հեշտութիւնն պարտուց կատարման և առաքինութեան մէջ կայանայ :

Ձեր զաղփաղփուն նաւակն, որ ցայժմ մանկութեան խաղաղ ծովախորշին մէջ վէտ վէտ ալեաց վերայ կ'ստոստէր ու կը խայտայր, ինքզինքն յանկարծ աշխարհի

լայնածաւալ ովկէանոսին մէջ պիտի գտնէ , ուր ա՛յնքան հողմուռք կան բռնաշունչ , ա՛յնքան մրրիկք , ա՛յնքան ժայռք , ա՛յնքան անդունդք :

Բայց ձեզ երանի՛ , զի դուք ձեր կողմնացոյցն ունիք , այն է կրթութիւնն :

Այ յուսամ՝ և վստահ եմ , քանզի ամէն կարեւոր հանգամանքներն կը տեսնեմ ի ձեզ , որ կատարեալ կնոջ մի տիպարն պիտի հանդիսանայք , կնոջ իտէալն պիտի իրացնէք . առաքինի , անբիծ , յաջողութեան մէջ համետ , թշուառութեան մէջ վեհ , բարի հարսն , բարի մայր , բարի և ամէնուն նկատմամբ , երկնից սիրոյն մի ճաճանչն մարմնացեալ :

Եւ ընտանեկան հոգերու մէջ չպիտի մոռնայք ձեր ազգն . առտնին պարտուց քով կայ նաեւ հանրական պարտքն , և գիտէք որ երբ կանայք ուզեն՝ Հայրենիքն կը փրկեն : Պէտք է որ մեր սնափառ և ինքնասէր կանանց , որոց թիւ , բա՛րէ , կարի մեծ է , մեծութիւնն իւր ամէն ազգի պարտուց կատարման մէջ փնտռող կնոջ մի օրինակն ընծայէք :

Չպիտի դադրիք անշուշտ շշմարտին , Գեղեցկին ու Բարւոյն ճառագայթներովն ձեր հողւոյն լոյսն աճեցնելէ : Գեղեցիկ—դպրութիւնք և գեղարուեստք ձեր գերագոյն սփոփանքն ու զբօսանքն պիտի լինին , փոխանակ , ինչպէս կ'ընեն թեթեւամիտ կանայք , սին ու ապառողջ հաճոյից մէջ սնոտի և ապականարար զբօսանքներ խնդրելոյ :

Ար փափաքէի որ էմէ — Մարթէն ձեր երկրորդ Աւետարանն լինէր :

Գիտցէ՛ք , ձեր մի խօսքն , մի ժպիտն , մի ակնարկն զօրութիւններ են որք սուիններու և ուրաց զօրութեան ընեւ չկրցածն կարող են գործել :

Այդ զօրութիւնն ձեր ձեռին մէջ ազնուացման և երջանկութեան գործի մի թող լինի , որպէս լինելոյ սահմանուած է : Ըրէ՛ք որ արեւ մի լինիք կեանք և լոյս սփռող ձեր շուրջն :

Եւ այն ատեն Ագապեան վարժարանն հպարտ պիտի լինի ձեզ :

Ի վերջոյ , ընդունեցէ՛ք այն երջանկութեան իղձերն զոր ձեզ կը նուիրէ ի սրտէ ձեր դաստիարակներէն մին :



Ը

ՅԱՌԱՋԴԻՄ ՈՒԹԻԻՆ

(Խօսեցեալ է հանդիսէ բացման Արժան Վարժ. Գարգէնդէ)

1875 Յունվար 19

Տեա՛րք և Տիկնայք,

Այս վսեմ վայրկեանս ամէն բան մեր շուրջն ամէն ականջի մի բառ կը կրկնէ . սոյն բառն կը հնչեն այս նորակառոյց և պերճ շինուածոյն որմերն նուիրական, սոյն բառն կը հնչէ այս հանդէսն մեծաշուք, սոյն բառն կը հծծէ այս խնդութեան արտասուօք ցողագին աչերու լռին՝ այլ պերճախօս լեզուն, և այս բառն կ'երգեն սա նուագքն զուարթ և աշխոյժ . Ի՞նչ է այս բառն . — Յառաջդիմութիւն :

Յառաջդիմութիւն, այսինքն այն օրէնքն զոր գերազոյն իմաստութիւն մի դրած է մարդկութեան վերայ, այսինքն մարդկային ընկերութեան կենաց անհրաժեշտ մի պայմանն, ժողովուրդներու բարոյական էութեան աճումնն, մարդկութեան ձգտումնն դէպի կատարելութիւն, բարոյական աշխարհի հորիզոնէն ճշմարտութեան և արդարութեան արեւուն տակաւ բարձրացումնն, և ճշմարտին առջեւ Ստոյն, Բարւոյն առջեւ Չարին, Գեղեցկին առջեւ Գձձին, Լուսոյ առջեւ Խաւարին, Երանութեան առջեւ Թշուառութեան տակաւ տեղի տալն ու նահանջն կորակոր :

Յառաջդիմութիւն, այսինքն անտառէն յետոյ քաղաք և պալատ, մերկութենէն յետոյ մետաքս և բեհեզ, խողկաղինէն յետոյ Դեմետրի պարգեւքն . այսինքն Մղձբէն յետոյ Յիսուս, մարդագոհէն յետոյ աղօթք, քուրմէն յետոյ քահանայ, Չեւսէն յետոյ Աստուած . այսինքն մեհենադրոյժ տաւերէն յետոյ գիրք և մամուլ, սուրէն յետոյ գրիչ, հաւատաքննութենէն յետոյ խղճի ազատութիւն, աւատականութենէն յետոյ ժողովրդային վեհապետութիւն . այսինքն առագաստէն յետոյ շոգի, Իկարոսէն յետոյ Մոնկոլֆիէ, հովուական տիկէն յետոյ քնար և դաշնակ, վայրենեաց ոռիւններէն յետոյ Մոցարդ և Պլեթօֆէն . այսինքն ներկայէն յետոյ ապագայ, շղթային տեղ պսակ, պատերազմին տեղ մտաց և հոգւոյ զօրութեան մրցահանդէս, ուռմբին տեղ բան, ազգաց տեղ մարդկային եղբայրութիւն, Քաղցին և Լիութեան կռուոյն տեղ մարդկային ընտանիքին սեղանն հասարակաց, հեծութեան տեղ երգ, անիծից տեղ օրհնիք . այսինքն ընկերային աշխարհին մէջ Լոյսն՝ արեւ, և Սէրն՝ մթնոլորտ :

Այ՛ո՛, Տեա՛րք և Տիկնայք, այս վսեմ բառն կ'ազաղակէ այսօր այս հանդէսն, — մին յառաջդիմութեան փառաւորագոյն յաղթանակներէն :

Դպրո՛ց մի կանգնել, ահա այն ամէնէն մեծ քայլն զոր ժողովուրդ մի կարող է առնուլ երբէք, ահա՛ այն ամէնէն ուժգին ցնցումն զոր ազգ մի կարող է տալ զինք կաշկանդող խաւարակուռ շղթայներուն, և բռնագոյն ու անվրիպելի հարուածն այն հրէշին որ կը կոչի Տգիտութիւն :

Դպրո՛ց մի կանգնել, այն է յառաջդիմութեան զինարան մի շինել, ջահ մի եւս վառել՝ լուսաւորելոյ համար այն արահետն ընդ որ ժողովուրդ մի կը քայլէ . մի նոր աղբիւր բոխեցնել բարոյական կենաց և զօրութեան, նոր հորիզոն մի բանալ ապագայի, էջ մի եւս դարձնել այն բազմաթերթ մատենին մէջ յորում մարդկութիւնն տակաւ կ'ուսանի ազատ, երջանիկ և մեծ լինել :

Յառաջդիմութիւնն , Տեառք և Տիկնայք , ինչպէս խառն յառաջ կ'ըսէի , մարդկային ընկերութեան կենաց անհրաժեշտ մի պայմանն է . մարդկութեան համար՝ յառաջդիմել կը նշանակէ ասորիւ : Յառաջդիմութիւնն մարդկութեան բարոյական մի օրէնքն է , ինչպէս որ մարմնոյ աճումնն նորա Ֆիզիքական օրէնքն է . աշխարհ հարկ է որ շարժի բարոյապէս , ինչպէս կը շարժի նիւթապէս : Այն Մատն՝ որ միջոցին մէջ թաւալող լուսեղէն մարմնոց ազդած է իւրեանց շարժումնն յաւէրժական , որ մշտնջենաւոր մշմամբ զարբանեակն առ մոլորակն կը վարէ և զմոլորակն առ արեգակն , որոյ ազդած ներգործութեամբն ակեաց մակընթացութիւնն անվրէպ ի ծովեզրն կը դիմէ և մագնիսն ի հիւսիս կը դառնայ , այն Մատն մի շարժման օրէնք դրած է նաեւ մարդկութեան վերայ , մի անդուլ մղումն տուած նմա , և մի նսլատակ սահմանած . այդ նսլատակն է կատարելութիւն , և այդ շարժումնն կ'անուանի Յառաջդիմութիւն :

Այո՛ , կը շարժի մարդկութիւն , և Հնդիկ քաղաքակրթութեան կը յաջորդէ Եգիպտականն , Եգիպտականին՝ Յունականն , Յունականին՝ Հռովմէականն , Հռովմէականին՝ Եւրոպականն . միշտ շարժումն , յար ձգտումնն դէպ ի տեսլականն . և այս տեսլականն տակաւ կ'իրականանայ , և մարդն քանի կը մերձի առ արեգակն կատարելութեան , ա՛յնքան եւս իւր շուրջն մէն բանի լրջանալն , գեղերփնիլն ու հեշտանալն կը տեսնէ :

Վա՛յ , սակայն , այն ազգին որ կանգ կ'առնու՝ անհաղորդ այս տիեզերական շարժման . յառաջդիմութեան բանակն չկասիր՝ երբ ոմանք կը դեղեւին կամ կ'իյնան . կը կոխէ դնոսա և կ'անցնի՝ ի դիմել անդուլ և ի տիրել նոր և անծանօթ աշխարհաց :

Մին յերկոցունց . դիմել զուզընթաց կամ կորնչել ոսնակոխ . չի՞ք միջոց :

Գառն իրողութիւն մի է անշուշտ որ Հայն գժբախտաբար այս բանակին յառաջընթաց զինուորներէն չէ , թէ նա անմասն է այն շնորհներէն զոր կը վայելեն յա-

ռաջդիմութեան դրօշակիր ժողովուրդք , թէ նա կը տառապի և ընդ քարը կ'ածի թշուառութեան մերկ ու տխուր անազատին մէջ՝ մինչ այլ ազգք Աւետեաց երկրին աշխարհակալութիւնն են սկսած , թէ նա մի խաւարային բանտի մէջ իւր շղթայից վերայ գլուխն դրած կը ննջէ թմբեալ , մինչ այլք զուարթ կը կայտուեն , աղատը՝ լուսաւորք և երջանիկք :

Գառն իրողութիւն մի է թէ ինչ որ այլ ազգերու ոյժն ու փառքն կը կազմէ՝ կը պակսի մեզ համար . թէ ինչ բարիք որ դարերու վաստակն արդիւնաւորած է , ինչ բարիք որ իննեւտասներորդ դարուն յառաջդիմութեան գումարն կը կազմեն՝ մեզ համար տակաւին գրեթէ գոյութիւն չունին : Լոյսն կը պակսի հայ մտքին մէջ , սէրն՝ սրտին , և գործին՝ ձեռաց մէջ : Եւ հայ մի՛ լոկ կարծեք այն սակաւաթիւ մասնն որ գէթ եւրոպական հանդերձին տակ կը ծածկէ զիւր մերկութիւնն . այլ դարձո՛ւ աչերդ յԱսիա , և տե՛ս անդ Հայն իւր բովանդակ մերկութեան , տկարութեան , անարգութեան և թշուառութեան մէջ . վայրենւոյն քուրջերովն ծածկեալ , և իւր ճակատագրին բեռան տակ ծուած ապերախտ հողոյ մի վերայ , կը թրջէ զայն իւր քրտամբք , և հողն գէթ իւր օրապահիկն նմա շնորհել կը զլանայ . վի՛հ անհուն նորա և քաղաքակրթութեան զաւակին մէջտեղ . մին գերին է նիւթոյն , միւսն տէրն է նորա . մինչ սա կ'ապրի , նա չմեռնել կը ձգնի . անհաղորդ մտքի և սրտի կեանքէն , մարմնոյն կեանքն լոկ օր առ օր կը ձգնի խլել մահուան ձեռնէն :

Ահա՛ Հայութիւնն . ո՛չ , չնսեմացնեմ պատկերն , այնպէս չէ՞ . է՛հ , եթէ ապրելոյ համար շարժիլ և յառաջդիմել հարկ է , ի՞նչ է վախճանն այս մեռելատիպ անշարժութեան . երբ ազգ մի յառաջդիմութեան օրինաց դէմ մեղանջէ , ի՞նչ կը լինի պատիժն բնութեան դէմ գործուած սոյն յանցանքին . — կորո՛ւստ :

Քանզի հզօրն կ'ընկճէ զտկարն . խաւարն չկարէ ապրիլ Լուսոյն քով . Յետադիմութիւնն չկարէ միաբանել



Յառաջդիմութեան հետ . սկսեալ է որ ո՛վ որ տկար է մտքով՝ հպատակի այնմ որ հզօր է այնու , ո՛վ որ անզօր է սրտիւ՝ տեղի տայ այնմ որ զօրաւոր է այնու . ա՛յս է բնութեան օրէնքն , անվրիպելի՛ , անողո՛ք :

Ո՛վ և ի՞նչ կարող է փրկել զհայութիւնն կորստեան անդնդէն . ո՛վ և ի՞նչ կարէ փրկել հայութեան ապագայն և զնա եւս զինուոր գրեւ յառաջդիմութեան . — դպրո՛ց .

Այսինքն այն վայրն ուր յառաջդիմութիւնն իւր յաղթանակաց գումարն կը դնէ յաւանդ ի վայելս ապագային , այն վայրն ուր նոր սերունդ մի կ'երթայ ծծել ճշմարտութեան այն հիւթն զոր դարերու քիրտն գոյացուցած է . այսինքն այն արգանդն բարոյական կենաց ուստի հարկ է որ ամէն սերունդ դուրս գայ միւսանգամ , որպէս զի կարո՛ղ լինի բովանդակ կրել յինքեան կենաց ամէն տարերքն :

Կարէ ապա յուսալ Հայն , քանի որ սոյնօրինակ հանդէսներ կ'ունենայ իւր տարեգրոց մէջ :

Ապրի՛ք դուք , Գառլգիւղցիք , դուք որ յառաջդիմութեան տաճար մի գիտէք կանգնել և պարծիլ ի նա . ստուգիւ նա ձեր փառաց ամէնէն սկերճ և անկործան կոթողն է : Գպրո՛ցք , մէն մի լուսամուտներ նոքա Հայոյն խաւարապատ բանտին մէջ բացուած , առ ի մուտ տալ անդր երկնից լուսոյն և օդոյն կենսաւէտ . քանի՛ շատ լինին նոքա , ա՛յնքան շունչ կ'առնու և կ'ողբերի խաւարի այդ կալանաւորն չուառ , այնքան կը ժմտի նմա յոյսն , և ա՛յնքան կը լուսաւորի յուսածիծաղ իւր ապագային հորիզոնն մթադին :

Այո՛ , Հայեր , յառա՛ջ , մի՛շտ յառաջ . յառա՛ջ ի լոյս , ի կեանս . զայս կը գոչէ մեր շուրջն ամէն բան , բնութիւնն , դարք , ազգերն . Եւրոպա , համակ լուսով ողողուն , մեր առջեւէն կ'ընթանայ լուսաշաւիղ հետք մի գծելով մեր առջեւ . օ՛հ , յառա՛ջ Արուեստից համայն թեւերովն , Գիտութեանց համայն զօրութեամբն յառա՛ջ . . . . :

Թ

### Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ն

( Խօսեցեալ է հանրիւի պարգեւաբաշխ . Արտ . Հարժ . Գարգիւղն )

1876 Օգոստոս 1

Գեր . Ս . Հարք , Տեարք և Տիկնայք ,

« Գործ մանաւանդ քան խօսք » , կը գոչեմք միշտ . և արդար է այս աղաղակն , երբ կը դիտեմք թէ մեք Հայերս յաճախ խօսիլ միայն գիտեմք , իսկ գործել՝ դուռն ուրեք , գովել բայց ո՛չ նմանիլ , մատնանիչ ընել զուղին մեծաճայն , բայց ո՛չ քայլ առնուլ դէպ ի նսպտակն :

Սակայն ոչ նուազ ճշմարիտ է թէ խօսքն եւս կարեւոր է գործոյն և յաճախ նորա պատճառն . գործող ձեռնն մտքին կը հնազանդի , և խօսքն է որ զմիտքն կը լուսաւորէ , կը համոզէ և կը դրդէ : Երկինք կը գոռան նախ քան զանձրեւելն . Երրորդութիւնն խորհրդաւոր ինքն յինքեան կը խորհրդակցի յառաջ քան զկերտելն զմարդ . և եթէ անհրաժեշտ չլինէր խօսքն մարդկային քաղաքակրթութեան գործոյն , Նախախնամութիւնն , որ ոչ ինչ ըրած է անօգուտ , և որ ամենուրեք միջոցին և նսպտակին մէջտեղ խորհրդաւոր ներդաշնակութիւն հաստատած է , անպէտ կարողութիւն մի չպիտի տայր մարդոյն :

Գաղափարաց բաղխումէն կը ցայտէ լոյսն , ինչպէ՛ս փայլակն դուրս կը սլանայ ամպոց ընդհարմանէն :

Ներեցէ՛ք ինձ ապա որ ցարդ ըսուած խօսքերուն վերայ մի քանի բառեր այլ ես յաւելցնեմ, որք թերեւս բոլորովին անօգուտ չկորնչին : Չկայ տկարագոյն շնչիկ մի որ մթնոլորտին մէջ մի ալեակ չհանէ :

Յառաջդիմութիւնն մի օրէնք է նախախնամական . դաստիարակութիւնն մի խորհուրդ է , ինչպէս ամէն ծնունդ . հոս միտքն զմիտքն կը ծնանի . դպրոցն այն խորանն է նուիրական ուր այդ խորհուրդն կը կատարուի . քահանայ մի կայ սպասաւորող այդ սեղանոյն . դաստիարակն է այն :

Դաստիարակն մի մեծ մարդ է , նաեւ սրբազան . ներկայ քաղաքակրթութիւնն կը համառօտէ յինքեան , կ'երկնէ զապագայն :

Նոր դասարանի սեղանին գլուխն նստած կը տեսնեմ զվարժապետն , շրջապատեալ իւր աշակերտներէն , սիրուն՝ անմեղ մանուկներ որ , խելացի և մեծաբաց աչքերով նորա շրթներէն կախուած , կը թուին նորա մէն մի բառն ազահելով ճաշակել իրրեւ մտաւոր մանանայի մի հատեր , և ի մէն մի բառ իւրեանց դիմաց վերայ կը սփռի նոր ու անծանօթ ճշմարտութեան մի փայլմամբն լուսաւորեալ իւրեանց մատաղ իմացականութեան ճառագայթումն , կամայ ակամայ կը յիշեմ , ներքէ՛ Մստուած եթէ կը մեղանչեմ , կը յիշեմ զՅիսուս ի վերնատան , երբ կենաց հացն կը ջամբէր իւր աշակերտաց և երկնային ճշմարտութեանց քօղն կը մերկանայր նոցա հիացեալ հոգւոց : Բայց միթէ և Յիսուս մի գերագոյն վարժապետ չէ՞ր մարդկութեան . քաղցր էր իւրեան վարդապետ կոչել զանձնն . կը սիրէր նա մանուկներն : Ասեմ դասագիրք մի տուաւ մարդկութեան ձեռնն , յորում պարտի նա հեգել , ընթեռնուլ և ջանալ ի միտ առնուլ կենաց բանն :

Առնուլ մի մանուկ , գրեթէ մի նիւթական էակ , շունչ փչել ի նա և գործել զնա էակ բարոյական , նորա մտքին մէջ , թուղթ սպիտակ , — բայց երբեմն առտնին նախապաշարմամբ աղտոտած — դժուարութիւն մի ա-

ռաւել , զի հարկ է նախ մաքրել զայնս , — գրել այն ճշմարտութիւններն որք պարտին լուսաւորել զինքն իւր ճակատագրին լցման մէջ , նորա սրտին մէջ բնութեան և մօր նետած առաջին սերմունքն բեղմնաւորել իւր քրտամբ , ջանալով ջնջել յուրներն , — զի յաճախ ճարտար դաստիարակութիւն մի կը սրբագրէ նաեւ բնութեան թերութիւնքն — , նորա հոգւոյ կոկոնն փթթեցնել , բանալ լուսոյ , բարւոյն , գեղեցկին , և վերջապէս , մանկաբարձ վեմ , ծնուցանել ի լոյս բերել մտքեր ու հոգիներ , այս է իւր պաշտօնն փափուկ , վեհ և սուրբ :

Ի՛նչ խորհրդաւոր վայրկեան է այն ուր մանկան մի շրթներն առաջին անգամ կ'արտասանեն այ՞ և քէն . կը թրթռայ դաստիարակին սիրտն . մի նոր հոգի կը մտնէ բարոյական աշխարհին մէջ . արտասանել այդ գրերն՝ ազատիլ է . ո՛ւստի . — խաւարէն , անդունդէն , մահէն . ո՞ դիտէ , ի՛նչ պիտի լինի այդ հոգին . — Հոմե՞ր , Սոդո՞ն , Կութթենպօ՞րկ , Գոլումպօ՞ս . — գաղտնիք , խորհո՛ւրդ . բայց ամէն բան կրնայ լինել , ամէն բան . դպրոցն յի ի է ապագայներով , և այդ քառսէն՝ զորով կը գրգայ դաստիարակին հոգին՝ աշխարհներ դուրս պիտի գան լուսանիւթ և կենսախայտ որ սիտի տիրեն միջոցին :

Բարձր է այս պաշտօնն , ուստի և դաստիարակն իւր նմանեաց շատերէն մտքով և սրտով բարձրագոյն մի անձն է , ապա թէ ոչ չկարէ արժանաւոր կերպիւ կատարել զայդ պաշտօնն :

Եւ քանի՞օն դժուարին . դաստիարակութիւնն մի աննկուն արիութեան և փափուկ հոգւոյ գործ է . ամէն որ շրմուռնէ թէ ի՛նչ դժուարութիւն կայ տհաս և խակ մտքերու հետ խօսելոյ մէջ . պէտք է մանուկ լինել նոցա հետ , խոնարհիլ մանկան մտաց աստիճանին , զգուշանալ մի վրէպ , մի թիւր կարծիք վրիպեցնելէ շրթներէդ կամ անդէպ շարժման մի օրինակն տալէ . — սխալն նոյնժամայն տղուն մեղրամովսի սէս փափուկ մտքին մէջ

կը տպաւորի, և անպատշաճ շարժումն իսկ և իսկ կ'օրինակէ մանուկն, հայելի կենդանի — զգուշանալ խըրտուցանելէ զմանուկն, էակ քնքոյշ և դիւրաբեկ, հայրական ազիք ունենալ նորա համար, զուարթ լինել նոյն իսկ երբ վիշտ մի կը կրես հոգւոյդ մէջ, ձանձրոյթ չճանչել, երկրորդել, երրորդել, տասներորդել անմըուունչ և գրեթէ գերմարդկային երկայնամտութեամբ մի, անձնուիրիլ, տալ լոյսդ, տալ հոգիդ, տալ նաեւ կեանքդ՝ քրտանցդ մէն մի կաթիլին և թորերուդ մէն մի շնչոյն մէջ . ահա՛ այս գնով այն անկերպարան էակն՝ որ մանուկ կը կոչի՝ կը լինի մարդ՝ այսինքն էակ բարոյական :

Եւ յետոյ, երբ իւր վաստակալից օրն յանգ կը հանէ, դաստիարակին համար դեռ հանգստեան ժամն չհնչէ . մինչ այլք թատերց կամ սրահից մէջ հաճոյից բաժակով կ'արբենան կամ քնոյ բազկաց մէջ օրուան խոնջութիւնքն կը մոռնան, հարկ է որ նա, աղօտ կանթեղի մ' ի նշոյլ, լռեցնելով բնութեան ձայնն որ հանգիստ կը խնդրէ, կքած գրասեղանի մի վերայ, գրէ կամ թարթափի գրքի մի թերթերուն մէջ . քանզի պէտք է որ ուսուցիչն դիտնայ, դիտնայ այնքան աւելի որքան կարելի է . պէտք է որ ինքն, մեղու ժրաջան, հազար ծաղկէ քաղելով կազմէ այն մեղրն գիտութեան զոր մանուկն առձեռն պատրաստ կը գտնէ դասատուին շրթանց վերայ :

Փոխան լուսոյն զոր կը սփռէ զիւրեւ, փոխան այն անհուն բարեաց զոր կ'ընէ մարդկութեան, փոխան իւր կենաց զոհոյն, իւր փառաց զոհոյն, — զի ամէն այլ ասպարիզի մէջ կարէր փայլել նա գերափառ, եթէ նախամեծար չընտրէր դպրոցի շորս պատերուն և մանկական աշխարհին խոնարհ ու համեստ կեանքն, — փոխան այս ամէնուն, կ'ըսեմ, ի՞նչ կը խնդրէ դաստիարակն . — Ոչինչ . — օրավաչիկ մի՛ մինչ կենդանի է, գերեզման մի՛ երբ կը մեռնի, յաճախ երիտասարդ : կը գտնէ՞ . — Ո՛չ ամենուրեք, ո՛չ միշտ :

Բա՛բէ, ինքն որոյ բովանդակ կեանքն բարերարու-

թիւն մի է անկշռելի, ինքն, յառաջդիմութեան մարտիրոսն, ինքն որոյ համար ամէն հատուցումն փոքր է և աննշան . . . :

Պէտք չէ որ զարմանայք, Տեաքք իմ և Տիկնայք, եթէ այս խօսքերն կ'արտասանեմ աստ այս հանդիսիս մէջ . զի ո՞ր այլ հանդիսի մէջ կարէի ըսել զայնս, և դաստիարակութեան մեծ և կնճռալից խնդրոյն մէջ ո՞ր այլ կէտ աւելի կարեւոր քան դաստիարակի խնդիրն : Ահա սոյն նախատակաւ համարձակեցայ այսօր սոյն խընդրոյն վերայ դարձնել ձեր ուշն, և Ազգին :

Ընդհանրական տրտունջ մի կայ մեր մէջ արժանաւոր դաստիարակաց նուազութեան վերայ : Ստուգիւ այնպէս է . արժանաւոր դաստիարակք սակաւազիւտ են յոյժ . իսկ դաստիարակուհի դեռ չճանչեմ : Ո՞յր է մեղ . — Ազգին :

Երբ տգիտութիւնն դաստիարակին արդէն իսկ տարժանելի ուղին կը ճգնի եւս առաւել փշաւէտ յարդարել, երբ տգիտութիւնն կը յամառի պաշտօններու բարձրագոյնն ամէնէն արհամարհն ընել, և զվարժապետն՝ որ ոչ միայն իմացականութեան ազնուականութիւնն ունի որ յոյժ առաւել կ'արժէ քան զոսկեզօծ ազնուականութիւնն, այլ և բաշխիչ և աղբիւր է դոյն ազնուականութեան, զվարժապետն, կ'ըսեմ, թողուլ դեգերիլ ընկերային սանդղան ստորին աստիճանաց վերայ, երբ տգիտութիւնն սրբապիղծ գոռոզութեամբ կը պահանջէ որ ծուկն դնէ իւր առջեւ լուսոյ քահանայն, երբ վարժապետն, նուազ բախտաւոր քան զգործաւորն որ ի վերջ շարթուն կ'առնու իւր թոշակն, ստիպուած է յաճախ (այսպիսի շատեր կը ճանչեմ) մի դառն մտածմամբ ընդհատել զիւր դասն, զի մինչ ինքն հոգւոյ հացն կը ջափրէ իւր մատաղ սաներուն, կը խորհի թէ իւր զաւակունք մարմնոյ հացէն կը պակասին, և երբ յաճախ և շատ տեղ (ընդհանուր կերպիւ կը խօսիմ) մի կիրք՝ մի անձնական նկատումն կու գայ յանկարծ մի պարկեշտ և օգտակար դասատուի կացութիւնն հինի

ի վեր տասպալել ի մի վայրկեան , ձեզ կը թողում դատել թէ ինչ քաջալերիչ բան կ'ունենայ դասատուութեան ասպարէզն յինքն ձգելոյ և յինքեան պահելոյ համար տաղանդն և արժանիքն :

Սահմանադրութիւն մի կը զատէ զմեզ այն թուակառնէն ուր Կիւլիբայ Պօղոս և Յովհան վարժապետ յաքսոր կ'երթային իւրեանց կրօնական կարծեաց համար , և հայ ամիրայք նօթի ֆէշտամալճեանին կը հարցնէին թէ ի՛նչ կը սնանին յերկիրն Ենոփք և Եղիա : Անտի և այսր մի մեծ քայլ առած եմք , անշուշտ . այսօր մի ազգ եմք սահմանադրական . բայց հայ դասատուութեան վիճակն դեռ կարի տխուր է և դառնալից . դեռ մեր մէջ դաստիարակն մի Պրոմեթէոս է որ կը պատժուի , քանզի երկնից հրովն զմեզ կենդանացոյց :

Ահա սորա համար է որ արժանաւորներէն բազումք չիշխեն մօտենալ . արիագոյնք ընդ հուսով կը լքանին և տեղի կու տան , և ասպարէզն կը մնայ անպիտաներուն :

Մի մեծ խնդիր է այս , խորին ուշոյ արժանի :

Գեռ ոչինչ խորհած եմք իրրեւ միջոց արժանաւոր դասատուաց թիւն յաւելցնելոյ . բնա՛ւ բարւոքում մի չեմք մտածած դասատուաց բախտին , չեմք խորհած դնել զնոսա այն աստիճանին մէջ որում արժանի են , և վարժապետական դպրոցի միայն անունն գոյութիւն ունեցած է մեր մէջ :

Դաստիարակներ պէտք են մեզ և դաստիարակուհիներ , որոց միտքն լի լինի լուսով և սիրտն ազնիւ և մեծ զգացումներով , բնտիրք յընտիրս մարդկան , զի նոցա միտքն պիտի կազմէ մեր զաւակաց միտքն , և նոքա իւրեանց հոգին պիտի շնչեն մեր մանկանց կրծոց մէջ :

Ամէն ջանք ամուլ է , երբ դաստիարակն յուր է . պիտի հաշմէ մանկան միտքն , պիտի խեղէ նորա հոգին , պիտի ամէջ նորա կարողութիւնքն , և մանուկն մի բարոյական հրէջ պիտի լինի :

Լաւ դաստիարակներ պիտի յառաջ բերեն լաւ հայ-

րեր և մայրեր որք պիտի օգնեն դաստիարակաց և նոցա չիրցածն պիտի լեցնեն , — քանզի պէտք չէ մոռնալ ծնողաց և մանաւանդ մօր գերագոյն ազդեցութիւնն բարոյական մարդոյն կազմակերպութեան վերայ . — և այն ատեն պիտի լուծուի դաստիարակութեան խնդիրն :

Մի լաւ դաստիարակ վեց սերունդ կ'ազնուացնէ , կը յօրինէ . զի սերունդք իրրեւ դետի մի ալիքներ կ'անցնին իւր առջեւէն , և նա իւր շունչն կը փչէ նոցա ամէնուն . մշտատեւ գարուն մի ունի նա իւր առջեւ . — և այս իւր բախտին՝ յաճախ սեաւ՝ երկնային երեսն է . — գերագոյն մշակն է , քաղաքակրթութեան գերագոյն գործաւորն :

Յարգե՛մք ուրեմն զայն , բարձրացնե՛մք զայն , դիւրեմք իւր վիճակն , երախտագէտ լինիմք առ այն . Ժողովրդեան մի քաղաքակրթութեան բարձրութեան չափն կը ցուցնէ այն պատուանդանին բարձրութիւնն որոյ վերայ կը դնեմք դաստիարակին աթոռն :

Իսկ ես , զոր կը ճանչէք , որ վեց տարիներէ հետէ , թաղիս մանկուոյն տուած եմ լոյս իմ մտքէս , զգացումն իմ սրտէս և կեանք իմ կեանքէս , որ նոյն իսկ սոյն վարժարանին գոյութիւնն երկնող առաջիններէն մին եղած և , երբ այլք դրամով , ես գրով և խօսքով — կը վկայեն արդարք — ոչինչ նուազ նպաստած եմ այս փրկութեան յարկին կանգնման , և այսօր սոյն հանդիսիս մէջ՝ ուր ընծայուած արդեանց մէջ մի կարեւոր մասն ունիմ՝ առանց ցաւոյ չէ որ կը խօսիմ , կը լռեմ և կը կրկնեմ մեծին Հիւկոյի սա խօսքն . « Ապագայն դաստիարակինն է : »

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԵՑՈՒԱԾ ՄԻ ՅԵՏԿՈՅՍ

Ա

Ահա 1870 տարին այլ, իւր վերջին ողջոյնն տալով աշխարհի, իւր թեւերն կը բանայ ի յաւիտենականութիւն անդր թռչել: Գնաց նա, ո՛չ եւս է. երէկ ներկայ էր և այսօր անցեալ: Սակայն անցնող տարին այն նշանաւոր ու հաղուադիւտ տարիներէն մին էր, որք՝ աշխարհի վերայէն իւրեանց անցած ատեն՝ ոտից անջընջելի նշաններ և մարդկութեան տարեգրոց մէջ անմուռանալի յիշատակներ կը թողուն: Յիրաւի 1870 ի պատմութիւնն այնքան լի է տարօրինակ անցքերով, զարմանալի դէպքերով և, ամէնէն աւելի, այնքան ճոխ ու առատ մեծամեծ դասերով, որ արժանի է դարուց յիշողութեան մէջ յաւերժ կենդանի մնալոյ: Ո՛չ, չպիտի մոռացուի երբէք 1870 թուականն. նա անցելոյն մութ վարագուրին ետեւէն պիտի նայի միշտ ապագայից մէջ, իբր աչք մի բոցավառ որ կը շողայ ի խաւարի. ո՞վ պիտի կարէ ջնջել ինչ որ այնքան խորունկ տառերով գրեց նա աշխարհի ճակտին վերայ, և սրբել անհետացընել այն կետքերն որք ընդ երկա՛ր այս մեծ ու անհեղասատ կեղեղին անցն պիտի քարոզեն:

Բ

Անցաւ 1870 տարին, օրուան մի նման որ կը ծագի սլայծառ ու զուարթ և կը մարի մրրկայոյզ ու ահաւոր: Ստուգիւ զորսի աղէտք կուտեց աշխարհի վերայ թըշուառութեամբ բազմածնունդ սոյն տարին, և ինչպիսի աբիւնոտ հետքեր թողուց: Տեսէ՛ք, ինչ դրից մէջ աշխարհ իւր հրածեչտն կ'ընդունի, և իւր յեախն շողն՝ ա՛յնքան տարբեր յառաջնոյն՝ ինչ աւերակներու վերայ և ինչ նախճիրներու մէջ կ'սպառի: Նսեցէ՛ք. օրհասական վիրաւորաց հոնդիւններն, այրեաց ողբերն, որդեգիրկ ծնողաց կոծերն և սովալլուկ թշուառաց ոգեվար հեծութիւններն են այն արիւնային ու քստմնելի հանդիսին երգերն, զոր սլատերազլի հրէչն նոր տարւոյն գալլատեան սլատրաստեց: Ապագայ սերունդք, զարմանալով միանգամայն որ եօթանասուն դարուց փորձառութեան դասերովն իմաստնացեալ, նախորդ անթիւ սերնդոց իմացականութեան արդիւնքներովն ճոխացեալ, քրիստոնէութեան՝ փիլիսոփայութեան ու գիտութեան ճառագայթներովն չըջապատեալ, հուսկ ուրեմն՝ անխոնջ յառաջդիմութեան ա՛յսքան դարերու յաղթանակաց փառքն ու աւարօք պերճացեալ իննեւտասներորդ դարն, իւր չըջանն լրացնելոյ մօտ, սլատմութեանց մէջ հազուադէպ մի գազանային կուռոյ կրցած է հանդիսատես լինել լռիկ. կրցած են հանդիսատես լինել ազգք և տէրութիւնք երկու մեծ ազգերու, մարդկային գերդաստանին երկու գօրեղ անդամոց աղետալի մենամարտին, և անխոռով աջօք տեսնել եղբայր արեան մի ուղիսինահոս ու դիակնալիր թաւալին՝ իբր այն թէ Հոսեոսի ընթացքն դիտէին, զարմանալով, կ'ըսեմք, ընդ այս ապագայ սերունդք, անիծիւք պիտի յիշեն այն մարդոց անուններն որք պատճառ եղեն ա՛յսքան անհուն չարեաց, և յի. դարու քաղաքակրթութեան ճակտին վերայ ա՛յսքան մեծ կեղտ մի դրոշմեցին: Առնկամար պիտի լսեն

ապագայք Նարոլէոն Գ. ի անունն, և բռնաւորք իւրեանց գահին վերայ սլատի դողան. ոտսկումն սլատի ազդէ նաեւ յաղթողին անունն. ո՛չ որ պիտի նախանձի այն փառաց դամիւններուն որք բիւրաւոր մարդկային էակաց արեամբն ու սրտասուզքն են շաղախեալ, և ո՛չ որ պիտի տենչայ յիւր գլուխ դնել այնպիսի թագ մի որ իւր շողիւնին տակ ա՛յնքան անիծող սայրասուր լեզուներ կը ծածկէ՝ կրծելոյ համար յարածամ սլակաւոր գլուխն: Երկու մարդոց փառասիրիկ ցանկութիւնն ինչ սոսկալի տեսիլ մի բացաւ յաջորդ դարերու սլակուցեալ աչաց առջեւ. և սակայն ինչ մեծ դաս նոցա որք փառքն ու մեծութիւն ժողովրդոց արեան և թշուառութեան մէջ կ'որոնեն: Միայն փառասիրութիւն ըզս միւսն կը կործանէ. և երկօրին եւս, իւրեանց նսլատակ ունենալով փառքն, տարբեր ուղիներով, իւրեանց ճանասարհին ծայրն ամօթ ու դատասպարութիւն կը գտնեն. մին կայսերական գահոյից բարձրէն գերութեան վճին խորն թաւալլոր կործանելով, իսկ միւսն կայսրութեան այնպիսի թագ մի իւր գլուխն անցընելով, առ որով անշուշտ չպիտի շառագնի Ատտիղայինն: Այսպէս անիրաւ փառքն նոյն իսկ փառասիրին կը նենգէ, որ, ճրագին շուրջն թրթուացող թիթեռան նման, նորա բոցերուն ճարակ կը լինի:

Գ

Սակայն գողցես թէ հարկ էր Գաղիոյ, ինչպէս ըսաւ ժիւլ—Ֆալր, այս տխուր ու աղետալի փորձն, որպէս զի այլակերպեալ դուրս գայր նա, ազատած բռնաւորի մի դժնդակ լծէն և տէր իւր ճակատագրաց: Կայսրութեան անկումն և Գաղիական Հասարակապետութեան վերականգնումն այս աշխարհաւեր կուռոյն այն երկու մեծ ու երջանիկ հետեւանքներն են, որ միայն պիտի կարեն Գաղիոյ կրած ծանր հարուածոց դառնութիւնն ամոքել, և քաւել միանգամայն քաղաքակրթութեան դէմ գործուած ա՛յնքան ոճիրներն:

1870 տարին, մոլեգին պատերազմի մի համայնա-  
ծախ բողոքուն և անլուր ու քստմնեցուցիչ անգթու-  
թեանց տեսարանն իւրեան յաջորդելիք տարիներուն  
սոսկման ներկայացուցած ատեն, նաեւ գիւցաղնութեան  
ու հայրենասիրութեան հրաշալեաց ցարդ անծանօթ-  
հիասքանչ պատկեր մի պիտի ընծայէ նոցա ակնածու-  
թեան ու զարմանաց : Արտի տեսնեն նոքա զՔաղիա ,  
մեծ , փայլուն ու փառաւորն Քաղիա , երեսուն աւուրց  
մէջ իւր կործանման անդնդին եզրն հասած , անդէն ու  
օրհասական , կատաղի թշնամիներու հրոսակներէն հե-  
ղեղեալ , իւր գիւղակէն մինչեւ իւր լայնածաւալ մայ-  
րաքաղաքն , զուրկ պաշտպանութեան ամէն միջոցներէ ,  
որս մի պատրաստ յաղթողին ճիրանաց տակ , որ իւր  
տկար որսին վերայ յարձակող արծուոյ մի վտանհու-  
թեամբ կը խոյանայ յայն , պիտի տեսնեն զՔաղիա առ-  
ջի օրն այս անյոյս կացութեան մէջ՝ արդէն իւր անկման  
հանդիսատես ժողովրդոց վայն ու կոծն իւր վերայ հրա-  
ւիրելով , և հետեւեալ օրն , իրր փիւնիկ իւր մոխրէն  
վերակենդան , յոտից ցգլուխ սպառազէն , վրէժխնդիր  
ուրուականի մի նման իւր ոստիին դէմ տնկուած , վրէժ  
ու մահ գոռալով նորա դէմ , մի առ մի նորա ճակտէն  
յաղթութեան դափնիներն խլելով և պակուցանելով  
զայն իւր դէմն ելած անակնկալ դիմակալութեան և ու-  
տից տակ բացուած անկարծելի վհերուն վերայ : Հայ-  
րենասիրութիւն . ո՛հ , ի՛նչ հրաշքներ չգործէ նա երբ  
մարդկան սրտերու մէջ իւր սրբազան կրօնին կը վառէ .  
արիութիւն ու կորով կը շնչէ ամէն հոգիներու , ամէն  
ինչ ի գէն կը շրջէ անգէն ձեռաց մէջ , բոց ու ծծումբ կը  
ժայթքէ հայրենեաց ծոցէն բռնաւորաց բանակներն ի  
լափել , և հուսկ ուրեմն , կա՛մ իւր որդիներովն Հայրե-  
նիքն կը փրկէ , կա՛մ նորա փլատակաց տակ և գայնս  
կը թաղէ : Քաղիա , հայրենասիրութեամբ և ազատու-  
թեամբ ոգեւորեալն Քաղիա , որ վտանգի մահազոյժ  
ժամուն մէջ ինքզինքն կը ժողովէ , ի ձեռն կ'առնու իւր  
բախտին սանձերն , յոտն կ'երնէ միահամուռ , իրրեւ մի

մարդ , իւր վերայ ծանրացեալ թշուառութեանց բե-  
ռան տակէն , նախ հաշտութեան ձեռն կը կարկառէ իւր  
ոխերմին , և երբ կը մերժուի այն , սոցն՝ կոտորածն ու  
աւերն առ ոչինչ գրելով , կ'ուխտէ մինչեւ կենաց վեր-  
ջին շունչն և արեան յետին շիթն պատերազմի միայնակ  
թշնամին վանելոյ կամ դիւցաղնական մահուամբ մեռ-  
նելոյ անսպան որոյմամբ , և կը յաջողի , ի մեծ զարմա-  
ցումն տիեզերաց , Ծ—Գ ամիս Բարիզի պարսպաց առջեւ  
կասեցնել յարձակման հեղեղն , որ ի զուր կատաղու-  
թեան փրփուրներով նոցա հիւներն կը ծեծէ ու կը փշրի ,  
այս Քաղիա , կ'ըսեմ , յաղթող կամ յաղթեալ , միշտ  
մեծ պիտի լինի , իւր պարտութեան մէջ անգամ փա-  
ռաւոր և իւր գերեզմանին մէջ վսեմ : Հիացմամբ հան-  
դիսատես եղեն ու կը լինին հին և նոր աշխարհաց բո-  
վանդակ ազգերն երկրակալութեան ողբոյն դէմ հայ-  
րենասիրութեան ողբոյն այս նորօրինակ մենամարտին ,  
մարդկութեան հորիզոնին վերայ այս նորատեսիլ երե-  
ւութիւն , որ ժամանակաց յաջորդութեան մէջ Քաղիոյ  
անմահ փառքն պիտի կազմէ : Արպիսի զարմանալի հա-  
կադրութիւնք ի լոյս ընծայեց այս մեծ դէպքն . փառա-  
մուլ քաղաքագիտաց ու նենգաւոր մատնչաց քով կը  
տեսնուին ճմարիտ հայրենասէր ու աննեղ քաղաքա-  
գէտներ , վեհանձն և արի՛ պաշտօնեայններ : Ամսակթ-  
թա , Ժիւլ Ծափը , մրրկայոյզ գիւերոյն աղջամղջին մէջ  
ճառագայթող փայլակներ , այս անձինք , որոց մեծու-  
թիւնն իւրեանց առաջն առնոյ կոչուած վտանգին  
մեծութիւնն եցոյց ակներեւ , պիտի ապրին յաւիտեան  
պատմութեան մէջ , փառք իւրեանց հայրենեաց և նա-  
խանձելի օրինակ ապագայ քաղաքագիտաց և այն ամէ-  
նուն որք ազգերու ճակատագիրքն վարելոյ պաշտօնն  
ունին . . . :

Վերթայ 1870 , բայց այսքան անհուն աղէտը , այս-  
քան մեծ իրողութեանց անմոռանալի յիշատակներ և  
այսքան խորհրդաւոր դասեր կը թողու ապագայից ,  
բայց կը թողու նաեւ իւր յաջորդին ի ժառանգութիւն



պատերազմի հրդեհն դեռ վառ , զի դեռ թնդանօթն կ'որոտայ՝ աւերակ աւերակաց վերայ բարդելով , և դեռ արիւնն լեռներուն ու դաշտերուն մէջէն կ'ընթանայ՝ ընդառաջ յուսալից կեանքեր իւր կոհակաց հետ թաւալելով : Իցիւ լռէին ընդ հուսոյ մարտագոռ աղաւաղակներն , և երկու եղբայր ազգեր , զիրեար փողոտելէ դադրելով , ողջագործին զիրեար սիրով , և իւրաքանչիւրն դառնայր , իւր հայրենեաց գրկին մէջ , խաղաղութեան ու քաղաքակրթութեան քաղցր պտուղներն վայելել , և կամ , եթէ մրցիլ կ'ուզեն , յառաջդիմութեան ասպարիզին մէջ միմեանց հետ պայքարել :

Դ

Բայց սորա չեն միայն սյն դէպքերն որք զ1870 սյնքան նշանաւոր ու անմուանալի ըրին : Վողցես սոյն տարին հաճոյք մի կ'զգայր քաղաքակրթութեան ու յետադիմութեան մէջ տատանելով , քայլ մի յետկոյս՝ քայլ մի եւս յառաջ առնելով : Աստ վայրագ պատերազմի մի գործած աւերակաց կոյտերուն տակ կը թաղուի մի բռնակալ կայսրութիւն , և նոցա վերայ Հասարակապետութիւն իւր եռագոյն դրօշն կը կանգնէ . անդ զինքն անսխալ հրատարակելով երկնից ու քաղաքակրթութեան երեսին թքնող ամբարտաւանութեան ամբարտակ մի յական քթիթ կ'անկնի կը կործանի՝ ազգաց և ազանց ցնծութեան ու ծափերու գոռիւններով : Արծես թէ 1870 տարին գոռող գլուխներն շանթահարող կայծակն ի ձեռին դուրս եկած էր յաւիտենականութեան արգանդէն : Նարոյննեան կայսրութեան հետ Պապական թագաւորութիւնն այլ ոչ եւս է : Այլ անսխալութեան ծիծաղելի վարդապետութեան մի հրատարակումն իննեւտասներորդ դարու ճակտին մուր մի է , կրօնական — աշխարհական իշխանութեան խառնածին հրէշի մի անկումն այլ փառք մի է : Երբէք գէնքերն քան զայս աւելի փառաւոր յաղթանակ մի չէին տարած .

երբէք աշխարհակալ մի նուաճեալ երկրէն ու տիեզերքէն ա'յլքան ովսաննաներով չէր ընդունուած : Իտալիոյ թագաւորն մեծ նախատինք մի սրբեց Քրիստոնէութեան երեսէն , և զայն սարսափելի հակասութեան մի վէէն կորզեց , Հոռովմայ քահանայապետին ձեռնէն խլելով ըզսուր զոր կը կրէր զոյգ ընդ Աւետարանին , և բռնաւորաց երկաթեայ զաւազանին տեղ հոգիներու հովուութեան ցուպն տալով նորա աջն : Մինչ անսխալութեան թեւերով յերկինս բարձրանալ կը կարծէր , անկաւ վրէժխնդիր շանթն յիւր գլուխ և ինքզինքն կայսերաց ու թագաւորաց զահոյից աստիճաններուն տակ գտաւ : Ի զուր բողոքեց , և ոչինչ օգնեցին իւրեան իւր անիծից կայծակներն , և անսխալութիւնն իսկ , որոյ վերայ ա'յնքան ուժով կը յենոյր , շատ տկար ու անհաւատարիմ նեցուկ մի եղաւ իւր զահալլիթման մէջ : Ինչ և է , անկաւ նա , և 1870 նորա մահուան դատակնիքն արտասանեց . չխօսի'մք այլ եւս նորա վերայ , կամ գէթ ա'յնպէս խօսի'մք որպէս վայել է խօսել զլորելոյ մի վերայ : Ար յուսամք որ Հոռովմայ աթոռն բաւական համարելով որքան սղծեց ցարդ զՔրիստոնէութիւն , որքան բռնացաւ հոգիներու և խիղճերու վերայ , որքան խեղդել ջանաց ցարդ ճամարտութեան ձայնն , որքան որումն ու հեռ սերմանեց Քրիստոսի Եկեղեցւոյն անդամոց մէջ , որքան սին փառաց ու մեծութեան գործի ըրաւ կրօնքն , որքան զյառաջդիմութիւն դատապարտեց և միջնադարեան տղիտութեան ու նախապաշարմանց խաւարն ջանաց թանձրացնել , որքան խարեց միամիտ ու պարզ հաւատացեալներն՝ զիւր անձն աստուածային կամաց թարգման և ըստ հաճոյս անիծից կամ թողութեանց բաշխող ցոյց տալով , և հուսկ ուրեմն բաւական համարելով ինչ նողկալի ու ոճրալից դեր որ խաղաց ցարդ մարդկութեան ու քրիստոնէութեան առջեւ , կը յուսամք որ , կ'ըլտեմք , կ'ուշարերի իւր այս անկամանէն , և Աւետարանէն սովորելով զիւր պաշտօն , կը ջանայ զայն ա'յնպէս կատարել և Հոռովմայական եկեղեցւոյն ու քա-

դաքակրթութեան մէջ ի վաղուց ցանկացեալ ներդաշնակութիւնն հաստատել : Իցիւ չխաբէաք մեր յուսոյն մէջ :

Ե

Անցնող տարւոյն տեսարանին վերայէն դեռ մեր աչերն չդարձուցած , տեսնե՛մք թէ ի՛նչ դեր խաղաց անդ մեր Ազգն , և թէ 1870 թուականն մեր ազգային տարեգրութեանց մէջ ի՛նչ էջեր գրուեց , փառաւոր թէ արտասուածութիւն : Բայց ո՞ր տարին երջանկարեք եղած է Հայոյն համար որպէս զի 1870 ն լինէր . էրբ դաղրած են զաւառաց հեծութեան և որոց ձայներն , և ե՞րբ վայրագ հուղկահային հարստահար ձեռնն պահաս եղած է Հայաստանցի Հայոյն գլխէն , որպէս զի զուարթ գէւքով կարենայ վայրիկ մի գէրկինս նկատել : Պատահե՛րքն եկած ամէն լուր՝ զգայուն հայ սրտին վերայ վերայ միշտ նոր վերքեր կը յաւելու , ամէն անգամ նորանոր հարստահարութեանց և ոճիրներու գոյժն բերելով և արագ ու անօրհակսն օգնութիւն խնդրելով զոր դեռ Ազգն պիտի մատուցանէ . . . . Ծոստովանի՛մք , սակայն , որ Ազգն մի նորոգ կազմակերպեալ երեսփոխանութիւն ունեցաւ , և Մարտ 20 ի պետական հարուածով կորուսեալ իրաւունքներն վերստացաւ . և թէ-սկտ դեռ կը գտնուին միայն ամթո՛ւ գրաւելոյ ծառայող երեսփոխանք , բայց հնոյն հետ բազդատմամբ նոր երեսփոխանութիւնն աւելի հարուստ է խորհող զլուսներով և խօսող բերաններով . քայլ մի է այս դէպ ի յառաջդիմութիւն : Իւր նախախայրիքն եղաւ կաթողիկոսութեանց խնդրոյն մի առ ծամանակեայ կարգազրուութիւնն . սակայն յուսա՛մք թէ կարող պիտի լինի աւելի ողջ պտուղներ յառաջ բերել և լիովին պատասխանել երեք միլիոն հայերու ակնկալեաց , որոց բախտն մասամբ իւր ձեռին մէջ է :

Իսկ մեր Ազգին Հոռովմաղաւան մասն տակաւին յերկուս հերձեալ կը յուզի , կը տագնապի , և գեռ

« իրաւունք » գոչող ձայներն չուեցին : Ամբողջ տարի մի վէճն ու պայքարն շարունակեց , և տաճարք սրբա-վայրք թատր եղեն սոսկալի հակառակութեանց , որոյ օրինակն դեռ երէկ իսկ բուռն կերպով նորոգեցաւ : Ատելութիւնն անդր քան զգերեզման իսկ մղեցին , և մեռեալք սկսան սուրբ ու անսուրբ լինել . մի ազգի , մի մօր համարին զաւակներ սոսկմամբ և խեթիւ հայեցան յիւեար , և հասարակաց Հօր տան դռներն միմեանց դէմ փակեցին . ի դուր Վատիկանի շանթընկէց Արա- մաղդն իւր կայծակներն սպառեց այդ ապստամբ գլխոց վերայ որք զայն ծաղրեցին , և , մուրեալ ոչխարներ , փրկութեան անդրթ փարախն չվերադառնալ յամառե- ցան : Բայց նաեւ դեռ Հասուն փառօք յիւր գահ կը բազմի իւր հակառակորդաց ապիկար ճգանց վերայ ծիծաղելով , և դեռ Արեւելեան Հոռովմէական Հայք ան-գլուխ մարմին մի են : Ըստ մեզ այս վերջինք այլ մի հակասական դիրքի մէջ կը գտնուին , և , ցորչափ շարունակէ Հոռովմ իւր հակաբրիստոնէական ու ժէզուիթա-յին քաղաքականութիւնն որ հիննալով իւր նկարագիրն է եղած , անկարելի պիտի լինի « բարեկարգութիւն » աղաղակող ձայներուն լուրին : Պապական եկեղեցին չկարէ խորթ զաւակ մի սնուցանել իւր ծոցոյն մէջ . պարզ է խնդիրն . Հոռովմայ լուծը կամ պէտք է կրել անմառնչ կամ թօթափել բնաւին . չի՛ք միջոց . . . :

Հասարակ

Այլ բաւ է . փակե՛մք 1870 ի որբերգութիւնն տեսնելոյ համար այն նոր Գրե՛ն դր 1871 թուականն կը պատրաստէ մեզ :

1871 Յանվար 1

Ա Կ Ն Ա Ր Կ Մ Ի

1871 Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Ա

Տարի մի եւս կ'անցնի, և արարուած մի եւս կը վերջանայ այն անհուն թատերագութեանն որ դարերու հետ սկիզբն է առած, որոյ մարդկութիւնն է անփոփոխ դերակատարն ու հանդիսատեսն և որոյ վախճանն ծածկուած է յաւիտենականութեան արգանդին մէջ:

1871 թուականն այլ ոչինչ նուազ նշանաւոր հետքեր կը թողու աշխարհի տարեգրութեանց մէջ: Յաջորդ 70 ի փոթորկալից թուականին, մրրկայոյզ քամուոյ մի նման անցաւ աշխարհի ծովուն վերայէն ցխորս ալեկոծելով զայն և երերածուի տատանելով ազգաց և տէրութեանց նաւերն որք ընդ այն կը նաւարկեն: Մի տարուոյ մէջ ռրօյիսի փոփոխութիւնք, ինչ վեր ի վայր շրջուելք, քանի՜ քաղաքական և ընկերային խնդիրներ մի զմիով բարդեալ, որք աշխարհի ներկայն կերպարանափոխ և զապագայն նորանոր յեղափոխութիւններով յղի դործեցին:

Բ

Անցեալ տարին պատերազմին արհաւրաց և արեան ծովու մի մէջէն կը ծագէր: Տիեզերաց մայրաքաղաքն, Բարիզ, հարիւր հինգ օրէ ի վեր վայրագ պաշարման մի ենթարկուած էր. գերմանական ուսմբք մեծ քաղաքին հոյակապ շէնքերն, Բանթէոնն, մուսէոններն և հիւանդանոցներն կը շանթահարէին և, զոյգ ընդ նոսին, նորա բնակիչներն, կիներն ու մատաղ մանկուներն զորս

ստիւն ու հիւանդութիւնք արդէն շարաշար կը տասանորդէին: Եւ սակայն Բարիզ կը զիմակալէր այնպիսի դիւցազնութեամբ մի որ տիեզերաց վարմանքն կը գրաւէր: Կատաղի հրոսակաց հեղեղի մի ներքեւ Գաղիոյ հողն արեամբ և նախճրք ծածկեալ էր, և սակայն հայրենասիրութեան արարչագործ շունչէն կեանք առած մարտիրոսներու լէզէոններ արիարար պատերազմն կը շարունակէին մեռնելոյ կամ յաղթելոյ անյողդող կամքով: Մեծ բանաստեղծին՝ խօսքն կատարուած էր. ամէն Գաղիացի զինուոր էր, ամէն ինչ՝ զէնք, և Գաղիացին զԳաղիա կը նետէր Գերմանիոյ երեսին: Սակայն հուսկ ուրեմն քաջութիւնն թուոյ և նիւթոյ զօրութենէն կ'ընկճէր, Գաղիա կ'ստիպուէր վար դնել զէնքն դեռ վրէժ մրմալով, և Գերմանիա, հինգ միլիարի ահագին գումար մի պատերազմի տուգանք և երկու գաւառներ առած, ետ կը դառնայր այն բարբարոսային արշաւանքէն որոյ նմանն արեան և կոտորածոց դարերու մէջ հազիւ կը յիշուի:

Այսպէս կը վերջանայր այն կատաղի պատերազմն զոր Նաբոլէոնի մի եղեռնագործ կուրութիւնն սկսած էր և կիլիսի մի աշխարհակալութեան անյագ ցանկութիւնն յառաջ մղած անլուր և քստմնելի անգթութիւններով, որ կէս միլիոն մարդկային առոյգ կեանքեր արեան հեղեղներու մէջ խեղդած էր, որ բիւրաւոր մայրեր անգաւակած և որբերու և այրիներու անհամար բազմութիւն մի սգոյ և թշուառութեան մէջ անդնդած էր, և դժբաղդ Գաղիայն աւերակաց բեռան ներքեւ ընկնալ թողած էր վիրաւոր:

Սակայն գողցես բաւական չէին ա'յսքան աղէտք Գաղիոյ զվտոյն, բաւական չէր հոսած գաղիական արիւնն, հարկ էր ցմրուր քամել թշուառութեան բաժակն: Հասարակական մասն, հաշտութեան պայմանաց ծանրութենէն և Վերսայլի Ազգային ժողովոյն միապետական ձգտումներէն զրգուեալ, կը փութայ օգուտ քա-

\* Վ. հիւսիս, Յայտարարութիւն առ Գաղիացիս:

դել պարագայներէն իւր սկզբանց գործադրութեանն համար, և Մարտ 18 ին Բարիզի մէջ Հասարակականութեան դրօշն կը կանգնէ:

Պատերազմ կը հրատարակէ Վերսայլ Բարիզի դէմ, և Գաղիոյ մէջ քաղաքական կռուոյ արհաւիրաց կը յաջորդէ քաղաքային պատերազմն, և դերմանական սուրիններէն խնայեալ կեանքերն եղբարց սուրերէն կը հնձուին:

Հուսկ ուրեմն, մայիսի վերջերն, Վերսայլի բանակն Բարիզի դռներն կը բանայ, և, անագորոյն կոտորածով մի որ ո՛չ սեռի ո՛չ հասակի կը խնայէ, կը յաջողի ընկճել զՀասարակականութիւնն որ իւր վերջին վայրկեաններն կը լուսաւորէ Բարիզի անհուն հրդեհովն, որ յաճիւն կը դարձնէ նորա ամէնէն հոյակապ շէնքերն, Թիւլսերիին, Լուվրի մի մասն, Քաղաքապետութեան ապարանքն և այլ բազմաթիւ հասարակաց շինուածներն:

Բայց ա՛յսքան հարուածք, որք թերեւս այլ ազգաց համար մահաբեր լինէին, զԳաղիա փրուորեցին միայն. ապրեցաւ նա այդ հարուածոց վերայ, և ընդ հուսկ տեսնուեցաւ որ, յինքեան ամփոփելով իւր բարոյական ու նիւթական անսպառ զօրութիւնըն, փութով իւր վերջերն կը դարմանէր, իւր աւերակներն կը վերականգնէր, օտարին գրաւմանէն հետ զհետէ իւր հողն կը զերծուցանէր, ազգաց առջեւ իւր փայլն կը վերջատանայր և վերկենցաղեալ փիւնիկի մի տեսիլն կ'ընծայէր աշխարհի որ այս արագ վերականգնման մէջ երկնային ձեռն մի տեսնել կը կարծէր:

Գ

Իննեւտասներորդ դարն զարմացմամբ տեսաւ Վանդալեան արշաւանաց նորոգումն և աշխարհակալութեան պատուհասին վերադարձն. սակայն տեսնուեցաւ թէ ի՛նչ սխուր բան է զինուց փառքն և քանի՛ դառն աշխարհակալութիւնն ԺԸ. դարու գաղափարաց ԺԹ. ին մէջ տարած տ'յնքան փառաւոր յաղթանակներէն յետոյ:

Յաղթական Գերմանիոյ արիւնաներկ դրօշներն անիծիւք ողջունեց աշխարհ, և նորա կայսերական գահէն, որ դիականց կոյտի մի վերայ կը բարձրանայր, սոսկմամբ զիրեանց աչեր դարձուցին ժողովուրդք: . . . . .

Գաղիա աւելի փառաւորեցաւ իւր դիւցապնական անկմամբն քան Գերմանիա իւր յաղթութիւններովն:

Բարոյական աշխարհն Գաղիոյ զլուին դրաւ, ծափահարեով, յաղթութեան պսակն և զԳերմանիա սուլեց, որ ի զուր յաղթութիւնն կ'աղաղակէր. իւր ծայնն կը խեղդուէր նզովից, վայերու և ողբոց ժխորին մէջ:

Իսկ նուաճեալ գաւառաց մէջ զգաց թէ քանի՛ օն անկատար էր իւր յաղթանակն: Ալլզաս և Լորէն նմանեցան այն արիասիրտ հայ կուսին, զոր ընդ վայր Քըրդին եզեռնագործ բազուկն կը խլէ իւր մօր ծոցն, արթութեամբ կը մաքառի նորա դէմ, զիւր անձն կը պաշտպանէ, և, երբ ա՛յլ չիք հնար, իւր արտասուօք կը զինի առեւանդչին դէմ, որոյ ամէն ողբքանք չկարեն ժըպիտ մի խլել կուսին շրթներէն որ ամէն օր պակշտ բռնաւորին դժնդակ ներկայութենէն փախչելոյ և դառազատն ամայի թողոյ հնարն կը խնդրէ: Այսպէս եղև Ալլզաս — Լորէն. իւր բնակիչներն զայրութիւ մերժեցին Գերմանիոյ լուծն և Գաղիացի ուղեցին մնալ: Իրեանց պարիսպներն կործանեալ և իւրեանց երկիրն թշնամեաց ոտից տակ կոխտտեալ տեսնելէ յետոյ, նոցա առջեւ հանեցին իւրեանց արի սրտերուն ամուր պարիսպըն որք յաղթողին թնդ անօթներն ծաղրեցին: Այս երկու դժբաղդ գաւառաց մէջ մեծագոյն պատերազմ մի սկսաւ, բարոյական պատերազմ մի, որոյ մէջ յաղթողն զիւր տկարութիւնն զգաց, և փետր. 28 կ'ն ի վեր կը շարունակէ այս կոխուն, հայրենասիրութեան՝ բռնակալ աշխարհակալութեան դէմ այս յուսահատ ու սրխրալի մենամարտն, և Ալլզաս ու Լորէն կ'ամայանան, և անապատք միայն կը մնան յաղթողին ի բաժին:

Գեղեցիկ դասեր այն վեհապետաց որք, յապաղա-

յին , երկրակալութեան տխուր փառքն յափշտակել պիտի ուզեն և ժողովուրդներ յինքեանս գրաւել իբրու անդէոց երամակներ . . . :

Դ

Գերմանիոյ և Պաղիոյ մէջ խաղաղութիւնն հաստատեցաւ , բայց երբէք պատերազմի ուրուականն Եւրոպիոյ վերայ հռաթեւ և սպառնալից չէր կեցած աւելի յամառութեամբ քան այժմ : Պատահած վերջին մեծ դէպքերն Եւրոպիոյ հաւասարակշռութիւնն եղծեցին և անհետ ըրին երկա՛ր ժամանակաց համար այն մշտնջենական խաղաղութեան յոյսերն զորս ժողովուրդք գըգուել սկսած էին : Գերմանական աշխարհակալութեան ոգին զինուորականութեան նոր թուական մի բացաւ Եւրոպիոյ : Իւր յաղթութիւններէն յետոյ զիւր սուրն ի պատեան չդարձոյց նա , այլ ձեռքն բռնեց մերկ . իւր զինուորական ոյժն եւս քան զեւս կրկնապատկել ջանաց . և եւրոպական ամէն տէրութիւնք , մեծ և փոքր , իւրեանց պաշտպանութեանն համար զնոյն առնել փութացին , այնպէս որ 1871 տարին պատերազմական անհաղ և անհուն պատրաստութեանց տարի մի եղեւ , որք ամբողջ տասներկու ամիսներ ժողովուրդներն մտաւրուտ տիեզերական պատերազմի մի մշտակայ երկիւղներովն պատեցին :

Բա՛րէ , սրոյ և հրոյ դարն վերսկսաւ . ազգաց և ազանց եղբայրութիւնն երեւակայական բառ մի եղեւ և ցնորից աշխարհն վտարեցաւ . մահազէն թնդանօթաց սոսկառիթ գիծ մի ժողովուրդներն միացնող միակ կապն եղեւ . փոխադարձ անվստահութիւն և հեռ վերածնան , և տեսնուեցաւ որ ազգերն , փոխանակ եղբայրական համբուրիւ ոգեխառնելոյ , զէն ի ձեռին իւրեանց սահմաններուն վերայ կեցան անքուն , յիրեար յարձակելէ յառաջ՝ արիւնուուչտ և սպառնական աչերով զիրեար զիտող գազաններու նման : Բայց այսպէս պիտի լինէր

անշուշտ . կարելի չէր քաղաքակրթութեան դէմ այնքան ոճիրներ գործել անսպառիժ :

Գերմանիա վրէժխնդրութեան մի պիտի սպասէր միշտ մերձ ի ճայթել իւր պարտելոյն կողմէն , որոյ ո՛ր աստիճան իւր պատուոյն նախանձախնդիր լինելն կը ճանչէր և որոյ սրտին մինչեւ խորերն այնքան հեռ և ոխ կուտած էին իւր անխիղճ անգթութիւնք և նորա գլխոյն վերայ բարդած սոսկալի բեռնն ազիտից : Ուստի պատրաստ լինել հարկ էր : Միւս կողմէն իւր մեծնալոյ քաղցն հետ զհետէ պիտի աճէր . և մինչ ինքն , իւր որսն զիտող արծուոյ մի նայուածքով , ցանկացող աչք մի պիտի յածէր իւր չորսդին , զինքն պատող տէրութիւնք այդ նայուածքէն պիտի սթափէին ընդոստ և , ձեռն յերախակալ սրոյն , պատրաստ պիտի կենային : Եւ այսպէս պատահեցաւ . . . :

Ե

Բայց Տէրութիւնք մինչդեռ հեռին վտանգն կը լրտեսէին , յանկարծ իւրեանց ոտից տակ դեռնին դըրրդմամբ սարսիլն և բերանաբաց պատառիլ սպառնալն տեսին : Ընկերական խնդիրն էր այն որ տարօրինակ սաստկութեամբ կը պայթէր և աշխարհի արդէն իսկ տագնապեալ կացութիւնն նորանոր կնճիռներով կնճռտել կու գայր : Գործաւորաց Համագգային ընկերութիւնն , ահարկուն Էնթէլոնասիոնալ , տասն տարիներէ ի վեր իւր պատրաստած դերն կ'սկսէր , և Աշխատութիւնն Գրամագլխոյն դէմ իւր պատերազմն կը հրատարակէր :

Մարդկային ընկերութեան անժառանգ դասերուն տիեզերական մեծագումար համախմբութիւնն էր այն , որ գլուխն վեր կը վերցնէր այն մութ խորութեանէն ուր ընկերութիւնն զինքն նետած է , և դուրս կը ժայթքէր այն քէնն ու ոխն զոր սոսկալի անհաւասարութեան և տառապանաց երկար դարեր իւր սրտին մէջ զսպած էր : Մանր խնդիր որ երկուց աշխարհաց մէջ միանգամայն ի յայտ կու գայր :

երբէք քան զայս մեծագոյն յեղափոխութիւն մի մեծագոյն վտանգ մի չէր սպառնացած գահերու և դարերէ ի վեր հաստատեալ ընկերային կազմաւորութեան :

Էնթէնասիոնալի սոսկալի յառաջարանն եղեւ Բարիլի Հասարակականութիւնն , որոյ սլարտութիւնն մարտիրոսութեան հրապոյրն տուաւ նմա , և մեծ քաղաքին հրդեհման , որով նախատօնած էր զիւր երեւումն , հետեւեցան ուրիշ քաղաքաց մէջ բորբոքեալ անհուն հրդեհներ : Գործաւորք խմբովին իւրեանց գործերն դադրեցնել սկսան ամենուրեք և օրականի ու աշխատութեան ժամուց խնդիրն ամէն տեղ օրուան խնդիրն եղեւ : Մեծադղորդ գումարումներ ամէն քաղաքական և ընկերային կարգաց դէմ մահ գոռացին : Ամէն տեղէ շարժել սկսան այս համատարած մարմնոյն թեւերն , և տիեզերաց չորս ծայրերէն մղուած ազազակք յիրեար միանալով համանուագ մի կազմեցին ահարկու , որում սոսկմամբ ունին դրին վեհապետք , և յիրեար հայեցան անհանգիստ , և այս հասարակաց թշնամոյն դէմ միանալ խորհեցան :

Ահա՛ մեծ խնդիր մի որոյ ծնունդն նախաւոր ըրաւ զ1871 , և որ . ո՞ գիտէ , ի՞նչ վախճան պիտի ունենայ , և ի՞նչ տեսարաններ կը պատրաստէ ապագային համար :

2

Ժողովրդոց ազատական ձգտումներն այլ ոչինչ նուազ յուզեցին տարին որ սահեցաւ . մանաւանդ , առաւել քան զամէնն , Աւստրիա և Սնդղիա հակառակաշունչ հողմերէ խռովեալ ծովու մի պատկերն ընծայեցին :

Սլավեան ազգայնութեան խնդիրն Հապսպուրլի թագաւորութեան հիմերն ցնցել սկսաւ : Պոհնմիա անկախութիւն պահանջեց , և իւր պահանջման մերժումն գրգռեց Աւստրիա այն մրրիկն որ ընդ երկար պիտի կոծէ Աւստրո — Հունգարական միապետութեան նաւատորմն և թերևս չպիտի դադրի մինչեւ որ զայս նա-

ւատորմն բաղկացնող նաւուց իւրաքանչիւրն մի մի կողմ չցրուի տարուեր : Անգղիոյ մէջ Հասարակապետութեան շունչն սկսաւ ուժգին ընթանալ և թագաւորական գահուն դէմ ժողովրդեան զայրոյթն չափ և սահման չճանչեց : Անգղիա որ , ցամաք երկրէն հեռի , ինքզինքն , ինչպէս իւր Պաշտօնեայն կ'ըսէր , եւրոպական ամէն ցնցումներէ ազատ կը կարծէր , յանկարծ ինքզինքն ժողովրդային յուզմանց ամէնէն խռովայոյզ ասպարէզն դարձած տեսաւ , և յեղափոխութեանց սուրն իւր գըլխոյն վերայ թերագամ զգաց :

1871 տարւոյն մէջ յուզուած խնդիրներուն մեծագոյններէն մին էր նաեւ կրօնական խնդիրն , 1870 ըզՊապն իւր աշխարհային թագաւորութեան գահէն վար գահավիժած էր , և 1871 առաջին հօր հարուածն տըւաւ հոգիներու վերայ երկար դարերէ ի վեր իւր բանեցուցած բռնակալութեան : Միւնիխի Հին կաթոլիկաց համաժողովն հրապարակաւ բողոքեց , յանուն Քրիստոնէութեան և զիտութեան , Հռովմէական Եկեղեցւոյ մոլար վարդապետութեանց դէմ , և դատապարտեց զայնս յայտարարութեամբ ճշմարիտ քրիստոնէական սկզբանց : Խորհրդարաններն Պետութեան և կրօնից բաժանումն վճռեցին , և կեսարաց սուրն խղեց իւր դաշնակցութիւնն Կղերին գաւազանին հետ որոյ կոստանդիանոսէն ի վեր ոյժն ու նեցուկն եղած էր ի վնաս մարդկութեան և ի նախատինս Աւետարանին : Հռովմ գիւր դուններն բացաւ բանադրեալ թագաւորին առջեւ որ յաղթապանծ ներս կը մտնէր տարւոյն սկիզբներն , և նոյեմբեր 27 ին յաւիտենական քաղաքին մէջ Վիկտոր — Էմմանուէլ հանդիսաւոր կերպիւ կը բանայր միացեալ Իտալիոյ ներկայացուցչաց ժողովն ի մեծ սըրտմտութիւն կաթոլիկութեան Գլխոյն որ , Վատիկանու մէջ բանտարգել , իւր անցեալ փառքերն կ'ողբայր և ժ.թ. դարն կ'անիծէր :

Այսպէս ահա միջին դարու վերջին չարաշուք հեռքերն այլ ջնջուիլ կ'սկսին , և Աւետարանն ու Գիտու-

թիւնն , զորս կղերին մոլեռանդութիւնն իրրեւ միմեանց հետ անհաշտելի տարրեր նկատել վարժեցուցած էր գժողովուրդս , ձեռն ի ձեռն իւրեանց յաղթանակն կը տանին Հռովմէական Եկեղեցւոյն վերայ որ քրիստոնէութեան լոկ անունն կը կրէ , և այն պղծելոյ համար զայն :

Է

Հուսկ ուրեմն Սուր , Հաց և Խաչ գողցեն 1871 ի խորհրդանշանն կազմեցին . երեքին եւս օրուան խնդիրքն և օրուան դիւցազունքն եղեն : Ա՛րթայ 1871 տարին , բայց այսքան կնճռոտ խնդիրներ կը թողու , որք իւր յաջորդն անշուշտ աւելի ուժգնութեամբ պիտի տագնապեն և , ո՞ գիտէ , որպիսի աննախատեսելի դիպաց և խորին յեղաշրջմանց տեղի պիտի տան :

Ա՛րթայ հին տարին , և նորոյն սեմոց վերայ պատերազմի սպառազէն ուրուականն , Էնթէոնասիոնալի սոսկավիթխար հսկայն , ազգայնութեանց դատն և կրօնական մեծ խնդիրն կ'սպասեն :

Տեսնե՛մք ուրեմն թէ 1872 տարին ի՛նչ լուծումն պատրաստած է այս ամէնուն և ի՛նչ պատասխան այն սրտատանջ հարցմանց որք այսօր ազգերու ճակատագրին շուրջն դիզուած են :

1872 Յանվար 1

Ն Ա Մ Ա Կ

ԱՌ ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆՏԻ ՓՄՆՈՍԵԱՆ

Խառգիւղ , 10 Յուլիս 1871

Տէր :

Ձեր Ազապեանն չէի տեսած : Տեսայ :

Մեծ դէպք մի եղեւ այս ինձ համար : Ո՛չ որ դռնէ մի ներս ա՛յնքան վհատ մտած և անտի ա՛յսքան յուսալից դուրս ելած է :

Նոյն օրն մի քանի ուրիշ վարժարաններ այլ այցած էի : Ճշմարտութիւնն խօսելոյ համար , վարժարաններ տեսի որք չէին այլ ինչ՝ այլ ճշմարիտ սպանդանոցներ , ապագայի ստոյգ գերեզմաններ :

Հակապատկերն խիստ ակներեւ , և տարբերութիւնն անհուն էր :

Միայն իգական սեռի վարժարաններու վերայ խօսելով , կային այնպիսիներ ուր դեռ այս սեռն , մարդկութեան այս ազնիւ և կարեւորագոյն տարրն , նախապաշարմանց անձուկ վանդակին մէջ , իրրեւ կանանոցներու ապագայ արձան կը կրթուի , տգէ՛տ իւր կոչման , տգէ՛տ իւր իրաւանց ու պարտուց :

Նոյն օրն , ազգային դատարարակութեան սանդղան աստիճաններէն քայլ առ քայլ վեր ելնելով , հասայ յԱզապեանն : Սոյն վերջինն սանդղան գլուխն կը գըտնուէր . անտի և ի վայր ի՛նչ խորութիւն :

Ագապեանի մէջ իրակօնացեալ տեսի ինչ որ միշտ փափաքած եմ տեսնել գեղեցիկ սեռին դաստիարակութեան մէջ : Այն այցն ինձ համար մի յայտնութիւնն եղեւ ապագայի :

Ոչինչ է դաստիարակութիւն մի որ դէպ յիւր նպատակն չուզի, որ չպատասխանէ այն պիտոյից որք զայն կարեւոր են ըրած :

Երբ գեղեցիկ սեռն սիրահար, ամուսին և մայր լինելոյ դիտմամբ չդաստիարակի, այդ կրթութիւնն ապագամ երկունք մի է, և անտի ծնողն՝ վիժած մի անկերպարան :

Դաստիարակութիւնն՝ որ կը տրուի Ագապեանի մէջ է ինչ որ կը պահանջեն դարուս և ազգին պիտոյքն :

— Ազատ դաստիարակութիւն մի, զերծ այն շղթայներէն զոր տգիտութիւն և նախապաշարմունք են դարբնած, դաստիարակութիւն մտաց և սրտի, ուսումն կնոջ իրաւանցն ու պարտուց, պատրաստութիւն մի մեծ և բարձր կոչման :

Ստուգիւ չգիտեմ ինչ խորհրդով գաղատութիւն վնասակար կը համարին իգական սեռին կարգ մի մարդիկ որք զայն անդուլ արական սեռին համար կը պահանջեն :

Մի և նոյն պատճառք միշտ մի և նոյն արդիւնքն կը ծնանին :

Գրեթէ միշտ ամէն բան ինչ որ է ընտանի կարգին մէջ՝ նոյնն է նաեւ բարոյականին մէջ, բնական և բարոյական աշխարհներն մի և նոյն օրինօք կը վարին . ինչ որ ճշմարիտ է միոյն համար՝ չկարէ սխալ լինել միւսոյն համար :

Եթէ բոյսն, եթէ մարմինն, եթէ նիւթական մարդն անման և կատարելութեան համար ազատութեան պէտք ունին, նոյն պէտքն ունի նաեւ հոգին, նաեւ բարոյական մարդն իւր բարոյական զարգացմանն ու կատարելութեան համար : Եւ եթէ ճշմարիտ է սա արականին համար, հիմ չլինի նաեւ իգականին համար որ մի և

նոյն Արարչին ձեռակերտն է և կենաց մի և նոյն օրինօք ստեղծեալ :

Սեղմէ՛ տունկ մի . — ա՛յլ եւս չաճի ; կը թօշնի . կապէ՛ նորածին մանկան մի անդամներն . — տճեւ, տկար ու խեղ կը մնայ . ճնչէ՛, կապէ՛ հոգին . — տնկոյն պէս կը խամրի, փոխանակ բարձրուէ՛ շամբառնալոյ, և մանկան պէս հրէ՛լ մի կը լինի ժանտատեսիլ, փոխանակ զօրեղ և գեղեցիկ աճելոյ :

Ինչ է բարոյական ըսուածն, երբ մարդն չէ անկախ : Ինչ է առաքինութիւն, երբ մարդն չէ ազատ զայս առնելոյ և զայն չառնելոյ : Կնոջ համեստութիւնն ցնորք մի չէ՞, երբ բռնի է այն և ո՛չ իւր ինքնիշխան կամաց հետեւութիւնն : Վանդակներն ինչ անբարոյականութեան ճիւղներ կը ծածկեն իւրեանց ետեւ, և համեստութեան քօղոյն տակէն ինչ լպիրշ աչեր կը հային շատ անգամ :

Կինն աւելի շատ անբարոյական է այն երկիրներուն մէջ յորս արանց բռնապետութիւնն նորա համար բանտեր չինած ու բանտապահներ կարգած է, քան յայնս ուր ազատ է և արձակ :

Եւ, քանզի բնութեան մէջ չիք օրէնք որ չունենայ զիւր պատիժն իւրեան դէմ գործուած յանցանաց համար, բոլոր այս երկիրներուն մէջ, մարդն, զկինն անբարոյական ընելով, կրած է իւր գործոյն ընդդիմագործութիւնն, այն է՝ ինքն եւս անբարոյական է եղած : Քանզի ստրկացուցած է զայն որ միայն կարող է զինքն ազատ ու մեծ գործել, ստրկացած է և ինքն, ու մարտիկ զայն ջահն որ իւր հոգւոյն լուսատուն է, կուրացած է ինքն իսկ և խաւարի մէջ կը խարխափէ : Կինն լուծած է զիւր վրէժն :

Կ'ուզե՞ս զկինն բարոյական էակ մի ընել, կ'ուզե՞ս անքօղ համեստութիւններ ունենալ փոխան քօղարկեալ անհամեստներու . — ազատ ըրէ՛ զկինն :

Կրթութիւնն առանց ազատութեան թերի է և մեքենայներ ու կապիկներ միայն արտադրելոյ յատուկ :



Երբ ազատութիւն կը միանայ կրթութեան հետ, այն ատեն կինն կը բարձրանայ այն վտեմ ճակատագրին յոր սահմանած է զայն բնութեան Արարիչն. այն ատեն ընտանիքն կը վերաշինի ու կ'ազնուանայ բարոյապէս, և մարդկութիւնն ի հիմանց և ի խորոց կը յեղաշրջի ի լաւն, ի գեղեցիկն, ի ճշմարիտն:

Տէր, Ագապեան վարժարանի մէջ տեսի ինչ որ ոչ ուրեք տեսած էի. — այն է ազատ կրթութիւն մի և կրթեալ ազատութիւն մի:

Ո՛հ, ի՛նչ է կինն, երբ նա կը դաստիարակի, երբ նա կ'ուսանի թէ ի՛նչ է ինքն, երբ իւր մեծութեան ու կոչման զգացումն ունի և երբ զիւր անձն տէր կ'զգայ իւր ապագային:

Մի՛ բաղդատեր զայն այն տգէտ կնոջ հետ որ շիջուէ վեր ամբառնալ աշերն, գլխահակ ծանրաբեռն ճակատագրի մի ներքեւ զոր անողոքելի կը կարծէ. միշտ ըզտիղմ՝ կը նկատէ, և իւր աշերն չդիտեցին երբէք ազատ ու անհո՛ւն երկինքն: Միոյն և միւսոյն մէջ վի՛հ կայ անսահման. հրեշտակ մի է մին, միւսն մահ է ցուրտ, գեղեցիկ ծածկութի մի ներքեւ:

Գեղեցիկ էր տեսնել դեռահաս օրիորդներու, համեստ համարձակութեամբ, իւրեանց սեռին իրաւանց և ազատութեան նկատմամբ վիճաբանելն, լսել իւրեանց ազատ ու լուսաւոր դաղափարներն, ազնիւ ու վտեմ զգացումներն, և, սիրուն ընտանութեամբ իւրեանց Տեսչին շուրջն համախմբած, նորա, իբրեւ իւրեանց հօր, բարոյական դասուցն ու խրատուց անյազ և հետաքնին ունկնդրելն:

Ստուգիւ, Ագապեան վարժարանն մեծ ապագայի մի որորանն է:

Երբ դուրս կ'ելնէի այդ նուիրական սեմէն, կ'ըսէի ընկերոջս. « Հայութեան ապագային վերայ հաւատք չունէի, հիմայ հաւատք ունիմ: »

Եւ արդարեւ Ագապեան սանուհիք Հայ ընկերութեան մեծ վերանորոգիչներ պիտի լինին: Մեծ յեղա-

փոխութիւն մի գործելոյ կոչուած են նորա Հայութեան ճակատագրին մէջ:

Եւ յեղափոխութիւններն՝ որք կը լինին կանանց ձեռքով՝ գրեթէ միշտ անվրէպ են:

Ազատութեան, հայրենեաց և մարդկութեան սիրոյ, գեղեցկին, բարւոյն ու արդարին վե՛հ ու մեծ զգացումներն, որովք կը տոգորին այսօր իւրեանց հոգիք, վազիւ երբ մայր լինին, հարիւրաւոր մատաղ սրտերու պիտի հաղորդեն:

Իւրեանց մի խօսքն, մի ժպիտն, մի շունչն փիլիսոփայներու և օրէնսդրաց ընել չկարացածն պիտի ընէ: Կաթին հետ պիտի տան բարոյական կենաց սնունդն. հոգւոյ ճարտարապետներ, հոգիներ պիտի շինեն. ի՛նչ որ ունին գեղեցիկ յինքեանս՝ յայնս պիտի դրոշմեն, և ի՛նչ որ նորա պիտի գրեն՝ ոչ ոք պիտի զօրէ ջնջել:

Նոր սերունդ մի պիտի կազմեն որոյ սիրտն պիտի բաբախէ յանուն ամենայնի որ կայ յերկրի բարի, ճշմարիտ, վտեմ:

Ա՛հ, եթէ Հայութիւնն ապագայ մի ունի, այսպիսի վարժարաններու մէջ կ'երկնուի այն:

Տէր, արժանի էք համայն ազգին երախտագիտութեան: Ընդունեցէ՛ք և զիմն:

Եթէ տկար ձայնս կարէր լսելի լինել և դոյզն ինչ խրախոյս ազդել Ձեզ, կը գոչէի. Յարատեւեցէ՛ք: Ի՛նչ կայ մեծ քան Ձեր գործն. լոյս տարածել և ապագայ վերաշինել՝ մեծագործութեանց մեծագործութիւնն է:

Ներկայն յաճախ կոյր է և ապաշնորհ. ապագայն միշտ արդարադատ:

Եթէ տգիտութիւն և ատելութիւն Ձեր առջեւ իւրեանց սեւ ու մութ ամբարտակն կանգնել կը ճգնին, մի՛ վհատիք, քայլեցէ՛ք, քայլեցէ՛ք միշտ. և այդ ամբարտակն, մի՛շտ կիսաչէն, Ձեր քայլից առջեւ պիտի կործանի:

Վայ այնոցիկ որք լուսոյ վառարան մի կամին չի-

ջուցանել, և քանդել զայն շէնքն որ ասպազայից է ձուլարան :

Չեր ակն անքթիթ յառեցէք յասպազայն : Պսակն՝ զոր նա Չեր ճակտին համար պատրաստ ունի՝ թո՛ղ Չեր քաջակերն լինի :

Ապազային մէջ Չեր բաժինն փառք պիտի լինի, իսկ Չեր սոսիսաց կ'սպասեն ամօթ և նախատինք :

Մնայք բարեա՛ւ :

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ա Ղ Ջ Կ Ա Ն Մ Ի Օ Ժ Ի Տ Ն

Կ Ա Տ Ա Կ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Յ Ե Ր Ի Ս Ա Ր Ա Ր Ս

Օսմանիյէ թատրոնին Տնօրինութիւնն մի նոր ասպարիզի մէջ կը մտնէ, որոյ համար յանկեղծ սրտէ կը շնորհաւորեմք զինքն : Չգալով թէ թատրոնն, լիովին ծառայելոյ համար այն նպատակին յոր սահմանեալ է, այսինքն լաւագոյն դործել զմարդն դրօսուցանելով զնա, պարտի, բաց յողբերդական տեսարանաց, ժողովրդային արդի բարուց նկարագիրն և նոցա տգիտութիւնքն ու թերութիւնքն ի տեսիլ ածել և ներկայն ներկայով հրահանգել, ժամանակակից ազգային խաղերու և կատակերգութեանց շար մի կը խոստանայ մեզ իւր այս շրջանին մէջ : Այս խոստման կատարմանն իրր սկզբնաւորութիւն, Օսմանիյէ թատրոնն, գեկ. 8, անցեալ չորեքշաբթի դիւեր ի հանդէս ածեց « Աղջկան մի Օժիտն » անուն կատակերգութիւնն : Սառգիւ թէ և Պ. Ռչտունի իբրեւ թարգմանիչ ներկայացաւ հասարակութեան, սակայն չկարէ ըսուիլ թէ խաղին մէջ մեր ազգային ընկերական արդի վիճակին պատշաճեցնելոյ բնաւ ճիշ չէ եղած, մանաւանդ թէ այս նկատմամբ մուծուած փոփոխութիւնք բոլորովին ակներեւ կը տեսնուին : Ինչ որ այլ լինի, Օսմանիյէ թատրոնն կարէր զայս խաղն իբրեւ մի ազգային խաղ հասարակութեան ներկայացնել, քանի որ մեր ընկերական բարուց ճշգրիտ նկարագիրն և

մեր ծաղրելի յոռութեանց ու աղիտաբեր նախապա-  
շարմանց հաւատարիմ մի պատկերն կ'ընծայէր մեզ :  
Այս պատկերն ա'յնքան ճիշդ էր , և ներկայացուած  
խաղին նիւթն ա'յն աստիճան ծանրակշիռ կարեւորու-  
թիւն մի ունի մեր ընկերային կացութեան նկատմամբ ,  
զի չկարեմ ընթերցողացս աչաց առջեւ չդնել զայն և  
իւրեանց ուշադրութիւնն չհրաւիրել նորա վերայ :

Ա.

Ալեքսան պատուելի մեր ազգին համար այն հաղուա-  
դիւտ անձերէն մին է որք միանգամայն հարուստ են  
և ուսումնական : Ճոխ ծնած , բայց ոսկին չէ կարացած  
զինքն հրապուրել , և բարեբախտաբար կարացած է  
զերծ մնալ այն մոլութիւններէն որոց մէջ ընդհանրա-  
պէս կը լողայ հարստութիւնն , կարծելով թէ ոսկոյ  
փայլն կարէ ամէն աղտ ու սեւութիւն սքօղել : Իւր միակ  
երջանկութիւնն կը կազմեն իւր գրքերն ու բարեկամ-  
ներն , և թանգարան մի ամէն գանձերէն լաւագոյն  
համարելոյ միամտութիւնն ունի մեր այն հարուստնե-  
րուն քով որոց համար գրքի մի կամ լրագրի մի տրուած  
մի դանկ սոսկալի կորուստ մի է անտարակոյս : Իւր  
գրեկոյն մէջ զաշխարհ և զիւր դարն ուսած , անհաշտ  
թշնամի է կանանց , և ամուսնութիւնն թշուառութեանց  
ծայրագոյնն է իւր համար : Չսիրէ զկանայս • պճնասի-  
րութիւն , անհաւատարմութիւն , թեթեւամտութիւն ,  
նենգութիւն և ամէն յոռի յատկութիւնք , զորս զըժ-  
բախտաբար դատտարակութեան և մայրերու պակա-  
սութեամբն կանանց սեռին սովորական նկարագիրն ե-  
ղած կը տեսնեմք , ատելի ըրած են իւրեան գեղեցիկ  
սեռն • և , ըսե'մք զայս , բոլորովին անիրաւ չլինելոյ  
համար , սատանայներու բազմութիւնն մոռնալ տուած  
է նմա թէ հրեշտակներ այլ կան : Բարեբախտաբար  
չսիրէ • կենաց շաւղին մէջ հրապուրիչ աչերով գեղուհի  
մի չէ երբէք զիւր սիրտն մազնիսած , և սիրոյ փոթո-

րիկներն կամ անհաւատարմութեան մի գործած վերքն  
չէ զգացած : Իւր սիրտն կարացած է երիտասարդու-  
թեան ծովէն անցնիլ առանց մրկէն կոծուելոյ կամ  
նաւարկելոյ : Ուխտած է չամուսնանալ • սակայն ինքն  
այլ իւր սխալն ունի • կամ թէ , այսպէս ասելոյ համար ,  
կանանց սեռին վերայ ընդհանրապէս տեսած անհաւա-  
տարմութիւնն և սիրոյ իբրեւ վաճառք ամէնուն ըն-  
ծայուիլն զինքն ծայրայեղ համոզմանց տարած են , այն  
է չհաւատալ բնաւ ճշմարիտ սիրոյ գոյութեան կամ  
իբրեւ հրեշտակ նկատել զայն որ չսիրէ :

Բ.

Առաջին արարուածին , երբ վարագոյրն կը վերանայ ,  
Ալեքսան պատուելի իւր գրեկոյն հետ զբաղած է , և  
մերթ ընդ մերթ իւր ընթերցումն կ'ընդհատէ , կանանց  
դէմ իւր ատելութիւնն ու զայրոյթն որոտալոյ համար :  
Յանկարծ Արշակ , իւր պաշտպանեալն , կը մտնէ : Ար-  
շակ ուսումնական • այլ աղքատիկ երիտասարդ մի է •  
զգալոյ և սիրելոյ եղանակին մէջ է : Յուզեալ կ'երեւի •  
այս հասակին մէջ դէմքն ու աչերն կը մատնեն միշտ  
սիրտն : Ալեքսան կը գուշակէ թէ կը սիրէ նա • ուստի  
կը խրատէ զայն միայն ա'յն ատեն ամուսնանալ երբ  
վստահ է թէ իրօք ինքն այլ կը սիրի : Չկարէ , սակայն ,  
ամուսնութեան վտանգաց վերայ իւր խորհրդածու-  
թիւնքն ծածկել : Արշակ շսիրել կը կեղծէ : Տիկին Ան-  
թառամ , Ալեքսանի հօրաքոյրն , ուսման այս երկու սի-  
րահարաց խօսակցութեան թեւն իւր անախորժ ներկա-  
յութեամբ կը կտրէ : Տիկին Անթառամ ճշգրիտ պատ-  
կերն է այն կանանց որք իւրեանց ղիմաց վերայ ծերու-  
թեան խորշումներն ունին և գլխոյն վերայ նորատի կու-  
սին պաճուճանքն , որք , մի ստն ի գերեզման , դեռ նոր  
կենաց դռնէն ներս մտած լինել կը կարծեն , և ոյք  
չպարներու մէջ կը ջանան իւրեանց ղիմաց վերայ • տա-  
րիներու գործած անդարմանելի թշնամանաց դարման

մի գտնել : Տիկին Անթառամ պառաւ մի է , երկիցս այրիացեալ և երրորդ անգամ ամուսնանալոյ ցանկացող : Զարմանալին այս է որ Արշակին սիրահարած է և ի նմանէ սիրուել կարծելոյ յիմարութիւնն ունի :

Մատամ իզագէլ Հայ և մօտիսթրա յ մի է , բայց զինքն Գաղիացի կը կեղծէ , անշուշտ միամիտ Հայ տիկնոջ քսակն աւելի դիւրեաւ պարպելոյ համար : Այս ատեն Ալեքսան և Արշակ ներկայ չեն , և Տիկինն ու Մատամն իւրեանց առեւտուրն սկսած են , թարգմանն ունենալով զՄիւսիւ Ալէնսան , որ ծանծաղամտութեան և թեթեւամտութեան կատարեալ տիպարն է և Տիկին Անթառամին մտերիմներէն մին : Շինեօն , պօմպէ , քօփիւր , բօմատ , ներկ և փոշի , ամէն բան ի տես կու գայ , ամէն այն բաներն որք մեր տիկնանց երազն ու հարստութիւնն են , բոլոր այն ոչնչութիւնքն որոց մէջ կ'որոնեն իւրեանց երջանկութիւնն և որոց կը զոհեն ամէն իրական բարիք և ամէն նուիրական պարտաւորիւն : Առեւտուրն կը վերջանայ . գումարն ոչինչ բան է , քսան և եօթն անգղիական ոսկւոյ շնչին գումար մի : Ստուգիւ ինչ է այս գումարն այն դանձուց քով զորս Տիկին Անթառամ ստացաւ և որք զինքն իրօք անթառամ գործելոյ պիտի ծառայեն : Ողբալի՛ կուրութիւն . ինքնին զիւր անձն ծաղրելի առնելոյ համար այդքան գումար : Ինչ հաւատարիմ պատկեր մեր կարճամիտ և պճնամոլ կանանց :

Գ

Պատուելի Ալեքսան վերայ կը հասնի այս առեւտրին որ նոր առիթ մի կը լմատակարարէ նմա կանանց սեռին դէմ իւր ատելութեան նոր պայթումն տալոյ : Բարեբախտաբար Տիկին Անթառամ փախչելոյ հնարքն կը գտնէ . և Մարտիրոս աղայն , Ալեքսան պատուելոյն մօրեղբայրն , ինքզինքն ամէն բանի փորձառու , Վականջը ծակ և անվրէպ մարդ մի կարծող ծերունի մի , կու

գայ ըստ իւր սովորութեան իւր քեռորդւոյն ամուրի մնալոյ որոշման դէմ գարնուիլ : Մարտիրոս աղայն մեր այն ծերունիներէն է որք , հին ու փտացեալ գաղափարաց հաւատարիմ զաւակ , չսիրելն առաքինութիւն մի կը համարին աղջկան համար , և կու գայ Ալեքսան պատուելոյն յամուսնութիւն առաջարկել աղջիկ մի որ և սիրելն ինչ է չգիտէ , որ աղանւոյ նման միամիտ և հրեշտակի նման անբիծ է , և որ , հազիւ քսան տարեկան և հարուստ Պէյի մի աղջիկ , ամէն գեղեցկութեանց ու կատարելութեանց հագուազիւտ տիպարն է :

Ալեքսան պատուելի կը պնդէ թէ անկարելի է որ այդ հասակին մէջ աղջիկ մի չգիտնայ թէ ինչ է սիրելն , անշուշտ այս մասին քան զփիսմիա ծերունին կնոջ մի սրտին և մարդկային բնութեան տեղեակ . դաշինք մի կը լինի . Ալեքսան պատուելի եթէ յաղթուի , պիտի ամուսնանայ . իսկ Մարտիրոս աղայն եթէ իւր սխալած լինե՛ն տեսնէ , 4000 ոսկի պիտի տայ իւր քեռորդւոյն : Ա'որոշուի երթալ Սուրէն Պէյին՝ օրիորդին հօր ծովեղերեայ բնակարանն 'ի Սարըբար , և հոն զիրեար փորձով համոզել : Հազիւ Մարտիրոս աղայն դուրս ելած , Արշակ կը մտնէ . Ալեքսան պահ մի յառաջ եղած որու շուսնն կը յայտնէ . Սուրէն Պէյին տունն պիտի երթան տեսնել նորա միամօր աղջիկն որոյ հետ պիտի ամուսնանայ :

Դ

Ո՛վ հարուած տարփածուի մի սրտին . Սուրէն Պէյին աղջիկն , այն զոր կը սիրէ , այն զոր կը պաշտէ : Միակ կը մնայ Արշակ . հակառակամարտ կը բերէ կ'ալեկոծի հողին . ի մի վայրկեան իւր բարերարն հակառակորդ մի կը լինի իւրեան . այն դժուարին դիրքերէն միոյն մէջն է ուր սէրն յաճախ կը ձգէ իւր զոհերն : Իւր սիրոյն և իւր երախտադիտութեան մէջտեղ կը տատանի . ցայն վայր թերեւս սէրն այդքան բուռն մորթիկ մի չէր յուզած իւր սրտին մէջ : Առաջին անգամ կ'զգայ թէ ինչ

է հակառակորդ մի որ իւր սիրոյ առարկայն , իւր միակ երջանկութիւնն խլել կու գայ իւր ծոցէն , այդ նախանձոտ ամսն որ իւր սիրոյ աստղիկն մարել կ'սպառնայ : Միայնութեան գրկին մէջ կը թափէ իւր հառաչանքն ու վշտերն . և Տիկին Անթառամ , Արշակայ պառաւ սիրունհին , մեղմիկ գալով , դժբաղդ սիրահարին մորմոքն ու արտասուքն գրաւական մի կը համարի իւր վերայ ունեցած սիրոյն , և , իւր այս ծիծաղելի պատրանօք , խընդուքն կը շարժէ հանդիսատեսին զոր սիրոյ առաջին պատրանաց թշուառ երիտասարդին բերնէն խլած բողբոջներն տխրութեամբ զգածած էին : Ե՛հ , ինչո՞ւ հարուստ չէ Արշակ . թերեւս ցայն ժամ զգացած չէր նորա անկեղծ սիրտն նիւթոյն ամէն զօրութիւնն , թէ նիւթամուղ դարու մի մէջ նոյն իսկ սիրոյ մէջ երջանիկ լինելոյ համար ճոխ լինել հարկ է և թէ սիրտն իսկ յաճախ ոսկւով կը գնուի իբրեւ մի վաճառք :

Ի՛նչ դառն է այսպէս իրականութեան բուռն ընդհարմամբն իւր անոյշ ցնորներէն զարթնուլ ընդոստ և , սիրոյ աննիւթական աշխարհաց մէջ թեւածելոյ ատեն , յանկարծ նիւթոյն ուրուականն իւր առջեւ գտնել , իւր և սիրոյն մէջ իբրեւ սեաւ պարիսպ արձանացած : Ինչո՞ւ հարուստ չեմ . — ո՞վ , Արշակայ նման , հառաչանօք այս խօսքն չէ կրկնած , երբ սիրել կարող լինել կարծելով զայն հոգին զոր բնութիւն իւր հոգւոյն քոյր է ստեղծած , յանկարծ տեսած է թէ բախտն , թէ ընկերային նախապաշարմունք պատնէչ մի կանգնած են իւրեանց մէջ , և քանի՞օն չէ անիծած այս դարն ուր ասպականեալ մարդկութիւնն նուաստացուցած է երկնից վսեմագոյն շնորհն , — սէրն : Արշակ այս վայրկենէն կ'զգայ վիշտն կամ վշտին անհունութիւնն : Ո՛հ , կարելի չէ՞ սիրել առանց թշուառ լինելոյ : Տիկին Անթառամին ներկայութեան կը ջանայ ծածկել զիւր վիշտն , զոր աւելի կը գրգռեն նորա տաղտուկ սիրոյ խօսքերն : Յանկարծ Ալեքսան պատուելի կու գայ , և , զԱրշակ իւր հետ առնլով , զայն իւր տանջանքէն և զՏիկին Անթա-

ռամ իւր երջանկութենէն կը բաժնէ : Ո՞ւր կ'երթայ Արշակ . — յի՛ւր դրախտն թէ յիւր դժոխս . — ի մին և ի միւսն . . . :

Ե

Վարագոյրն կը բացուի . Սուրէն Պէյի տունն եւք : Նորա աղջիկն՝ Ագապի և սպասուհին՝ Ֆուլիկ պարտիզին կից սրահի մի մէջ կը խօսակցին : Ագապի այն յոռի և սեղմեալ դաստիարակութեան գործն է զոր նախապաշարեալ ծնողք կու տան իւրեանց աղջկանց : Բարւոյն ու չարին , անմեղութեան ու յանցանաց գաղափարներն թիւր ու շփոթ՝ խակուած են իւր ուղեղին մէջ . ամէն անմեղ բաներէ , իբր յոճոյ , կը վախնայ և բնութեան զգացումներն իբրեւ չարին թելադրութիւնքն նկատելոյ վարժուած է : Թէ և իւր հօր ձեռին տակ , իբրեւ ներքինւոյ մի դժնդակ հսկողութեան ներքեւ , մեծցած և իւր հասակին բնական հաճոյքներէն խիստ զգուշութեամբ մի պահուած , ոչինչ նուազ , սակայն , բնութիւնն իւր նորաբողջ սրտին մէջ իւր յաղթանակն տարած է . կը սիրէ նա , առանց գիտելոյ թէ որ ինչ կ'զգայ՝ սէր է : Կը պատմէ իւր զգացումներն իւր մտերմին՝ Ֆուլիկի . — Ի՛նչ անմեղ և հրեշտակային են սրտաղեղութիւնք մի մատաղ կուսի , որոյ հոգւոյն անբիծ ծաղիկն այն ինչ բացուիլ սկսած է սիրոյ երկնաբոյր շնչոյն . ո՞րքան սիրուն են իւր սիրոյ նախկին երազքն , և ի՛նչ հեշտալիր անհունութեան մի մէջ թեւածել կ'զգայ զանձնն : Կը սիրէ նա զԱրշակ . փոխադարձ է իւրեանց սէրն . երկուստեք անոյշ նամակներ գրաւական են իւրեանց սիրոյն : Կը շառագնի , սակայն , երբ կը լսէ թէ որ ինչ սիրել կ'անուանի՝ այն յարումն է կաթողի որով զիւր հոգին հիւսեալ կ'զգայ Արշակայ հոգւոյն հետ :

Ո՞վ հրէջ գաստիարակութիւն , որ կարմրել կու տաս այն բաներուն վերայ որք երկնից վսեմագոյն պարգեւքն են մարդկային սեռին , այն անմեղ ու սուրբ զգացմանց

վերայ որք հրեշտակաց երանութիւնն են եթերային դաշտաց մէջ :

Ագապի, ուսանելով Ֆուլիկէն թէ կին մի միայն զայն պարտի սիրել որոյ հետ կ'ամուսնանայ, կ'ուխտէ Արշակայ միայն կին լինել : Բայց Ֆուլիկ խորհուրդ կուտայ նմա ծածկել հորմէն զիւր սէրն և նորա ամէն կամաց հաւանութիւն ցոյց տալ : Դա՛նք պայման հնազանդութեան որում յանիրաւի կը դատապարտեն ծնողք իւրեանց զաւակունքն երբ խնդիրն իւրեանց սրտին ընկերն ընտրելոյ վերայ է : ոճի՛ր բնութեան դէմ որ միշտ անվրէպ է ի պատուհասել զայնս որք իւրեան դէմ կը գործեն :

Բայց Սուրէն պէ՛յ իւր հիւրերն կ'ընդունի : Այդ այցելութիւնն մի մեծ կարեւորութիւն ունի իւրեան համար . իւր աղջկան ամուսնութեան խնդիրն պիտի որոյժէ և նորա ապագայ կենաց ընկեր մի պիտի տայ, առանց անշուշտ նորա գիտութեան, որպէս սովորութիւն է մեր շատ ընտանեաց մէջ, յորս ամուսնութիւնն կը կատարուի իրբեւ մի գործ, մի առեւտուր յորում աղջիկն կը տրուի իրբեւ վաճառք, և փոխարէն այրին քով մի լեցուն քսակ միայն կը փնտռուի :

Սուրէն պէ՛յ աղնուականութեան պահանջումն ունի և խրոխտ է հին թղթերու վերայ որք իւր բոլոր արժանիքն կը կազմեն : Իւր հիւրերն կ'սկսի ձանձրացընել իւր աղնուականութեան փաստերովն և իւր նախնեաց փառքերուն պատմութեամբն : Սուլթան Մահմուտ որ մի իւր հաւուն տունն եղել է . իւր պապերն տէրութեան ծառայութեանց մէջ իւրեանց կեանքն անցուցել են, և զայսուսիկ հաստատող վաւերագրեր՝ ունի : Բաւական չե՛ն միթէ սոքա զի Սուրէն պէ՛յ, այդ հոյակապ մարդոց յետին շառաւիղն, մարդկան մնացորդին վերայ արհամարհոտ աչօք նայի և զինքն քան զնոցայն բարձր բնութեան տէր նկատէ : Եւ սակայն Սուրէն պէ՛յ կատարեալ նկարագիր մի է նախապաշարեալ, խրոխտագանձ և ամբարտաւան հայ — աղնուապետութեան որ,

զաղնուականութիւնն փոխանակ անձնական արժանեաց մէջ որոնելոյ, ցեցակեր թղթոյ պատառներ կամ մեռած յիշատակներ վկայ կը կոչէ իւր աղնուականութեան և կը կարծէ թէ արժանիքն այլ կարէ հարստութեան հետ փոխանցել և ժառանգութիւն մի լինել : Թիժաղելի՛ աղնուականութիւն զոր մարդ արկեղ մէջ կը կրէ : Սուրէն պէ՛յ ին համար ամէն այնքիկ որք աղնուական չեն՝ մարդ չեն, և անծանօթի մի վերայ իւր առաջին հարցումն է թէ ո՞ր զաւակ է, աղնուականի՞ թէ անտոհմի :

Ուստի, երբ կ'իմանայ թէ Արշակ ուսումնական այլ ապատոհմ երիտասարդ մի է, առանց թոյլ տալոյ նմա նստել, իրբեւ մի մեծ շնորհ, հազիւ կը զիջանի հրաման տալ նմա շրջել պարտիզին մէջ : Բայց իւր ապագայ փեսայն խիստ լաւ կը գտնէ, քանի որ հարստութիւն և աղնուականութիւն իւր վերայ կը միացնէ :

Խուն ինչ յետոյ, սակայն, բնութիւնն, որ խտիր չճանաչէ, աղնուականին աղջիկն և անտոհմին զաւակն գողցես մագնիսական զօրութեամբ միմեանց կը հանդիպեցնէ : Արշակ և Ագապի պարտիզին մէջ միմեանց կը պատահին . երջանի՛կ վայրկեան՝ այն յորում երկու գիրեար սիրող արարածներ զինքեանս միայնակ կը գլուխեն երկնից կամարին և ծառոց հովանւոյն տակ : Երկու սիրահարներն միմեանց գրկաց մէջ զաշխարհ կը մոռանան և սիրոյ անոյժ գգուանօք կ'արբենան : Սակայն այդ նեկտարին մէջ մի թոյն կը խառնի . Ագապի այլում խոստացեալ է . այս բօթն Արշակ կու տայ նմա : Ագապի, որոյ պարզ և անփորձ սիրտն չկարէ տակաւին ըմբռնել թէ քանի՛ նուաստութիւնք և գձուձ չահախընդրութիւնք ամուսնութեան սրբազան կապն կը պղծեն, կ'ազաւորվէ զիւր սիրելին թէ չպիտի բաժանի ի նմանէ . Արշակայ շրթանց վերայ մի դառն ժպիտ կը յայանէ թէ անկարելի է այս և թէ հարկ է բաժանիլ : Ալեքսան պատուելի, կանանց ատեցողն, որ ի թագստի սոյն տեսարանն կը գիտէր և կը խայտայր խնդութենէն, Մարտիրոս աղայի վերայ իւր յաղթանակն արդէն տարած

համարելով , յանկարծ յերեւան կու գայ և , իբրև յերկնից անկած մի շանթ , երկու սիրատարի աղաւնեաց մնչիւնն սոսկմամբ կը լուեցնէ : Քիչ յետոյ , կու գան Տիկ Անթառամ , Սուրէն պէյ և Մարտիրոս աղա . և մինչ Սուրէն պէյ զՏիկ Անթառամ իւր թեւն առնելով ի ճաշ կ'առաջնորդէ , Ալեքսան պատուելի զԱգապի թեւակից կու տայ Արշակայ , և նոցա ետեւէն մի յաղթական ժպիտով իւր մօրեղբօր կը նայի , ժպիտ որ կ'ուզէր ըսել . Տէ՛ս այն աղջիկն որ շգիտէ թէ ի՛նչ է սիրելն :

2

Երրորդ արարուածն եմք . հանգոյցն , քրնի իւր լուծման կը մօտի , ա՛յնքան կը կնճռոտի :

Տիկին Անթառամ Մարտիրոս աղայի կը յայտնէ թէ Արշակ սիրահար է իւրեան և կ'ազաչէ զայն որ իւր կողմանէ ըսէ Արշակայ թէ ինքն այլ զնա կը սիրէ և թէ կ'ուզէ երջանիկ ընել զնա ամուսնութեամբ : Ո՛հ , անիծեալ պառաւներ որք շեն ուզեր բնաւ ձեր լինել : Խօստ տաք է , սակայն , տեսարանն որ կը հետեւի : Բոլոր խաղուն մէջ ամէնէն ճարտար կացութիւնն է այն , յորում Մարտիրոս աղա Անթառամի սէրն Արշակայ իմացընելոյ ատեն , Արշակ ( որովհետեւ Մարտիրոս աղա առանց անուանելոյ կը խօսի ) , կարծելով թէ խնդիրն իւր սրտին հատորին վերայ է , կը կարմրի , կը կակազէ , հուսկ ուրեմն կը խոտտովանի , և թո՛ղ ընթերցողն դատէ երկոցուն այլ տարօրինակ ապշութիւնն , երբ երկոքին եւս իւրեանց պատրանքն կ'իմանան : Այս յայտնութիւնն մի հարուած է շանթի Մարտիրոս աղայի զվտոյն որ արդէն ողբալ կ'սկսի իւր չորս հազար ոսկին . բայց վերջին փորձ մի եւս , և կ'սկսի համոզել զԱրշակ որ հեռանայ . յանկարծ Ագապի կ'երեւի , և երկու սիրահարք զիրկընդ խառն միմեանց կը փարին : Մարտիրոս աղա մօտ է ի յիմարել . մի կողմէն կը ջանայ զայն յիրերաց բաժանել , միւս կողմէն դէպ ի դուռն կ'երթայ վախնալով թէ վերայ

կը հասնին : Արշակ և Ագապի , միշտ բռնութեամբ անջատուած , միշտ կրկին առ միմեանս կը դիմեն . հուսկ ուրեմն սրտապատառ հրաժեշտներով յիրերաց կը բաժանին , և Մարտիրոս աղա իւր ստոյգ մարտիրոսութիւնն յանգ կը հանէ : Այս տեսարանն ո՛րքան սրտաշարժ , ա՛յնքան ծիծաղաշարժ էր . ողբերգականն ու կասակերդականն այնպէս ճարտար յիրեար խառնուած էին , զի հանդիսականն չկարէր իւր ծիծաղն զսպել մինչ իւր աչաց մէջ արտասուաց բղխումն կ'զգայր :

է

Վերջին տեսարան մի այս ամէն աղետալի պատրանաց ցրումն և գործողութեան վախճանն կը բերէ :

Սուրէն պէյ , Մարտիրոս աղայի և Ալեքսան պատուելոյն ներկայութեան , իւր դստեր և պատուելոյն ամուսնութեան վերջնական որոշումն տալ կ'ուզէ : Ալեքսան կը պնդէ աղջկան կամքն հարցուելոյ հարկին վերայ . նախապաշարեալ հայրն կը սրտմտի . ինքն հաճած է . իւր կամքն իւր աղջկան կամքն չէ՞ : Ալեքսան կը յամառի և Սուրէն պէյ կը խոնարհի : Ագապի կը կոչի . կ'առաջարկէ հայրն որ իւր հաճութիւնն տայ այս ամուսնութեան զոր ինքն պատշաճ կը դատէ : Կը լռէ Ագապի . հաւանութեան նշան կը համարուի իւր լռութիւնն , և այն վայրկեանին ուր հայրն նորա ձեռնն կ'առնու միացընել Ալեքսանին ձեռին հետ , Ագապի կը նուազի : Սուրէն պէյ կը շուարի , Մարտիրոս աղայն ապուշ կը կտրի և Ալեքսան պատուելի ամուսնութեան փռանգէն մի անգամ եւս ազատած լինելոյն կը բերկրի : Գարմաններու միջոցին նուաղեալ օրիորդին կուրծքէն նամակաց ծրար մի դուրս կը թափի . Սուրէն պէյ զարմանօք կ'առնու մին . Արշակայ զիրն է . Արշակ , անտո՛հմ թ շուառական մի , իւր աղջկան սիրահարն : Կատաղութեամբ կը բորբբքի Սուրէն . իւր ազնուականութիւնն նուաստացեալ կ'զգայ և ամօթահար ցայն վայր խաբկանաց խա-

զարկի լինելոյն : Սակայն Արշակ միայն կարող է իւր ազնկան կեանքն փրկել , Արշակայ ձեռնն , Ինչ մեծ հարուած իւր գոռողութեան . հարկն կ'ստիպէ , սակայն . Արշակ կը հասնի . նորա ձայնն ու ներկայութիւնն տակաւ առ տակաւ զգայութիւն կու տան նուազելոյն : Այլ եւս չի՞ք հնար . մատնուած է Սուրէն . բնութիւնն իւր ազնուական հպարտութիւնն կը ջախջախէ . կամայ ախմայ հարկ է ընդունիլ զԱրշակ իւրեան փեսայ . ո՛հ , գոնէ Գուռն մի սլաշտօն ունենար : Այս միջոցին Տիկ Անթառամ , իւր վերջին սիրոյն մէջ խարուած , իւր թառամեալ յոյսերն կ'ողբայ . Սուրէն պէ՛յ , մինչ աչերէն Արշակայ և իւր ազնկան վերայ բարկութեան բոցեր կը թափէ , դողդոջուն ձեռք զայնս յիրեար կը մօտեցնէ և նոցա ձեռներն կը միացնէ , և Ալեքսան սպտուելի այս խօսքերով . որք խաղաւն բարոյականն կը սարունակեն , այն տեսարանն կը վերջացնէ . « Ամուսնութեան մէջ մի՛ խնդրէք ո՛չ հարստութիւն և ո՛չ ազնուակաւնութիւն , այլ սիրտ . . . »

Ը

Մի քանի բառ այլ դերասանաց վերայ :

Պ. Ս. Պէնկլեան իւր վերայ խիստ լաւ պատկերացուցած էր գոռող ու հպարտ ազնուական մի , և խօսուածքին ու շարժուածքին մէջ շատ յաջողութեամբ կը ցուցնէր այն արհամարհանքն զոր զինքեանս մեծ կարծող մարդիկ ունին իւրեանցմէ ստորիններուն նկատմամբ : Պ. Գ. Ոչտունի կատարեալ էր իւր դերին մէջ . զայն տեսնողն կը կարծէր տեսնել այն սլաշտոտ ձերուներէն մին որք , շատ ասլաւ լինելով , ամէն բանի փորձառութիւն ունենալ և զինքեանս անսխալ կը կարծեն : Պ. Թ. Նալեան զուարթ փիլիսոփայի մի դերն թերեւս քիչ մի չափազանցութեամբ կը կատարէր : Պ. Թոսպաղեան զժուարին դեր մի ընտրած է — սիրահարի դերն — որոյ մէջ իրաւ է թէ բաւական յաջողակու-

թիւն ցոյց կու տայ , սակայն չէ կարելի ըսել թէ թերութիւններէ զերծ է : Չկայ թերեւս մի դեր որ սիրահարի դերին չափ զգացումն և մի և նոյն վայրկենին միմեանց հակառակ կրից իւր դիմաց և կերպարանաց վերայ ցոյց ատլն պահանջէ : Պ. Թոսպաղեան խաղուն առաջին ներկայացման , որում միայն կարացի հանդիսատես լինել , երրորդ արարուածոյն վերջին տեսլեան մէջ մանաւանդ չկարաց պէտք եղածին չափ զգացումն յայտնել : Դոյզն ինչ առաւել աշխոյժ և զգայնութիւն զՊ. Թոսպաղեան կարեն իւր դերին մէջ կատարեալ դերասան մի գործել :

Գերասանուհիներէն Օր. Ա. Հրաչեոյ սիրուհոյ դերն գեղեցիկ ու հաճոյ եղանակաւ կատարեց . քիչ մի աւելի դիւրաշարժութիւն և կայտուութիւն անյարմար չգան իւր հասակին ու դերին , և իւրեան աւելի հրապոյր , ու շնորհք կու տան իւր կերպերուն որք արդէն այնքան զմայլելի ու սիրուն են : Օր. Թ. Չուհաճեան պառաւի դերն իւր վերայ լաւ յարմարեցուցած էր . միայն թէ իւր դողդոջումն մերթ կը մոռնայր մերթ կը յիշէր , և բառերն յիշելոյ և արտասանելոյ մասին դոյզն ինչ զժուարութիւն կը կրէր : Օր. Ա. Չուհաճեան գաղիարէն փափուկ ու գեղեցիկ արտասանութիւն մի ունէր , և իւր ձեւերն կարծեցեալ գաղիացի տիկնոջ մի հպտանացն ու շարժմանց մի յոյժ բնական նմանութիւնն էր : Գալով Օր. Վ. Գարագաչեանի , սա , եթէ իւր դերին նըկատմամբ խիստ փոքր չլինէր , կատարեալ պիտի լինէր իւր մասին մէջ . բայց այս չարգելու որ ինքն սքանչելի եղած լինի իւր դերին կատարման մէջ : Այս փոքրիկ դերասանուհոյն վերայ տակաւին խիստ կանուխէն մեծ դերասանուհոյ մի ձիրքերն տեսնուած են : Գեռ խիստ մատաղ , Հայ — թատեր վերայ անմահ Նալլանդեանի « Ազատ Աստուածն » այնքան աշխուժիւ և զգացմամբ կ'արտասանէր որ յաճախ արտասուք խլած են աչերէ իւր աղու ձայնին սրտաթրթիւ հնչիւններն : Գ. Վ. Գարագաչեան իւր ծագման ատեն աղղած հիացումն



հետ զհետէ կը կրկնապատկէ , քանի վեր կը բարձրանայ  
իւր հորիզոնէն :

Ի վերջոյ կը շնորհաւորեմք Օսմանիյէ թատրոնին Տնօ-  
րինութիւնն իւր երեկութից շքեղութեանն ու կանոնա-  
ւորութեան մասին տարած ջանիցն համար , և կը քա-  
ջալերեմք որ շարունակէ տալ թատերասէր հասարակու-  
թեան « Աղկան մի Օթիտ » ին նման խաղեր , որոց մէջ  
Հայ ընկերութիւնն զիւր անձնն իւր ողբալի նախապա-  
շարունակերոյն և մոլութիւններով պատկերացած տեսնէ  
և գտնէ այն խրատն ու դասն որ յորդոր լինին իւրեան  
ի կատարելագործութիւն անդր դիմելոյ :

1871 Դեկ. 12



Կ Ի Կ Ի Ն Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ի Ք

ԱՌ ՉԱՄՈՒՐՃԵԱՆ ՊԱՏՈՒԵԼԻ

Ա

Չառամեալ Հայ թէղուիթն , զոր Հայ ժողովուրդն  
քաջ կը ճանչէ , և որ երբեմն՝ իբրեւ շարագուշակ մոլո-  
րակ՝ Զօհալ և Երեւակ անուններով Հայ գրականու-  
թեան երկինքն ընդ երկար պղծելէ յետոյ , ժամանակին  
ազատամիտ մամուլոյն սփռած լուսասլաք ճառագայթներ  
րէն հալածական զօղած էր ամօթապարտ , այս օրերս  
մերթ ընդ մերթ յերեւան կու գայ վերստին՝ գրական  
հրատարակի վերայ իւր աղիտաբեր դերն շարունակել ,  
անշուշտ խրախուսուած նորա արդի մթին կացութե-  
նէն , որպէս գայլ ի մշտապատ օդոյ և ջղջիկ ի գիշերա-  
յին խաւարէ :

Այս մարդն , այո՛ , անծանօթ չէ՛ Հայ հասարակու-  
թեան . ինքզինք բազմագլխեան անուամբ մի կ'ստորա-  
գրէ , ինչպէս երբեմն մի օրագրոյ մէջ նկարել էին զնա  
ի կերպարան եօթնգլխեան վիշապի . այդ անունն է Յով-  
հաննէս Պր. Տ. Կարապետ Տէրոյենց Չամուրճեան : Բայց  
Հայ և գրական աշխարհներու մէջ նա բազում այլ ա-  
նուններ ունի և տիտղոսներ որք զինքն քաջիկ եւս կը  
նկարագրեն , և այդ անուանք են Հայ Լոյսը , Հայ Ռո-  
տէն , Հայ Ֆրէրոն , որովք Հայկական մամուլն մկրտած  
է զնա ի վարձ իւր դիւահանձար տաղանդին . այդ ան-  
ուամբք ճանչցած եմք և մեք զնա , երբ , տակաւին մա-  
նուկ , դպրոցական գրասեղաններուն վերայէն հանդի-  
սատես կը լինէաք խաւարի այդ զաւակին լուսոյ դէմ  
ասլիկար և հայհոյալից կոիւներուն :

Այս մարդն, որ երբեմն՝ ի թշուառութենէ ազգին՝  
 ակտու ունէր ազգային Ուսումնական Խորհրդոյ մէջ,  
 բայց զոր Հայ ազգն երկար ատենէ ի վեր արհամարհա-  
 նօք մէկդի՝ նետած է ամէն ազգային սլաշտօնէ, այս  
 մարդն, թէպէտ աշխարհական, բայց Հայ ազգին ան-  
 վեղար կաթողիկոսն կամ անխոյր Պապն դաւանած է  
 ինքզինք, զիւր անձն կրօնական խնդիրներու վեհագոյն  
 իրաւարար դրած և տեսնելով թէ Հայ եկեղեցւոյն մէջ  
 հաւատաքննութեան կամ Էնտէքսի մի փրկարար ատեան  
 կը պակսի, յօգուտ և իշան կրօնի՝ անձնուիրաբար զայդ  
 պաշտօնքն ստանձնած է, ցաւելով անշուշտ թէ կը պա-  
 կասի իւրեան բոցերու սրբագործ զօրութիւնն:

Թէպէտ Հայ անուն կրող և ինքզինք անդամ անուա-  
 նող Հայաստանեայց Եկեղեցւոյ, սակայն գիտէ ամէն  
 ոք թէ այդ անուանք իբրեւ դիմակ են իւր երեսի վե-  
 րայ, թէ իրօք Հայ ազգայնութեան մեծագոյն թշնամին  
 եղած է միշտ, թէ, վարձկան մրիչ, կրօնի շահուն  
 պատրուակաւ Հայաստանեայց Եկեղեցւոյն հիմն փորած  
 և զնա լատինականութեան մահաբոյր գրկաց մէջ նետել  
 նկրտած է ցանդ, և թէ, յէզուիթ խաւարասէր, միշտ  
 ամէն յառաջդիմութեան թշնամի եղած և խաւարն ու  
 ազիտութիւնն ժողովրդեան մէջ յարատեւ պահելոյ  
 նուիրած է իւր կեանքն որ անտարակոյս չար ոգւոյ մի  
 աղիտարբեր պարզեւն է առ Հայ ազգն:

Այո՛, այս մարդն, իբրեւ մի սեաւ անդդ հսկելով  
 միշտ արթուն հայկական աշխարհի երկնից մէջ, մի փրո-  
 կութեան աւետիսն բերող աղաւնոյ դալուստն լրտե-  
 սած է անքուն, և ընդ նշմարելն անդէն կատաղաբար  
 վերայ յարձակած և զայն բզբտել ջանացած է. ո՛ւր որ  
 մի վեհ սիրտ տեսած, յայն իւր մագիլն է անցուցած.  
 ուր որ լուսոյ մի նշոյլ նշմարած, ժանտ շնչով մարելոյ  
 է վազած. ո՛ւր որ մի թուիչ յառաջդիմութեան, ան-  
 դէն ջլատելոյ է դիմած. ուր որ մի շունչ ազատու-  
 թեան, իսկոյն հեղձամղձուկ խեղդելոյ է փութացած:  
 Ամէն Հոմերի դէմ՝ Զոյիւ, ամէն Սոկրատի դէմ՝ Անի-

տոս կամ Մելիտոս, ամէն Մոլիէրի դէմ՝ Վիզէ, և ամ-  
 ւէն Վոլթէրի դէմ՝ Տրէրոն է եղած: ԶՇահնազար՝ խա-  
 ծած, Նալպանդեանի դէմ՝ թոյն ժայթքած, Ոսկանեա-  
 նի դէմ՝ պոռչտած, Ա. Հայկունոյ, Մամուրեանի և  
 Զիլինկիրեանի դէմ՝ մուշած, և Գարագաշեանի դէմ  
 աքացած է. ամէնքն այլ սիրելի և վեհ անուններ որք  
 անմահ պիտի մնան Հայ պատմութեան և հայ սրտերու  
 մէջ, իրբեւ անուանք առաջնորդաց ազգին ի լոյս ճշմա-  
 րիտ քաղաքակրթութեան, մինչդեռ իւրն, ամօթապարտ,  
 պիտի ձգվի նոցա ոտից տակ, որպէս նկարի օձն ընդ  
 դարչապարօք կուսին:

Միջին դարու յետսամնաց որդի և փտած ու բոր-  
 բոսած դաղափարօք տողորեալ այդ մարդն, որ, Հայ  
 Թորքուէմստա, դեռ անցեալ օր Պատ. Ա. Մ. Գարա-  
 գաշեանի խիղճը կը քրքրէր և, նախանձո՛տ նորա համ-  
 բաւոյն ու արժանեաց, նորա մէկ դասագրքին նկատ-  
 մամբ Էնտէքսի պաշտօն կատարելոյ կ'ելնէր և կորակոր  
 կը փախչէր զրական հրապարակէն, մի նոր փոխուէք  
 կը փոխէ հոն այս օրերս Հայրենիք լրագրոյ 213 թիւ  
 թերթի մէջ:

Ինքզինք ինչպէս միշտ, և այս անգամ մի անխալ  
 հեղինակութիւն և ամենագէտ երեւակայելով, քննու-  
 թեան ատեան կը բանայ ազգային վարժարանաց դա-  
 սատուններու, և մինչ զմեզ քննադատել և խրատել կը  
 կարծէ, գամ մի եւս իւր տգիտութիւնն և ուղեղային  
 աղքատութիւնն կը խայտառակէ մերկապարանոց:

Այս անգամ Հայ Ժիզուէթին մաղձին պայթման տե-  
 ղի տուած է մեր մի ճառն զոր խօսած եմք ի 28 յու-  
 լիսի, յՈճատլլէ, ի հանդիսի պարգեւաբաշխութեան  
 երկսեռ վարժարանի թաղին, իբրեւ դասատու դպրո-  
 ցին, և յորում միջնադարեան Պատուելոյն դժոխորկոր  
 ստամբան չէ կարացած մարտել այն դիտողութիւններն  
 զոր կ'ընէի Հայ կղերին կրօնամուլ միտմանց դէմ:

Իւր և իւր նմանեաց սովորական զէնքերն՝ ստութիւն  
 և զրպարտութիւն՝ առնելով ի ձեռն, կ'սկսի նախ

բանիւլ թէ զայն ճառն կարդացել եմք ի դժգոհութիւն մեծ մասին ունկնդրաց, մինչդեռ թէ՛ նոյն ճառն և թէ՛ նոյնին նկատմամբ Արժ. Գ. Արուանձտեանց վարդապետի մի բարեմիտ դիտողութեանն ի պատասխան ըսած մի քանի լուսաբանական խօսքերս բոլուն ծափահարութեամբք ընդունուեցան հանդիսականաց կողմէն, և, ինչպէս Ամեն. Խրիմեան Սրբազան, նոյնպէս և այլք թէ՛ առանձինն և թէ՛ հրապարակաւ զայն հրատարակեալ տեսնելոյ բաղձանք յայտնեցին ինձ :

Իւր շինել ուզած սաղայելեան ամբարտակին այդ առաջին քարն դնելէ յետոյ, իբրու թէ իմ դիտողութիւնքս համառօտելով կ'ըսէ : « Ասոր դրութեան նպատակը՝ կրօնըր ո՛չ միայն դիտութեանց՝ այլ և ազգութեան ալ անօգուտ է ; միայն կրօնամոլ շատցնելու կը ծառայէ եղեր ազգին մէջ : »

Իմ դիտողութիւնքս ահա՛ ատնք էին .

« Աստ ներեցէք ինձ դիտողութիւն մի ընել . կարեւոր է յոյժ : »

« Կղերն, ո՛չ միշտ անկեղծութեամբ, կը պնդէ և կը ջանայ համոզել թէ կրօնական զգացումն է լոկ այն շաղախն որ մեր ազգութեան պատուարն անքայքայ կարէ պահել, և Հայ մնալոյ համար կ'ուզեն որ նոյն իսկ կրօնամոլ լինի ոք . այո՛, վարդապետ մի լսած եմ որ Եկեղեցւոյ բեմէն ատելութիւն, յաւիտենական ատելութիւն կը քարոզէր ընդդէմ ամենայնի որ հայակրօն չէ . ո՛վ միջին դար, դեռ չեն պակաս քեզ արժանի զաւակներ : Այդ վարդապետն նաեւ, առ զաչացու ատելութեանն, մի ուրիշ լուսամիտ վարդապետի գրած գրքին մէջ « Եւրոպական լուսաւորութիւն » խօսքն կը սրբազրէր « իմա Եւրոպական խաւար » գրելով :

« Կրօնքն կը պաշտեմ . ի մարդն ամէնէն վսեմագոյն զգացումն է կրօնական զգացումն . Աստուծոյ և մարդկութեան մէջտեղ միութեան մի գիծ է այն վսեմ . ամէն Հայոյ պարտք է միանգամայն յարգել ու սիրել Հայաստանեայց եկեղեցին որ նուիրական պարտի լինել մեզ

իրբեւ հայրենական . բայց կրօնամոլութիւնն չէ որ առ հասարակ սիրելի կ'ընէ զՀայաստանեայց եկեղեցին, այլ հայրենասիրութեան զգացումն : Այս տեսութեամբ Հայոց Պատմութիւնն մի ապահովագոյն կրօնագիտութիւն է :

« Ըսել կ'ուզեմ թէ այս միջոցն, որում այնպէս սերտիւ կը յարի Հայ կղերն մեր ազգային մարմինն ամբողջ պահելոյ նախանձաւորութեամբ, յոյժ տկար է . այն երկու բան յառաջ կը բերէ . կրօնամոլներ և անտարբերներ . կրօնամոլներ որ զԵւրոպական լուսաւորութիւնն խաւար կը կոչեն, քանզի հայակրօնական չէ . անտարբերներ որ երբ կրօնի զգացումն չունին, առ ազգն ամէն կապէ զերծ կ'զգան զինքեանս :

Ազգի լուսամիտ սէրն, ազգայնութեան զգացումն, ահա՛ ինչ որ կը պակսի ընդհանուր կերպիւ, այն որ միակ լծակն է անկեալ Հայութեան \* : . . . »

Ընթերցող բարեկամ, քեզ կը թողում դատել թէ ո՛րքան ատելութեամբ ու մախանօք կուրացեալ լինել պարտի ոք իմ այս խօսքերէն վերոյգրեալ եզրակացութիւնն հանելոյ և ըսելոյ համար թէ ես կրօնքն անօգուտ իմն դատած եմ և կրօնամոլներ միայն շատցնելոյ յատուկ :

Դու, որ զամէնն քննելոյ կ'եղնես իբրու թէ քան զամենեսին ի վեր լինէիր, և որ կէս դարէ աւելի է թուղթ կը մրոտես, Պ. Չամուրճի, ինչպէս չկրցար հասկնալ թէ ես կրօնաւորութեանն դէմ խօսած եմ և ո՛չ թէ կրօնքի, կրօնամոլութեան որ մարդկային սեռին մեծագոյն պատուհասն եղած է . այո՛, հայ կղերին կրօնական այն մոլի եռանդին դէմ որով կը դատապարտէ նա զամէն ինչ որ հայակրօնական չէ, կարծելով իմն կամ տալով կարծել թէ այնու ազգային մարմնոյն ամբողջութիւնն կը պաշտպանէ : Հայ կղերին կրօնական մոլի եռանդն, չէի՞ր տեսներ, իմ ճառին մէջ մի ներկայացուցիչ ունէր՝ որ իննետասներորդ դարուն մէջ

\* Տես էջ 145

սա սոսկալի վճիռն կ'արձակէր . « Եւրոպական լուսաւո-  
րութիւն՝ իմա եւրոպական խաւար : »

Ես , յետ պարտք դնելոյ ամէն Հայոյ սիրել և յար-  
գել զՀայաստանեայց եկեղեցին իբրեւ հայրենական և  
անշուշտ իբրեւ մեր ազգային մարմնոյն մեծագոյն մա-  
սին միութեան վարակսն , կը դիտէի թէ զայս եկեղեցին  
առ հասարակ սիրելի ընողն ո՛չ թէ կրօնական զգացումն ,  
մանաւանդ կրօնամոլութիւնն է , այլ հայրենասիրու-  
թեան , ազգայնութեան զգացումն , և այս զգացման  
մշակութեան կարեւորութիւնն կը շեշտէի : Քանզի ան-  
տարակոյս , ո՛րչափ և ճգնի կղերն մոլեռանդ և ո՛րչափ  
քրտնին Չամուրճիական ճակատքն խաւարին , ա՛լ կրօնա-  
մոլութեան դարն անցած է և մարդկային խղճի ազատու-  
թիւնն հռչակուած : Այնպիսի ժամանակի մի մէջ , ուր  
ո՛չ ոք կարէ զայլոյ խիղճն բռնարարել , ուր անցնիւր  
ոք միակ միջնորդ է ընդ իւր հոգին և ընդ Աստուած ,  
ուր ժողովուրդն այլ եւս կղերին բերնէն թափթփած  
խօսքերն իբրեւ պատգամ աստուածային ընդունելէ  
դադրած է , ուր գիտութիւնք և փիլիսոփայութիւն  
տակաւ մարդկային մտաց և խղճի շղթայներն իսպառ  
խորտակել կը նկրտին , և ուր կրօնական սկզբունք և  
կարծիք , գերծ այն կապանքներէն զոր կը դարբնէին  
միջնադարեան աններողութիւնն և արհաւիրք խարու-  
կաց , ազատօրէն իւրաքանչիւրոյ մտքին մէջ կը քննադա-  
տին և հետեւապէս կը տարբերին , անտարակոյս այս-  
պիսի ժամանակի մի մէջ և տակաւ կրօնական զգացումն  
չկարէ « մեր ազգութեան պատուարն անքայքայ պահող  
միակ շաղխն » լինել , այլ հայրենասիրութեան , ազ-  
գայնութեան զգացումն , և այս զգացումն միայն կարէ  
առ հասարակ կրօնական ո և է կարծիք ունեցող ամէն  
Հայոյ սիրելի գործել զՀայաստանեայց եկեղեցին և յա-  
րակցորդ պահել զնա ընդ նմին . քանի որ , ինչպէս ըս-  
տած եմ , ի բերմանց և յարկածից ժամանակին , Հայ  
ազգն այսօր յաչս քաղաքականութեան իբրեւ եկեղեցի  
միայն անհատականութիւն ունի :

Բայց դու , որ ազգայնութեան անունէն կը դողաս  
և զոյգ ընդ շահամու կղերին կը վախնաս ձեռքէ փախ-  
ցընել այն բանն՝ զոր արտաքուստ կրօնք կ'անուանես  
և որ ի ներքուստ միայն մէկ նշանակութիւն ունի քեզ  
համար — շահ — դու , Պ . Թաութիւժ , այս ճշմարտու-  
թիւններէն պիտի խրտչէիր անշուշտ և , լուսոյ այս կայ-  
ծէն զարհուրած , մենարանիդ խորէն ճուշ ու մուռնչ  
պիտի արձակէիր , « գայթակղութիւն , գայթակղու-  
թիւն » գոչելով :

Յետոյ մեր պատմագէտ — աստուածաբան պատուե-  
լին , խնդրոյն խորն մտնելով , ազգաց ծագման և միու-  
թեան միջոցներուն վերայ մեզ և Տէր Խելիւժ Բարդուղի պատ-  
մութեան և պատմական փիլիսոփայութեան դաս մի  
տալ կ'երնէ , մեր աշակերտաց իրենց աշակերտաց ու-  
սուցած Հայկին , Բէլին , Աբգարին պատմութիւններն  
մանուկներէ ոչինչ աւելի խելքով կը թոթովէ , կը կրկնէ ,  
և , այս ամէնուն վերայ տղայական իմաստասիրութեանց  
չարք մի այլ յաւելլով , ստուգիւ իւր պատմագիտու-  
թեան , տրամաբանութեան և փիլիսոփայութեան վերայ  
ամէն ընթերցողի խնդուքն , ի՛նչ կ'ըսեմ , զարմանքն կը  
դրգուէ :

Բաբելոնի աշտարակայինութենէն յետոյ , ի խառնա-  
կել լեզուաց , Հայք իւրեանց սեպհական լեզուն տէր  
են մնացել . Հայկ Բէլի յաղթել է և պետութիւն մի  
հիմնել է , և այս ազգութեան երկրորդ կապն եղել է .  
յետոյ Աբգարու և Ս . Լուսաւորչի ատեն Հայք քրիս-  
տոնեայ լինելով , ազգութեան երրորդ կապն վերայ է  
եկել եղեր , որ է կրօնքն . բայց հիմայ Հայերն ինքնա-  
գլուխ կառավարութիւն չունենալով և իւրեանց լեզուն  
մոռցուած , բաժանուած և աղաւաղուած լինելով , ազ-  
գութեան այս երեք կապերէն միայն կրօնքն մնացել է ,  
և ասով է եղել որ Լուսաւորչական հայ , Պապական  
հայ , Հայ Հռոմ , Բողոքական հայ ազգութեան անունն  
իւրեանց վերայ պահեր են , թէպէտ յայլեւայլ ճիւղ  
բաժանեալ :

Վայ քեզ, վայ քեզ նման պատմագիրին որ կարճ խելքովդ ունեցած մանանեխի չափ հմտութիւնդ բաղմամբիւրդ և երկնամբարձ մի ծառ կը կարծես և գէթ առանց տեղեակ լինելոյ ազգագրական և բանասիրական նորագոյն գիտութեանց՝ ազգաց և լեզուաց ծագման և բաժանման վերայ սփռած նորագոյն լոյսերուն, կը փութաս հասարակաց տեղեօք վճիռ արձակել այնպիսի խնդրոց մասին որոց ստուգութիւնն հնութեան ժամանակաց մշտնապէս պատած է :

Թողով հարցանել թէ ի՞նչ կը նշանակէ « Հայք իրենց սեփական լեզուին տէր մնացին » խօսքն, թէ արդեօք այս խօսքէդ չհետեւի՞ թէ ուրեմն յառաջագոյն ամէն ազգ մի լեզու չէ եղել, ինչպէս կ'ըսես, և թէ եթէ Հայք իւրեանց լեզուին տէր մնացին՝ այլ ազգք ի՞նչ ըրին իւրեանց լեզուն, թողով տագնապել զքեզ այս հարցումներով, կը հարցանեմ թէ արդեօք ստուգի՞ւ մեր լեզուն մեր ազգայնութեան մի նշանն ու յօդակայն չէ, թէ արդեօք նորա արդի աշխարհաբարին այլեւայլ գաւառաբարբառներու բաժնուիլն արդե՞լ ինչ է իւր միութեանն, թէ յաշխարհի ո՞ր լեզու իւր գաւառաբարբառներն չունի և չէ ունեցած, թէ նոյն իսկ գրաբարն, զոր անգործածելի կը կոչես, պէտք չէ՞ որ գէթ դու մեռեալ չհամարիս, քանի որ անբաժին մնացած է կրօնքէն զոր պաշտպանել կը կարծես, և թէ յիրաւի՞ արդեօք լեզուն, որ Հայ ազգին վայրավատին ու տարանջատ մասերուն մէջ միակ ու ամբողջոյն կապն է զոյգ ընդ ազգային պատմութեան և սգւոյն, իրրեւ զօր ազգայնութեան առ ոչինչ համարելոյ պաշտութիւնն ունիս :

Բայց եթէ կրօնն մի կապ է ազգութեան, ինչո՞ւ կ'ըսես թէ այդ կապն քրիստոնէութեան հետ եկաւ ազգին վերայ. միթէ յառաջ քան զԱբգար Հայք կրօնք չունէին. ո՞ր ազգ, ո՞ր ժողովուրդ կրօնք ունեցած չէ. և եթէ քրիստոնէութիւնն ազգութեան մի կապ է, ապա ուրեմն ամէն քրիստոնեայ ժողովուրդք մի ցեղ և մի

ազգ են. և եթէ այնպէս է, ինչո՞ւ Վեհ. Կաթողիկոսն բողոք կը բառնայ Ռուսիոյ կառավարութեան դէմ Ռուսահայոց ազգային վարժարաններու խնդրոյն համար. ո՞չ ապաքէն և Ռուսք քրիստոնեայ ժողովուրդ մի են, ո՞ւրտի է երկիւղն. իսկ եթէ Հայաստանեայց եկեղեցին է մեր ազգութեան միակ զօրն, ուրեմն մեր ազգի այն մասունքն, որ յայլ եկեղեցի դիմած են, այլ պէտք չէր որ Հայ կոչէինք և ամենեւին օտարացեալ համարէինք ի մէնջ. և եթէ սոքա անջինջ պահած են իւրեանց վերայ զՀայ անունն և մեք զնոսին մեր արեւակիցքն ու մեր եղբարքն կը ճանչեմք, որո՞յ շնորհիւն է. կրօնքին, ինչպէս կը հետեւցնես, թէ Հայ արեան, ազգայնութեան զգացման, ազգային լեզուին, ազգային պատմութեան :

Ո՞րպիսի ամօթ մի սպիտակահեր մարդոյ համար ուղիղ բանի և տրամաբանութեան դէմ ա՛յսքան սոսկալի ոճիրներ գործել և ա՛յսքան անհեթեթ հակասութեանց մէջ թաւալլլ գրական աշխարհի առջեւ, առարկայ լինելով նորա ծաղուն ու ծիծաղին :

Այս ամենայն քո սրտին ու մտքին անձկութիւնն կ'ապացուցանէ, թէ սա երբէք պէտք ունենար ապացուցի :

Իսկ գալով քո այն շագիտազիտութեանց, որովք կը պսակես ժէզուիթութեանդ այդ նոր հրաշակերտն և որովք զիս վատահամբաւելոյ անօգուտ ճիգ մի կը ճըզնիս, կը պատասխանեմ. — իմ աշակերտներն քո հետեւակ ոճին վերայ կը խնդան, քերականական և տրամաբանական սխալներդ կը ծաղրեն և Բասքալայ խորհրդածութեանց թարգմանութիւնդ կը սրբագրեն : Եթէ այլ ժամանակդ անցած չհամարէի և յուսահատ չլինէի ի քէն, ե՛ս զքեզ պիտի հրաւիրէի առ ոտս մի երկրասարդ դասատուի՝ դոյզն ինչ ազատամտութիւն և ուղղախոհութիւն ուսանելոյ և մի առոյգ սրտի ու մտքի օգնութիւնն խնդրելոյ դառամեալ մտքիդ և փտած սրտիդ . . . :

Բայց ե՛րթ դու յետս իմ : Ի՛նչ կայ մեր մէջ հասարակաց . դու անցելոյնն ես , ես ապագային . դու շահուն , ես սիրոյն . դու խաւարին , ես լուսոյն : դուք փոշին ու խոհուներն էք որ ազգային յառաջդիմութեան ուզին կ'աղտոտէք , մեք հողմն եմք որ զայդ ուղին մաքրել կու գամք :

1874 Օգոստոս 25

Բ

Պ. Չամբուրճի , Հայրենիքի 215 թուոյն մէջ մի քանի բառ կը թոթովես իրրու պատասխան :

Լուսթիւնն լաւագոյն պիտի վնկը քեզ համար : Խաւարափոտ Հայն , որոյ տգիտութիւնն արժանեացդ յետին ու միակ ապաստանարանն է , կարծէ թերեւս թէ պատասխանել ես :

Բայց լուսափոտ Հայն՝ զայն տողերն ընթեանլով՝ ըսաւ « Փախստականին միմուռն են , օրհասական պարտելոյն հանախնքն : »

Ս՛ւր են փաստք իմ փաստերուն դիմաց : Չհանիս այն վեհ արանց՝ որոց դէմ կատարած մէն մի սեաւ ու անարգ դերերդ թուած էի իմ պատասխանելոյն մէջ . խղունջին արհամարհանքն է այդ աւարժիւն :

« Ասոր գաղափարները , կ'ըսես , օղկի մը չեմք հասկնար : Կրօնքը կամ կրօնականները կ'ըսեմու-նիւն և աւերակաւ-նիւն կը ծովրնցունեն եղեր : »

Կրօնքն և կրօնականներն մի և նոյն իրն համարելոյ միջնադարեան գաղափարն քո գանկին մէջ միայն ունի տեղի , և ո՞ր աչքով արդեօք աւերակաւ-նիւն բառն գտար իմ խօսքերուն մէջ :

Իմ գաղափարներս չհասկանաս , է՛ն , չեն ինչ զարմանք . խաւարն իրաւունք ունի լոյսն չհասկանալոյ :

Եւ եթէ զիս հասկանալոյ կարողութիւն չունիս , է՞ր քննադատել կը քրտնիս ինչ որ անհասկանալի է քեզ համար :

1874 Սեպտ. 8

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ

Ք Ե Ր Թ Ո Ի Ա Մ

Լ Գ

Ի Մ Ա Հ

Վ Ա Ղ Ա Մ Ե Թ Ի Կ Օ Ր Ի Ո Ր Գ Պ Է Ա Գ Ի Թ Ի Ս Ի

Վ ա՛հ , Պէտդրիս , սեւ հողոյն մէջ քե՞զ ալ դըրին ,  
Քե՞զ ալ կլնեց անյադ անդունդ գերեզմանին .

Քո կոյս ճակտուն մահ իւր պըստօկն ածեց տփգոյն ,  
Եւ շիրմական մըթին ոգեաց հա՞րս դացիր դուն :

Որբ մընացեր էիր մօրմէդ , ա՛հ , խեղճ աղջիկ ,  
Սեւ հագեր էր վարդ հասակըդ և քո սրտիկ .  
Ճուայիր թափուր վանդակիդ շուրջ , ձագո՛ւկ անմայր .  
Մերկ անապատ աշխարհ դարձեր էր քեզ համար :

Աչքըդ ետին էր մընացեր մօրկանդ անոյշ ,  
Սուգի , մութի մէջ փաթթուեր քո արչալոյս .  
Ծաղիկ անցող , մօրըդ հողոյն վրայ թռուեցար ,  
Եւ դադաղին վերեւ զերդ մոմ մի հալեցար :

Բայց ո՞ր այն մէկ չքնաղ ձիրքերդ լամբ աննրման ,  
Աղուորութի՛ւնդ , քնքոյշ հաստօկդ վաղաթառամ ,  
Աղանատիպ հոգի՞դ հեղիկ , մատնե՞րդ ճարտար  
Զոր ներշնչէր երկնազդեցիկ քո սուրբ հանձար :

Տառնչինդ գարնանց վարդք պճնէին ձակատըն լոյս ,  
Հաստի՛կ ոսկի , ուր այնքան քաղցր էակ մ՛ է կոյս  
Որ հրեշտակաց իսկ կը գործէ գաշխարհ անոյշ ,  
Երբոր երկնից աստեղց , անմե՛ղ , ժպտի մեղոյշ :

Թիթեռնիկ մ՛ էր . աշխարհի մէջ զիւր թեւք շղարչեաց  
Սնրիժ ծաղկանց լոկ հանգուցեր էր ի վերայ .

Թռչնիկ մի էր , թռչել երգել միայն գիտէր ,  
Քերթուած զոր էն բոյրով լուսով էր շարագրեր :

Ո՛հ , էն երբ զայն ըստեղծեր էր , երկնից դաշտաց  
Շուշաններէն նորա հասակն էր յօրինած ,  
Յաստեղց՝ զիւր բիրս , հոգւոյն մէջ երգ մ՛ եթերային  
Դրած էր , և նուրբ մատըն էին լարք զուարթնոց տաւղին :

Դաշնա՛կ , գործի՛ աստուածային , հոգի՛ անհուն ,  
Դաշնակութեան ծո՛ւ վ անսահման և թրթռուն ,  
Լեզո՛ւ կըրից , եթերատենչ հա՛մբը ըզծից ,  
Հո՛ւր զոր անշուշտ մի Պրոմեթեա բերաւ յերկնից .

Դաշնա՛կ , ա՛յս էր Պէտդրիսի հոգւոյն գործի .  
Դիւթի՛ մատներն երբ , ձայներու աստուածուհի ,  
Մըրըրկէին անդ մերթ , և մերթ մեղմ՝ ճօճէին ,  
Ի՛նչ խանդաւառ նուագներ անտի սըլանային :

Հազար հոգիք իւր մատներէն մնային ի կախ ,  
Մատին ի ծայր մեր կըրից հետ նա առնոյր խաղ ,  
Լուռ ու անշունչ , կայր հըմայեալ սըրահն ողջոյն ,  
Անձայն արտուք իւր ծափըն էին գեղեցկագոյն :

Եւ Պէթոֆէն , Մոցարդ , Հայտըն , Վէպեր , Շորէն  
Այս նոր հոգւոյն նուագացն ի լուր յիւրեանց շիրմէն  
Կը զարթնուին , և , հիացեալ , վարանէին  
Թէ այն վրսեմ դաշնակքն ինքեա՞նք հիւսեր էին :

Դեռ չեմք մոռցած զայն երեկոյթս ոյց զիւթական  
Գիշերներու տայիր հրապոյր , ճարտա՛ր կուսան .  
Երկնից կեանքէն կորզուած ոսկի ժամեր տայիր  
Մեզ , և գմայլմանց մէջ մոռնայինք զայս մութ երկիր :

Շրթնէ՛ ի շուրթ սաւառնեցաւ անունդ գողտրիկ ,  
Քեզ բնաւք Տանդէ , քեզ սիրեցին ամէն հոգիք .  
Անմեղութեանդ պսակին փառք զիւրն հիւսեց զափնին ,  
Աղքատ աղջկան նախանձեցա՛ւ իշխանուհին :

Ի՛նչ դափնիներ , ո՛հ , ապագայն քեզ կը պահէր ,  
Փառացդ արծուին յո՞ր բարձրութիւն պիտի թեւէր .

Թէ այգոյ այդպէս նաճանչաւէտ, քանի՛ շքեղ  
Պիտի ինէր քո միջօրէն, զի՛ լուսագեղ:

Վերջալուսոյդ շողն է եղեր այգուն քո հուր,  
Նախագգացմամբ ժպտիս եղեր ա՛յնքան տըխուր .  
Ա՛յնքան շընորհ, ա՛յնքան ձիւրքեր, ա՛հ, երկնատուր  
Դիւրաթառամ որպէս վարդին ցնդեցա՛ն բոյր:

Եւ արդ շիրմին մէջ կը պառկի հասակդ աղուոր,  
Ցրտին ոգեաց ձեռներ խաղան վարսիցդ յուր,  
Որդե՛ր կրծեն այն քո մոզիչ մատունըդ ոսկի  
Զոր համուրե՛ւ փափաքէին շուրթք այնքանի՛ :

« Ահա եկայ, կ'ըսես մօրկանդ, քեզ գրկելու .  
Քովըդ մնալէ այլ եւս ոչինչ վիս կ'արգելու . »  
Եւ կմախ բազկօք գիրկս ածէ քեզ մայրիկդ սիրուն,  
Ժպտի դառն, և փոս աչերն արտօ՛ւր հեղուն:

Արսօսր և մեք հեղուիք քո ցուրտ շիրմին վերայ,  
Քեզ երկինքէն լան աստեղաց աչք շափիւղեայ,  
Քեզ լան սոխակք, քեզ լայ դարուն, 'ւ անմխիթար  
Մնային հրեշտակք, թէ նոցա գիրկն հոգիդ շերթար:

Հայո՛ց կոյսեր, երբօր ճարմակ տեսնէք շուշան,  
Կամ վարսագեղ ուռի մ'ի կախ ջինջ յաւազան,  
Երբ ի տերեւս ճլուլայ զեփիւռ, յափունս արծաթ  
Մնչէ ալեակ, կամ ի դաշնակ յածի գիրգ թաթ,

Երբ յերազի մի կոյս ոգի յայց ձեզ ելնէ,  
Կամ ի՛նչ անտես մուսայ ձեզ յունկն երգեր հծծէ,  
Կամ ի լանջ ձեր յորժամ թօշնին վարդեր տժգոյն,  
Ո՛հ, յիշեցէք ըզՊէտադրիս մահուանն ի քուն:

1877



### Ճ Ա Ռ

### Ժ

## Ե Ր Ա Ժ Շ Տ Ո Ի Թ Ի Ի Ն

( Խօսեցեալ է նախահանդիսի Ախոյ. Սանահեայ )

Թատրոն Գատըգիւղի 1877 Մարտ 28

Տեարք և Տիկնայք

Հաղիւ կը համարձակիմ բարձրացնել զիմ ձայնն  
այն վե՛սմ դաշնակներէն յետոյ որք այն ինչ լռեցին, և  
յորոց կը թրթռան տակաւին մեր ամէնուն հոգիք, իբրև  
տերեւք որոց վերայէն անցան հողմոյ թեւերն փայփայիչ:  
Երբ մի երկնային ձայն կը դադրի խօսելէ կամ երգելէ,  
մահկանացու բերան մի կը վարանի խզել այն հանդիւա-  
ւոր և խոհալից լուսթիւնն որ կը յաջորդէ, կը դողայ  
անտի իբր մի սրբազոյժութենէ: Ա՛զգամ թէ այս պա-  
հուն ամէն սիրտք համակուած են մի կրօնական զգաց-  
մամբ. մի վեհ և անսովոր տպաւորութեան տակ իբրու  
ազլած և հիացական կան ոգիք. կը թուէր թէ երկնա-  
յին էակաց մի պար, յերկիր այսր մուրած, լսել կու  
տայր մեզ վայրիկ մի մին այն երկնադաշնակ նուագնե-  
րէն որովք ոսկի քնարներու վերայ զԱնհունն կ'երգեն  
աշխարհներէ վեր, և մեր ականջներն, դիւթեալ, կը  
կարծեն լսել տակաւին իւրեանց ձայնքն՝ երբ նըջա  
լուած են արդէն: Ուստի շափտի իշխէի կորչել զձեզ ձեր



անոյ սրտորանքէն և հեշտալից տպաւորութեան մի վա-  
յելու մն խռովել, եթէ չգայի խօսիլ ձեզ նոյն իսկ այն  
մոգիչ զօրութեան վերայ որ իւր հմայից տակ այնպէս  
ուժգին շրթայեց մեր ոգիքն :

Մոգիչ զօրութիւն, այսինքն երաժշտութիւնն :

Յունական առասպելք իրաւունք ունէին պատմելոյ  
թէ Թերէի սարսպին քարերն, Ամիհոնի քնարին դաշ-  
նակներէն աղդեալ, ինքնաշարժ կու գային մի զմիով  
դիզուիլ ի պատնէշ. և թէ գազանք, զգօնացեալ Որ-  
փէոսի ջնարին նուագներէն, կու գային նորա ոտնն լի-  
զուլ, և դժոխոց անողոք աստուածն իսկ, երաժշտու-  
թեան հրասուրանաց անձնատուր, կը պարզէր իւր  
կնճռոտ ճակատն, և կը հաւանէր ստուերաց օթեվանէն  
արձակել զԵւրիդիկէն գեղեցիկ :

Այսու ո՛չ ասպքէն հնութիւնն, որ իւր բոլոր փի-  
լիսոփայութիւնն դրած է պատկերներու և առասպելաց  
մէջ, կ'ուզէր բացատրել այն անդիմադրելի և ազնուա-  
կան ներգործութիւնն զոր երաժշտութիւնն կ'ընէ հո-  
գիներու վերայ, ոչ միայն մարդկային սեռին, այլ և  
անբան էութեան իսկ վերայ : Մի քանի ձայնիւ, իբր  
մի մոգական գաւաղանի աղդեցութեամբ, կը յուզէ  
զմարդկային հոգին մինչև իւր ներքին խորոց մէջ, նորա  
նրբագոյն թելերն կը թրթռացընէ ի մի շունչ, կը գըր-  
գռէ կամ կը ցածուցանէ զգացումներն, ալիք սրտի ծո-  
վուն, և, իբրեւ մի ելեքարական հեղուկով, ի մի վայր-  
կեան հազարաւոր սրտեր միանգամայն կը բարախեցնէ  
համակիր : Լեզու երկնային, զոր Աստուած իւր ան-  
հուն բարութեան մէջ յայտնեց մարդոյն, որպէս զի  
հոգւոյն գերագոյն բարբառն լինի. երկինք և երկիր  
այնու միմեանց հետ կը խորհրդակցին և խօսակցութեան  
կը մտնեն : Սրտին ամէնէն հուր սլացքն, այն իղձերն  
տարտամ զոր բնաւ մարդկային լեզու մի չէ կարող բա-  
ցատրել, և ամէնէն փափուկ զգացումներն մի ներդաշ-  
նակ ձայնի մէջ դուրս կը սլանան և յերկինս կը թեւեն  
արփատեն : Եւ գանհունութիւնն, իւր գաղտնիքներով

և վսեմ հեշտութիւններովն, ոչ ինչ երբէք այնպէս լա-  
ւագոյն կը մերկանայ մարդոյն, որպէս մի նուագ վեհ  
և քաղցր. հոգին, զմայլեալ, կը մոռնայ մի պահ զաշ-  
խարհ և նորա գձձութիւնքն. հորիզոնին ընդայնիւն  
կ'զգայ, թեւէր կ'զգայ յինքեան, և, մի որդ պահ մի  
յառաջ, յանկարծ մի թիթեռն կը գտնէ զինքն լուսա-  
փետուր, և կը լուղայ լուսոյ ալեաց մէջ, և կը թեւէ մի  
անեգր միջոցի մէջ, և սիրացեալ անհունութեանն 'ի  
տեսիլ՝ կը վայելէ մի անասելի հեշտութիւն որ անծա-  
նօթ էր իւրեան ցայն վայր : Ինչե՛ր չըսեր սրտին երա-  
ժշտութիւնն իւր տարտամ և խորհրդաւոր լեզուով .  
կարծես ոչինչ կը բացատրէ ճշդիւ, և սակայն ամէն ինչ  
կը բացատրէ, ինչպէս կ'ըսէ Գուգէն :

Նուագն որ մերթ կը վերանայ արծուաթեւ, մերթ  
կը պարզի կը տարածի իբրեւ լիճ խաղաղածաւալ, է զի  
կը գոռայ իբրեւ հող՝ փոթորկայոյզ, և է զի կը նուաղի  
իբրեւ հառաչ մի զեփիւռին 'ի մայրիս, կը խօսի, կը  
նկարէ. և հոգին կը հասկանայ, և երեւակայութիւնն  
կը կարծէ տեսնել : Մարդկային ձայնին, քնարին թելոց,  
դաշնակին ատամանց մէն մի թրթռումն կը բերկրեցնէ  
կամ կը տխրէ, կ'օրրէ կամ կ'սթափեցնէ, կը բորբոքէ  
կամ կ'ամրէ, կը քաջալերէ կամ կը լքանէ. գոգցես  
մի աներեւոյթ ոգի կայ քօղածածուկ ձայնին մէջ որ  
մեր հոգւոյն հետ կը խաղայ ըստ հաճոյից. զգացմունք  
կը զարթնուն, յիշատակք կը վերածնին, և երազք, օ-  
գեղէն հաշիներ, ներդաշնակութեան աստուածահայն  
'ի կոչ, կու գան փայփայել հոգին արբեալ և զմայլուն :  
Եւ քանի՞օն բարերար է իւր հրասուրտն և ազնուարար .  
քանի՞ սրտեր ներդաշնակութեան ալեաց, իբրեւ մի  
օդահոս լեթէի, մէջ իւրեանց վտաց մուսցումն են  
խմած. թշուառութեան խորչակէն հրակէզ քանի՞ սըր-  
տերու վերայ իջած է երգն իբրեւ սփոփանաց ցօղ մի  
երկնածոր. նուառտ զգացմանց կապանաց մէջ բանտեալ  
քանի՞ հոգիք իւրեանց շրթայքն խզած, նուագին թե-  
ւոց վերայ թռած են ի գեղեցիկն, ի վսեմն. քանի՞ ժայռ

կործանելու յանկարծ իւրեանց ետեւ ազնուական կրից տրուիլունն են զգացած, քանի՛ քար աչեր արտասուօք թրջուած, և քանի՛ Յաուսդներ, ճակատագրին խորհրդոյն դէմ իւրեանց գանկն ի զուր զարնելէ յողնած, դերեղմանն հարցափորձել գնալոյ վայրկեանին, յանկարծ սթափած են հաւատոյ և յուսոյ մի հրեշտակաձայն նուագէ, սոսկմամբ հեռացուցած իւրեանց շրթնէն մահալից րաժակն, և դոչած, « Ե՛րգք երկնայինք, հզօր և քա՛ղցր, է՛ր կը խնդրէք զիս փոշոյն մէջ » :

Եւ հողին երգի պէտքն կ'զգայ միշտ, զի նորա բարբառն է գերագոյն, ինչպէս ըսի, և նորա սնունդն : Ամէն զգացումն որ կ'արթննայ ի մարդն և կը դործէ բուռն, երգին մէջ իւր ամէնէն կենդանի բացատրութիւնն կը գտնէ . առանց նորա, պիտի սեզմէր սիրտն, զի ամէն այլ լեզուով միշտ տկար, անկատար և սահմանաւոր է զգացման բացատրութիւնն . մի աղաղակ, մի հառաչ, մի արտօսք յաճախ շատ աւելի կը խօսի քան ամէն բառ . իսկ երաժշտութեան լեզուն զգացումնն իւր բոլոր զօրութեամբն և ջերմութեամբ կը հաղորդէ այլ հոգիներու . երբ մի երգչի նուագն կը լսեմք, մեր լանջաց, իբր մի վանդակի, մէջ թռչնոյ մի դեղգեղելն կ'զգամք . — Երգչին սիրտն է որ կը բարախէ ի մեզ : Եւ նուագն կը սնուցանէ զհոգին . մխիթարութեան, յուսոյ, արիւնթեան, հաւատոյ նեկտարով կ'արբեցնէ զնա . առանց իւրեան, յաճախ կ'ընդարմանայ նա բրտացեալ մարմնոյ պատենին մէջ, կ'ընկճի կենաց բեռին տակ, և իւր լուրթեան մէջ անասնական ախորժակներն իւրեանց բիրտ ծայնն կը բարձրացնեն : Ա՛հ սորա համար երգն մի աստուածային պարզեւ է մարդոյն, և մարդն երգ 'ի բերան կ'ընթանայ օրօրոցէն ցգերեզման : Մարդոյն առաջին բարբառն մի երգ է տխուր, զի նորածին մանուկն մի եղբերեղ կ'ողբայ երբ մայրական աշխարհէն կ'իջնայ այս օտար և ցուրտ աշխարհին մէջ . մայրն կ'երգէ իւր մահկան քունն օրեւոյ համար, և մանուկն, դեռ անծանօթ ամէն այլ լեզուի, կը հասկանայ ձայնին լեզուն և

կ'զգայ նորա մէջ մի սիրտ, լի անհուն սիրով, որ կը հսկէ իւր վերայ . ուստի կը հանդարտի, կը քնանայ . կ'երգէ պատանին կենաց առաւօտուն, ինչպէս կ'երգէ արտոյտն երբ հորիզոնին վերայ արշալոյսն կը ժամի . երիտասարդն կ'երգէ, երբ իւր սրտին մէջ մի երկնաբոյր ծաղկի — սիրոյ — փթթիլն կ'զգայ, ինչպէս կ'երգէ սոխակն ի տես փթթեալ վարդին . կ'երգէ մարդն երբ իւր զարմանաց, երկրպագութեան և ըղձից հարկն կը մատուցանէ ճակատագրաց վեհապետին . կ'երգէ երբ աշխատութեան օրէնքն կը կրէ, և երգն կը թեթեւցնէ զվաստակ, կը ծիծաղեցնէ ծովուն ալիքներն նաւավարին առջեւ, կը հարթէ լեռներն սրսորդին և արեւուն կրակէ նետերն կ'ամօղէ մշակին քրտնախոր ճակտին վերայ . կ'երգէ աշխատութեանէն յետոյ, և երգն իւր հանդիստն և պրօսանքն կը քաղցրացնէ . և երբ մարդ աշխարհի վերայ իւր պանդխտութիւնն յանդ կը հանէ, կ'երգէ կրօնն երբ կը յանձնէ զնա գերեզմանին, որպէս մշակն յաւանդ կու տայ սերմն հողոյն : Այսպէս երգն մի պէտքն է հոգւոյն, մի տարրն նորա կենաց . մարդն կը ծնանի, կ'ապրի, կը սիրէ, կը վաստակի, կը տառասլի, կը բերկրի, կ'աղօթէ, կը մեռնի երգով . . . :

Բայց երանի՛ այն ազգաց որոց պատանիք և կուսանք, այրն և կիսն, հայրն և մայրն Բէռլինի, Պէթոֆէնի, Րոսսիինի երգերն ունին իւրեանց շրթանց վերայ և իւրեանց մատանց տակ, երգելոյ համար իւրեանց ուրախութիւնքն և վշտերն, իւրեանց տենչանքն և յոսսերն, և զմայելի դործելոյ կեանքն որ տխուր է յաճախ : Նոքա՛ ճաշակած են հեշտութիւններ որոց անծանօթ են այն ազգք որք անծանօթ են սոյն հանճարներուն . նոքա, արբեցութեան և խանդի ժամերու մէջ, այնպիսի իտէական աշխարհներու մէջ ապրած են զոր այլ ազգք, որոց շրթունք մի կողտ և անարուեստ երաժշտութիւն միայն թոթովել զիտեն, չնմարեցին իսկ իրականութեան թանձր վարագուրին ետեւէն . մինչ սոքա, անկարող վսեմ արիւնթեանց և վսեմ ձգտումնե-

րու , անարդ կրից և թշուառութեան շղթայից մէջ կը ճգնին ի դուր , նոքա բարերար ոգիներու այցն ընդունած են որք յուսածիծաղ ճակատով իջած են յերկնից բարձրացնել և լուսաւորել անկեալ և մութ հոգիներն : Մի քանի ձայներ , սլարդ և հեզանոյշ , այլ Բէնդովէզի հանճարէն ներշնչեալ , որք կ'անուանին Սիսայան Տաթևոյա , մարդկային անհուն բազմութեանց սրտեր հաւատոյ և գթոյ հղօր շունչի մի տակ կը գորովեն և կը յուզեն իրր ուկէան անսահման , և մի Մարտիկեզ ամէն Գաղիացի սերունդէ զիւցազն ժողովուրդ մի կ'ստեղծագործէ :

Քանդի երաժշտութիւնն մի արուեստ է , մի բանաստեղծութիւն . ամէն մարդ կ'զգայ զայն , ամէն սիրտ նորա հրապոյրն կը կրէ և նորա լեզուն կ'ուզէ խօսիլ , բայց արուեստագիտին յատուկ է ստեղծել . և արուեստն , ինչպէս ամէն ինչ ի մարդն , կատարելագործելի է , և քաղաքակրթութեան հետ զուգընթաց :

Ահա սորա համար Եւրոպական երաժշտութիւնն յանշափս դեր ի վերոյ է քան ամէն այլ երաժշտութիւն . զի մի լեզու է նա ընդարձակ , անհո՛ւն , մինչ այլք թոթովումներ են առաւել կամ նուազ միօրինակ : Ինչպէս ամէն քաղաքակրթութիւն իւր լեզուն ունի , նոյնպէս և ունի իւր երաժշտութիւնն . որպէս վայրենւոյ մի խժական բարբառէն մինչեւ Ղամարթինի աստուածային լեզուն մի անհունութիւն կայ , նոյնպէս և այն ուիւններէն , որովք անքաղաքակիրթ ժողովուրդք իւրեանց բիրտ կրքերն կ'ոռնան , մինչեւ հրեշտակային ներդաշնակութիւնքն Մոցարդի : Քաղաքակրթութեան երաժշտութիւնն ( այսպէս կ'անուանեմ զԵւրոպականն ) ստուգիւ մի տիեզերական երգ է , քերթուած անսահման զոր երաժշտին հանճարն կազմած է արարչութեան բիւր բիւր լեզուներէն , և յորում կը արօփէ տիեզերաց սիրտն : Երաժիշտն ալիքէն կ'առնու զիւր խոխոջն , զէփիւռէն զիւր հառաչքն , սոխակէն զիւր դայլայլն , մըրրկէն զիւր մուռնչն , ովկէանէն զիւր գոչիւնն , որոտումէն

զիւր գուրնն , աղաւնիէն զիւր մնչիւնն , անտառէն զիւր խուլ երգերն , մարդէն զիւր ձայնն , մթնոլորտէն զիւր թրթռումն , բնութենէն զիւր համայն բարբառքն , արուեստէն զիւր համայն գործիներն , և հանճարոյ ականջովն ունկնդիր , հրեշտակներէն իւրեանց եթերային նուազներն և ոսկի գունտերէն իւրեանց պարերգն երբ կենաց և լուսոյ կեդրոնին շուրջն կը դառնան գեղապար , և այս ամէն տարրերէն կը յօդէ կ'ստեղծէ իւր երգն նորալուր , համանուագ բազմաձայն , դիւթական աշխարհ ձայներու , բացատրութիւն համալսարհական դաշնակութեան , որ կ'ընդլայնէ կը մեծցնէ զմարդկային հոգին և կը խառնէ զայն համայն էութեան հոգւոյն հետ , և որ զԱստուած իսկ կ'զմայլեցնէ , երբ մարդն , քերագոյն քահանայ արարչութեան , կը մատուցանէ նմա զայն իրրեւ բնութեան օրհնից և ալելուներու հարկն հաւաքական : Ահա՛ այն երաժշտութիւնն զոր ձայնանիւերու մոզական տառերովն կը գրեն Հայտն , Հաէնտէլ , Վէպէռ , Մէնտէլսոն , Պէլլինի , Մէոքատանդէ , Կոլնօ , Տոնիճէզդի , Վէրտի և այլք :

Ինչ հօր տարր աղնուացման և քաղաքակրթութեան , ինչպէս ամէն գեղարուեստք . զի սոքա կը խօսին այն աստուածային տարրին հետ որ կը ծածկի ի մարմնի , որպէս մարդարիտ ի փուշոջ , գեղեցկին , անհունին զգացման , սերմն երկնային , ինկած նիւթոյ կոշտ հողոյն մէջ , զոր կու գան բեղմնաւորել երկնից լուսովն ու ցօղով , և որ առանց իւրեանց կը մեռնի ազազուն : Գեղարուեստք , կեանքի երազին մէջ այն սանդուղն են զոր Յակոբ կը տեսնէր անըջին մէջ , մի ծայրն յերկինս և միւսն յերկիր , և որոյ վերայէն հրեշտակը կ'ելնէին և կ'իջնէին : Բայց , իւր քոյրերուն մէջ , երաժշտութիւնն այս առաւելութիւնն ունի որ , գրեթէ բոլորովին անխիթական , շունչ և ոգի , եթերասլաց , տարտամ անորոշ իղձերո՛ւ պէս , ամէնէն աւելի յատուկ կը թուի անհունին զգացումն տածելոյ ի մարդն և նիւթոյն ու իրականութեան գծմութիւններէն ամբառնալոյ զհոգին : Եւ յետոյ ,

մինչդեռ զայլ գեղարուեստսն ճաշակել կարող լինելոյ համար հարկ է որ միտքն նախնական մշակութեամբ պատրաստուի, սա հոգւոյն անմիջական ճարակն է, ճաշակելի մեծին ու փոքուն, քաղաքացւոյն ինչպէս շինականին, գիտնոյն որպէս տղիտին. ուսմակվարական արուեստն է այն, ինչպէս կ'անուանէ մի Գաղիացի գրագէտ (\*) : Զայնին և մարդկային սրտին մէջ մի խորհրդաւոր ներդաշնակութիւն կայ, մի անմիջական հաղորդակցութիւն. մարդկային սիրտն լարուած քնար մի է, գոգցես, որ անդէն եռանդնաշարժ թրթռալոյ համար ներդաշնակութեան շնչոյն կ'սպասէ, ինչպէս Եւտոգեան տաւրից գեփիւռին մատանց :

Բա՛բէ, սակայն, զի այս լեզուն աստուածեղէն գեռ գրեթէ անծանօթ է Հայոյն. զի քանի՞ք կան մեր ազգին մէջ ձեզ նման որ կարենան հասկանալ զայն և զգալ, և քանի՞ք Ազգայեան Սանուհեաց նման որ կարենան խօսիլ զայն և խօսեցնել գործւոյն : Գեռ մեր երաժշտութիւնն մի նահապետական օրօր է մանուկ ազգերն քնացնելոյ յատուկ և մի թաթարական խժերք. հանձարն և արուեստն կը պակասին ի նմա. մեր նուիրական գործիներն են ծնծղայ և սկահ, և մեր ականջներն, մեր ճաշակն հաճոյք կը գտնեն ի նոսա, այնքան պէտք ունին հրահանգի և փափկութեան : Իսկ հոգին կը թմրի մահաբուն. զի այդ երաժշտութիւնն բացատրութիւն չունի, չխօսի. հոգին սնուցանող տարրն — գեղեցիկն, իտէականն կը պակասի ի նմա : Եւ կ'արհամարհուի արուեստն, կ'արհամարհուի հանձարն, և կը խնուի մեր ականջներն այն հրեշտակային բարբառոյն որ թերեւս մեր սրտից գերեզմաններուն համար Գարբիէի ոգետու ձայնն լինէր : Երաժշտական մեծ քերթուածներն, որպիսիք են լա Քուէասիոն, Մէսի, Օպէրոն, Այլեոս — Թէլ, Ֆաուսթ եւ, այնպէս են մեզ համար ինչպէս Ամերիկա յառաջ քան զԳոլոմպոս. — անծանօթ աշխարհներ. և ոչինչ նուազ քան զձենովացի նաւարկուն,

*Վ. Մ. Մ. Մ. Մ.*

կը ծաղրուի և կը հալածուի այն որ կ'ուզէ տիրել տալ մեզ սոյն աշխարհաց : Վարդապետ մի, իւր կրօնական նախանձայուզութեան համայն փրփուերներով կը հակառակէր մի օր տաճարին մէջ առճիով նուազ ման. մի սրբապղծութիւն կը կոչէր զայս, իւրու թէ արուեստն աստուածային չլինէր, և մարդն չպարտէր Աստուծոյ փառաց ձօնել իւր հանձարոյն և ճարտարութեան արգասեաց ազնուագոյնն, կատարելագոյնն : Եւ քանզի կը խուսափիմք այսպէս յամենայնէ որ կը մեծցնէ և կ'ազնուացնէ, ի՞նչ եմք. — մի ազգ ստրուկ և թրմբրեալ որ շղթայներն շարժելոյ իսկ կարողութիւնն չունի. մի ազգ անձուկ փառասիրութիւններով և պղտիկ տենչերով. մի ազգ յորում մեծ առաքինութիւնք և ազնուական նկարագիրք երեւոյթներ են հազուադէպ. մի ազգ՝ ձեռքն ի կապ, շուրթն ի շողում, աչքն ի տիրում, միտքն ի մութ և հոգին ի հեռ գիւրամէտ : Ճմարտութիւնն մեր անձին չխնայելոյ չափ իմաստուն լինիմք գէթ :

Ո՛հ, Հայե՛ր, Հայե՛ր, — և իցի՛ւ այս ձայնս լսելի լինէր յամէն անկիւն երկրի ուր Հայ մի կայ — եթէ փրկութիւն կ'ուզէք, թողէք ինչ որ յոռի, ինչ որ կեղծ, ինչ որ տղեղ է, և դարձէք ի լաւն, ի ճշմարիտն, ի գեղեցիկն. բացէք ձեր հոգւոյն համայն մուտքերն երկնից այս եռակի ճառագայթին. թող գոյնի և ձեւոյ երեւոյթով անդր թափանցէ ձեր աչերէն, և ձայնի ալիքներով ձեր ականջներէն ներս. ձեր հոգին նօթի է ճշմարտութեան, յագեցուցէք զայն. ծարաւի է գեղեցիկին, արբեցուցէք նմա կշտապինդ զՅեղարուեստս. և, ի մէջ այլոց, ո՛հ, սիրեցէք զչրաժշտութիւն, այն երաժշտութիւնն որոյ մեր ազգին նախաճաշակն տուած լինել Ազգայեան վարժարանի յաւիտենական փառքն սիւտի լինի. ուսուցէք Բալեսդրինաներու լեզուն՝ ձեր մանկանց, ձեր աղջկանց, ձեր պատանեաց. թո՛ղ թափանցէ ճոխին պալատէն մինչեւ աղքատին տնակն, եկեղեցիէն և դպրոցէն մինչեւ արհեստաւորին կրտսկն, և մեծ հայաբնակ կեդրոններէն մինչեւ յետին գիւղակն

Հայաստանի, և Հայութիւնն մի նոր ոգւոյ բարախելն պիտի զգայ յինքեան . պիտի զգայ թօթափելն իւր հոգւոյն կոչտ կեղեւներուն . իւր աղօթքն վսեմագոյն պիտի լինի, իւր ձգտումներն վեհ, իւր հայրենասիրութիւնն աւելի եռանդուն, իւր զուարճութիւնքն մաքուր և իւր վիշտն իսկ ազնուական . և մինչ մի երկնաթռիչ նուազ վեր պիտի ուղղէ իւր աչերն, հորիզոնին վերայ մի աստղ պիտի նշմարէ որ պիտի ժպտի իւրեան իբրեւ մի խոստումն երանութեան :



ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ



	էջ
Ջօն	
Յառաջարան . . . . .	Ա.
<b>ՔԵՐԹՈՒԱՄԲ</b>	
Ա. Առ լուսին . . . . .	1
Բ. Ո՛հ, թէ կարէի . . . . .	4
Գ. Յոյս . . . . .	6
Դ. Հնչեակ . . . . .	7
Ե. Աշուն . . . . .	7
Զ. Կատակ . . . . .	10
Է. Հեռի ի քէն . . . . .	11
Ը. Տե՛ս ինձ, ո՛ր կոյս . . . . .	15
Թ. Արասուք ի շիրիմ մօր իմոյ . . . . .	16
Ժ. Առ մտերիմն իմ Գ. էֆէնտի Գաբրիէլեան	20
ԺԱ. Ի զո՛ւր . . . . .	22
ԺԲ. յԺԲ. Տարեդարձ Ազգ. Սահմանադրութեան	25
ԺԳ. Յերեկոյի միում մինչ ի զննին կայի երկնից (Թարգմ.) . . . . .	25
ԺԴ. Առ Խ. էֆէնտի Սարաճ . . . . .	27
ԺԵ. Առ ի՛նչ . . . . .	29
ԺԶ. Ահնարկ քո և ժպիտ . . . . .	30
ԺԷ. Վարդ և Աղջիկ . . . . .	32
ԺԸ. Ամանոր . . . . .	33
ԺԹ. Հնչեակ . . . . .	39
Ի. Լիճն (Թարգմ.) . . . . .	40
ԻԱ. Առ Ամեն. Տ. Ներսէս Ա. Պատրիարք . . . . .	45

ԻԲ.	Երգ Հայ Ուսանողաց . . . . .	44
ԻԳ.	Հնչեակ . . . . .	46
ԻԴ.	Յիշատակ . . . . .	46
ԻԵ.	Առ ծիծառնն ուղեւոր . . . . .	47
ԻԶ.	Զեփիւռք . . . . .	49
ԻԷ.	Երազ . . . . .	51
ԻԸ.	Խաչելութիւնն (Թարգմ.) . . . . .	55
ԻԹ.	Առ հայրն իմ . . . . .	56
Լ.	Յիշե՞ս զիս, կոյս . . . . .	57
ԼԱ.	Տեսիլ . . . . .	58
ԼԲ.	Պանդուխտն . . . . .	60
ՄԱ.Ն	ՍՈՒԿՐՍՍՍՅՍ (Թարգմ.) . . . . .	65
ՀԱՌ.Ք		
Ա.	Դպրոց . . . . .	99
Բ.	Հայրենասիրութիւն . . . . .	107
Գ.	Կին . . . . .	121
Դ.	Հաշտութիւն . . . . .	135
Ե.	Ներկայ և Ապագայ . . . . .	159
Զ.	Փրկութիւն . . . . .	145
Է.	Ամուսնութիւն . . . . .	149
Ը.	Յառաջդ իմութիւն . . . . .	154
Թ.	Դաստիարակն . . . . .	159
ԱՅԼԵԻԱՅԼՔ		
Պատմական		
Ա.	Հայեցողած մի յետկոյս . . . . .	169
Բ.	Ակնարկ մի 1871 ի պատմութեան վերայ . . . . .	178
Նամակ առ Կ. էֆէնտի փանոսեան . . . . .		187
Թատերական « Աղջկան մի օժիտն » . . . . .		195
Կրկին պատասխանիք առ Չամուրճ. պատուելի . . . . .		207
ՅԱԻԵԼՈՒԱԾ		
Ի մահ վաղամեռիկ օրիորդ Պէտղ րիսի (քերթուած) . . . . .		218
Երաժշտութիւն (ճառ) . . . . .		221

Վ Ի Ի Պ Ա Կ Ք

ԷԶ	ՏՈՂ	ՍԻԱԼ	ՈՒՂԻՂ
8	1	զողջոյն	ողջոյն
18	5	անդերեւ	անդեղեւ
29	19	մոլորակք	մոլորակք
50	5	ու այսքան	'ւ այսքան
54	3	անդրէն	անդէն
114	54	Ընկալող բասիոն	տը Ընկալող բասիոն
115	24	ղիւցազուն	ղիւցազն
155	7	հրեշտակային	հրէշային
205	4	կրից	կրքեր
205	24	էր	էին

1770

10

Item	Quantity	Price	Total
Wheat	1	3	3
Barley	2	10	20
Oats	3	10	30
Rye	4	10	40
Peas	5	10	50
Beans	6	10	60
Lentils	7	10	70
Flour	8	10	80
Butter	9	10	90
Eggs	10	10	100

11

ՀՀ Ազգային գրադարան



NL0357203



